Էջմիածին



1967

ՌՆԺԷ
ԻԴ ՏԱՐԻ

Յուլիս—Օգոստոս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Է-Ը

1967

ՊԱ-8484

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. «Ազգիս բացեալ գիտուրեան Աստուծոյ»	3
ՄԱՅՐ ԱՌՈՒՈՒՄ	6
ՆԵՐՍԵՍ Ե. ՎՐԴ ՊՈՂՈՍԱՅԱՆ—Տեղեկագիր Հոգևոր ճեմարանի 1966—1967 ուս. տարվա գործունեության	8
ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐՅԱՆ—Ուրվագիծ Ս. Էջմիածնի դպրոցի պատմության	14
Ա. ՀԱՅԻՏՅԱՆ—Ս. Գրիգոր Լուսավորիչ որպես մատենագիր	22
ԳՐ. ԳՅՈՒԼՅԱՆ—Վարդանանց պատերազմը և նրա խորհուրդը	39
Պ. ՇԱՀԲԱԶՅԱՆ—Հայաստանյայց եկեղեցին և Միսաք Մենաթեցի գրական ժառանգությունը	45
Ս. ԱՆԹՈՍՅԱՆ—Հայ մշակույթը և նրա ճամաշխարհային նշանակությունը	53
ՀՈՎՀ. ՔՀ. ՄԱՐՈՒՔՅԱՆ—Կրոնական առարկաների դրվածքը Հոգևոր ճեմարանում	63
Ամավերջի հանդիսություն Հոգևոր ճեմարանում	68
Բ. ԹԱՇՃՅԱՆ—Ուխտագնացություն դեպի Հաղպատի և Սանահինի վանքերը	71
Վ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, Լ. ՄԵՑԵԱՆԱՋՅԱՆ—Երաժշտության դասավանդումը Հոգևոր ճեմարանում	76
Հատված «Պատմության և Տաճն Աստուծնաց» աշխատությունից	82
ՎՐԹԺ ՍՐԿ. ՆԵՐՍԻՍՅԱՆ—Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք»-ը	84
ՍԱՍՈՒՆ ՍՐԿ. ՎԱՐԴԱՆՅԱՆ—Հավերժի ճամփով	90
Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ—Բանաստեղծություններ	91
Է. ՄԵՑԵԱՆԱՋՅԱՆ. «Ի ՐԷՆ ճայցեմք»	92
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	95

Հանձնված է արտադրության 7/VIII-1967 թ. Ստորագրված է տպագրության 10/VIII-1967 թ.
տպագրական 6,12 մամուլ թուղթ 60×84 1/8 պատվեր 586

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1967 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«ԱՂԲԻՒՐ ԲԱՑԵԱԼ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ»:

Այսինքն ամսվա վերջերին Մայր Աթոռ. Ս. Էջմիածնի Ճեմարանը լիակեց իր 22-րդ ուսումնական տարեշրջանը, կրթական, հոգեվոր ու բարոյական բարի արդյունքներով:

Ավանդական հանդիսությամբ տեղի ունեցան ամավերջի քննություններն ու հանդիսությունները:

Վեհափառ Հայրապետի անմիջական ղեկավարության ներքո կրթական-դաստիարակչական գործը Մայր Աթոռի գործունեության մեջ պատասխանատու ու հիմնական աշխատանքներից մեկն է հանդիսանում, որի հաջողության համար Ն. Ս. Օծությունը ոչ միայն հատուկ ուշադրություն է ընծայում, այլ կանգ չի առնում բարոյական ու նյութական ոչ մի զոհողության առաջ:

Հոգևոր Ճեմարանը, որը բացվել է 1945 թվի նոյեմբերին լուսահոգի Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի օրոք, ազգիս Վեհափառ Հայրապետի սրտին մոտիկ հաստատություն է, որի գոյության և նպատակների հետ Նա կապել է վարդագույն հույսեր: Հոգևոր Ճեմարանը կոչված է պատասխանատու դեր կատարելու Հայկ. Առաքելական եկեղեցու կյանքում, իր կոչման ու պարտականության գիտակից, բազմակողմանի զարգացած, հավատավոր ու հայրենանվեր նոր հոգևորականություն պատրաստելու ասպարեզում:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գոյություն է ունեցել Լուսավորիչի օրերից: Հին աղարշապատը, Ս. Էջմիածինը շատ հնուց եղել է հայ ժողովրդի եկեղեցական ու մշակութային կենտրոն, ուր բացվել են Ե-րդ դարում առաջին հայագիր դպրոցները աշակերտական հոծ խմբերով, որոնք եկել էին Վաղարշապատ «ի կողմանց և ի գաւառաց Հայաստան աշխարհի, յորդեալք եւ դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեան Աստուծոյ, քանզի յԱյրարատեան գաւառին բղխեցին հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Կորյուն):

Ազգիս Վեհափառ Հայրապետի սրտի ամենախոր իղձն է մեր օրերում էլ հայ եկեղեցու կյանքում Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը դարձնել «աղբիւր բացեալ գիտութեան Աստուծոյ»:

Ուրախ ենք արձանագրելու, որ օգնականությամբ Աստուծոյ, ղեկավարությամբ Ն.որին Ս. Օծության, աշխատանքով ու նվիրումով դասախոսական կազմի, Հոգևոր Ճեմարանը այս տարի էլ շարունակեց իր գործը, ինչպես անցյալ տարիներում, զոհաբերության արժանի արդյունքներով:

Ս. Էջմիածնի կրոնաբույր մթնոլորտում, նրա ոգեկան լույսի մեջ աճում, պայծառակերպվում են մեր ուսանողները, հասունանում է նրանց մտավոր ու հոգեկան կյանքը բազմերես և բավարար պատրաստությամբ, կոչումի, ծառայության հանապարհին վրա:

Դասախոսական կազմը կատարում է իր դավագույնը խղճի մտոք, ուսանողության մեջ արմատավորելու մեր նախնյաց կրոնա-

կան բարի ոգին ու բարեպաշտությունը, հրշմարիտ հայրենասիրություն, հայրդյալից դարձնելով նրանց նաև մեր մշակութային հոգևոր արժեքներին: Դասախոսները ոչ միայն գիտելիքներ են ջամբում, այլ «զհոգի առաքելարար աշակերտելոցն տան»:

Հոգևոր Ճեմարանում ուսումնական պլանում լայն տեղ է հատկացված կրոնական-եկեղեցական, առաքելաբանական ու հայագիտական առարկաներին: Մասնագիտական առարկաներին զուգընթաց մեծ ուշադրություն է դարձվել նաև հանրակրթական առարկաների վրա, հատկապես լեզուների, գրաբարի, աշխարհաբարի, աստվածների և անգլերենի:

Անցեալ տարի Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո գումարված մանկավարժական ժողովում վերանայվում է ուսումնական պլանը, որպեսզի Ճեմարանը իր անվան արժանի, ուսումնական բարձրության վրա մնա:

Ն. Ա. Օձությունը, որը գլխավորում է դասախոսական կազմը, միշտ նոր իմպուլսներ է դնում, դաստիարակության ու կրթության անհատեմ, Հոգևոր Ճեմարանի առաջ, որոնց կատարումը պահանջում է սիստեմատիկ աշխատանք, եռանդ և նվիրում:

«Մայր Աթոռ Ս. Էջմիածինը,—ասում է Վեհափառ Հայրապետը,—գլուխն է մեր սուրբ եկեղեցիին, և որն իր զինվորյալ միաբանությամբ և Հոգևոր Ճեմարանով պետք է դառնա կենսատու աղբյուր, օրինակ, առաջնորդ և ներշնչարար համայն հայ հոգևորականության և հայ ժողովրդին»:

Վեհափառ Հայրապետը Ճեմարանում իր դասախոսությունների ընթացքում, այնուհետև ուսանողության հետ վեհարանում իր զրույցների և հանդիպումների ժամանակ, **շեշտը դնում է ուսանողության բարոյական նկարագրի կազմության, հոգևոր, հայրենասիրական դաստիարակության կարևորության վրա, և նույնը պահանջում է դասախոսներից:**

«Մեր եկեղեցական կյանքի վերջին տարիներու տագնապը, շեշտում է վշտով Վեհափառ Հայրապետը, **ամեն բանե առաջ տագնապ է մեր հոգևորականության հոգեվոր-բարոյական կյանքի և հետևանքը առաքելության գիտակցության մը պակասին»:**

Այս մտածումների լույսին տակ Ն. Ա. Օձությունը աշխատում է, որ Հոգևոր Ճեմարանում իր հայրական նայվածքի և շնչի ներքո հասուն առնի, աճի, կազմակերվի, իմացապես և հոգեպես մի նոր Միաբանություն, Ճեմարանի գրասեղաններից սկսած «ըստ իրում պատկերի և նմանութեան», որպեսզի նրանք վաղը, որպես հարազատ որդիներ, «որ զնմանութիւն հօրն բերեն», շարունակեն Իր մեծ գործը:

Հոգևոր Ճեմարանի Տնօրենությամբ Հայոց Հայրապետի ցուցաբերած այս ջերմ հոգատարությունն ու պահանջկոտությունը պարտավորեցնում է ուսանողությանը, հնարամտությամբ և քրտնաջան աշխատանքով, ջանասիրությամբ և օրինակելի վարքով, արդարացնել Հայրապետական բարձր վստահությունը:

Հոգևոր Ճեմարանի վերջին ուսումնական շրջանը, շրջանն է անխոնջ, ուշադիր աշխատասիրության, աղոթքի և խոկումների, մտքի զարգացման, բարոյական նկարագրի կերտման, հոգեկան կարողությունների փրթումին, դառնալու համար «հայրասունկ Այգու» մշակներ «բուսատու հրուագներ», «հատեմիչ աղ» վաղվա ծառայության քաղցր հոտով:

Անցնող սասանվեկ տարիների ընթացքում Հոգևոր Ճեմարանը տվել է 40 շրջանավարտներ, որոնցից 30-ը բնդգրկել են հոգևոր առաքելեզ, որպես կուսակրոն և ամուսնացյալ քահանաներ և սարկավագներ:

1966—67 ուս. տարին սկսվեց 34 աշակերտներով: Այս տարի Ճեմարանը ուներ երեք դասարանական և երկու լսարանական բաժիններ:

Ամենագրի սույն հատորում ամփոփվել է Հոգևոր Ճեմարանի Տնօրի 1966—67 ուս. տարվա գործունեության ընդհանուր պատկերը ներկայացնող շրջանկան և բովանդակալից զեկուցագիրը:

Այստեղ մասնավոր կարևորությամբ ուզում ենք նշել, որ մայիսին 2-րդ լսարանի չորս ուսանողներ, Վեհափառ Հայրապետին տված իրենց գրավոր խնդրագրի հիման վրա, տնօրենության միջնորդությամբ ստացան սարկավագության ձեռնադրության շնորհը և մնան Մայր Աթոռի Միաբանության շարքերը:

Չորս սարկավագները, ազատակամ, հանդգնությամբ և գիտակից որոշումով եկան իրենց Երիտասարդական թարմ կորովով ավելացնելու Մայր Աթոռում հայ եկեղեցու սպասավորության կանչված իրենց երեք միաբան եղբայրների թիվը:

Այս հանգամանքը ուրախալի է և հուսադրիչ միանգամայն: Հոգևոր Ճեմարանը քայլ առ քայլ ու հետևողականորեն աշխատում է իրագործել այն նպատակը, որի համար նա կյանքի է կոչված:

Ինչպես երևում է տեսչական տեղեկագրից, անցնող ուսումնական տարում ձեռք է բերվել Հոգևոր Ճեմարանում որոշակի առաջընթաց ուսման որակի բարձրացման, ուսանողության գիտակցական կարգապահության ամրապնդման, կրոնական և հոգևոր

դատիարակության խորացման, և բարոյական նկարագրի կերտման աշխատանքներում:

Ճեմարանում դասավանդություն ու դաստիարակություն, Մայր տաճարում աղոթք ու երգ, վանական խաղաղ մթնոլորտում համայնական—եղբայրական կյանք, այդ բոլորը որպես դաստիարակության մի ընդհանուր սիստեմ զուգորդվում է միմյանց հետ, օրինակելի և ամբողջական դարձնելու համար դաստիարակության գործը Մայր Աթոռում, կրոնաբույս ու հայրենաշունչ այս մթնոլորտի սրբազան կանարների տակ:

Այս բոլորը, սրտերը լցնում են սրտախտությամբ ու լավատեսությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պայծառ ապագայի մասին:

Հոգևոր Ճեմարանի այս տարվա ուսումնական սրդյունքների մեջ, Վեհափառ Հայրապետի կենդանի օրինակից և ամենօրյա ղեկավարությունից հետո, իր արդար բաժինն ունի նաև Ճեմարանի երիտասարդ տեսուչ Հոգ. Տ. Ներսես Ծ. վրդ. Պոզապալյանը, որը հոգևին սիրում է իր գործը և այն կատարում է ճշիրտությամբ, անձնազոհությամբ, եղբայրական ոգու և սեռն համագործակցությամբ դաստիարակական կազմի:

Հոգևոր Ճեմարանը թեակոխում է իր գոյության 23-րդ տարին: Ճեմարանը արդեն ավանդություն դարձած մեծարժեք ավանդներ ունի և ուղղություն ու իր կրոնական—կրթական, հոգևոր, հայրենասիրական աշխատանքը կատարում է վստահությամբ:

Այս մտածումների և զգացումների լույսի տակ, «Էջմիածին» ամսագրի հոբելյանական միացյալ համարը նվիրվել է Հոգևոր Ճեմարանին: Ամսագրի սույն համարը լույս է տեսնում միայն դասախոսական կազմի ոգեշունչ աշխատակցությամբ և մի խումբ ուսանողների սրտագին մասնակցությամբ:

Հայ ժողովուրդը բերկրանքի զգացումով է նայել միշտ, մանավանդ վերջին տասը տարիների ընթացքում, ազգին Վեհափառ Հայրապետի Եկեղեցական, հոգևոր, մշակութային, վերանորոգչական, հայրենասիրական գործունեությանը վրա, գործունեություն՝ որի հիմնական օրակներից մեկն է նաև տարրական-դաստիարակչական, կրթական աշխատանքը Հոգևոր Ճեմարանի հարկի տակ: Տանջանքներ օրերն ու տարիները, ու մեր ուսանողները կրաստիարակվեն հավատքի և հայրենասիրության այս սրբազան մթնոլորտի մեջ, շարունակելու համար Հայ Եկեղեցու առաքելության մեծ գործը, մեր ժողովրդի հոգևոր կյանքում:

Ողջո՛ւյն Ճեմարանին ու նորանոր հաջողությունները, հետագա ուսումնական տարիների ընթացքում, ի միխիթարություն Հայոց Հայրապետի սրտին, հարգանք հայ հավատացյալ ժողովրդին և ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 16-ին, Հինգշաբթի, «Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ»։ Ազգային եկեղեցական մեծ տոնի առթիվ չորեքշաբթի, երեկոյան ժամը 7-ին Մայր Տաճարում կատարվեց նախատոնակ։

Հինգշաբթի առավոտյան, ժամը 11-ին միաբանությունը ուխտի գնաց Օշական, ուր կատարվեց օրվա հանդիսավոր Սուրբ պատարագը։ Պատարագեց և քարոզեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի Հայոց թեմի առաջնորդ գեր. Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը։ Հավարտ Սուրբ պատարագի, կատարվեց հոգեհանգստյան պաշտոն, Վահան Ամատունի իշխանի շիրմաքարի վրա։

* * *

Հունիսի 19-ին, Կիրակի, «Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի»։ Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Նարեկ Վրդ. Շաքարյանը, «Ով իցէ որ մեղադիր լինիցի ընտրելոց. Աստուած է որ արդարացուցանէ» (Հռոմ. Ը. 33), բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Հունիսի 25-ին, Կիրակի։

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայտարյանը, «Առաքեալք սուրբ և ամբիծք և ընտրեալք յորովայնէ» շարականի բնաբանով։

* * *

Հունիսի 27-ին, երեքշաբթի։

Երեկոյան ժամը 6-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Անգլիո Հայոց հայրապետական պատվիրակ Գեր. Տ. Պսակ Արբ. Թումայանը։ Հանուն Վեհափառ Հայրապետին Երևան օդանավակայանում Սրբազանին դիմավորում են Լուսարարապետ Տ. Հայկազուն Արքեպիսկոպոս և Տ. Ներսես Ծ. Վրդ. Պոգոսյանը։

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո Տ. Պսակ Արքեպիսկոպոսը ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանում։ Սրբազանը մի քանի օր Մայր Աթոռում անցկացնելուց հետո, հրաժեշտ տվեց Վեհափառ Հայրապետին և հունիսի 30-ին վերադարձավ իր պաշտոնատեղին։

* * *

Հուլիսի 2-ին, Կիրակի։ «Վարդավառ»։

«Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր տաճարում պատարագեց և քարոզեց Գեր. Տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, «Եւ գնասցեն թագաւորք ի լոյս քո եւ թագաւորք ի ծագել լուսոյ քո» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Հուլիսի 8-ին, Երկուշաբթի։ Մեռելոց։

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Նշան Քհն. Բեյլերյանը։ Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգիստ «Վասն համօրէն ննջեցելոց»։

* * *

Հուլիսի 9-ին, Կիրակի։ Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

°₀°

Հուլիսի 16-ին, Կիրակի: Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ Քհն. Մկրտչյանը:

°₀°

Հուլիսի 28-ին, Կիրակի: Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես Քահանա Մարուքյանը:

°₀°

Հուլիսի 27-ին, Շաբաթ, Մայր Աթոռ վերադարձավ Գեր. Տ. Հայկազուն Արք. Աբրահամյանը, որը ընկերակցել էր Վեհափառ Հայրապետին մինչև Ժընեվ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնի տարվեցիք Հայրապետական այցելության առիթով:

°₀°

Հուլիսի 30-ին, Կիրակի: Մայր տաճարում պատարագեց Հոգ. Տ. Մուշեղ Վրդ. Պետիկյանը:

°₀°

Օգոստոսի 6-ին, Կիրակի:
Մայր Աթոռում պատարագեց Հոգ. Տ. Գևորգ Վրդ. Սերայդարյանը:



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1966—67 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Վեհափառ Տեր,

Ամավերջի հանդիսության այս պահին, ձեր ներկայությունը հոգևոր ճեմարանի հարկին տակ, մեզ համար հատկապես, սրտի անհառն ուրախություն է պատճառում:

Ամավերջ է, հունձքի և հաշվեհարդարի պահ: Սեզանից յուրաքանչյուրը ինք իր համար կարող էր մտովին հաշվեհարդար կատարել: Բայց այս հաշվեհարդարը մենք միասնաբար ենք կատարելու, որպեսզի պարզ լինի հոգևոր ճեմարանի 1966—67 ուսումնական տարեշրջանի պատկերը Ձեր առջև:

Ներ գործունեության շրջանում. չի եղել մի պահ, երբ մոռացած լինենք կամ անտեսած այս գործի սրբությունը: Գիտենք, որ ծառայում ենք մի սրբազան հաստատության: Դա մեզ համար պատվաբեր է և միաժամանակ նվիրական, որովհետև այս հաստատությունը շարունակությունն է լուսավորչահիմն կրոնական նախնյաց կրթարանին, որտեղ եկել են սնվելու հայ եկեղեցու ընտրյալ զավակները: Այս հաստատության հիմնադիրներն են հանդիսացել մեր Ոսկեդարի կերտիչները՝ ս. Սահակը և ս. Սեսրոպը, ինչպես նաև թարգմանիչ վարդապետների պատկառելի փաղանգը, որոնք հայ հոգուն հայեցի նկարագիր են շնորհել, իրենց հրաշալի գյուտով և մատենագրական վաստակով: Դժվար է այս հաստատության կատարած արդյունավետ գործը նանաչելուց հետո, տկարանալ և աչալուրջ չլինել: Մենք որպես հետնորդ սպասավորներ այս հավիտենական հաստատության, մեր ուժերի նեղածին չափով, փորձում ենք առաջ տանել կրթական, դաստիարակչական այս նվիրական գործը: Վստահ ենք և հեռազնեռ հանդգվում ենք, որ մեր գործի ճանապարհին, մեր եկեղեցու սրբազան հայրապետները առաջնորդում և ներշնչում են մեզ՝ լուսավորելով մեր բանականությունը, ինչպես նաև տրկարության պահերին զորացնում և խանդավառում են մեզ իրենց անձնուրացության օրինակով:

Այժմ փորձենք համառոտակի ներկայացնել հոգևոր ճեմարանի 1966—67 ուսումնական տարեշրջանի դաստիարակչական, կրոնա-բարոյական կյանքը:

Հոգևոր ճեմարանի սաները

1966—67 ուսումնական տարեշրջանում հոգևոր ճեմարանի սաների ընդհանուր թիվը եղել է 34: Նախորդ տարվանից մնացել են 22 սաներ, նոր ընդունվել են 12-ը, որպես առաջին դասարանցիներ: Այս տարին փակում ենք 25 հոգով: Ուրեմն 9 սաներ այլևայլ պատճառներով հեռացվել են ճեմարանից:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈԳԵՎՈՐ ՄԵՄԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ և ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ (1987 Թ. ՀՈՒՆԻՍ)

Սաների դասարանական բաշխման պատկերը հետևյալն է. Բ լսարան՝ 4 սարկավագ, Ա լսարան՝ 3 ուսանող, Գ դասարան՝ 4 ուսանող, Բ դասարան՝ 6 ուսանող, Ա դասարան՝ 8 ուսանող:

Հեմարանի սաներից 8-ը արտասահմանցիներ են՝ եկած Սերձավոր Արևելքի տարբեր երկրներից, և 17-ը՝ Հայաստանից և դրացի հանրապետություններից:

Առաջիկա ուսումնական տարում ճեմարանը ունենալու է երեք լսարանական և երեք դասարանական բաժիններ: Հույս ունենք առաջիկա տարվանից ավելացնել մեր սաների թիվը: Հոգևոր ճեմարան են ընդունվում յոթնամյա կրթություն ունեցող առաջադեմ ուսանողները:

Դասախոսական կազմ

Հոգևոր ճեմարանը այսօր ունի 19 դասախոսներ, որոնցից 6-ը հոգևորականներ են և 13-ը՝ աշխարհականներ: Սեր դասախոսական կազմի գլուխն է ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց, որ Իր որդիների սիրույն բարեհաճում է իջնել Իր Գահից ու գալ ճեմարան ուսուցանելու համար մեր ուսանողներին:

Ճեմարանի դասախոսներն են՝ Վեհափառ Հայրապետը Վազգեն Ա, Գերշ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Գերշ. Վահան եպիսկոպոս Տերյանը, Հոգ. Ներսես ծ. վարդապետ Պոզապալյանը, արժ. Նշան քահանա Բեյլերյանը, արժ. Հովհաննես քահանա Մարուքյանը: Աշխարհական դասախոսներն են՝ տիարք Արթուն Հատիտյանը, Գրիգոր Գյուլլանը, Պարգև Շահբազյանը, Սամվել Անթոնյանը, Բարսեղ Թաշչյանը, Սիմոն Հովիվյանը, Արամ Կարապետյանը, Գառնիկ Քեհյայանը, Գևորգ Գևորգյանը, Խորեն Մեյխանաջյանը, Վարշամ Փարսադանյանը, Հայկ Ֆրունջյանը և Հարություն Սիմոնյանը: Այս շարքին պարտքն ունեմ ավելացնելու նաև տիկին Անժել Բալունու անունը, որն այնքան բարեխղճորեն շաբաթը երկու անգամ գալիս է դաշնամուրի դասեր ավանդելու մեր սաներից երեքին:

Այս տարի հոգևոր ճեմարանում որպես վերակացուներ պաշտոնի են կոչվել՝ տիարք Բարսեղ Թաշչյանը, Սիմոն Հովիվյանը, որոնք իրենց ջանքերը միացրին նախկին վերակացու արժ. տ. Նշան քահանա Բեյլերյանի աշխատանքին:

Ազնիվ հպարտանքով պետք է հայտարարեմ, որ մեր դասախոսներն ու վերակացուները երբեք չեն խնայել իրենց ջանքը դաստիարակչական ու կրթական այս գործում: Տվել են ոչ միայն իրենց գիտելիքները, դասավանդված առարկաների միջոցով, այլ նաև իրենց ոգին, հավատքն ու ներշնչումը:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը

Նվիրական այս պահին, պարտքս ունեմ շնորհակալության ամենաջերմագին խոսքը ուղղել մեր դասախոսական կազմին, մաղթելով քաջառողջություն և հարատևություն եռանդ: Թող առատ պտղաբերի ձեր ցանքը՝ ի փառս Հայաստանյայց բազմաչարչար եկեղեցու և ի պատիվ ազգիս հայոց:

Ուսումնական կյանք

Հոգևոր ճեմարանում շաբաթը վեց օր դասավանդություն է տեղի ունենում, բացի կրոնական և մշակութային կարևոր տոներից: Ամեն դասարան օրը վեց ժամ դաս ունի, ուրեմն՝ շաբաթական 36 ժամ: Ամեն առավոտ ժամը 9.30-ին սկսվում են դասերը և ավարտվում՝ 2.30-ին:

Ուսանողները կեսօրից հետո ժամը 3-ից մինչև 5-ը ազատ են: Իսկ ժամը 5-ից մինչև 10-ը սերտում են վերակացուի հսկողության տակ: Սերտողության այս 5 ժամվա ընթացքում նրանք կես ժամով մասնակցում են երեկոյան ժամերգության և կես ժամ էլ տրամադրում են ընթրիքի համար՝ երեկոյան ժա-

Հոգևոր Ճեմարանի Տեսուչ Հայր Սուրբը մի խումբ դասախոսներով և ուսանողներով

մը 8-ին: Այսպիսով օրական 4 լրիվ ժամ մեր սաները հնարավորություն են ունենում սերտելու:

Հոգևոր ճեմարանի գոյության գլխավոր նպատակն է, հայ եկեղեցու սպասավորության համար պատրաստել կիրթ ու գիտակից հոգևորականներ: Այս նպատակով իսկ յուրաքանչյուր դասախոս բարոյական պարտականությունն ունի իրեն հանձնարարված ուսումնական ծրագիրը իրագործել: Մեր նպատակն է իմացական պատրաստության առընթեր, հոգևոր ու ազգային դաստիարակություն նաև ջամբել մեր սաներին: Այս իսկ ակնկալությամբ հաճախ հրավիրում ենք մեր դասախոսներից բացի այլ մասնագետներ, դասախոսելու հոգևոր, բարոյագիտական, գրական և գիտական զանազան այժմեական նյութերի մասին:

Մեր այս ուսումնական տարվա ընթացքում, գոհունակությունն ունեցանք վայելելու բանախոսությանց շինիչ շարքը, հանրածանոթ գրող, բանասեր և պատմաբան պրոֆ. Հ. Ճ. Սիրունու, նվիրված արևմտահայ գրականության զարգացման և կարկառուն դեմքերին: Ուրախություն էր նաև մեզ համար ունկնդրելը Կոմիտաս վարդապետի աշակերտ, երաժշտագետ տիար Մհերան Թումանյանի բանախոսությունը՝ նվիրված հայ պատարագի ծագման և կատարման: Խանդավառություն ստեղծեց, ծանոթ աշխարհագրագետ տիար Կ. Ավետիսյանի դասախոսությանց շարքը, նվիրված աշխարհի արդի քարտեզին և Հնդկաստանին: Ջերմությամբ ունկնդրվեց նաև Բյուրականի աստղադիտարանի գիտնական պրոֆ. Հ. Բաղալյանի դասախոսությունների շարքը՝ տոմարագիտության և աստղաբաշխության մասին: Մենք երախտապարտ ենք վերոհիշյալ ազնիվ բանախոսներին, որոնք այնքան ջերմությամբ հանձն առին իրենց թանկագին ժամանակից մի պահ տրամադրելու մեզ:

Ճեմարանցիների հոգևոր, իմացական և հայրենասիրական զգացումների պայծառակերպման գործում Իր անգնահատելի նպաստն է բերել մեր սիրելի Վեհափառ Հայրապետը: Բացի Իր դասավանդած առարկաներից, Վեհափառը՝ գուրգուրանքով հոգևոր ճեմարանի սաներին հաճախ հրավիրել է վեհարան շաբաթ երեկոները, խոսելու որպես հայր՝ Իր որդիներին, հոգևոր և բարոյական-դաստիարակչական ուղղությամբ:

Ճեմարանի առօրյան

Հոգևոր ճեմարանի սաները զարթնում են առավոտյան ժամը 7-ին: Նույն ժամ մարզանք

աղերից հետո, շարքով գնում են եկեղեցի՝ գիշերային և առավոտյան ժամերգության մասնակցելու ժամը 8-ից մինչև 8.45-ը: Ինչին քառորդ պակաս նախաճաշում են, ապա ժամը 9.30-ին սկսվում են դասավանդությունները: Երեք պահ դաս անելուց հետո, ժամը 12-ին ուսանողները և դասախոսները թեյում են, ապա շարունակվում է դասավանդությունը երեք պահ ևս, որից հետո ժամը 2.30-ին ճաշում են: Ուսանողները ժամը 3-ից մինչև 5-ը ընդհանրապես խաղում են կամ հանգստանում և կամ էլ երաժշտության փորձի են մասնակցում: Երեկոյան ժամերգության մասնակցում են ուսանողները ժամը 5-ից մինչև 5.30: Հետո սկսվում է սերտողությունը և տևում է մինչև ժամը 8-ը: 8-ին ընթրում են և շարունակում սերտողությունը մինչև ժամը 10-ը: Աղոթում են ու ննջում:

Այս է մեր առօրյան՝ բացի չորեքշաբթի երեկոներից, երբ գիշերվա ժամը 9.30-ին ուսանողները վերակացուների ընկերակցությամբ գնում են եկեղեցի աղոթելու, Հանգստյան, Խաղաղական ժամ ասելու կամ նամազան կրոնա-բարոյական նյութերի մասին խորհրդածելու, ապա մինչև քնելը լուռ մնալու պայմանով:

Հոգևոր ճեմարանի ուսերը անխափան ամեն առավոտ և երեկո ժամերգության են մասնակցում, ինչպես նաև ամեն կիրակի և արբոց տոներին պատարագի՝ Մայր տաճարում: Նրանք տարվա հինգ տաղավարներին ս. Հաղորդություն են ստանում, ըստ ճեմարանում ընդունված կարգի, ինչպես նաև այլ ուրիշներով: Ճեմարանի դաստիարակության մեջ առաջնահերթ կարևորություն է տրվում հոգևոր կյանքի կազմակերպմանը:

Հանախ մեր առօրյա ժամանակացույցում զանազան փոփոխություններ էլ են տեղի ունենում: Ուսանողները երկու շաբաթը մեկ վերակացուների հսկողությամբ և առաջնորդությամբ պատշաճ շրջապտույտներ են դիտում: Երաժշտական ճաշակի ազնվացման նպատակով հանախ Երևան, համերգների ներկա են լինում: Երբեմն այցելում են թատրոն և կրկես:

Այս տարվա ընթացքում ճեմարանը իր կազմով մի քանի անգամ միօրյա պտույտներ է կազմակերպել դեպի Մուղնու ս. Գեորգ վանքը, Հովհաննավանք, Սաղմոսավանք, Խոր Վիրապի վանք և Դվին: Շուտով ամավերջի քառօրյա շրջապտույտն է տեղի ունենալու, դեպի Հաղբատի և Սանահնի վանքերը: Վստահ ենք, որ մեր պատմական ուխտավայրերը այցելելով մեր պատմությունն ու ավանդությունները կվերանորոգվեն ու կտպավորվեն մեր մեջ:

Հոգևոր ճեմարանից զատ մարզական կյանքը ունի իր արժանավայել տեղը: Բացի ամառվոտյան մարզանքի դասից, ուսանողները հանախ Էջմիածնի քաղաքային դաշտում ֆուտբոլի խաղեր են կազմակերպել: Սեղանի թենիսը ուսանողների առօրյա զբաղմունքն է: Շուտով վանքի շրջափակում հոգևոր ճեմարանը կունենա իր վոլեյբոլի, բասկետբոլի և թենիսի առանձին խաղավայրերը:

Ճեմարանի ուսերի առողջական վիճակը գոհացուցիչ է: Երբեմն եղել են թեթև հիվանդություններ: Այս առթիվ իմ վրա բարոյական մի պարտականություն է դրվում, շնորհակալություն հայտնելու Էջմիածնի քաղաքի հիվանդանոցի վարչության, ինչպես նաև այլ մասնագետ բժիշկներին, որոնք իրենց կարելին արեցին ճեմարանի ուսերի առողջությունը կայուն պահելու գործում, անվճար կերպով:

Հոգևոր ճեմարանը ունի նաև իր մասնագիտական գրադարանը, ավելի քան 15,000 գրքերով, բոլոր լեզուներով: Գրադարանը ունի իր զուտ պաշտոնյաները, հանձինս տիկին Աստղիկ Նազիկյանի, որպես վարիչ, և տիար Բարսեղ Թաշչյանի, որպես գրադարանավար: Մայր Աթոռի միաբանների և ճեմարանի սաների առջև բաց են գրադարանի դռները:

Բարձրաստիճան հյուրեր

Այս տարի ճեմարանի հարկին տակ երջանկությունն ունեցանք դիմավորելու և բարի գալուստ մաղթելու մի շարք հոգևորական և աշխարհական պատկառելի դեմքերի: Ինչպես Ռումինիայի Նորին Սրբություն Մուստինիան Պատրիարքը, որ իր շքախումբով այցելեց ճեմարան, իր հայրական քաջալերանքի խոսքն ասաց, ճշմարիտ հավատարիմ և առանց ամոթոտ մշակներ լինելու պատգամով: Մեր հյուրը եղավ նաև հայազգի աշխարհահռչակ երաժշտագետ Արամ Խաչատրյանը: Մեծատաղանդ երաժիշտը ի պատիվ իրեն տրված գեղարվեստական ծրագրի կատարումը լսելուց հետո, խոսք առավ, քաջալերեց մեր սաները առավել սիրելու և նվիրվելու հայ երաժշտության, նման անման Կոմիտաս վարդապետին: Մեր պատվական հյուրը եղավ, Համաշխարհային եկեղեցիների խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Էոթեն Բլեյկը: Գերաշնորհ հյուրը խոսեց մեր սաներին եկեղեցու դերի մասին արդի աշխարհում, նվիրման և ծառայասիրության կոչ արեց նրանց, քաջալերեց նրանց ուսման մեջ և հրավիրեց Ժնև, ճեմարանի ուսումը ավարտելուց հետո գնալու և կատարելագործվելու Համաշխարհային եկեղեցիների խոր-

Ապրիլյան եղեռնի Հուշարձանի առաջ

հուրդին կից Բոսսեյի կոլեջում: Այս տարի մեր շնորհարեր հյուրը եղավ նաև Բուլղար եկեղեցու Պետ Նորին Սրբություն Կիրիլ Պատրիարքը, իր շքախումբով: Նորին Սրբությունը մեծ հաճույքով հետաքրքրվեց մեր սաների կյանքով և ուսումնական ծրագրով: Իր բովնդակությից խոսքում Նորին Սրբությունը շեշտեց հայ եկեղեցու դերը աշխարհով մեկ սփռված հայերի կյանքում, նշեց հոգևոր ասպարեզին նվիրվող անձի ստացած բավարարության մասին, օրհնեց մեր սաներին, որպեսզի նրանք այս դարավոր հաստատության ազնիվ ծառայողները լինեն:

Թանկագին հյուրերի պատվին՝ նեմարանի հարկի տակ մատնավոր հանդիսությունն տեղի ունեցավ սաների կատարմամբ: Վստահ ենք, որ վերոհիշյալ բարձրատիպ հյուրերի ոգը եղավ մեր սաների և մեզ համար խթան՝ ծառայության հանդեպորդի վրա:

Երախտագիտական մի պարտք ևս ունեմ կատարելու նաև՝ շնորհակալություն հայտնելու մեր հայրենի կառավարության:

Հուսկ ուրեմն, մեր երախտագիտական զգացումները շնորհակալության Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդին և հոգևոր հեմարանի բոլոր բարերարներին, որոնք իրենց լուսան միրով մուծեցին այս հաստատության գոյատևման և նրա նպատակների իրականացման համար:

Շնորհակալություն բոլորին: Թող Տերը վարձահատույց լինի նրանց:

Սիրելի սաներ,

Ամավերջ է, անցավ նաև 1966—67 ուսումնական տարեշրջանը, հուշ դարձավ: Կմնա այն, ինչ որ կարողացանք սովորել: Մենք միասին մի տարի ևս բոլորեցինք, մեկ ընտանիքի նման, իրար հետ ապրեցինք, իրար ճանաչեցինք, իրար սիրեցինք, երբեմն իրար վշտացրինք և հույնիսկ խիստ եղանք ձեր հանդեպ: Այդ բոլորը ձեր օգտի համար էր, այդ բոլորի դրդապատճառը մեր սերն էր, մենք և՛ ձեզ էինք սիրում և՛ ս. եկեղեցին, այդ էր պատճառը մեր նախանձախնդրության: Գիտե՞ք, թե որքան ձեզ համար մենք աշխատեցինք, ձեր թերությանց, դժվարությանց և վշտերի պահին: Մենք այդ բոլորը սիրով ենք արել:

Ես խորհուրդ եմ ուզում ձեր ուշադրության հանձնել, իմացեք, որ մեր եկեղեցին, մեր ժողովուրդը ազնիվ ծառայողների պետք ունի, հատկապես այս օրերին: Հպարտ եղեք, որ ապագա ծառայողներն եք դառնալու մեր մեծ եկեղեցուն: Հպարտացեք, որ այս դարավոր հաստատության գավակներն եք: Միշտ մտարերեցեք մեր ժողովուրդի պատմությունը: Հետևեցեք մեր եկեղեցու եռամեծ վարդապետների, սուրբ հայրապետների և ազգի հանճարակների օրինակներին: Նրանց կյանքի ուղին ընտրեցեք ձեզ համար, որպես ծառայության ուղի: Վստահ եղեք, ձեր կյանքը կգեղեցիանա և իմաստ կստանա միայն սուրբ նպատակների իրագործման ձգտումով: Հաղորդվեցեք մեր նախնյաց ոգու, հավատքի հետ և եղեք նրանց ճշմարիտ ժառանգները:

Տեսեք, մեր ժողովուրդը ցրված է աշխարհի չորս ծագերում: Բոլորն էլ անխտիր ս. Էջմիածնին են հայում: Ս. Էջմիածինը հոգևոր հաց է, բոլոր հայերին սնուցանող: Ամեն հայ, ինչքան էլ հեռու է բնակվում հայրենիքից, սիրում է և տենչում ս. Էջմիածինը: Էջմիածինը քարեղեն շենք չէ միայն, Էջմիածինը առավելապես ոգեղեն իրականություն է: Էջմիածինը հայ ժողովուրդի կենդանության խորհրդանիշն է: Էջմիածինը մենք ենք այսօր, դուք եք վաղը, և այդպես շարունակաբար: Ձեզ են սպասում մեր ցրված ազգի գավակները ի սփյուռս աշխարհի, մի օր դուք որպես մանանա պետք է բաշխվեք նրանց: Գիտեք, այդ է գեղեցիկը և սփոփանքը մեր կյանքի, լինել լուսարարները Լուսավորչի կանթեղին, և լույս բաժանել:

Այս է իմ խոսքը ձեզ ուղղված, սիրելի սաներ:

Կեցցե՞ մեր հոգևոր հեմարանը:

ՆԵՐՍԵՍ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ
(Փոխանորդ Արարատյան թեմի)

ՈՒՐՎԱԳԻԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Ս. Էջմիածնի կաթողիկոսարանին կից վարդապետարանների պատմությունը գալիս է դարերի խորքից: Առաջին վարդապետարանը սկսվում է ս. Էջմիածնում հայրապետական Աթոռի հաստատմամբ հայոց ընդհանուր դարձով, ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակ:

Մեր քաղաքական կյանքի բերումով կաթողիկոսների նստավայրը եղել է փոփոխական: Նույն ճակատագիրն էլ ունեցել է կաթողիկոսարանին կից մշտապես գործող հոգևոր բարձրագույն դպրոցը՝ վարդապետարանը, դարերի խավարին կամ լույսին զուգընթաց, հայ մշակույթի վերելքին կամ անկմանն հետ համատեղ, երբեմն հզոր ճառագայթումով, երբեմն թույլ առկայծումով, բայց և հանապազ սնուցելով մեր եկեղեցին և ժողովուրդը:

Ս. Էջմիածնի վարդապետարանի պատմության մասին առ այսօր գոյություն չունի առանձին մի ուսումնասիրություն, չնայած՝ «Էջմիածինը, որպես հայոց հնագույն հոգևոր կրթության կենտրոնի, արժանի է հատուկ ուսումնասիրության: Նրա դերը հայոց մշակույթի և կրթության պատմության մեջ միջխարի է, բայց այդ մեծ դերը մինչև այժմ պատշաճ չափով չի ներկայացված և լուսաբանված»[1]:

Ս. Էջմիածնի վարդապետարանի պատմությունը գրելիս օգտվել ենք Մաշտոցի անվան Երևանի պետական Մատենադարանից, կաթողիկոսական դիվանի, Հայաստանի պետական կենտրոնական, գրականության թանգարանի արխիվներից, տպագիր և անտիպ բազմաթիվ աղբյուրներից: Ուսումնասիրելով հատկապես «Ամենայն Հայոց կաթողիկոսարանին կից Վարդապետարանի» պատմությունը, աչքաթող չէինք կարող անել նաև հայ դպրոցը ընդհանրապես: Այդ հարցը, սակայն, որ լայն, ուսումնասիրության առարկա է եղել ուրիշ շատ հեղինակավոր գրիչների կողմից, ընդհանրապես դուրս է մնում մեր պարունակից: Այդ հեղինակներից են՝ ա) Հ. Վարդան Հացունի, «Դաստիարակությունը հին հայոց քով», Վենետիկ, 1923 թ., բ) Ա. Ալպոյաճյան, «Հայ դպրոցի պատմությունը», Կահիրե, 1947 թ., գ) Աբգար Մովսիսյան, «Ուրվագծեր հայ

[1] Ա. Թ. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958 թ., էջ 261:

դպրոցի և մանկավարժության պատմության», Երևան, 1958 թ.:

Ս. Էջմիածնի վարդապետարանի պատմությունը մեր սրտին մոտիկ է եղել: Այդ վարդապետարանի պատմությունը գրելու ցանկությունը իր լրումը գտավ 1958 թվականին և դրանից հետո վերածվեց անպայման իրականացված լինելու անդիմադրելի մի պահանջի: Շնայած ժամանակի հեռավորության, մենք էլ ԺԳ դարի Սյունյաց պատմիչ Ստ. արքեպիսկոպոս Օրբելյանի պես՝ «Ի բազում ամաց տենչացեալ եմ այսմ իրագործութեան»[2]:

Ս. Գրիգոր Լուսավորչից սկսած գործել է կաթողիկոսարանին կից վարդապետարանը, ինչպես վկայում է Ագաթանգեղոսը. «Այնուհետև վերցրեց Արշակունյաց տոհմի մարդկանց և սովորեցրեց նրանց, որոնցից առաջինն էր հենց թագավորը՝ Տրդատը՝ իր ամբողջ ընտանիքով»[3]:

Վարդապետարանի գոյության մասին է վկայում նաև բազմավաստակ բանասեր Արշակ Ալպոյաճյանը. «Ինչպես որոշ կը տեսնվի անոնց տրված ուսումը քրիստոնեության վարդապետությունն էր... քրիստոնեությունը ծանոթացնել անոնց, քանի որ կը պատկանեին այն դասուն, որ «զհանգամանս գիտէին հելլեն կամ ասորի դպրութեանց»[4]: Սակայն պատմական փաստերը մեզ համոզում են, որ Լուսավորիչը միայն բարձր դասակարգի մեջ չէր գործում, այլ նրա դպրոցական գործունեությունը ծավալվում էր նաև հասարակ ժողովրդի մեջ՝ դաստիարակելով նրանց քրիստոնեական ոգով: Արդարև, Լուսավորիչը «Նույնպես ջանում էր ամենքին կրթելու, հասցնել ճշմարտության գիտությունը»[5]:

Ամենայն Հայոց կաթողիկոսարանին կից գործող և գերազանցապես հոգևորական գործիչներ պատրաստող այս վարդապետարանը իր դասավանդման մեթոդներով, ուսումնական ծրագրով հարազատ մեկ կատեգոն էր իր դարու նման հունական կամ ասորական նույնատիպ դպրոցին: Ասելին, միայն այն էր, որ հայ աշակերտը լետք է մարզվեր այդ լեզուներով իր ուսած գիտությունը վերածել բանավոր հայերենի, որի խոսքով՝ կատարեր մշտական թարգմանություն, հասկանալի և օգտակար լինելու համար հայ ժողովրդին: Դրանք վերծանողներն էին: Նրանք էին, որ անգիր դպրության օրինակով, նախքան Աստվածաշնչի գրավոր և պաշտոնական թարգմանությունը, կազմեցին նրա գոնե որոշ մասերի անգիր թարգմանությունը: Ե դարի ոսկեդեղնիկ հայ լեզվի մաքրությունը նրանց նախապատրաստական աշխատանքի պտուղն է իր խորքում:

Այս վարդապետարանից բացի, կրթված աշխարհիկ գործիչներ, հատկապես արքունի կամ կաթողիկոսական դիվաններում աշխատելու սահմանված դպիրներ պատրաստելու համար, հատուկ դպրոցների մի ցանց տեղավորվեց Հայաստանում: Այդ դպրոցների դասավանդման լեզուն երեք էր ըստ տեղական պահանջների՝ հունարեն, ասորերեն և պարսկերեն: Տրդատ թագավորը քաջալերող և օգնական հանդիսացավ Լուսավորչի այս օգտաշատ ձեռնարկությանն էլ, ինչպես իր հաջորդները եղան Լուսավորչի ժառանգներին: Այդ մասին է վկայում Ագաթանգեղոսը՝ գրելով. «Տրդատ թագավորը հրաման տվեց Հայաստանի զանազան շրջաններից ու գավառներից բերելու բազմաթիվ մանուկների՝ ուսուցման համար, և նշանակելու նրանց համար հավատարիմ ուսուցիչներ. առավել ևս (բերելով) պղծագործ քրմերի դասերին, նրանց որդիներին նույն նպատակով խումբ-խումբ գումարելու պատվարժան վայրերում՝ նշանակելով թոշակ (նրանց համար): Եվ նրանց բաժանեց երկու մասի. մի մասին տվեց ասորական դպրության, իսկ մյուսին՝ հելլենական»[6]:

Բնական է, որ դպրոցները գիշերօթիկ էին: Աշակերտները ընտրվում էին յուրաքանչյուր նահանգից ու գավառից, մի սովորություն, որը տևում է մինչև մեր օրերը:

Ագաթանգեղոսը դարձյալ վկայում է, որ Լուսավորիչն աշակերտներին «Անջատում էր հայրենի բնակավայրերից» և տանում ու զետեղում էր Վաղարշապատում և այլուր իրենց ծննդավայրից հեռու դպրոցների մեջ: Տնից այս օտարացումը բռնի էր կատարվում՝ թագավորի հրամանով. «Նույնպես հավանեցնում էր թագավորին, որպեսզի բոլոր գավառներից, բոլոր կողմերից և ամեն տեղերից հավաքվի մանուկների բազմություն՝ ուսուցման համար: Գազանամիտ, ամենավայրի, ճիվաղաբարո աշխարհականներին ուսուցանելու ուսուցման բոլով, հոգևոր սիրով ու եռանդով թոթափում շարավանոտ դե-

[2] Ստ. Օրբելյան, «Պատմություն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910 թ., էջ 10:

[3] Ագաթանգեղայ «Պատմություն», Թիֆլիս, 1882 թ. էջ 455:

[4] Ալպոյաճյան Ա., «Պատմություն հայ դպրոցի», Սիսիրն, 1946 թ., էջ 19:

[5] Ագաթանգեղոս, Պատմություն, Թիֆլիս, 1882. էջ 455:

[6] Ագաթանգեղոս, «Պատմություն», Թիֆլիս, 1882 թ., էջ 484:

վերի և սնոտիագործ պաշտամունքների կեղտն ու ժանգը»[7]:

Որ նախընտրությունը տրվում էր առավելապես քրմական սերնդին, հաստատում է նաև Օրմանյան պատրիարքը.

«Քուրմերն ալ ազդու դասակարգ մըն էին, և կրնային մեծ դժվարություններ հանել, եթե հանկարծ ամեն դյուրությունե զրկված ըլլային... Սիայն պետք էր զանոնք լավ կրթել նոր կրոնքին սկզբունքներուն մեջ, ուստի նոր հաստատված ուսումնարաններուն մեջ, հոգ կտարվեր «առաւել զազգս պղծագործ քրմանց և զմանկունս նոցա ի նոյն ժողովել» և միանգամայն չէր մոռացվել անոնց «դարման ոռճկաց» կարգել»[8]:

Հ. Վարդան Հացունին ճիշտ կերպով նշում է, որ այս դպրոցները նկատվում էին իբրև արքունի ձեռնարկություններ և պահպանվում արքունի գանձարանից վճարված «դարման ոռճկաց»-ներով:

Հետաքրքրական է իմանալ, թե որոնք կամ ինչպիսի մարդիկ վարել են հայկական առաջին դպրոցները: Այդ դպրոցների առաջին ուսուցիչները եղել են հույն և ասորի քարոզիչները, որոնք ս. Գրիգոր Լուսավորչի հետ ժամանել են նորադարձ Հայաստան: Հետագայում Լուսավորչի հաջորդները հետևեցին իրենց նախահոր օրինակին: Հայաստանը լցվեց օտարազգի քարոզիչներով, որոնք օգուտից ավելի բեռ էին դառնում: Որ հայ ուսուցիչներ չկային այս շրջանում, ընդունում են նաև Հ. Վ. Հացունին և Ալպոյաճյանը: Նրանք իրենց տեսակետը հիմնավորում են Ագաթանգեղոսի հետևյալ տեղեկության վրա.

«Գտավ բազմաթիվ եղբայրներ, որոնց համաձայնեցրեց գալու իր հետ, որպեսզի կարգի նրանց քահանայության իր երկրում, գումարելով բազմաթիվ խումբեր՝ վերցրեց նրանց իր հետ»[9]:

ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (359—379)

Ներսես կաթողիկոս իր մեջ խտացնում էր իր նախնիների բոլոր դրական գծերը՝ ջերմեռանդ հավատացյալ, քաջ հովվապետ, մարդասեր ղեկավար, կրթանվեր ու հայրենասեր հոգևորական: Նա իր ունեցածը կամ կյանքը չսակարկեց հանուն իր հոտի լուսավորության և եկեղեցու շինության:

Բազմավաստակ հայրապետի ուշադրության կենտրոնում եղել է նաև կրթական հարցը՝ եկեղեցու ապագավորներ պատրաստելու նպատակով: Այդ մասին Փավստոս գրում է. «Շատ տեղեր՝ Հայաստանի բոլոր գավառներում բացեց հունարեն և ասորերեն (լեզվով) դպրոցներ»[10]:

Յուրաքանչյուր գավառ դպրոցով օժտելիս Ներսես Մեծը, անշուշտ, չէր կարող կաթողիկոսարանին կից վարդապետարանը փակ թողնել: Ի տարբերություն նախորդ դպրոցների, ներսիսյան դպրոցները ընդհանրապես ցերեկյա էին, չունեին «դարման ոռճկաց»-ներ, այլ պահվում էին բարեսիրների նվերներով կամ եկեղեցական զանազան եկամուտներով:

Ներսիսյան դպրոցների կատարած դերի մասին Օրմանյան սրբազանը գրում է. «Այդ դպրոցներուն աշակերտները եղան վերծանող և թարգմանիչ պաշտոնյաներու զորացման ոահվիրաները, որոնք նամիսա բացին հայերեն դպրության սկզբնավորության: Այս խումբեն եղան նույնիսկ Ներսեսի զավակը՝ Սահակ, և ձեռնասունը՝ Մեսրոպ, հայ գիրին գտիչները և հայ դպրության նախահայրերը»[11]:

Ներսես Մեծը չբավարարվեց օտար գործակիցների աշխատանքով: Նա ընտրեց արժանավոր աշակերտներ և նրանց ուղարկեց այն օրերի հռչակված ուսումնական կենտրոնները, ոմանց դեպի արևմուտք, իսկ ուրիշներին՝ դեպի Ասորիք կամ Եգիպտոս: Դա տեղական ուսուցիչներ պատրաստելու առաջին քայլն է:

Հ. Վ. Հացունին և Ալպոյաճյանը Ներսիսյան դպրոցների մասին համանման եզրակացության են հանգում. «Լուսավորչի կողմե հաստատվածներուն հետ գրեթե նույն ծրագիրը, բայց թերևս ավելի ժողովրդական հանգամանք մը ունեին, որովհետև կրգտնվեին ամեն գավառի մեջ և այս պատճառով իսկ կենթադրվի, թե ցերեկյա էին»[12]:

Ներսիսյան ձեռնասուն սաներից են ս. Սահակ Պարթև կաթողիկոսը և ս. Մեսրոպ Մաշտոցը, ապա նաև Բասենի խստ եպիսկոպոսը, Արտաշատի Զուիթա երեցը, որին գերեվարեց Մերուժանը, և նահատակվեց Պարսկաստանում:

«Սահակ և Մեսրոպ... այս դպրոցներու աշակերտներն էին և ասոնց շնորհիվ տիրացած այն տիպար կամ դասական հայերենին՝

[7] Նույնը, էջ 483—484:

[8] Մ. արք. Օրմանյան, «Ազգապատում», Կ. Պոլիս, հ. 1, 1912 թ., էջ 100:

[9] Ագաթանգեղոս, էջ 468:

[10] Փավստոս, «Պատմություն», Վենետիկ, 1832 թ., էջ 77:

[11] Օրմանյան, նույնը, հատոր Ա, էջ 172:

[12] Ալպոյաճյան, Նույնը, էջ 25: Հացունի Վ., նույնը, էջ 19:

որով հետո պիտի թարգմանեին Ս. Գիրքը»[13]:

Պատմիչները, խոսելով Ներսես Մեծի օգտաշատ գործունեության մասին, հատկապես նշում են, որ ս. Մեսրոպը էր «սնեալ և ուսեալ առ Մեծին Ներսէսի»:

Ներսես Մեծը որտեղի՞ց էր բերում և հայթայթում իր դպրոցի ուսուցիչները: Գարեգին արքեպիսկոպոս Տրապիզոնցին իր «Աշխարհի լույսն ի հայս» գրքում այդ մասին գրում է.

«Ներսես ուսուցչության պաշտոնին կոչեց մասնավորապես այնպիսիներ՝ որոնք իրենց ուսումն ստացած և այդ գործին պատրաստված էին կրթական օտար կենտրոններում մեջ: Ասենցմե գլխավորն էր Աթենք, ուր տակավին Ներսեսի օրերում՝ կապրեր հայազգի աշխարհահռչակ գիտնական հռետոր-ուսուցիչ՝ Պրոյերեսիոս կամ Պարույր»[14]: Հայտնի է, որ Պարույրի շուրջն էին համախմբվում հայ լավագույն ուսանողությունը և ստանում նրանից իր ժամանակի լավագույն ուսումը, գիտելիքները և վերադառնալով հայրենիք, այն փոխանցում իրենց աշակերտներին:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ՝ ՀԱՅԱԳԻՐ ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՑԸ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊՅԱՆ ՇՐՋԱՆ (405—443)

Ե դարի սկզբներին, այսինքն մեսրոպատառ հայ դպրության արշալույսին, Լուսավորչից հիմնված և իր հաջորդների օրով այս կամ այն կերպ շարունակվող Մայր Աթոռի վարդապետարանը չտվեց ցանկալի արդյունքը և հետք չթողեց մեր ժողովրդի մշակութային, գիտական, գրական կյանքի վրա: Հայրենիքում այդ վարդապետարանի գրական խոսքի ամրության մեղքը, անշուշտ, ոչ ուսուցիչներինն է և ոչ էլ աշակերտներինը, այլ ամեն բանից առաջ սեփական նշանագրերի պակասին, և հետո՝ տիրող քաղաքական սուր պայքարներին ու վայրիվերումներին:

Գրերի գյուտից հետո հայ դպրոցը դրվում է ամուր հիմքերի վրա:

«...Ցանկային կարգել դպրոցս և ուսուցանել բազմութիւն մանկտոյ, քանզի ամենայն անձն յորդորեալ փափագէր յուսումն հայերէն գիտութեան, որպէս ի խուսարէն, յասորի տանջանացն, զերծեալք ի լոյս՝ խնդային»[15]:

Վռամշապուհի իսկ հրամանով Հայաստանում բացվում են հայատառ դպրոցներ, որտեղ նորաստեղծ հայ նշանագրերով ուսանում էին հայ նորահաս մանուկները՝ հայ ուսուցիչների ձեռքի տակ:

Հիմք է դրվում գրավոր հայ գրականությանը: Թարգմանվում և բազմացվում են Աստվածաշունչ—գրքերը որքան քրիստոնեության տարածման մտահոգությամբ, նույնքան էլ դրանք իբրև դասագիրք օգտագործելու նկատումով: Սահակն ու Մեսրոպը հիմնադիրներն ու հոգին էին թարգմանչական և ուսուցանողական այս հուժկու գործունեության և անձամբ ղեկավարում էին այն, իրենց դպրոցական ցանցը հասցնելով երկու Հայաստանների մինչև ամենահեռավոր ծայրագավառները իսկ:

Այս եռանդուն ջանքերի նպատակը կրկնակի էր.

ա) գրականությամբ Ավետարանի լույսը տարածել Հայաստան աշխարհում և այն սիրելի ու մատչելի դարձնել բոլոր հայերին.

բ) ժողովրդին գրաճանաչ դարձնել:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էին երկու տիպի դպրոցներ, մեկը՝ տարրական, պարզապես տառաճանաչ դարձնելու համար մարդկանց, որպեսզի դրանով նրանք կապվեն քրիստոնեական կրոնին, իսկ մյուսը՝ նեղ մասնագիտական, պատրաստելու համար Ավետարանի ներհուն քարոզիչներ և ժողովրդական կրթության ձեռնահաս մշակներ:

Դրանցից երկրորդը գերադաս կարևորություն ուներ, ուստի Սահակը և Մաշտոցը իրենց անմիջական հսկողության տակ «նորագիտ վարդապետութեան» համար աշակերտներ են համախմբում Վաղարշապատում, որտեղ ս. Մաշտոցը երկու տարի անընդմեջ դասախոսում է:

Այսպիսով «եկեղեցու սյուներն սկսեցին համարձակ ձեռքով Քրիստոսի ավետարանիչների գործը կատարել, Հայաստան ազգի զանազան կողմերը, գավառները ու տեղերը խումբ-խումբ ուղարկել ճշմարտության աշակերտներին»[16], ուր մեծ աշակերտություն է հավաքվում բոլոր տեղերից ուսանելու և հմտանալու նորագույն վարդապետությանը. «Որովհետև Այրարատյան գավառում, թագավորների ու քահանայապետների նստավայրում բխեց հայերի համար Աստծու պատվիրանների շնորհքը»[17]:

Այսպես, Հայաստանում սկիզբ էր առնում դպրոցական կանոնավոր մի ցանց, որի

[13] Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի Խաչատուրյան, «Աշխարհի լույս ի հայս» հ. 1, Փարիզ, 1938 թ., էջ 304—305:

[14] Գարեգին եպիսկ.-Տրապիզոնի, «Աշխարհի լույս ի հայս», հ. 1, էջ 305:

[15] Ղազարայ Փարպեցւոյ «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1907. էջ 32:

[16] Կորյուն, «Վարք Մաշտոցի», աշխ. Մ. Արեղյանի, Երևան, 1962 թ., էջ 107:

[17] Կորյուն, նույնը, էջ 107:

ՀՍՍՌ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

գրեթե էր Վաղարշապատի բարձրագույն վարդապետարանը, իսկ շրջաններում ուրիշ դպրոցներ՝ նախնական ծրագրով:

Հայաստան աշխարհը շնորհիվ Վաղարշապատի վարդապետարանի, ծանոթացավ Հին և Նոր կտակարաններին, վերահաս և խելամուտ եղավ հայտնություններին և փրկագործ տնօրինություններին:

Այս բոլորը տեսնելով Կորյուն պատմիչը բացականչում է. «Այն ժամանակ անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու գանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ, մի անգամից եկան հասան, հայաբարբառ, հայրենախոս դարձան օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասին հետ, և հառաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին»[18]:

Կրթական այս շարժման հետ զուգընթաց, նրանք դիմում են նաև իրենց բուն նպատակին, ավետարանական գործունեությամբ և միաբան խորհրդակցությամբ Հայաստանը բաժանում են առաքելական երկու շրջանի, որտեղ և սկսում են իրենց լուսավորական աշխատանքը: Ս. Սահակ շրջում է Այրարատում, Տարոնում և Վասպուրականում, իսկ Մաշտոցը՝ Գողթնից սկսելով Հայաստանի մյուս մասերը, իր հետ տանելով Տիրայր Խորձենացուն և Մուշե Տարոնեցուն:

Հայ գիրը և հայալեզու գրականությունը ամրապնդեցին հայի հավատքը ի Քրիստոս և փրկեցին հայ ժողովուրդը ձուլվելու վտանգից: Այն կրոնը, որ մի հարյուրյակ տարի, հակառակ մեծամեծ զոհողությունների, մնում էր խորթ ու անհարազատ, դարձավ սիրելի և խոր արմատներ գցեց հայու հոգու մեջ:

Պատրաստված, մարզված և օտար լեզուների մեջ հմտացած և թարգմանչական գործում մասնագիտացած՝ Սահակ-Մեսրոպյան աշակերտները զարգացնում էին մեր ոսկեդենիկ գրականությունը, մանավանդ լեզվի տեսակետով: Մեր թարգմանիչները, հույն և ասորի եկեղեցական հայրերի գործիչները թարգմանելով, մեծ ծառայություն են մատուցել ոչ միայն իրենց ազգին, այլև մարդկության, որովհետև որոշ բնագրերի կորուստով, նրանց հայերեն թարգմանությունը հանդիսանում է միակ աղբյուրը տվյալ հեղինակից:

Սահակ և Մաշտոց և նրանց հասունացրած աշակերտների փառապանծ փաղանգը եղան նույնպես ազգային դաստիարակության առաջին ռահվիրաները և անդրանիկ ուսուցիչները:

«Այսպես՝ Սահակի և Մաշտոցի ձեռամբ և թագավորին քաջալերությամբ և հովանավորությամբ Հայաստանն ունեցավ կանոնավոր դպրոցական կազմակերպություն մը»[19]:

Դպրոցական ցանցը բաշխված էր ըստ վարչական շրջանումների, որի վրա նույնպես հիմնված էին եկեղեցական իշխանության ատորուբաժանումները: Թուգավոր-կաթողիկոս-մայրաքաղաք, մեծ նախարար-եպիսկոպոս-նահանգային կենտրոն և այսպես վարչական բաժանման փոքրանալուն զուգընթաց դպրոցի կարևորությունն ու կարողությունն էլ սահմանափակվում էր:

Վարդապետարանի հիմնական դասագիրքը Աստվածաշունչ մատյանն էր: Դա այդպես էր ոչ միայն վարդապետարանում, այլ նաև ժամանակակից բոլոր քրիստոնեական մեծ ու փոքր դպրոցներում, ինչպես ընդհուպ մինչև ԺԸ—ԺԹ դարերը, հատկապես մեզանում: Եթե Առակաց գիրքը ամենից առաջ թարգմանվեց հայերենի, դա այն օգտապաշտ նկատումով էր, որ այն կարելի էր գործածել որպես յուրագույն մի ընթերցանության գիրք իր հոգին առակներով սնող մի ժողովրդի զավակների համար, որովհետև մանր խրատական ասացվածքները հեշտ են միտք պահվում և միևնույն ժամանակ ընդլայնում բարոյական և հոգեկան ցանկության կառույց ձեռք բերելու ուսանողների մոտ:

Բազմաթիվ ապացույցներ կան այն մասին, թե Սահակ-Մեսրոպյան դպրոցների մեջ արդարև ուսման գլխավոր առարկան ս. Գրոց ծանոթությունն էր:

Ե դարում, ընդհանուր կերպով, ժողովուրդը ս. Գրքին լավ ծանոթ էր: Այսպես, Վարդան Մամիկոնյանի մասին ասվում է, թե «տեղեակ էր ի մանկութենէ իրմէ սուրբ կտակարանաց», իսկ այլոց համար վկայություն կա, թե «բազումք... զգիրս սուրբս ուսեալք էին ի մանկութենէ», Եղիշեն իր դյուցազնավեպում, իր գլխավոր հերոսներից մեկին՝ ս. Ղևոնդի բերանը դնում է հետևյալ խոսքերը, ուղղված գերագույն մարտին պատրաստվող հայ ռազմիկ-նահատակներին. «Քանի որ ինձնից ավելի տեղյակ և հմուտ եք սուրբ կտակարաններին»[20]:

Վաղարշապատի վարդապետարանի մեծ ծառայություններից մեկն է նաև հայկական գրչության արվեստի հիմնադրումը: Առաջին անգամ այնտեղ մարզվեցին արագագիր և վայելչագիր գրիչները, որոնք Աստվածաշունչ գրքերը բազմացրին և տարածեցին Հայաստանով մեկ, ապահովելով նրանց

[18] Նույնը. էջ 106:

[19] Ալպուաճյան Ա., նույնը, հատոր 1, էջ 57:

[20] Եղիշե, «Վարդանանց պատմությունը», Երևան, 1946 թ., էջ 182, աշխ. Ե. Տեր-Մինասյանի:

միակերպությունը և ճշտությունը: Այսպես, Վաղարշապատի վարդապետարանը հանդիսացավ այդ տեսակետից մի մեծ կենտրոն. «Այդ գրչության արվեստը տարածվեցավ ընդհուպ ուր որ հայ վանք մը կամ դրպրոց մը կար»[21]:

Մեսրոպյան դպրոցի ակնառու նվաճումներից մեկն էր ուսման ընդհանրականացումը: Մեսրոպյան հաստատած դպրոցների ցանցում սովորում են նույնիսկ կանայք, որոնք կատարում են զգալի դաստիարակչական գործ: Վահան Մամիկոնյան, Ղազար Փարպեցի Մամիկոնյան Զվիկ տիկնոջ դաստիարակության արգասիքն են:

Ս. Էջմիածնի վարդապետարանը Հայաստանում գործող միակ բարձրագույն ուսումնարանն էր: Նրա բարձր հովանավորը Հայաստանի թագավորն էր, իսկ ավագ դասախոսները՝ ս. Սահակն ու ս. Մեսրոպը: Վարդապետարանը ոչնչով չէր տարբերվում հունական կամ ասորական նման բարձրագույն հիմնարկներից: Այնտեղ, ս. Գրքին զուգընթաց, դասավանդվում էին՝ հայոց լեզու և գրականություն, քերականություն, վարքագրություն, պատմություն, դավանաբանություն, գրչության արվեստ, ճարտասանություն, արքազան երաժշտություն, տրամաբանություն: Նյութերի այս տեսակավորումը և քանակը, անշուշտ, միշտ նույնը չէ մնացած: Համաձայն տիրող պայմանների և հասկացողությունների, դասավանդող ուսուցիչների հմտության, դրանք եղել են ծավալուն կամ ամփոփ:

Արդարև, Աստվածաշունչը հիմքն էր ուսուցման Վաղարշապատի դպրոցում: Փարպեցին հիշում է, որ «մեր երանելի վարդապետքն զամենայն զկտակարանս եկեղեցոյ երիցս և չորիցս ուսուցանեալ մեզ՝ ի սկզբանէ մինչև ի կատարած գրոցն, համարս պահանջէին ի մէնջ զնոյնս»[22]:

Ուրեմն Աստվածաշունչը երեք-չորս անգամ ամբողջովին, ծայրից ծայր կարդալ էին տալիս, ուսումնասիրում, մեկնում կամ նույնիսկ անգիր էին սովորեցնում:

Ս. Գրոց ուսման տրված կարևորությունը շատ հասկանալի էր: Ս. Գրոց հմտությունը (Կորյունն այն անվանում է «գիտութիւն Աստուծոյ» կամ «շնորհ պատուիրանացն Աստուծոյ» հայ տառերի գյուտի բուն իսկ նպատակն էր, հետևաբար և հայ դպրոցի:

Կրոնական դաստիարակությունը ամբողջացնող և հայ դպրոցի բուն նպատակին ծառայող ուսումներ էին նաև ս. Գրոց **մեկնությունները կամ մեկնողականքը**, որոնք գրեթե ս. Գրոց հետ ս. Սահակի և ս. Մեսրոպի ու իրենց անմիջական գործակից աշակերտների ձեռքով թարգմանվեցին հայերենի: Այս սուսաջադրության ենք պարտական ոսկեդարյան զմայլելի լեզվով թարգմանությունները՝ Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Աղեքսանդրացու, Եփրեմ Ասորու և այլոց մեկնողական գրքերի:

Մեկնողական գրքերի թարգմանության զուգընթաց կատարվել են նաև Հարանց վարքի, Վարք սրբոցի թարգմանությունները, որոնցից ոսկեդարյան դասական լեզվով կամ մեզ հասած նմուշներ, ինչպես Պողոս Անապատականի, Հովհաննես Գրեցու, Մարկոս Միայնակյացի վարքերը և բազմաթիվ սրբոց վկայությունները[23]: Այս վկայությունները, որոնք ներկայացնում էին կրոնի արի նահատակների կյանքն ու գործունեությունները, նպատակ ունեին ուսանողներին ներշնչել կրոնասիրություն և աստվածասիրություն: Հետագայում դրանք ամփոփվեցին «Յայսմաւորք» կոչված գրքում:

«Գալով քերականության,—գրում է Ա. Ա. Ալպոյաճյանը,—Ե դարեն որևէ ձեռնարկ չէ հասած մեզի այդ մասին, սակայն հավանորեն ոսկեդարյան մեր թարգմանիչներուն, մանավանդ անոնց՝ որոնք հելլեն դաստիարակություն առած էին, անծանոթ չէր կրնար ոլլալ Դիոնիսիոս Թրակացիի տիեզերական նամբավ վայելող քերականության, որուն իբր դաս ավանդված ըլլալը չէ հիշված ոչ Կորյունեն և ոչ Ղազար Փարպեցիե, սակայն նկատելով, որ Դիոնիսիոսի Քերականությունը հետո Սյունյաց վարդապետարանին մեջ կրդասախուսվեր, Խ. Գուրյան («Վաղարշապատի դպրոցը», Արև, թ. 6348) կը հետևցնե, թե անոր հունական օրինակը կգործածվեր Վաղարշապատի դպրոցին մեջ իբր դասագիրք»[24]:

Հիները (նրանց կարգին և Դիոնիսիոս) «քերականություն» ասելով չէին հասկանում այն, ինչ մենք այսօր ենք ըմբռնում այդ անվան տակ: Նրան ավելի ընդարձակ իմաստ էր տրվում: Այն իր մեջ ամփոփում էր նաև գրականությունն ու պատմությունը, որոնք, իհարկե, Վաղարշապատի դպրոցում չէին անտեսված: Թարգմանվել են նաև եկեղեցական պատմության վերաբերյալ գործեր, որոնց ոսկեդարյան ընտրելագույն լեզվով նմուշներից մեզ հասել են, ինչպես Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը»-ը և «Ժամանակագրություն»-ը (Քրոնի-

[21] Գուրյան Ե. պատրիարք, «Պատմություն հայ մատենագրության», 1933 թ., Երուսաղեմ, էջ 67:

[22] Փարպեցի, նույնը, էջ 160

[23] Տես սրանց ցուցակը Հանդես Ամսօրյա, 1932 թ., էջ 123—125.

[24] Ալպոյաճյան Ա., նույնը, էջ 73—74:

կոն), որոնք հայերենի են վերածվել Մաշտոցի հրամանով, ապա հավանաբար որպես դասագիրք գործածվելու համար Վաղարշապատի վարդապետարանում կամ ժողովրդին խելամուտ դարձնելու համար տիեզերական կամ եկեղեցական պատմության գլխավոր անցքերին:

Պատմականների շարքին մեջ կարող ենք մուծել նաև Լաբուբնայի «Վարդապետություն Ադդեի» գործի թարգմանությունը ասորերենից, ինչպես Ագաթանգեղոսի «Պատմություն Հայոց»-ը, Փավստոս Բուզանդի «Պատմություն հայոց»-ը, Կորյունի «Պատմություն վարուց Մաշտոցա վարդապետին»-ը, որոնք վավերական կերպով Ե դարում են հայացվել-գրվել:

«Իմաստասիրությունը կամ հոետորությունը կամ ճարտասանությունը նույնպես անկասկած կավանդվեր Վաղարշապատի դպրոցին մեջ հունարեն «Պիտոյից գիրք»-ի վրա[25]:

Վաղարշապատի վարդապետարանում հոետորության դաս լինելու մասին Կորյունն ասում է. «Պարզախոս, հոետորաբան, կրթված, աստվածատուր իմաստությանը ծանոթ»[26]: Նույն դարում փայլած Հովհան Մանդակունին թողել է գեղեցիկ ճառեր: Ե դարին էլ ճարտասանության դաս տրված պետք է լինի մանավանդ որ ըստ Փարպեցու ս. Սահակ, որ «հույժ լցված վարժությամբ գերազանցում էր բազմաթիվ հույն գիտնականներին, լինելով կատարելապես հմուտ երաժշտական տառերին և հոետորական հորդասաց հայտնաբանության, ավելի ևս հմուտ (տեղյակ) էր երևում փիլիսոփայական արվեստներին»[27]: Չէր կարող զանց առնել հոետորության ուսումը ավանդել Վաղարշապատի դպրոցի մեջ: Նշանակալի է, որ շեշտված է, թե. «Սահակ լավ քարոզիչ էր, ուր որ գնար, «յոստանի կամ ի հովս» կքարոզեր և իր խոսքը մեծ փափաքով կունկնդրվեր թե եկեղեցական և թե աշխարհական դասից»:

Ե դարու հայ եկեղեցու վիճակն արդեն անհրաժեշտ էր դարձնում այդ ուսման կարիքը, որովհետև ճարտասանությունը և տրամասությունը իրարից անբաժին էին, և երկուքն էլ կարևոր էին պաշտպանելու համար քրիստոնեական վարդապետությունը ընդդեմ հեթանոս իմաստասերների և աղանդավորության:

Հետևաբար, ճարտասանության հետ տրամաբանությունն էլ, կամ ավելի լայն առումով՝ իմաստասիրությունը կամ փիլիսոփայությունն էլ նույնպես պետք է ավանդված լիներ:

Նկատելի է, որ իմաստասիրական ուսումները միշտ ամենամեծ խնամքով ուսումնասիրվեցին հունական եկեղեցու մեջ: Պղատոն և Արիստոտել շատ մեծ ազդեցություն ունեցան գիտական զարգացման վրա: Եկեղեցու հայրերը մինչև անգամ առաջարկել են, որ Արիստոտելի ուսումը ավանդվի իբրև ներածություն աստվածաբանության:

Ուրեմն իմաստասիրության ուսումը, հույն քրիստոնյա վարժարանների մեջ այնքան կարևորությամբ մշակված, չէր կարող անտեսվել Վաղարշապատի դպրոցին մեջ, որի վարիչները և ուսուցիչները մեծ մասամբ հունական քրիստոնեական կրթություն ունեին:

Այսպես, ս. Սահակը «տեղեկացեալ էր փիլիսոփայական արուեստից»՝ Փարպեցու բառերով և ս. Մեսրոպ Մաշտոց անծանոթ չէր նրանց իր կարգին, որպես հելլեն դաստիարակությամբ մարզված մեկի:

Մեր թարգմանիչները, անմիջական գործակիցները Սահակի և Մեսրոպի, նույնպես անծանոթ չէին հույն իմաստասերների գործերին և ճանաչում էին Պղատոնի, Արիստոտելի և այլոց գործերը իրենց բնագրերով, որոնք ուսումնասիրության առարկա էին հունական դպրոցների մեջ: Մեր վարդապետները, երբ Բյուզանդիոն դնացին, ուսան «զգործնական և զտեսական զիմաստասիրութիւն և զմասունս նոցա, որք են թուով երկոտասան»:

Նույն դարում թարգմանված բազմաթիվ ասորական և հունական հայրերի վարդապետական և բարոյագիտական գրվածքները, որպես հայրաբանականք, հավանաբար գործածվել են որպես ճարտասանական արվեստի զարգացման դասագրքեր:

Արդարև, շատ հավանական է, որ թե հավատքը զորացնելու և թե Վաղարշապատի դպրոցի ուսանողներին ճարտասանության մեջ մարզելու համար ոսկեդարում թարգմանված լինեն նաև Եվթաղի, Հերոնիմոսի, Եպիփանի, Սեբերիանոսի, Եվսեբիոսի, Եմեսիայի եպիսկոպոսի, Կյուրեղ Աղեքսանդրացու և Կյուրեղ Երուսաղեմցու, Բարսեղ Կեսարացու, Եվագր Պոնտացու, Հյուպոլիտոս Հռոդոսցու, Գրիգոր Սքանչելագործի, Արիստիդես Աթենացու, Եփրեմ Ասորու, Հակոբ Մծբնա հայրապետի (ավելի ճիշտ Հրահատ Զգոն Պարսիկի, Զենոբ Ամիդի եպիսկոպոսի, Ոսոհայի եպիսկոպոսի ճառերը[28]:

[25] Խ. Գուրյան, Արև, թ. 6343:

[26] Կորյուն, նույնը, էջ 105:

[27] Փարպեցի. նույնը, էջ 32:

[28] Տե՛ս Հանդես Ամսօրյա, 1932 թ., էջ 118—123:

Վաղարշապատի վարդապետարանը տեվել է մոտ մեկ դար (գրերի գյուտից մինչև Վահան Մամիկոնյանի մահը 405—510)։ Դպրոցը հովանավորում էին Մամիկոնյանները, որոնցից ոմանք այնտեղ ստացան իրենց ուսումը։

Մաշտոցի մահից հետո (440) դպրոցի տեսչությունը ստանձնած պետք է լինի, ըստ Գուրյանի «վերապրող երեք սաներից մեկը, հավանորեն Եզնիկ, որուն անմիջապես հաջորդն էր թերևս Աղան Արծրունին։ Ասոր հաջորդած է Ղազար Փարպեցին, վերջինը Վաղարշապատի դպրոցի տեսուչներեն»[29]։

«Այսքան կարևոր դեր ու այսքան արդյունավոր գործ կատարող հաստատությունը՝ երկրին քաղաքական կացության և դժբախտ պարագաներու բերումով՝ չկրցավ տևական փայլով մը իր գոյությունը շարունակել, և հարյուր տարիներու փայլուն գործունեությունե մը հետո անշքացավ, որքան արտաքին պարագաներու՝ նույնքան նաև ներքին վեճերե մաշած և հեղինակավոր առաջնորդութենէ զուրկ»[30]։

Այսպես, 451 թվից հետո այն խանդավառ գործունեությունը, որ սկսվել էր Սահակի և Սեսրոպի միջոցով, ընդհատվեց։ Նույնիսկ հասարակաց դպրոցները փակվեցին։

451 թվականից հետո շատ հավանական չէ, որ Սահակ-Սեսրոպյան դպրոցական ցանցը իր կանոնավոր ընթացքը շարունակած լինի Հայաստանի պարսկական և հունական բաժիններում։ Հայ պետական և եկեղեցական ամուր հովանուց և քաջալերանքից զրկված հայ կրթական գործում շատ բան պիտի մնար պատահականության։

Այնուամենայնիվ Վաղարշապատի վարդապետարանը իր գոյությունը պահպանեց ս. Էջմիածնում որպես հայրապետանոցի դպրոց մինչև Աթոռի Դվին փոխադրումը (485 թ.), որտեղ բացվեց հոգևոր դպրոց։

[29] Խ. Գուրյան, Արև, թ. 6948։

[30] Ալպոյաճյան Ա., նույնը, էջ 82։

Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՈՐՊԵՍ ՄԱՏԵՆԱԳԻՐ

«ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ» ԵՎ «ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌ»-ՆԵՐԻ ԱՐԺԵՔՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ճառը՝ հռետորական արվեստի կանոններով գրված ընդարձակ քարոզը, եկեղեցական մատենագրության հնագույն ու կարևոր գրական տեսակներից մեկն է, որը հանդիսավոր առիթներով ընթերցվում կամ արտասանվում էր ատյանում, եկեղեցում, և այդ պատճառով էլ կոչվում էր նաև ատենաբանություն, բեմբասացություն:

Ինչպես ընդհանուր եկեղեցական գրականությունը, այնպես էլ մեր հին մատենագրությունը հարուստ են եկեղեցական հայրերի գրած ճառերով:

Գրերի գյուտից և Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից հետո, մեր թարգմանիչ վարդապետները մեծ ուշադրություն են դարձնում նաև ճառերի թարգմանության վրա:

Կորյունը վկայում է, որ ս. Մեսրոպ, իհարկե նաև ս. Սահակ, ստանում էին «բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ» և «զհայրապետացն սրբոց ճշմարիտ զիմաստութիւնն» և թարգմանելով տարածում էին Հայաստանում՝ իրենց «վիճակում զգուշության համար» (Խորենացի):

Ե-րդ դարում մեր թարգմանիչների ձեռքով հայերենի վերածված հույն և ասորի եկեղեցական հայրերի գրվածքների մեջ հիշատակվում են Աթանաս Ալեքսանդրացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Բասիլ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Հովհան Ոսկեբերանի, Սեբերիանոսի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Եփրեմի և այլ եկեղեցական հայրերի ճառերի թարգմանությունները:

Ճառ են գրում նաև մե՛ր եկեղեցու հայրապետները ու վարդապետները, ինչպես ս. Սահակն ու ս. Մեսրոպը, Եզնիկն ու Եղիշեն, Խորենացին ու Դավիթ Անհաղթը, Մանդակունին և ուրիշներ՝ հետագա դարերում:

Սակայն, ըստ մեր հնագույն պատմիչների և մատենագիրների վկայության, ս. **Գրիգոր Լուսավորիչն է հանդիսանում** ո՛չ միայն հայ հոգիների լուսավորիչը՝ «զմերոյ լուսաւորութեանցն լուսաւոր վերակացու»-ն, ինչպես նրան բնութագրել է Խորենացին, այլ նաև «մերոյ լուսաւորութեան նախաշաւիղ և նահապետ»-ը, այսինքն **հիմնադիրը մեր եկեղեցական մատենագրության** (Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 247):

Արդարև, մատենագրական հնագույն վկայությամբ Լուսավորչին են ընծայվում, այլ գործերի շարքին, մանավանդ, կրոնա-

կան մեծ արժեք ներկայացնող երկու կարևոր աշխատություններ, ճառեր, որոնք իրենց բովանդակությամբ հիմք և աղբյուր են հանդիսացել մեր հետագա դարերի մատենագիրների և աստվածաբանների համար, իրենց մատենագրական երկասիրությունների մեջ:

Այդ երկու աշխատություններն են՝

1. **Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի,**
2. **Յաճախապատում ճառք լուսաւորք սրբոյ Հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի Լուսաւորչի:**

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

Մեր պատմիչներից առաջինը Ագաթանգեղոսն է, որ իր «Պատմութիւն հայոց» արժեքավոր երկասիրության մեջ ամբողջությամբ մեջբերել է «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» ճառորեն գրված այդ աշխատությունը: Այս հոդվածի նպատակից դուրս է խոսել Ագաթանգեղոսի անձնավորության, նրա պատմության մատենագրական արժեքի, ժամանակի, լեզվի և այլ հարցերի մասին: Ագաթանգեղոսը Դ՝-րդ դարի հեղինակ է, թե Ե-րդ դարի, դա բանասիրական-մատենագիտական հարց է: Կարևորն այն է, որ Ագաթանգեղոսի մոտ եղած «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» գրվածքը մեր եկեղեցական մատենագրության **հնագույն և առաջին** գրական աշխատությունն է, և որի **կրոնական արժեքի** վրա ցանկանում ենք խոսել:

Ագաթանգեղոսի պատմությունը, գրված Տրդատ Գ-ի հրամանով, նախ պատմելու համար «զհայրենեացն գործս քաջութեան քաջին Խոսրովու. . .» և ապա «վասն հօրեմոյն քաջութեանն Տրդատայ» (Յանաչաբան, էջ 15), լայն տեղ է հատկացրած հայ եկեղեցու մեծ նահատակին՝ ս. Գրիգոր Լուսավորչի կյանքի, առաքելական, քարոզչական գործունեության և վարքագրության, «վասն սիրելեացն վկայիցն Աստուծոյ... թէ որպէ՛ս և կամ զիա՛րդ եկեալ իբրև լուսաւորք ծագեցին, փարատել զմէգ խաւարի ի Հայաստան աշխարհէս» (15):

Ագաթանգեղոսի պատմությունը բաղկանում է չորս գլխավոր մասերից.

ա) Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի,
բ) Վկայաբանութիւն Հռիփսիմեանց,
գ) Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի,
դ) Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան, ընդ ձեռն սրբոյ նահատակի:

Ագաթանգեղոսի պատմության Ա, Բ և Դ մասերը պատմական մեծ արժեք են ներկայացնում՝ Դ դարի հայ եկեղեցու և հայ ժողովրդի պատմության համար, որպես հնագույն թե՛ եկեղեցական և թե՛ ազգային առաջին աղբյուր, իսկ Գ մասը ունի զուտ կրոնական, հոգևոր և բարոյական մեծ նշանակություն:

«Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» աշխատությունը մի ընդարձակ ու հոյակապ ճառ է, մեր օրերի բացատրությամբ՝ Հին և Նոր կտակարանների սրբազան պատմություն, իր լայն հասկացողությամբ և ընդգրկումով, ինչպես նաև հայ առաջին քրիստոնեականը, ուր խոսվում է նաև քրիստոնեական կրոնի հիմնական վարդապետության, հավատո գլխավոր կետերի, բարոյական սկզբունքների մասին, տիրական շեշտով, հեղինակությամբ և համոզումի կրակով:

«Վարդապետութիւնը» բաղկանում է շուրջ 450 առանձին հատվածներից և Աստվածաշնչի պատումների ֆոնի վրա սկսվում է արարչագործության պատմությամբ, «երկնի և երկրի, հրեշտակաց և առաջի մարդոյն. աստուածակերպ նմանութիւն և անձնիշխանական պատիւ մարդոյն»:

Արարչագործությունը կատարվում է «միաստնական Երրորդութեանն միով զօրութեամբ կամացն ամենազօրաց, միասիրտ, միմտկամ, միաբուն ինքնութեամբ» (էջ 133) և հրամանով «լինել լոյս, և անդէն լոյսն հաստատեալ՝ խաւարակոյ օրաբեր» (134):

Արարչագործության լրումը, թագը ու պսակն է հանդիսանում մարդը, որը ստեղծվում է Աստծու պատկերով և նմանությամբ, «սարդ պատկեր Աստուծոյ է». որպես «իշխան», նրան տրված «իմաստութեան, բանաւորութեան, խելամտութեան, կենդանութեան, հոգևոր շունչի» համար, որպեսզի նա հանդիսանա իմանա և մտքում պահի «զամենայն շնորհաց զաստուածակիր, աստուածատուր իմաստութիւնն և զբանաւորութիւնն, զատաստանաւորութիւն և իշխել ի վերայ ամենայն երկրաբուղխ, երկրածին ստեղծուածոցն և կացոյց զնա տէր ամենայնի» (136):

Աստված մարդուն դիտավորում է և մեծարում «մտօք» և «ազատութեամբ», օժտում «անձնիշխանական կամացն իշխանութեամբ», այսինքն ազատ կամքով, որպեսզի նա «իւրովք կամօք անձնիշխանութեանն գիտասցէ ընդ բարեացն գործոց, ...գիտասցէ խորս սուզ ի չարէն, զբարին ընտրել իրոց կամացն յաւութեամբ իբրև յինքեան քաջութենէ» (138):

Բայց մարդը ընկնում է փորձության մեջ և մեղանչում իր ազատ կամքով և ցանկությամբ՝ «խաբէութեամբն ապականեալ» և որի հետևանքով է՝ «յաստուածակերպ փառացն մերկացան»:

Աստված սակայն չի լքում իր անառակ որդուն՝ մեղավոր մարդուն, այլ «հայրաբար

գթացեալ բարեգործէ», և աստվածատես սրբոյ մարգարեների՝ «իմաստուն բժիշկների» միջոցով «զդեղ դարմանոյն ըստ ցաւոց ճիւանդին պատրաստել, բառնալ ջնջել զգայթակղութիւն» (149):

Այնուհետև ճառագիրը, Ադամի մեղանչումի և Կայենի եղբայրասպանության առիթով, շոշափում է «բարու և չարի» հարցը. փիլիսոփայորեն հասնելով ճշգրիտ եզրահանգումների. «չարն անձնիշխան կամաց մտեալ՝ կործանէ զիւրաքանչիւր ոք առանձինն, այլ յԱրարչէն բարի եղեալ ամենայն հաստատեցան» (135):

Աստված մեղավոր մարդկությանը փրկելու և նրան իր նախկին մարդկային արժանապատվության իրավունքի և փառքի մեջ վերահաստատելու համար, ի գործ է դնում հոգեվոր դաստիարակության բոլոր միջոցները՝ պատիժ, խոստում, հանդգման մեթոդ: Այս իմաստով Հին կտակարանը, նախապատրաստական շրջանն է հանդիսանում մարդու հոգևոր փրկության, «բազում մասամբք և բազում օրինակօք՝ կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիւք և ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդովն»:

Լուսավորիչը, երբ խոսում է հրեաների հեթանոսական, կռապաշտական բարքերի «անմիտ յիմարութեան և պղծութեան» մասին, ակնարկում է նաև հեթանոս Հայաստանի կոպիտ բարքերը: Շատ հատկանշական են Լուսավորչի հետևյալ ակնարկությունները մեր ժողովրդի կրոնական հին բարքերի մասին. «Որպէս և առ ձեզդ իսկ տեսանէի զքարապաշտ, զփայտապաշտ մոլորութիւնդ, որ առ տգիտութեամբ ի ձէնջ ընկարեցան, որ ոչ լսեն, ոչ խոսին, ոչ իմանան և ոչ չարժին և ոչ գոյ շունչ ի բերանս նոցա. և թողեալ տէր զԱստուած կենդանի, զԱրարիչն երկնի և երկրի, անշունչ անմռունչ քարանց պաշտօն մատուցանեիք, որ ոչ ինչ իսկ են» (148):

Ճառի մեջ, շահեկան ակնարկություններ կան հայ հեթանոսական կրոնի մասին (տե՛ս էջ 266, 294, 295):

Այնուհետև ճառագիրը կանգ է առնում մարդեղության խորհրդի, նրա նպատակների և հոգևոր, բարոյական փրկագործական արդյունքների մասին:

Մարդեղության և փրկագործության խորհրդի զսպանակը, գործող սկզբունքը, ուժը՝ **Աստծու սերն է դեպի մարդը:**

Աստված համագույնը ստեղծեց «իր բարի կամեցողութեամբ» և մարդուն փրկեց Իր սիրով և ազատ կամքով: Քրիստոս «ի մարդկեղէն մարմին պատեցաւ, մարմնովն իւրով զամենայն մարմին կենդանացոյց, ...զմահ-կանացուս անմահացուսցէ անմահ հոգովն, պատուեսցէ աստուածեղէն փառօքն» (185) և կամ «ծառայակից եղև մարմնով մարդկութեանն և ազատեաց ի մեղաց զմարդկութեան մարմինս» (187):

«Ճշմարիտ հաւատք այս են. խոնարհեցաւ և խառնեաց զԱստուածութիւնն ընդ մարդկութեանս» (194):

Այնուհետև, հեղինակը պատկերավոր ոճով, արտահայտիչ ձևով, թանավոր մտածումներով պատմում է Փրկչի երկրավոր կյանքի տնօրինությունները, ավետարանական դրվագները, բարեգործությունները, կանգ է առնում խաչելության, հարության խորհրդի փրկագործական նշանակության վրա և ավարտում է իր ճառը մեռելոց հարության և հանդերձյալ կյանքի մասին ավետարանական խորհրդածություններով և վախճանաբանական ակնարկություններով: «Վարդապետութիւն»-ի մեջ կարևոր տեղ է հատկացված հավատո և դավանության հարցերին, ինչպես «դաւանութիւն ուղղաւիւռ հաւատոյ յամենասուրբ երրորդութիւն» (183), «համաձայնութիւն առաքելոց ի վարդապետութիւն հաւատոյ» (359):

Ճառում ակնարկություն կա նաև ս. Հռիփսիմե կույսերի նահատակության մասին (էջ 271), «ահա երեսուն և եօթն բաժակք քրիստոսեանք, որ եկին պաշտել ձեզ. արդ դուք սպանողք էք այսց սպանելոց, հաւատացէ՛ք զհաւատս սոցա և ձգեցէք զլուծ, նոցա, լերուք վկայք ճշմարտութեանն քարոզաց» (273):

Հռիփսիմյանք իրենց նահատակությամբ «եղեն տաճար Աստուածութեան և տուն Հոգւոյն սրբոյ... որպէս Գառինք մատուցան ի մահ և եղեն զոհ փրկութեան» (297), հայոց աշխարհին:

Ճառերի լեզուն կենդանի է, պատկերավոր, բաբախուն, հարուստ թանավոր մտածումներով:

Հատվածներ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» ճառից

«Սոյն օրինակ որպէս մշակութիւնն, զի նախ վարս վարեալս ցելեալս կակղեալս հերձեալս, ակօսաձիգ պատառեալ զերկիրն անակոշտեալ, պարարտացուցեալ՝ նախ քրտնաբեր աշխատութեամբ հատանիցեն զընդվայր արմատսն մոլեբոյսս, տարապարտ աճումն սիզաբոյս բանջարոցն, և ապա սերմանել զսերմանիս օգտակարն ցանից» (էջ 259):

«Արդ՝ պարտ է ձեզ կակղել զանդս մտաց ձերոց, և խլել զմեղան գայթակղեցուցիչս յանձանց ձերոց, որ խափան անեն արդարութեանցն ի ձեզ բուսոցն, այսինքն կռապաշտութեանցն սովորութիւնք, որ ի նախնեացն հետէ մոլորեալ դանդաչեցին. որ իրրև քուն ընդ արթունս հղեալ՝ յիմարակորոյս անմտեալք՝ ընդ

վայր թարթափեցին ոչ ինչ լոգտակարան, այլ լուսայնութիւնն ի անուտիւ ի տարապարտս յանօգուտս, որ բնաւ ոչինչ իսկ են, ո՛չ օգուտ և ոչ վնաս ումեք։ Օգուտ չեն, զի անչունչք են, անիմաստք անխաղաք, անշարժք լոկ. ոմանք կոփածոյք են և ոմանք ծուլածոյք, եղեալք ի մտաց ճարտարաց» (էջ 261)։

«Աստուած, որ ամենայնիւ լոյս է, ամենայնիւ լուր է, ամենայնիւ տեսու է, ամենայնիւ բան է, ամենայնիւ զօրութիւն է, ամենայնիւ իմաստութիւն է, հոգի կենդանի, հայր կիզելոյ, լոյս անմոտիսիս է, փառք անապատում, աչքնին տեսիլ, անբաւ մեծութիւն՝ երկեր նոցա՝ որչափ զի նոցա կարասցեն հանդարտել նորա տեսլեանն մեծութեան» (էջ 158)։

«Եւ որպէս հատն մերկ յերկիր անկեալ՝ բուսեալ, առեալ արմատս, բերեալ ցողուն, արձակեալ ստեղն, կանգեալ ծուռ, ջրովացեալ, աղցեալ հասակաթոռ, ընդ միոյ հատոյն բազումս առեալ ի շայնկանութիւն սերմանելեացն պատրաստէ՝ նոյնպէս և անդ է տնաանել. բուսեալ անձինք արդարոցն ի գերեզմանաց, նոյն մարմինք նոյն հոգւով բերեալ զգործս վաստակոցն արդարութեան՝ անդստին ի գերեզմանացն յարքայութիւն վերանայլեն» (էջ 264—265)։

«Ոմն իրրև զարմաւն քաղցրաձայն և զգեղեցկատես. որպէս ասէ յաւուրցնծայ մարգարէութիւնն, թէ «Արդարքն իրրև զարմաւենիս ծաղկեսցին, և իրրև զմայրուղն Լիբանանու բազումք եղիցին» (էջ 324)։

«Զի արմաւն զիւր տնսիլն և զգոյնն և զհամն և զարարն բերիցէ և զրնկան զարմատոյն, զծննդեան բուսոյն։ Նոյնպէս և թուզն զտնսիլ իւրոյ տերևոյն և զարարս կնդեղոյն և զտարր մրգոյն ի նմանէ որիշ. և այլքն ի նմանէ որոյնք։ Զի կարմրախնձորն զիւր օրինակն, և կարմրատանձն զիւրն, և կարմրաղեղձն զիւրն։ Եւ են նոյն ի նորին բնութենէ որ այլագոյնք են. զի և զնոտն անգամ իւրաքանչիւր ոք ի նոցանէ առանձինն արձակիցէ» (էջ 324)։

«Նոյնպէս և գունակ գունակ և երփն երփն ծաղկանցն. որպէս մանրագորն և վարդն և շուշանն և ասպուզանն և յասմիկն և անիարն և ամնակն և ներգիսն և շամպրիտակն և մեղրուկն, հոտոտն և մոտոտն և մանիշակն. և այլն ամենայն համասպրամ ծաղկանցն և ծառոցն բոյսք բոդբոջոցն գարնանոյն երևեսցին յետ ձմերանոյն» (էջ 325)։

«Նա և մանրախոտքն դալարիք՝ իմն իմն և այլևայլք և որիշք են նմանութեամբ ի միմեանց, որպէս լոռն և վարսակն և կնիւնն, և որ ինչ նման է նոցա։ Նա և սերմանիքն օգտակարք մարդկան, որպէս ցորեանն և հաճարն և գարին և կորեակն և զաւարսն և ոսպնն և ոլոռնն և որիզն և դկոյնն և սիսեռնն, և այլ ևս բազում սերմանիք՝ զոր ի թիւ ոչ ոք կարասցէ արկնել։ Որք իւրաքանչիւր յիւրում ժամու ի գարունն ցուցանեն զարարութիւնն իւրեանց՝ բուսովքն և հասովքն և հոտովքն, բոդբոջովքն, ծաղկովքն և ընդովքն. և տնրևաղգեստք զիւրեանց մերկութիւնն ըստ իւրաքանչիւր նմանութեան ագուցանեն» (էջ 327)։

«Արդ՝ ի գարունս բուսաբերս և ծաղկաբերս, որք զնորոգութիւն գեղեցկութեանն գարնանոյն յետ հնութեան ձմերանոյն ընդիցեն՝ և թռչնոցն հաւուցն ծաղկեալ զիւրեանց ժամանակ գալստեանն։ Որպէս ասացեալ մարգարէն Երեմիաս ասէ, զիւրոյ ժամանակին գոէպս ի նմանութիւն օրինակաց յանդիսանութիւն բերէ՝ և զմանուրենոյն ակնարկէ յասելն, թէ «Արդարն ծիծառն և տատրակն և խորդն, հաւքն վայրի, ծանեան զժամանակ գալստեանն իւրեանց»։ Զի ժամանակաւ գարնանոյն և իւրեանց գալստեամբն ցուցանեն զժամանակ վարուց կենաց ուրախութեան մարդկան, ի ձայն առնելն, ի ճչելն, ի ճռուղելն՝ ի շինել բունոցն։

Ծիծառն մարդասէր է. յորժամ տեսանէ մարդկան՝ նովաւ ճանաչեն զկանաչազգեստ հասկն գարնանոյն աճման։ Իսկ տատրակն ամուսնասէր երևեալ, զգերմսածայն քաղցրաձայնն ի լսելիս մարդկան լնու. ի գործ արկեալ զթութեանգործ զկրկտակերտն, զդուրեաբեալ զփայտակերտիկն՝ երկթուեան ծուոցն իւրոց ապաւէն ճնդոցն իւրոց պատրաստէ (էջ 331—332)։

«Վարդապետութիւն»-ը մեր եկեղեցական մատենագրության անկրկնելի, հոգևոր գանձերից մեկն է, որը դժբախտաբար ցարդ չի ուսումնասիրվել ինչպես հարկն է, որպես զուտ կրոնական ստեղծագործություն։ Այսօր էլ կարելի է այն թարգմանել աշխարհաբարի՝ որպես հոգևոր գրականության ընտիր էջ, և տալ մեր ժողովրդի ձեռքը։ Մաքուր, ոսկեղենիկ հայերեն։

Լուսավորիչ իր «Վարդապետութիւն»-ը գրի է առել աստվածային ներշնչման պահին, «լուսաւորել զսիրտս խաւարեալս Հայաստանաց աշխարհիս՝ հաւատովք և մկրտութեամբ»։

Լուսավորչի «Վարդապետութիւն» գրվածքը մեծ ազդեցություն է գործել մեր հետագա մատենագիրների վրա։

Նման բովանդակությամբ և ընդգրկումով գործեր, ինչպիսին է «Վարդապետութիւն ս. Գրիգորի»-ն, հետագայում էլ գրվել են մեր եկեղեցական մատենագրության մեջ, ինչպիսիք են 1049—1050 թվականին գրված Գրիգոր Մագիստրոսի «Մեծ են գործք աստուածային» հազարտողյան տաղատագությունը, որը նույնպես Հին և Նոր կտակարանների բանաստեղծական վերամշակումն է դավանաբանական, փիլիսոփայական ընդհանրացումներով, ինչպես նաև Ներսես Շնորհալու 1152 թվականին գրած «Յիսուս որդի» կրոնաշունչ ընդարձակ բանաստեղծությունը, որը բաղկանում է 4000 տողերից, և որը դարձյալ Աստվածաշնչի պատումների գեղարվեստական-բանաստեղծական վերամշակումն է, կրոնական ֆոնի վրա։

Մեր հին մատենագիրներից շատերը, որոնք օգտվել են իրենց գրվածքներում Լուսավորչի վերոհիշյալ «Վարդապետութիւն»-ից, մեջբերումներ են կատարում նրանից և գրվածքի հեղինակ են ճանաչում, առանց

վերապահության և վարանումի, Գրիգոր Լուսավորչին:

Այսպես, Անանիա Շիրակացին (Է դար) իր **Ի Ջատիկն Տեառն** ճառի մեջ գործածում է Լուսավորչի հետևյալ տողը, Ագաթանգեղոսից այն մեջբերելով. «Երկրորդ լուսաւորն իշխանական գիշերոյ, գալ բերէ յանձին զօրինակ Սիածնի Որդւոյն Աստուծոյ, պատի, թաղի, գուշակ թաղելոյ յարութեան մեռելոց»:

Հովհան Օձնեցին (Ը դար) իր **Եկեղեցւոյ** ճառի մեջ գրում է. «Ըստ նմին օրինակի և իմ այսակաւորն և հայրապետն ս. Գրիգոր՝ ըստ ներուսական առակին՝ զյարութիւն մեռելոց բուսոց և տնկոց օրինակէր ի գարուն բուսաբեր և ի դալարանալ մարդկան ի գերեզմանէն»:

Այնուհետև, Խոսրով Անձևացին (Ժ դար) **Ի մեկնութիւն ժամագրոց**, Գրիգոր Նարեկացին (Ժ—ԺԱ դար) **Ի մեկնութիւն երգ երգոցի**, և Գրիգոր Մագիստրոսի (ԺԱ դար) վկայություններ են քաղում «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» ճառից (տե՛ս Հ. Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն Դ—ԺԳ դար, Վենետիկ, Բ տպագրութիւն, 1886, էջ 96):

Դեռևս Ե-րդ դարից Ագաթանգեղոսի գիրքը կոչվում էր «Գրիգորիսի գիրք»: Ղազար Փարպեցին վկայում է. «Պատմեաց... Ագաթանգեղոս զդարձ աշխարհիս հայոց ի ձեռն սրբոյ նահատակին Գրիգորի, յորոյ անուն և զգիրսն անուանեալ կոչին Գրիգորի»: Նըման վկայություն ունի նաև Սեբեոս պատմիչը (տե՛ս Եղիշե պատրիարք Դուրեան, Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933, էջ 445, Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա հատ., Երևան, 1959, էջ 151):

Ագաթանգեղոսի պատմությունը Դ՞-րդ, թե Ե-րդ դարի գործ է, սկզբնագիրը հունարե՞ն է, թե հայերեն, հեղինակությո՞ւն է, թե խմբագրություն՝ դա ոչինչ չի պակասեցնում «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» գրվածքի կրոնական արժեքից, որովհետև այդ **Հառը, համարվում է մեր եկեղեցական մատենագրության հնագույն և առաջին կրոնական երկասիրությունը**, անկախ ժամանակի և հեղինակի հարցերից:

Ագաթանգեղոսի պատմության մեջ «բացառիկ տեղ մը տալ պետք է նաև **Վարդապետութիւն ս. Գրիգորի** առանձին գրվածին, որ այժմյան Ագաթանգեղոսի գրեթե կեսեն ավելին կգրավե» (Դուրեան, 450):

Դ-րդ դարը մեր եկեղեցու պատմության մեջ համարվում է հայ եկեղեցու լուսավորության կամ կազմակերպության երկրորդ շրջան, իբրև արտահայտությունը Գ-րդ դարի վերջերին և Դ-րդ դարի առաջին քառորդին Հայաստանում կատարված պատմական իրադարձությունների:

Քարոզչական, առաքելական, եկեղեցական և մշակութային այդ շարժումը պատմականորեն կապվում է ս. Գրիգոր Լուսավորչի անվան և գործունեության հետ: Քրիստոնեությունն ընդունելով, «հայերը սկսել էին ավելի սերտ հարաբերությամբ կապվել կուլտուրապես իրենցից բարձր քրիստոնյա հարևանների՝ հույների հետ» (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Ա հատ., Երևան, 1944, էջ 70):

Նոր կրոնը արմատավորելու և այն հույնասորի ազդեցություններից, քարոզչական-մշակութային ոտնձգություններից ձերբազատելու համար Լուսավորչին անհրաժեշտ էին դպրոց և դպրություն: Լուսավորչի օրոք հայ եկեղեցին «ավելի կարիք զգաց գրի և գրականության» (Մ. Աբեղյան, էջ 70): «Կրոնական դաստիարակության համար եղած ջանքերը միանգամայն մտավորական զարգացման ալ կնառայեին» (Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգ., Ա. հատ., էջ 100):

Լուսավորիչն իր գործունեության սկզբից դպրոցներ էր բացում, աշակերտություն էր հավաքում, որոնք իր շնչի տակ քրիստոնեական ուսում և «քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրեանց» կրթություն ստանալով՝ դառնում էին «մարգարէագէտք, առաքելածանօթք և աւետարանաժառանգ», իսկ Լուսավորիչ «զվարդապետութիւն իւր ի գործ արկեալ անփակ զվտակս զվարդապետութեան ի սիրտս լսողացն սերմանեալ ծուլալեցուցանէր. . . ծովացուցեալ զվարդապետութեանն խորութիւն» և աշակերտների և հավատացյալների մտքերը քրիստոնեական հավատքի քուրայում «առեալ արկանէր բոլոր վարդապետութեան» (Ագաթ., էջ 422):

Լուսավորչի նման մի կազմակերպիչ ու առաքյալ, չէր կարող չմտածել նաև իր քարոզությունն ու Ավետարանի ուսմունքը գրավոր ձևով ավանդելու անհրաժեշտության և կարելիության վրա:

Նոր կրոնքի սկզբունքները, վարդապետությունը, հավատքը, դավանությունը քարոզել բավական չէր: Հավատքով ժողովուրդը լուսավորելուց հետո, այն պետք էր ամրապնդել, ընդունելի և արգասաբեր դարձնել, մտքերը պատրաստել, կրթել՝ ուսմամբ և դպրությամբ: Միշտ է, պակասում էր կրթության, դաստիարակության, ուսուցման ամենահիմնական միջոցը՝ հայ գիրը: Լուսավորչի գործնական միտքը լուծեց նաև այդ հարցը: Գործածվեցին հույն լեզվի տառերը՝ հայկական մտքեր և խորհուրդներ արտահայտելու համար:

Լուսավորչի քարոզչությամբ, ավետարանչությամբ «ընդ ամենայն երկիրն հայոց, ի ծագաց միչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն յամենայն եկեղեցիս, հաստատէր զհաւատն ճշմարտութեան... աւետարանագործ վարդապետութեան» և որի հետևանքով էլ, «երանելի, ցանկալի և անպայման սքանչելի լինէր երկիրս հայոց... որպէս զՍովսէս և կամ իբրև զյառաջադէմն Պօղոս բովանդակ առաքելական գնդաւն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի՝ ... հայաբարբառ հայրէնախօս գտաւ» (Ագաթ., 431)։

Լուսավորչի սկսած և գլուխ բերած պատմական, կրոնական մեծ հեղաշրջումը հետապնդում էր նաև կրոնականից բացի ազգային-քաղաքական նպատակներ։ Լուսավորչի քարոզչական, մշակութային գործունեությունը քրիստոնեությանը օտար ազդեցություններից փրկելու, օտար քարոզությանց և մշակույթների դեմ «մաքառումի մի ազգային գործ էր» (Աբեղյան, 80)։

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ԾԱՌՔ ԼՈՒՍԱՒՈՐՔ

Լուսավորչի ընծայված երկրորդ կարևոր գործը «Յաճախապատում»-ն է։

Այս մասին դարձյալ մեր առաջին վկայությունը Ագաթանգեղոսից է գալիս։ Լուսավորիչ «զաւետարանական ընթացսն և զվերակացութիւնն եկեղեցոյ» ավարտելուց հետո, «յետ այնպիսի գործոց, դարձեալ առաւել բարձրագոյն վարդապետութեամբ» զբաղվելով գրեց «Ճառս յաճախագոյնս, դժուարապատում, առակս խորիմացս դիւրալուրս բազմադիմիս շնորհագիրս, յարդարեալք ի զօրութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց, լի ամենայն ճաշակօք կարգեալս և յօրինեալս աւետարանական հաւատոյն ճշմարտութեան» (Ագաթ., էջ 445)։

«Յաճախապատում»-ը, նույնպես, մեր եկեղեցական մատենագրության գանձերից մեկն է, որպես հնագույն և առաջին կրոնական երկերից մեկը, որով սերունդներ են դաստիարակվել։

«Յաճախապատում» բառը նշանակում է «ընդարձակ և մանրամասն պատմող գրող, հանախաբան, ինչպես նաև կրոնական, մեկնաբանական և վարդապետական գրվածք» (Բացատրական բառարան)։

«Յաճախապատում՝ որ և յաճախաբան, ուր ի ցեն յաճախ պատմութիւնք՝ այսինքն ճառք և մեկնութիւնք վարդապետականք, որպիսին է մատեանն Լուսաւորչի»։ (Հայկազյան բառարան)։

«Յաճախապատում» գրքի մասին, որպես Լուսավորչի հեղինակություն, մեր եկեղեցական մատենագրության մեջ առաջին վկայությունը հանդիպում է Է դարից։

«Յաճախապատում»-ի առաջին հրատարակության տիտղոսաթերթը (1737 թ. Կ. Պոլիս)

Գրիգոր Մագիստրոս՝ մեծ գիտնականն ու մատենագիրը, վերոհիշյալ իր «Մեծ են գործք աստուածային» հազարտողյան տաղասացության 922-րդ տողի մեջ վկայում է, որ «Յաճախապատում»-ի հեղինակը Լուսավորիչն է. «զգիրսն իւր հաւատոյ Յաճախաբանն որ անուանեն» (տե՛ս նաև Դուրեան, էջ 416)։

Դուրյան սրբազանը, որ մեր եկեղեցական մատենագրության քաջահմուտ մասնագետներից մեկն է, գրում է. «Հավանաբար ԺԲ—ԺԳ դարուց միջոցին Երուսաղեմի մեջ ապրող հայ հեղինակ մը, Գրիգոր սարկավագապետ, ս. Գրիգորի վրա հորինած իր ներբողականին մեջ (Սուրբք հայկականք, Դ, էջ 153), առաջին անգամ տալով կհիշատակէ բուն Յաճախապատում գիրքը» (Դուրեան, էջ 417)։

Մեր ձեռքի տակ եղած ձեռագրաց հիշատակարաններում ևս կան վկայություններ «Յաճախապատում» գրքի մասին։

Հ. Գ. Զարբհանալյան իր «Հայկական հին դպրութեան պատմութիւն» աշխատության մեջ (Վենետիկ, Բ տպագրություն, էջ 178) վկայում է, որ ՌՃԻԲ=1122 թվականին, Սիս քաղաքում գրված «Յաճախապատում» գրքի ձեռագրերից մեկը ունի հետևյալ հիշատակությունը. «Կատարեցաւ գիրքս՝ որ կոչի Յաճախապատում... էր օրինակ սորին ՅՀԸ=ԳՃՀԸ (378) տարի էր առաջի թուականն հայոց ի Լուսաւորչէն ...զայս աճախապատում օրինակն Սսայ Գրքատանն առաք ի մեր թուականս ԳՃԸ թիւն էր, այժմուս մեք գտաք մեր օրինակաց ժամանակին թիւն էր ՌՃԻԲ»:

Բազմավաստակ բանասեր և ձեռագրագետ, լուսահոգի Գարեգին Ա կթղս. Հովսեփյանց իր «Յիշատակարանք ձեռագրաց» (Ե դարից մինչև ԺԸ դար) բազմաշխատ գործին մեջ (Անթիլիաս, 1951, էջ 775) № 347 ձեռագրի տակ խոսում է «Յաճախապատում»-ի մի հնագույն օրինակի մասին.

ԺԱՄԱՆԱԿ 1215

Սկզբնագիր

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ, Ձեռագիր Երուսաղէմի, № 94, ՆԻԹ՝ թուղթ, ԳԻՐ՝ առաջին մասը միջին երկաթագրով, յետոյ հին բոլորագրով շարունակում է, ԳՐԻՉ՝ Պետր կամ Պետրոս, (նաև Կիրակո՞ս), ՍՏԱՑՈՂ՝ Հայր Թորոս, ՏԵՂ՝ Ակներոյ վանք, ԺԱՄԱՆԱԿ՝ ՈԿԴ=1215 թ.:

(Վերջում) Շնորհիւ բարերարին Աստուծոյ կատարեցաւ լուսաւոր վարդապետութիւնս սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի՝ գիրքս, որ կոչի Յաճախապատում, ի թուականութեանս Հայոց ՈԿԴ, ի Հայրապետութեան տեառն Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի և ի թագաւորութեան աստուածասէր և բարեպաշտի Լեւոնի: Կրեցաւ հրամանաւ հաւր Թորոսի և յաւժարութեամբ ամենայն եղբայրութեանս՝ ի մեծ և հռչակաւոր անապատիս, որ կոչի Ակներոյ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Առաքելոցս և աստուածընկալ նշանացս: Արդ աղաչեմ զամենեսեանս, որք ընթեռնոյք և լուսաւորիք ի սուրբ վարդապետութեանցս, յիշելոյ արժանի արարէք զմեղապարտ և անարժան գրողս՝ Պետր և զծնողսն իմ և զեղբարս՝ զկենդանիս և զհանգուցեալսն, և Աստուած, որ առատրէ ողորմութեամբ իւրով, հատուցէ ձեզ և մեզ՝ ընդ ձեզ, ամեն:

Դարձեալ աղաչեմ զընթերցողսդ՝ սխալանաց և խաշորութեան և անյարմար գրելոյս չլիներ մեղադիր, քան զի ախմար էի և այլ ոչ էի արարե(ա)լ, և յայս վասն ստուգաբանութեան աւրինակին համարձակեցա. աղաչեմ անմեղադիր լինել: Եւ որ այնչափ եղեւ, ոչ իմ կարողութեամբ, այլ շնորհիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտ(եան):

Ողորմեսցի Քրիստոս Աստուած առաջնորդաց սուրբ ոխտիս և ամենայն եղբայրութեանս և միաբանաց սոցա մեծի և փոքու, ամեն:

Ողորմեսցի Քրիստոս Աստուած Պետրոսի և ծնողաց իւրոց, որ զսկիզբն գրոցս արար, և գրեսցէ զանունս նորա ի գիրս կենաց, ամեն:

Ողորմեսցի Քրիստոս Աստուած Կիրակոսի և ծնողաց իւրոց, որ միամիտ յաւժարութեամբ աշխատեցաւ ի սմա. տացէ նմա Քրիստոս վարձս բարեաց յաւուր տապարգեւ ողորմութենէ իւրմէ, ամեն:

Ողորմեսցի Քրիստոս Աստուած և կազմողի սորա և ծնողաց իւրոց:

Ողորմեսցի Քրիստոս Աստուած եղկելի գրողի սորա և ծնողաց իւրոց և ամենայն աշխատողաց ի սմա, որ շատ և որ սակաւ: Ողորմեսցի Քրիստոս ամենայն հաւատացելոց կենդանեաց և ննջեցելոց, և նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամեն:

Հայտնի բանասեր Ծովականը՝ Նորայր եպս. Պողարյանը, «Յաճախապատում»-ի 1215 թվականի հնագույն ձեռագրի մասին գրում է հետևյալը.

«Յաճախապատում»-ի հնագույն ձեռագիրներեն մին է այս, եթե ոչ ամենահինը, և ուշագրավ ու հետաքրքրական է շատ մը տեսակետներե: Արտավազդ արք. Այուրմեյան ցուցակագրած է զայն ժամանակին և ծանոթացուցած բանասերներու (տե՛ս Ցուցակ Ձեռագրաց Երուսաղեմի, Ա հատոր, Վենետիկ, 1948, էջ 225—8): ...Շատ հաւանական է, եթե ոչ բոլորովին հաստատ, որ մեր թիվ 94 ձեռագիրն ալ իբր գաղափար ունեցած ըլլայ 929 թվականը կրող երկաթագիր օրինակը:

...Երուսաղեմի թ. 94 Հաճախապատումին մեջ ունինք նոյն Ծառերուն մեզի հասած հնագույն և ընտրելագույն օրինակը, 1215 թվականով, որ հայազատներեն կը ներկայացնե 929 թվականը կրող իր նախագաղափարը» («Սիոն», 1961, թիվ 3, էջ 74—75):

Երևանի Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում կան «Յաճախապատում»-ի 7 գրչագիր օրինակներ՝ հետևյալ համարների տակ. **№ 8775, Երուսաղեմ, 1415, գրիչ՝ Գրիգոր Խլաթեցի (Մերենց):** «Յաճախապատում»-ի հնագույն գրչագիր սույն օրինակի հիշատակարանը ոչինչ չի ասում. № 3140 (1621 թ.), №1453 (1692 թ.), № 4063 (1694 թ.), № 1852 (1695 թ.), № 1337 (1706 թ.), № 6921 (1719 թ.):

«Յաճախապատում» ճառերի առթիվ նորից պետք է կրկնենք, որ սույն հոդվածի նպատակից դուրս է խոսել «Յաճախապատում» ճառերի իսկական հեղինակի, լեզվի և գրության ժամանակի, սկզբնագրի լեզվի և այլ մատենագրական հարցերի մասին:

Մեր հին մատենագիրների, պատմիչների վկայության հիման վրա, մեր եկեղեցին և

հին բանասիրական դպրոցն ընդունում է, որ «Յաճախապատում»-ի հեղինակը ս. Գրիգոր Լուսավորիչն է:

Մեզ համար շատ կարևոր է «Յաճախապատում»-ի կրոնական բովանդակությունը՝ անկախ այն բանից, թե ո՞վ է բուն հեղինակը՝ Լուսավորի՞չ, Մեսրո՞պ, թե թարգմանիչ վարդապետներից մեկը:

Կորյուն իր «Վարք Մաշտոցի» աշխատության մեջ (Երևան, 1941, էջ 78) վկայում է, որ ս. Մեսրոպ «բազում թուղթս խրատագիրս զգաստացուցիչս» գրելուց հետո, զբաղվում է նաև «այնպիսի առաւել և բարձրագոյն վարդապետութեամբն սկսեալ երաւելոյն Մաշտոցի ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել»:

Ագաթանգեղոս, ինչպես տեսանք, նույնը վկայում է նաև Լուսավորչի համար, գրեթե բառացի:

Կորյունի վերոհիշյալ վկայությունը պատճառ է դարձել, որ օտար և հայ բանասերներից ոմանք «Յաճախապատում»-ի հեղինակ համարեն ս. Մեսրոպին:

ԺԹ դարի վերջերին գերմանացի գիտնական Ֆետտերը Ֆիրշի երկհատոր «Հայրախօսութիւն» աշխատության մեջ առաջինը զբաղվել է «Յաճախապատում»-ի հեղինակի հարցով՝ (տե՛ս նաև Դուրեան, էջ 420, Հ. Անասյան, էջ 212, «Հայկ. աշխատութիւնք պ. Ֆետտերի)՝ այն վերագրելով Մեսրոպ Մաշտոցին:

Դուրյան սրբազան համաձայն չէ Ֆետտերի կարծիքին հետ. «անշշան կթվին մեզ այն ապացույցները՝ զորս հառաջ կրբերե Ֆետտեր, և որոնք անճշտություններե ալ զերծ չեն կրնար համարվիլ» (420), ...տարակուսելի է այդ ճառերուն հեղինակ համարել Ս. Մեսրոպը» (89):

Դուրյան սրբազան գտնում է, որ եթե կարելի չէ «Յաճախապատում»-ի հեղինակությունը ընծայել Լուսաւորչին «նույնչափ և չէ կարելի ընծայել Մեսրոպա, վասնզի զայն ամենայն թողով, կխորհինք թե անհնար էր որ մեծ վարդապետին (Մեսրոպին) հայտնի մեկ գործը շփոթության կամ մոռացման դատապարտվեր առաջին օրեն, մինչդեռ, ընդհակառակը, առհասարակ պետք էր ճանոթ լիներ ոչ միայն մատենագրաց դասուն, այլ և բովանդակ ազգին» (Դուրեան, 425):

Այնուհետև Դուրյան սրբազան ընդունում է, որ «եթե օտար լեզվավ խմբագրված համարի ոք այդ ճառերուն գեթ մեծագույն մասը և հետո թարգմանված, առաջին թարգմանիչներեն միայն պետք չէ վերագրել զայն, վասնզի կան ինչ ինչ բառեր կամ բացատրություններ, որ Ե դարու վերջերուն կրնան հարմարիլ» (Դուրեան, 424):

Սեր հին գրականության մի այլ մեծավաստակ մասնագետ Մ. Աբեղյան, Ֆետտերի հետևելով գրում է. «Ունենք ճառերի մի ժողովածու՝ «Յաճախապատում ճառք» վերնագրով, Կորյունի հիշածը հենց այս գիրքն է, բայց դա որովհետև դավանաբանական նշանակություն է ունեցել, Գրիգոր Լուսավորչին է վերագրվել, այդ գրվածքին ավելի մեծ հեղինակություն ընծայելու համար... իսկ որ Ագաթանգեղոսի մեջ ևս նման ձևով պատմվում է ս. Գրիգորի համար, թե նա ճառեր է հորինել, դա արժեք չունի այդ ճառերի հեղինակի նկատմամբ» (Մ. Աբեղյան, էջ 120): Աբեղյան «Յաճախապատում»-ի գրության ժամանակը ընդունում է 420-ական թվականները:

Ինչպես տեսնում ենք, համաձայնություն չկա հայ բանասիրության մեջ «Յաճախապատում»-ի հեղինակի, լեզվի և գրության ժամանակի մասին: Հայ եկեղեցու համար նույնն է, թե ո՞վ է հեղինակը «Յաճախապատում»-ի, Լուսավորի՞չ, թե ս. Մեսրոպ: Երկու անունները էլ պաշտելի և երախտաշատ անուններ են մեր եկեղեցու և մեր մատենագրության համար: Լուսավորիչ «հոգիների լուսավորիչ է», իսկ ս. Մեսրոպ՝ «մտքերի լուսավորիչ»: Մի՞թե մեր հին պատմիչներն ու մատենագիրները կարիք ունեին ս. Մեսրոպի գրչին պատկանող «Յաճախապատում»-ի հեղինակությունը բարձրացնելու համար այն վերագրել և կամ դնել Լուսավորչի անվան հովանավորության տակ, «Գերազանցեալ քան զամենայն, մտօք ծննդական, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ» ս. Մեսրոպից ավելի բարձր, սուրբ և երախտաշատ անուն կա՞ մեր եկեղեցական մատենագրության մեջ, որ նրա գրած ճառերը վերագրվեին Լուսավորչին:

Լուսավորիչը կարո՞ղ էր գրել նման ճառ, և եթե այո, ի՞նչ լեզվով է գրել: «Լուսավորչի կարողութենեն հետու չենք գտներ գրական արդյունքներ, վասնզի լավ հունական զարգացում ստացած էր Փիլիմիլիանոսի ձեռքեն» (Օրմանյան, 115):

Քրիստոնեության արմատացումը հայ հողի վրա և հայ սրտերի մեջ պատմական կարևոր իրադարձություն էր: Դ դարում քրիստոնեության մուտքը Հայաստան, պետական իր կրոնի հանգամանքով, հանդիսացավ մտավոր շարժման, մի նոր գաղափարախոսության և ազգային եկեղեցու ոգու զարթման սկիզբը և կարևոր ազդակը: «Լուսավորիչ կազմակերպչական խոշոր տաղանդի մարդ էր: Նա կարողացավ նոր վարդապետության համար հաջող հող պատրաստել:



«Ցախճապատում»-ի երկրորդ հրատարակության տիտղոսաթերթը (1824 թ. Կ. Պոլիս)

«Ամենեն դժվար գործը, որ կանգնած էր հենց սկզբից քրիստոնեության առաջ՝ ժողովրդի դաստիարակությունն էր: ...Փրկել նոր կրոնը կարելի էր ժողովուրդը դաստիարակելու միջոցով» (ԼԵՈ, երկերի ժողովածու, Ա հատոր, Երևան, 1966, էջ 420—424):

Շուրջ երեք ու կես դար հայ հոգի վրա քարոզված քրիստոնեությունը օտար առաքելությունների ձեռքում էր մնացել: Փավստոս, Խորենացին, Փարպեցին վշտով արձանագրում են այդ տխուր իրադրությունը, երբ գրում են.

«Պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց աստի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոց» (Փարպեցի):

Զարթնել էր Տրդատ Գ-ի օրով ազգային եկեղեցու ոգին, որը կարող էր պահպանվել միայն հայ դպրությամբ: Իսկ հայոց լեզուն Դ դարու սկզբներին «հասած էր վիճակի մը, ուր ժողովուրդի զգացումներուն, տենչանքներուն և տեսլական ըմբռնումներուն արտահայտիչ գործիքը կրցած էր ըլլալ, փոքր ի շատե անկախ զարգացումի մը ձևին տակ: Ինչ որ հայ թարգմանիչներու դպրոցը պիտի կրնար ընել գիրի գյուտը կանխող ամբողջ դարու մը ժամանակամիջոցին (303—406) լեզվին հրապարակային կիրարկությամբ, Ավետարանի քարոզության և մասնավորապես ս. Գրքի (հունարեն կամ ասորերեն) բերանացի թարգմանության միջոցներով, կարելի է տեսակ մի նախընթացը նկատել այն գրականության որ հետո պայծառացավ Սահակ-Մեսրոպյան դպրոցի վերջին բարեփոխության շնորհիվ» (Դուրեան, 27):

Դ դարում հայերեն խոսակցական լեզվի կատարելության մասին Աբեղյանը վկայում է «մշակված կոկված ու հարստացած է եղել» (Աբեղյան 86):

Խորենացին վկայում է, որ գրերի գյուտից առաջ «վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակի», այնուամենայնիվ «գտանի՛ն սուտ մեզ անբաւ զրուցաց մատեանք»՝ հունարեն և ասորերեն լեզվով գրված: «Եթե, ասում է Դուրյան սրբազան, չկային հայերեն **լեզվով** գրվածքներ, կարելի չէ՞ ազգային մատենագրության մասն համարել այն գրվածքները, որ կային առ մեզ օտար լեզվով հորինված» Դ., 305) կամ «ի հայ թարգմանածն այս կամ այն օտար նշանագիրներով ի գիր առնված» (307):

Հայ հին քահանայության դպրոցի կողմից ընդունված կարծիքն այն է, որ գրերի գյուտից առաջ, Դ դարում, հունատառ հայերենով գրված պետք է լինեն մի շարք **սաղմոսներ, աղոթքներ, «Հայր մեր», «Հաւատամք», «Փառք ի բարձունս»** և այլ գրվածքներ, որոնց թվում և՛ «Ցանճախապատում»-ը և՛ Ագաթանգեղոսի և՛ Բուզանդի «Հայոց պատմություն»-ները (տե՛ս նաև Օրմանյան, Ազգ., Ա, 102):

Անկարելի էր, որ մի ամբողջ դար հայ եկեղեցին մնար առանց հայերեն գրվածքների, և «մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացուն» իր նորադարձ «հոտին թողներ առանց մի հաստատուն վարդապետության, քանի որ նորա հաջորդներն ու աշակերտները շարունակաբար շեշտում են իրենց գործունեության առանցքը, թե պետք է և պարտ է միշտ հավատարիմ մնալ Հայց. եկեղեցու հոչակավոր սուրբ Հոր պատվիրաններին» (Ա. Տեր-Միքայելյան, «Ցանճախապատում ճառք լուսաւորք», ս. Էջմիածին, 1894, էջ Ը):

«Ցանճախապատում»-ը մեծ արժեք է ներկայացնում մեր եկեղեցական մատենագրության մեջ, որպես «Հայց. եկեղեցու առաքելական վարդապետության հիմնական աղ-

թյուրը, ս. Գրքից հետո, որն անփոփոխ տալիս է «դավանական և բարոյական բոլոր սկզբունքներն իբրև հիմունք և սահման նորա հավատարիմ որդվոց» (Ա. Տեր-Միքելյան, նույն տեղում, էջ Ե):

«Յաճախապատում»-ը բաղկանում է 23 «հոգելից, հոգեշահ» ճառերից, որոնցից յուրաքանչյուրը նվիրվել է կա՛մ դավանական և կա՛մ բարոյախոսական մի նյութի: Ամբողջ գիրքը կոչվել է ըստ ձեռագրերի հիշատակարանների վկայության «Մատեան վարդապետութեան հաւատոյ և վարուց աստուածայնոցըս, առատաշնորհ լուսազարդ սուրբ մատեան», «Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ, իբրև գլուխ և դասապետ հոգեբաշխ մատենից սրբոց, որ հարց մերոց սուրբ և հոգեշահ բանիւք իւրով և յաւետարանական բանիւք իբրև կաթն ջամբեաց», «լուսաւոր վարդապետութիւն և խրատք ոգեշահք, ազգի ազգի բշկարուսնք ախտացելոց հոգով»:

Լուսավորիչ ծէ ճառի առաջին տողում գրել է «Յաճախապատում»-ի գրության նպատակի և բովանդակության, հոգևոր արժեքի մասին. **«Գրել ձեզ և ուսուցանել կամիմ, եղբարք իմ և որդիք, զորս ի Քրիստոս Աւետարանաւն ծնաւ»** («Յաճախապատում ճառք Լուսաւորչի», Վաղարշապատ, 1894, էջ 192):

Խոսքը ուղղված է այստեղ նորադարձ հայ ժողովրդին: Այսպիսի հեղինակությամբ, հայրական շեշտով ու խանդաղատանքով Լուսավորիչ միայն կարող էր խոսել և վկայել և ոչ մեկ ուրիշը:

«Յաճախապատում»-ը դավանական, վարդապետական, հոգևոր ու բարոյական աստվածաբանության մի անգին գանձարան է, ուր խոսվում է ամենասուրբ Երրորդության, արարչագործության, մարդու ստեղծման, ազատ կամքի, բարիի ու չարի հարցի ու ընդհանրապես քրիստոնեական տիպար կենցաղավարության կանոնների, քրիստոնեական առաքինությունների, խոստովանության, ապաշխարության, պահքի, սրբերի, մարտիրոսների հիշատակը հարգելու և օրինակելի վանական լինելու հարցերի շուրջ:

Ճառերի նյութը կրոնա-բարոյական է: Ճառերն ընդհանրապես ունեն խրատական, ուսուցողական (դիդակտիկ) բնույթ ու նկարագիր: Հեղինակի նպատակը՝ ձգտումն է եղել՝ ուսուցանել քրիստոնեական հավատք, քարոզել՝ բարեպաշտություն, քրիստոնեական ուսմունք և բարոյական, արմատավորել նորադարձ հոգիների մեջ սրբություն և առաքինություն: Հեղինակը քարոզում է քրիստոնեական առաքինի կյանքի պայմաններ, բարքերի մաքրություն ժուժկալություն, գթություն: Խրատում է բարի գործել, հեռու մնալ անառակությունից, չարիքից, ու այս բոլորը, գեղեցկորեն նշում է հեղինակը, «աշխարհի խաղաղութեան և շինութեան համար» (էջ 74):

«Այս ճառերուն մեջ աստվածային սրտով ու սիրով լեցուն հոգիե զատ, հունական հարց նմանություն և անոնց լեզուն կբանեցնե Գրիգոր... ցուցնելով իր կրթված միտքը և հանճարը» (Հ. Գ. Ջարբ., էջ 87).. «Մեր ազգին մեջ քիչ հայրապետք կրցած են աստվածության վրա խոսած ատենին այն վարժ գրիչը և լեզուն գործածել որուն առաջին վարդապետը ու հեղինակը ինքը ս. Գրիգորն է» (Հ. Գ. Ջարբ., էջ 178):

«Յաճախապատում»-ի բովանդակությունն այնքան բազմակողմանի է և մտքերով ու գաղափարներով հարուստ, այնքան գրավիչ է և ընտիր ու ճիշտ արտահայտություններով ճոխ, որ մենք կարող ենք ամենայն իրավամբ նույնիսկ գիտական տեսակետով պահանջել յուրաքանչյուր ընթերցասեր հայից՝ ունենալ այս գրքույկը իր սեղանի վրա... «Յաճախապատում»-ը ոչ միայն կբացահայտե ամտվածային խոսքի առանձնահատկությունը, այլև կարճ ի կարճո կհամառոտե, հետևաբար բանավարելով զարկ կտա մտքերի զարթուցման... կներշնչե հարմարապես մտածող հայի հոգու մեջ... արդ, Հայց. եկեղեցու լուսածին զավակները նորա գութանով պետք է բարեզարդվեն և նորա եղանակով ս. Ավետարանի սերմերն ընդունեն ու Աստված փառաբանեն» (Տ.-Միքելյան, էջ Ե—Զ):

Օրմանյան սրբազան «Յաճախապատում»-ի կրոնական արժեքը գնահատում է հետևյալ արտահայտությամբ. ««Յաճախապատում»-ը հավատո և քրիստոնեական վարուց վերաբերյալ կետերը հեղինակորեն կբացատրե» (Մ. Օրմանյան, «Ազգապատում», Ա հատոր, էջ 114): Ըստ Օրմանյան սրբազանի «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի» ճառը բովանդակության, արտահայտության, ձևի, լեզվի տեսակետից «մեծ հարաբերություն ունի Հաճախապատում ճառերու հետ (Մ. Օրմանյան, 114):

«Յաճախապատում» ճառերի մեջ հանդես է գալիս «Հանդարտ միտք մը... որ կհաջողի սրտագրավ թափանցկություն մը ցույց տալ, մանավանդ երբ բարոյախոսի դեր կկատարե» (Դուրեան, 423):

«Յաճախապատում»-ի առաջին ճառը նվիրվել է ամենասուրբ Երրորդության՝ «Ի. ս. Երրորդութիւն»: Լուսավորչի «աստվածաբանություն»-ը հիմնվել է Աստվածաշնչի, եկեղեցական ավանդության վրա և Նիկիական հանգանակի բնույթ է կրում: Հայր

Աստված «ամենայն կենդանեաց հայրն և Արարիչ, հաստիչ»-ն է, Աստված ապարչագործության առաջին, նախապատճառն է, «Անպատճառն որ ամենեցուն պատճառ է՝ աներևույթից և երևելեացս... արարչութեամբն լեալ պատճառ, լի կատարեալն որ զամենայն լնու, և ինքն ոչ թերանայ, և ոչ նորոգի, զի ոչ հնանայ և ոչ լնու՝ ոչ պակասի» (1): ...«Ամենայնի ինքն անբաւն և անճառն և անհաս սէրն... ամենայն ինքն լոյս է, գթութիւն, ողորմութիւն բարերար շնորհաբաշխ» (էջ 1—2):

Որդին «իսկին անծնի զԷն՝ անսկիզբն ծնեալ, լուսոյն կենդանւոյ զկենդանի լոյսն կուսածին ծնեալ, Արարչին զԱրարիչն ծնեալ կատարեալ անձամբ և զօրութեամբ, գիտութեամբ, իմաստութեամբ և արարչութեամբ և բարերարութեամբ»: Ս. Հոգին բխում է «ի Հօրէ: Ճշմարտութիւնն անփոփոխ կատարեալ անձամբ, զօրութեամբ գիտութեամբ և իմաստութեամբ, արարչութեամբ և բարերարութեամբ»: Որով «Միասնական երրորդութիւն միով զօրութեամբ, իսկութիւն անծին, էութիւն անսկիզբ, մշտնջենաւորութիւն անսահման... մի է բնութիւն նոցա... Երրորդութիւն կատարեալ և մի աստուածութիւն»:

Ս. Երրորդության գոյությունը ապացուցելու համար ճառագիրը բնությունից բերում է դասական հետևյալ օրինակը.

«Զի որպէս մի է արև և լոյս և ջերմութիւն իւր, և մի արև ասի և ոչ երբեք արևք. և որպէս հուրն և լոյսն և տապն՝ մի հուր ասի և ոչ երբեք հուրք, և որպէս աղբիւրն և գետն և ջուրն մի ջուր ասի և ոչ երբեք ջուրք. և որպէս հոգի, միտք և բան՝ մի հոգի ասի և ոչ երբեք հոգիք. այլ հոգի ասի կենդանութիւնն և միտք ասի իմաստութիւնն, և բան ասի խօսողութիւնն՝ միոյ հոգւոյն. այդպէս և Հայր՝ անծին իսկութեամբ, անսկիզբն էութեամբ, Հայր՝ վասն միշտ Որդւոյն՝ որ ընդ նմա, և իսկ Հոգւոյն որ ընդ նմա»:

Երկրորդ ճառի մեջ, որը կրում է «Առանձնաւորութիւնք» վերնագիրը, խոսվում է ս. Երրորդության երեք անձերի և արարչագործության մասին:

Արարչագործության և մարդաստեղծման շարժիչ ուժը, սկզբունքը եղել է Աստծու նախախնամական սերը, «վասնզի սէր արարչութեան ստիպեաց Արարչին» (5), «որ յոչընչէ ի լինելութիւն էած և ի չգոյէ ի գոյ վասն ամենագէտ սիրոյն իւրոյ և բարերար կամացն» (էջ 5), «վասն առաւել սիրոյն իւրոյ անանունն յանուն գայ» (14):

Մարդը՝ այս ճառի մեջ էլ, ըստ հեղինակի, ստեղծվել է Աստծու պատկերով, «ի հոգի կենդանի, անմահ, մտաւոր և բանաւոր և ի չորից նիւթոց» (խոնաւ, ցամաք, ցուրտ և ջերմ):

Մարդը ստեղծվել է որպես «թագաւոր և տէր» (33)՝ ապրելու համար աստվածային մտերմության մեջ, որպես ստեղծագործության կատարելություն, օժտված «անձնիշխան կամօք» և զարդարված «իմաստութեամբ և գիտութեամբ, տեղեակ ամենայն հանգամանաց և խրատու հոգևոր իրաց առ ի հաճոյս տէրութեան իւրոյ»:

Գ ճառը նվիրված է հավատքի, «ճշմարտութիւն հաւատոյ՝ լոյս է աչաց, որ միտսն լուսաւորէ» (էջ 22):

Դ և Ե ճառերում խոսվում է Աստծու անսահման բարերարության մասին դեպի մարդը: Աստված ամեն ինչ ստեղծել է մարդու երջանկության և բարիքին համար՝ «ի պէտս մարդկան՝ ի վկայութիւն մեծին Աստուծոյ» (28), որով մարդն էլ պետք է հավատարիմ մնա իր աստվածային ծագման, առաջնորդվի իր կյանքում և գործերի մեջ աստվածային լույսով, ապրի Աստվածաշնչի բարոյական պատվիրանների շրջանակին մեջ. հնազանդվելով «օրինացն Աստուծոյ», ինչպես «գազանք թունաւորք հնազանդին մարդոյն՝ որպէս տեառն և թագաւորի» (33):

Զ ճառը նվիրված է քրիստոնեական առաքինության՝ հավատքի, սիրո, հույսի, բարի գործերի: «Ինչպես որ հասակը կանգուն է մնում առողջ անդամներով, այնպես էլ բարի գործերով է կանգուն մնում հավատքը, իսկ հավատքով ստուգվում է հույսը և հույսով՝ սերը» (67):

Է և Ը ճառերը նվիրվել են հասարակության մեջ մեծ չարիք հանդիսացող, ընկերային, անբարոյական բարքերի, սոդոմյան և լեսպոսյան կեղտոտ ախտերի, որոնց մասին խոսում է նաև Պողոս առաքյալ հռոմ. թղթում:

Այս բարոյախոսական ճառի մեջ էլ ակնարկություններ կան նաև հայ հեթանոսական բարքերի, կուսակրոնության, տարրապաշտության մասին, ինչպես «Վարդապետութիւն» ճառի և Եզնիկի «Եղծ աղանդոց»-ի մեջ, բարքեր, որոնց մասին «ասելն կամ լսելն զազիր է», շեշտում է Լուսավորիչ, բայց ինքը որպես հայր և հոգևոր բժիշկ, հանդես է գալիս վճռականորեն դրանք ժողովրդի կյանքից արմատախիլ անելու վճռականությամբ և դատապարտությամբ:

Ը ճառում հեղինակն իր ձայնն է բարձրացնում բոլոր նրանց դեմ, որոնք «արհամարհեն զօրէնս և իրաւունս տնանկաց և զողորմութիւն կարօտելոց և զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին և անտես առնեն զարտասուս նեղելոց և ձայնի գրկելոց ոչ լսեն»:

Թ ճառը «Հանգիստապատում»-ի լավագույն էջերից մեկն է: Ընդգծելով այս ճառը նվիրվել է «ամենարատեստ պահոց», ուր իմաստասից վերլուծություններ կան քրիստոնեական առաքինությունների մասին:

Կյանքում չափի, չափավորության զգացումը մարդու հոգևոր և բարոյական երջանկություն աղբյուրն է և նրա կատարելության նախապայմանը: Նախնամարդը՝ Ադամ, չկարողացավ պահել «կանոնական չափը», «հրեշտակային կարգավորութիւն»-ը, «զորէնս սրբութեան»-ը, մեղանչեց, կորցրեց հոգեկան հավասարակշռությունը և ընկնելով «հաւասարեաց կենդանեաց անբանից և նմանեաց նոցա»:

Պահքը, գրում է ճառագիրը, «դաստիարակ են մարդկան, խափանիչ անժուժկալութեան ամենայն վնասուց, բժիշկք... կատարեալ հաւատոյ ճշմարտութեան ազդեցութիւն, յոյսն առողջութեան, առիթ սրբութեան: Պահք աղ են, որ անուշացուցանեն զնեխութիւն հոգւոյ և մարմնոյ, աղտեղութիւն մեղաց... պահք պարիսպ հզօր և դուռն ամուր որ արգելու զեռանդն ցանկութեան... դադարեցուցեն զլկտիութիւն որ ի կերողութենէ և յարբեցութենէ յառաջագային... պահք խափանեն զոյզս մտաց և մարմնոյ՝ պրդտորեալս ի յուղխից ցանկութեանց հոսմանց... զի որպէս ձիոյ սանձն ի բերանն դնի և ամենայն մարմինն նուաճի, նոյնպէս պահք սանձք են ստահակաց»:

Լուսավորիչ համարձակորեն դատապարտում է ընկերային, հասարակական այլ չարիքներ, ինչպիսիք են արբեցությունը, գինեմոլությունը, որկրամոլությունը. «Գինի առաել յիմարեցուցանէ զգայութիւնսն և զմիտսն եռացուցանէ զցանկութիւնսն և յանուկութիւն շարժէ, մանաւանդ զմանկութիւն... Գինի թմրութիւն սրտի, պապանձումն բերանոյ, խաւար աչաց, խլութիւն ականջաց, լուծութիւն ձեռաց, գայթակղութիւն ոտից, ցնորք խորհրդոց, ծանրութիւն քնոյ, թշնամի արդարութեան... Եթէ հուր առանց նիւթոյ չիջանի, ապա և ցանկութիւն՝ ի պահոց»:

Գեղեցիկ ու բովանդակալից ճառերից է նաև ԺԴ ճառը, որը նվիրվել է մարդեղության խորհրդին (177):

ԺԶ ճառը նվիրվել է սրբերի հիշատակին: Սրբերը «զմարմինս իւրեանց պատարագեցին յերկրի վասն անուանն Աստուծոյ ի հոտ անուշից և սուրբ հոգիք նոցա հոգևոր բարեխօսութեամբն զԱստուած յողորմութիւն աշխարհի ածեն և նշխարք ոսկերաց նոցա փրկութեան շնորհք ընծայեն ի ժողովս հաւատացելոց, որպէս ամենեցուն է քաջայայտ, զի երեսեցի սէրն Աստուծոյ ի նոցա նշխարսն բնակեալ» էջ 190):

ԺԷ ճառը «հովվական թուղթ» է՝ ուղղված հոգևորականության, ուր Լուսավորիչ խոսում է հոգևորականի պարտականությունների և պատասխանատվության մասին «տաճաջի Աստուծոյ» և հավատացյալների:

Հոգևորականը որպես հայր, դաստիարակ ժողովրդին իր կյանքով, խոսքով ու վարքով օրինակ պետք է լինի ժողովրդին: «Դէտ կացուցի զքեզ, զգուշացիր անձինդ և ժողովրդեանն» (Եզեկ.)

Հոգևորականի պարտականությունն է «Զանձինս իւրեանց ի գործ բարութեան և յուսումն ճշմարտութեան նվիրել «օրինակ ճշմարտութեան եղիցին յառնել և յուսուցանել միշտ»:

Հոգևորականն Աստծու ներկայությունն է և ձայնը ժողովրդի ծոցի մեջ և «ճշմարտութեան քարոզ»-ը՝ «անմոլար գիտութեան» մունետիկը: Իսկ այն հոգևորականը, որին վստահվել է «վերակացութիւն ժողովրդոց», թերանում է իր պարտականության մեջ՝ «ի խնամս հոգևոր ուսումն և ի խրատ» և կամ «ոչ տայցէ զմարմնաւոր պէտս կարօտելոյ» ծանր պատասխանատվության կենթարկվի և կպատժվի Աստծու կողմից և կկորցնի վստահությունը իր ժողովրդի աչքում:

Այս ճառի հետ բովանդակության տեսակետից սերտ առնչություն ունի 23-րդ ճառը, որը կոչվում է «Խրատք ճգնութեան և ցոյցք հանդիսից որ յառաքինութեան յորդորմունքս»:

Այս ճառը ընդհանրապես հոգևորականության և մանավանդ վանականության ուղղյալ հայրական մի ընդարձակ խրատ է կամ Լուսավորչի հիմնած վանական հաստատությունների, եղբայրանոցների միաբանական կանոնադրություն, որով սույն ճառը ունի նաև եկեղեցական իրավունքի հեղինակություն և վավերականություն:

Գեղեցիկ է, շինիչ, թելադրական ու այժմեական՝ վանականության ուղղած խրատների այս շարքը, որը իր հոգևոր, բարոյական, կրոնական նշանակությունը չի կորցրել նաև այսօր: Վանականները, հրամանակարգում է Լուսավորիչ, որոնք «հրաժարեցան յաշխարհէս և ընծայեցին զանձինս ի հնազանդութիւն ճշմարտութեան սուրբ հարցն ասանդից», կուսությամբ պետք է ապրեն վանքերում, զգույշ լինեն իրենց խոսքերի, խոսքերի և գործերի մեջ, բարկությունը փոխարինեն հեզությամբ, անզգամությունը՝ հանդարտությամբ, թշնամությունը՝ անհիշաչարությամբ, անհնազանդությունը՝ հնազանդությամբ, անհամբերությունը՝ համբերությամբ, նախանձը՝ քաղցրությամբ, չարությունը՝ բարությամբ, անգործությունը (ծուլությունը)՝ աշխատասիրությամբ, ատելու-

թյունը՝ սիրով, հուսահատությունը՝ հույսով, տրտմությունը՝ զվարթությամբ, ագահությունը՝ չափավորությամբ, ընչաքաղությունը՝ կամավոր աղքատությամբ, թերահավատությունը՝ հավատով:

Պետք չէ երբեք մոռանալ, որ վանականի, հոգևորականի զենքը մարմնավոր չէ, այլ բարոյական և հոգևոր. «զի զէն զինուորութեան ճգնաւորաց չէ մարմնաւոր, այլ հոգեւոր յԱստուծոյ առ վանումն չարին»:

Այնուհետև Լուսավորիչ սահմանում է ճշմարիտ վանական կյանքի առաջին կանոնադրությունը:

Վանականն իր ամբողջ հոգով և սրտով հավատարիմ պետք է մնա վանական միաբանության ուխտին: Գործած մեղքը համարձակությամբ և ազնվությամբ խոստովանի վանահոր: Վանականը սրբությամբ, սիրով ու հպարտությամբ կրի Քրիստոսի քաղցր լուծը, չամաչի իր կոչման համար և չդավաճանի երբեք իր ուխտին: Վանական-միաբանը պետք է ճշմարտասեր, հնազանդ և խաղաղասեր լինի, ամուր և սուրբ պահելով միաբանական կյանքի ընդհանուր օրենքները, «ի շինութիւն այլոց»:

Վանահայրն էլ պետք է հայրաբար, անաչառորեն խնամի և խրատի իր միաբաններին՝ հսկելով նրանց վարքի և բարքի վրա:

Միաբանները միշտ և բոլոր դեպքերում միաձուն և միակրոն պետք է լինեն, աղոթասեր, ծառայասեր և ջանասեր:

Միաբանության յուրաքանչյուր անդամը պիտանի է վանքի համար: Բայց բարոյապես փչացած, հոգեպես անպետքացած անդամը պետք է կտրել և հեռացնել, որ չվնասի ամբողջ մարմինը:

Միաբանները վանքում պաշտոն առնելու համար պետք չէ քծնեն վանական իշխանությանը: Պաշտոնը ծառայություն է Աստծու փառքին և եկեղեցու պայծառության համար, և ոչ թե պատիվ՝ անձին:

Վանքի տնտեսը կամ մատակարարը պետք է արդարությամբ հոգա միաբանների նյութական կարիքը, հյուրընկալը՝ բարեխղճությամբ: Բոլոր միաբանները անշահախնդիր կերպով աշխատեն միաբանության շինության համար: Վա՜յ այն միաբանին, որ աղոթք ու աշխատանք լքած՝ բամբասանքով է զբաղվում, չարախոսությամբ և բանսարկությամբ է պարապում:

Վանահայրը՝ ճշմարիտ հայր, միաբանները՝ հարազատ որդիներ և եղբայրներ: Բոլորն էլ պետք է ձգտեն իրենց առաքինի կյանքով դեպի երկնայինը, հրեշտակայինը: Այդպիսով միայն կհաստատվի նոր երկիր և նոր երկինք:

Վերջում Լուսավորիչ կոչ է անում վանականներին, «քանզի մի մարմին եմք ի Քրիստոս, պինդ կալցուք զիսոստովանութիւն անշարժ յուսոյն և սովին հաստատելք կատարեալք լիցուք, կապեալք միով հոգւով յարմարմամբք յօդիւք, պնդեալք հաստատելք անիզելի կապակցութեամբ»:

«Ցաճախապատում»-ի 23 հատերից յուրաքանչյուրը նվիրվել է մի նյութի: Ճառագիրը, սակայն, հիմնական, կրոնական նյութի առընչությամբ, շոշափում է նաև այլ կարևոր հարցեր:

Հեղինակը քաջաբնակ է Աստվածաշնչի, ս. Գրական մեկնության: Ազատորեն և հմտությամբ և ըստ տեղին օգտագործում է Աստվածաշունչը, իր խորհրդածությունները, մտքերը, եզրահանգումները հաստատելու, «կնքելու» համար: Ճառերից ոմանք ընդարձակ են, տեղ-տեղ ձգձգած, ոմանք համառոտ և կենդանի: Ունի մտածումների հորդություն, որը տեղ-տեղ խրթնաբանության է հասնում, արտահայտության հարուստ ձևեր, կենդանի ու պատկերավոր ոճ: Կիրառված են ճարտասանական այլազան ձևեր, եղանակներ: Իր միտքը, մտածումները էլ ավելի արտահայտիչ դարձնելու համար սիրում է օգտագործել բնության երևույթներից և կյանքից վերցրած նմանություններ, հակադրություններ:

Հատվածներ «Ցաճախապատում» ճառից

«Ոսկի և արծաթ և պղինձ և երկաթ, և պատուական քարինք և անարգք ի պէտս մարդկան ի վկայութիւն մեծին Աստուծոյ հաստատեցան: Եւ ի չորից նիւթոց զերեւելիսս հոգոյց, խոնաւ և ցամաք, ցուրտ և ջերմ յԱստուծոյ կազմեցան: Եւ ի նոյն նիւթոյ արարեալ զմարդն, և շնչեաց ի նա հոգի կենդանի և անմահ, մտաւոր և բանաւոր: Եւ խառնեաց զհոգևորն ընդ մարմնաւորն. զի զհանդէս մտերմութեանն ցուցցէ առ արարիչն, ժուժկալեալ հոգևոր սիրով պահիցէ զպատուիրանն անհի Տեառն, զի հանդիսացեալ Աստուծոյ ժառանգորդ լիցի անվախճան ուրախութեանցըն.» (1894, էջ 28):

«Որպէս ձմեռն ոչ միայն զովացուցանէ, այլ և սպանանէ. և ամառն ոչ միայն ջեռուցանէ, այլ և խորշակահար առնէ. և հուր ոչ միայն ջեռուցանէ և զպէտսըն լնու, այլ այրէ և ապականէ, և ջուր ոչ միայն արբուցանէ զերկիր, այլ և ողողէ և վնաս առնէ: Այսպէս և ամենայն դարմանքն. որպէս իւղ և մեղր և գինի և այլն ամենայն ըստ [illegible]ին օրինակի: Եւ չափով են խնամք դարման[illegible] և անչափն տանջանք և մահ.» (էջ 32):

«Զի որպէս ամա[illegible] երբ[illegible] կարկտիւ և հրով շրջի և երբեմն քաղցր անձրևով, այսպէս հրաման Տեառն շարժի ի վերայ անարժանիցն բարկութեամբ և արժանաւորացն քաղցրութեամբ ըստ արդար դատաւորութեանն:» (էջ 38), «Այսոքիկն դժնդակ վարք և վնա-

սակար պրոման սկզբաներ. զի առաջինն բնութեամբ՝ չարն չար ոչ է, և ոչ բարին բարի. այլ ի միասն ունի բարի և չար լինել զի սիրովն Աստուծոյ սիրել զբարին և ատել զչարն՝ բարի է. և ատել զբարին և սիրել զչարն՝ չար է. Նախանձել ընդ բարիսն և լինել բարի՝ բարի է, և ընդ չարսն՝ չար է. և նախանձն նոյն է: Բարեյոյն ցանկալ բարի է, և չարին՝ չար. և ցանկութիւն նոյն է: Այնպէս և առ ամենայն բարիս և չարիս է իմանալ զնախանձն և զցանկութիւն: Զի ամենատեառն բարերարի զբարին սերմանեալ ի մարդիկ, և յիշխանական կամսն թողեալ՝ որք կամիցին վարել ի բարի կամ ի չար: Արութեամբն ի հանդէս բարեպաշտութեանն, և հեշտութեամբն ի չարն հակամիտ միշտ:» (էջ 52):

«Եւ լոյսն զմարդիկ յորդորէ յամենայն պէտս օգտի, զի ամենայն գիտք աշխարհիս՝ գործոց կամ արուեստից՝ իւր աշխատութեանն գինք իցեն. եթէ դարբնութիւն է, եթէ մշակութիւն, եթէ ճանապարհորդութիւն և եթէ այլ ինչ պէսպէս արուեստք շահից, զոր ետ Աստուած ի պատիւ անձնիշխան կամացն որպէս որդոց ի խնամակալութիւն. և զգիշերն ետ ի հանգիստ քնոյ՝ դարման աշխատութեան, զի տկարութիւնն զօրասցի, և նորոգեալ հանգստեամբն անդրէն ի տիւն դարձցի ի գործսն՝ որ օգուտ և շահ ստանայ: Որպէս քաղցրն և անուշն իցեն և դառն և կծուն ի պէտս բժշկաց տնօրինին, և որ այլն ևս: Որպէս զհամենոցն է գիտել առ զանազան իորտիկսն անուշել զի տոքա յարգեսցին նոքօք, և նոքա տոքօք:» (էջ 70):

«Որպէս երկինքն ամպովք և ցօղովք և լուսաւորօք խնամէ և հասուցանէ զպտուղս բուսոց և տընկոց: Որ և հողմոց պիտոյանան ըստ ժամանակի հովուց և ջերմութեանց. որ սնուցանէ և անվնաս պահէ. և ջրով ոռոգանէ զերկիրս և արբուցանէ զմարդիկ և զանասունս, զգազանս և զթռչունս և զամենայն զեռունս ե զսողունս և որ ունին շունչ կենդանի:» (էջ 74):

«Այլ և ցրտով և ջերմով զտունկս և զբոյսս ապականէ, և զանձրևս ի կարկուտ և ի ձիւն դարձուցանէ, և զցօղ լիղեմն վնասակար, և զառողջութիւն ի տրրտմութիւն, և փառքն յանփառութիւն:» (էջ 74):

«Տես ո՞րչափ իշխան է մարդն. զի և զԱստուած ի կամս իւր ածէ յառնելն զբարին:» (էջ 78):

«Զի նա է լոյս և կեանք մեր և աղբիւր բարեաց: Զի ոչ խնդրէ աղբիւր ջուր, և ոչ արեգակն լոյս. այսպէս և Աստուած տուող է բարեաց և ոչ առող ինչ յաղագս մեծի բարերարութեանն իւրոյ և անկարօտ լիութեանն:» (էջ 219):

«Զի ամենայն արարածք ի բարերարէն բարի ստեղծան. և ի կամակար մտացն եղեն չարք ի հրեշտակաց և ի մարդկանէ՝ ամբարիշտք դնք:» (էջ 228):

«...Զի չիք ոք եղեալ բնութեամբ չար, այլ ի կամաց և ի գործոց իւրոց առնու զհատուցումն:» (էջ 229):

«Զի ամենայն արարածք յարարչէն միշտ կարօտանան օգնականութեան, և ոչ արարիչն յարարածոցս: Զի անփոփոխելի է Աստուած, և փոփոխումն ունին արարածք. որպէս տղայն յիրիտասարդութիւն, և երիտասարդն ի ծերութիւն, և ծերն յապականութիւն և որպէս գարուն յամառն, և ամառն յաշուն, և աշուն ի ձմեռ՝ որ փոխուցանէ զամենայն կենդանեաց յորդորումն և զոնկոց և զբուսոց: Եւ արեգակն փոփոխումն ունի ըստ ժամանակաց նոցա ըստ սահմանելոյն Աստուծոյ զերկայնութիւն աւուրց և զպակասութիւն:» (էջ 244):

«Յաճախապատում»-ը ունեցել է չորս տպագրություն:

Առաջին անգամ տպագրվել է Կ. Պոլսում, 1737 թվականի մայիսի 1-ին՝ Հովհաննես Կոլոտի պատրիարքության օրով, մահտեսի «Յակոբ ամուճայի» ծախքով, որը «հաւատարիմ պաշտօնատար և միաբան» է եղել Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքին:

Տպագրվող «Յաճախապատում»-ի ձեռագիրը բերել է Մայր Աթոռ ս. Էջմիածնի նվիրակ Պետրոս աստվածաբան վարդապետը, որ և «Յոյժ փափագանօք կամեցաւ զտպիլն»:

Առաջին տպագրությունը ունի հետևյալ տիտղոսաթերթը՝

Գիրք
որ կոչի
Յաճախապատում
Առաքեալ սուրբ Հարն մերոյ
Երանելւոյն Գրիգորի
Լուսաւորչին
Յորում պարունակին
մասք Յոգնապատումք
քսաներեք
վասն անհաս էութեանն Աստուծոյ
և խնամոցն և սիրոյն որ
առ ստեղծուածս
և վարուց ուղղութեան և
Հատուցման գործոց

«Յաճախապատում»-ի առաջին տպագրությունը բաղկանում է ՄԿ էջից (280), ապա՝ ցանկ ճառերի (280—284), այնուհետև տպագրվել է «Յոհաննիսի վարդապետի Երզնկացւոյ, ասացուած ներբողական գովեստ ի սուրբ Լուսաւորիչն հայոց ի մեծն Գրիգորիոս», կարդացված «Յոգնահաւաք հանդիսիւք քահանայական դասուց և վարդապետից և ժողովոց հաւատացելոց բազմաց» Սեպուհ լերան վրա ս. Գրիգոր Լուսավորչի անվան եկեղեցում, մեծ սրբի գերեզմանի վրա, «ի թուականին հայոց ՉԼԷ (637—551=1188)» (էջ 265—310): Սա մի հոյակապ, գլուխգործոց ներբողական է՝ Լուսավորչին նվիրված, հայ հոետորական արվեստի և եկեղեցական մատենագրության անկրկնելի գոհարներից մեկը:

312 էջից՝ Լուսավորչի թոռների վրա գրված «դրուատ գովեստի» ճառն է, նույն հեղինակից (էջ 312—332), որին և կցվել է «շարական որդւոց և թոռանց սրբոյն Գրի-

գորի Լուսաւորչի մերոյ» (դկ. Աստուածալին հաւատոյ հարցն սրբոց դատաւորումն):

336—347 էջերում տպագրվել է Պաղտասար Դպիրի ներբողականը՝ «ի սրբազան հայրն մեր երանելի Գրիգորիոս, ի թուին 1158» (1709 թ.):

Հրատարակիչը բարի մտածումն է ունեցել քաղել և այբուբենական ցանկով կազմել «Յաճախապատում»-ի այդ «հոգեղից սուրբ մատյանից» գեղեցիկ առանձին մտքեր, որոնք տպագրվել են 348—357 էջերում:

Գրքի 358—360-րդ էջերում «Յաճախապատում»-ի առաջին տպագրության հիշատակարանն է «Յայտարարութիւն ինչ յաղագս հոգեղից սրբոյ մատենիս»:

«Յաճախապատում»-ի կրոնական նշանակությանը նվիրված արտաքուստ տողերից հետո՝ «իսկ խորութիւն բանին ի պարզ գրուածոյն՝ միայն նա՛ կարէ ճանաչել, որ միշտ զհոգեւորն խորհիլ ախորժէ» խոսվում է տրպագրության հանգամանքների մասին, ըստ հետևյալի.

Եւ սոյն այս գեղեցիկ աստուածային գանձուս՝ ցանկացող եղեալ բարեպաշտօն և հոգեսէր մահտեսի յակոբ ամուսայն. որ Է հատատարիմ պաշտօնատար և միաբան ի դուռն սրբոյն Յակոբայ մեծի աթոռոյն ի սուրբն սուղիմ: Եւ իր արդեամբքն ետ տպել զսա ի յիշատակ բարի՝ հոգւոյ իւրոյ, ի յօգուտ հոգևոր եղբարց, և ի պատիւ և ի փառս միոյ աստուծոյ: Որոյ բարի յիշատակն օրհնութեամբ եղիցի. և վարձս բարեաց հատուցցէ նմա աստուած ի հոգի և ի մարմին. ի կեանս և ի մահ: Նաև ծնողացն նորին հանգուցեալ կարապետին և մահտեսի կատարին. և ամենայն արեանառու ննջեցելոցն ի քրիստոս: Բարեխոսութեամբ սրբոյն Գրիգորի, և սուրբ որդւոց և թոռանց նորին. և Դանիէլի սուրբ ծերունւոյն, և ամենայն ընտրելոցն աստուծոյ ա՛մէն:

Եւ արդ՝ ողորմութեամբքն աստուծոյ և բարեխօսութեամբ սրբոյն մինասայ զօրաւարի, տպեցեալ առարտեցաւ սուրբ գիրքս ի թվին հայոց ՌՃՁԶ. մայիսի Ի:

Ի հայրապետութեան սրբոյն Էջմիածնի՝ Թէքիրտաղցի Տեառն Աբրահամու Արքազան Կաթողիկոսին ամենայն Հայոց:

Եւ ի Պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ՝ Տեառն Գրիգորի և Տեառն Յոհաննու Արքազան և Աստուածաբան Վարապետացն:

Ի Տպարանի Կարապետի որդւոյ Մահտեսի Աստուածատուրին և որդւոյ նորին տիրացու յօհաննիսին:

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ ՔԱՂԱՔԻ:

Եւ արդ՝ որք վայելէք ի հոգևոր բարութեամբ լի սեղանոյս, յիշեսջիք ի սուրբ աղօթս ձեր՝ լվերոգրեալ սրբազան Պատրիարգն Կոստանդնուպօլսոյ. որ յոյժ առատել սիրով կամեցաւ զտրպումն սորին. որ և ո՛չ միայն միտման ասելով, այլ ինքնին բուռ գրասէր բարացն՝ կամելով նոյն ասկզմամբ սորին:

Նաև սուրբ Էջմիածնի նուիրակ Պետրոս աստուածաբան վարդապետն յիշեսցի ի բարին. զի նա նոր զօրինակն սորին. և յոյժ միազանութիւն կամեցաւ զտպին:

Այլև յիշեսջիք զՍարգիս աստուածաբան վարդապետն և զղաղէզ տիրացու մելքիսէթն և զծնողսն նոցին. զի զօրինակսն ներբողեանցդ նոքա ունէին:

Յիշեսջիք նուսկ յետոյ զվերոգրեցեալ տպագրողն սորին զմահտեսի Աստուածատուրն, և զծնողսն իւր զկարապետն և զմսրիամն. և զորդի նորին ուշիմամիտ զտիրացու յօհաննէսն. և զաշխատաւոր մշակն տպագրատանն զլևոնցի տէր աստուածատրի որդի սարուխանն:

Եւ տուօղն բարեաց աստուած յիշեսցէ առնասարակ զամենեսեան յարքայութեան իւրում. ամէն:

«Յաճախապատում»-ը երկրորդ անգամ տպագրվել է դարձյալ Կ. Պոլսում 1824 թվականին: Սույն տպագրությունը սմենայն մանրամասնությամբ «Յաճախապատում»-ի առաջին տպագրության երկրորդ հրատարակությունն է:

Սույն տպագրությունն ունի հետևյալ տիտղոսաթերթը՝

Գիրք
որ կոչի
Յաճախապատում
Ասացեալ սբ Հօրն մերոյ երանելւոյն Գրիգորի
Լուսաւորչին
Յորում պարունակին ճաշք Հոգևապատում
քսան երեք
Վս անհաս էութեանն Աձ, և խնամոցն և սիրոյն
որ առ ստեղծուածս
Եւ վարուց ուղղութն և հատուցման գործոյ,
որ
Ի Հայրապետութե սրբ Էջմիածնի Տոն Տոն
Եփրեմի սրբզ կաթուղիկոսի ամ հայոց,
Եւ ի պատրիարգութ սբոյ Եէմի Տոն Դասբրիէլի
Գերերջանիկ արքեպսի
Նաև ի պատրիարգութեան մեծի մայրաքաղաքի
Կոստանդնուպօլսոյ Տոն Կարապետի
երանաշնորհ արքի եպսի
որոյ Վեհափառ հրամանաւ տպեալ վերստին
Արդեամբք և ծախիւք առն ազգասիրի և
բարեպաշտի ասկնեցի մեստ Յոհաննեան
մեստի Աբրահամ ամիրայի
Յիւրում իսկ սեփհական գործարանի
Ամի Տեառն 1824, Յուլիսի 21
ի Հաւան փաշայ խան
ի Կոստանդնուպօլիս.

Գիրքը բաղկանում է 400 էջից: 3—290 էջերը՝ բնագիրը, 291—293՝ 23 ճառերի ցանկ: Հովհաննես Երզնկացու Լուսավորչին նվիրված ներբողականը գրավում է 294—345 էջերը, Լուսավորչի թոռանց նվիրված ներբո-

ղը՝ 346—370 էջերը, նրանց նվիրված շարականը՝ 371 էջը. իսկ Պաղտասար Դպիրի ներբողականը՝ 372—386, ապա ճառերից քաղված գեղեցիկ մասքերը՝ 387—400:

Վերջին էջում կա հետևյալ հիշատակարանը.

Վասն որոյ այսր ազնուական մատենի արբանեակ բարեպաշտ ամիրայն՝ զկոչոյն գիտելով զլարգ, եղև ցանկացող այնր աստուածային գանձուց, որպէս վիճակաց վաճառուց անվախնան վարձուց երանական շահուց. և այն՝ ո՛չ առ ի զնոյնս ,ունել և ինքնան միայն սնփականել, այլ և ըստ բարևնէր բարուցն առ ի նոցայն կարօտելոց ևս սեղանաւորել: Ուստի զսոյն սա մատեան՝ որ զկնի կտակաց հնոց և նորոց օրինաց մատեան անսխալ՝ զի յայլմ: Նախ արձանացուցեալս ի տիպ՝ որ առ մեզ սպասեալ և պսակասեալ՝ և ի նմա՝ որ ինչ բանք և իմաստք ի բազմաց անյայտք էին և ծածկեալք, անդրէն արդ այժմ՝ որպէս թէ առ ի ցուցանել զտեղին և զծածկեալ գանձս աստուածային՝ որ ի նմա, յերևան ածեալ՝ և ի յայտ բերել՝ ետ արձանացուցանել ի տիպ՝ իւրով իսկ արդեամբ (որպէս զրեցաք ի դասն այսր մատենի) ի սեփական իւր գործարանի իբրև սրբան կենդանի ի յիշատակ իւր ինքնան և ի շահ հոգեսիրաց նան ի պատիւ սրբոյն և ի փառս միոյն աստուծոյ:

Որեմն խնդի՛ր է ի ձէջ ասել ընդ մեզ սիրելի՛ք մեր՝ թէ նոյն ինքն աստուած՝ այն որ կոմի տալ ասացէ նմա զլարթս բարևաց ո՛չ միայն ի կեանս յայս այլ և ընդ երանելեաց:

Ընդ նմին և ծնողի նորին՝ առն բարեպաշտի թէրլեանց սարրաֆ հանգուցեալ մատենսի Յովանին, և յարդի եղբօր նորին հանգուցեալ դաղարին, նան այնոցիկ՝ որք այժմ են կենդանի, բարեպաշտուհի մօր նորին մատենսի Անանա տիկնոջն, և եղբօր նորին մատենսի Եարմին և եղբօր որդւոց նորին՝ գասպարին՝ սանակին՝ մատենսի Նորուկին, և գէորգին, և այլ ամենայն կենդանեաց և ննջեցելոց նորին: Բարեխօսութեամբ սրբոյն գրիգորի, և սուրբ որդւոց և թոռանց նորին. և դանիէլի սուրբ ծերունւոյն, և ամենայն ընտրելոցն աստուծոյ ա՛մէն:

«Զաշխատող ցանկիս և զառաջին սրբագրող սրբոյ մատենիս զՊաղտասար պատուելի Դպիրն ընդորում և զիս զայժմեան սրբագրող չնչին ծառայս ձեր զթագաւոր Ասլանեան թարմատար դպիրս՝ ո՛վ եղբարք բանասէրք յիշեսջիք ի տէր հանդերձ ծնողովք մերովք և ամենայն ննջեցելովք և ողջ լերուք, ամէն:

Ներել մարթիմ ասելս արկեալ
Որ ինչ ի սմա սղխալ գտեալ
Ո՛չ գիտելոցն և ո՛չ տեսեալ
Կամ ըստ ինոցն այնոյէս թողեալ»:

«Յանախապատում»-ի երկրորդ տպագրությունը կատարվել է Վենետիկում, 1838 թվականին: Սույն հրատարակությունը ձեռքի տակ չենք ունեցել:


ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ
ԵՐԱՆԵԼՈՅՆ
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃՌՈՒ
ԼՈՆԴՈՆԻ ԵՐ
ՏՊԱՐԱՆ
Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի
1894 — ԴՅԽԴ

«Յանախապատում»-ի չորրորդ հրատարակության տիտղոսաթերթը (Էջմիածին, 1894 թ.)

«Յանախապատում»-ի չորրորդ տպագրությունը կատարվել է Մայր Աթոռ ս. Էջմիածնում, 1894 թվականին:

Սույն հրատարակությունն ունի հետևյալ տիտղոսաթերթը՝

Սրբոյ Հօրն մերոյ
Երանելոյն
Գրիգոր Լուսաւորչի
Յանախապատում ճառք
Լուսաւորք
Յառաջաբան, համեմատութեամբ
և ծանոթութիւններով
Ա. Տէր-Միքելեանի
տպարան
Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի
1894=ԴՅԽԴ

Աստվածաբանության դոկտոր, մատենագետ և հմուտ բանասեր Արշակ Տեր-Միքելյանի սույն աշխատությունը եզակի է իր տեսակի մեջ, որպես բարեխիղճ ուսումնասիրություն, գիտական լույս ու արժեքավոր ներդրում մեր նկեղեցական մատենագրության մեջ:

Հարգելի հեղինակն իր «Յառաջաբան»-ում անվերապահորեն «Յաճախապատում»-ը համարել է Լուսավորչի գործ և արդարորեն շատ բարձր է գնահատում գրքի կրոնական նշանակությունը մեր եկեղեցու և մեր մատենագրության համար։ «Հայց. եկեղեցւոյ առաքելական վարդապետութեան հիմնական աղբյուրը ս. Գրքից հետո ս. Գրիգոր Լուսաւորչի Յաճախապատում ճառերն են, որոնք անփոփոխ տալիս են դավանական և բարոյական բոլոր սկզբունքներն իբրև հիմունք և սահման նորա հաստատիմ որդոց»... «Ս. Գրիգոր Լուսաւորիչն է մեր հոգևոր ծնողը, նա է մեր հոգենուէր դաստիարակն ու բարեիւսը... որ առաքելոց խոպանացած անդերը նորոգապէս վարէ և Քրիստոսի սերմերը ցանէ հայոց սրտերում. հայ ազգը լուսաւորող և վերածնող մեծ Հօր աստուածաբարբառ խրատների տակ կրթուած հոգւոց են բխում նրա ճառերը» (Ե)։

Տեր-Միքելյան ս. Էջմիածնի մատենադարանում գտնվող հինգ գրչագիր օրինակների, որոնցից երկուսը՝ հնագույն (Կարինյան ցուցակ № 1655 և № 1658)՝ համեմատությամբ ճշտել, վերականգնել է «Յաճախապատում»-ի բնագիրը և հրատարակել գրչագիրների տարբեր ընթերցումներով և հիշատակություններով։ Հեղինակը գրքի վերջում դրել է գրչագիրների համեմատության տարբերությունները։

Ա. Տեր-Միքելյանի աշխատությունը բաղկանում է 354 էջից, այդ թվում «Յառաջաբան» (Ե—ԺԷ), բնագիր՝ 1—279 էջերը, «Լուսաբանութիւնք»՝ 280—313 էջերը, «Ընթերցուածք»՝ 314—348 (ձեռագրի համեմատությունների տարբերություն), «Յանկ նիւթոց»՝ 349—352, «Յանկ գլխակարգութեանց»՝ 353—354)։

Բացի «Վարդապետութիւն» և «Յաճախապատում» ճառերից, Լուսավորչին են ընծայվում մի քանի այլ աշխատություններ, որոնցից գլխավորը երեսուն կանոններն են՝ «Կանոնք սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» (տե՛ս Կանոնագիրք հայոց, Երևան, 1964, էջ 243—249), հավանաբար որպես հավելված Նիկիո «Կանոնք Նիկիական գլուխք»-ի կանոնների (Կանոնագիրք հայոց, Երևան, 1964, էջ 115—150), որոնք Հայաստան բերվեցին ս. Արիստակես Հայրապետի կողմից և հանձնվեցին Լուսավորչին։ Խորենացին այս մասին վկայում է «ընդ որ ուրախացեալ սրբոյն Գրիգորի, սուղ ինչ կանոնս յինքեանէ ի կանոնս ժողովոյն (Նիկիո) յաւելու վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»։

Երեսուն կանոններից բացի Լուսավորչին են ընծայվում նաև ըստ ձեռագիր կանոնագրքերի ևս 11 կանոններ կամ հարցումներ, «Կանոնք սրբոյն Գրիգորի պարթևի, դարձեալ հարցումն և պատասխանիք նոցա» (տե՛ս Աբել. այրք., «Արարատ» ամսագիր, 1873, էջ 409, ինչպես նաև Հ. Գ. Զարբհանալյան, «Հայկ. հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1886, էջ 180)։

Լուսավորչին են ընծայվում նաև «իսկ մեք փառաւորեսցուք»-ը խորհրդատետրի, ժամագրքի մաղթանքը՝ «Աստուած մեծ, հզօր և փառաւորեալ» ըստ ավանդության երգված ս. Հռիփսիմյանց և ս. Գայանյանց անունները վկայարանների մեջ ամփոփելիս, ինչպես նաև երկու աղոթքներ՝ «Օրհնեալ է մարդասիրութիւն քոյ, Տէր իմ» և «Աղաչեմ զքեզ»։ Լուսավորչին է ընծայվում նաև մի «Պատարագամատոյց»։

Հովհաննես Երզնկացին ժամանակին բովանդակ հայ ժողովրդի զգացմունքների և երախտագիտության թարգմանն է հանդիսացել՝ գրելով իր հոյակապ, սքանչելի ներբողյանը Լուսավորչի վրա, շեշտելով «զի կատարեալ ցանկայ սիրտ իմ մեծափափաք բաղձանօք նկարել զարփիագեղ պատկեր աստուածազարդ Հօրն մերոյ սրբոյ Լուսաւորչին Գրիգորի, ի կենդանի տախտակս սրտից որդիացեալ ժողովրդեան նորա»։

Արդարև, հայ ժողովուրդը մի ժամանակ կոչվում էր Լուսավորչի ազգ, Էջմիածնի ժողովուրդ։ Լուսավորիչն է մեր հայրը, որ վերըստին նոր կյանքի կոչեց հայությանը՝ իր առաքելական քարոզությամբ, վարդապետությամբ և մատենագրական գործերով։ «Բազմաբերան Հօր մերոյ սրբոյն Լուսաւորչի», «Յաճախապատում»-ը է «հնձանն այն արդիւնաւոր անապակ ողկուզոյ արենավաստակ ս. Հօրս մերոյ յորս ճմլեալ ինքն՝ մեք արբաք զգինին՝ զբաժակն ուրախութեան, ցնծացաք և ցնծամք հոգեզուարճ հանդիսիւք յայս ասպարէզ մշակել ձեռամբ անեղին» (Մայր ցուցակ ձեռագրաց սրբոյ Յակոբեանց, Բ հատոր, կազմեց Նորայր եպս., Երուսաղէմ, 1959, էջ 179, ձեռագրի համար 194, Յառաջաբան «բացատրութիւն Յաճախապատում գրոյ».—1, Երեմիա վրդ. Չօրլուքի, 1820)։

Լուսավորիչ մեր եկեղեցական մատենագրության առաջին և երախտաշատ հեղինակն է, իսկ նրա մատենագրական-եկեղեցական վաստակն՝ իր ուրույն ու արժեքավոր տեղն է գրավում հայ մշակույթի գանձարանի մեջ։



ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒԼՅԱՆ
(Ավագ դասախոս)

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՆՐԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Վարդանանց պատերազմի նահատակների հիշատակին նվիրված այս տոնը ամեն տարի, ավանդաբար, տոնվում է հայ ժողովրդի կողմից որպես նրա ազգային ամենանվիրական տոներից մեկը: Այս տոնը տոնվում է հայաբնակ այն բոլոր վայրերում, որտեղ կա եկեղեցի և ազգային բեմ: Իսկ այնտեղ, որտեղ ոչ եկեղեցի կա և ոչ էլ ազգային բեմ, այս տոնը տոնվում է դարձյալ, բայց այս անգամ՝ հոգիների առանձնության մեջ, անթեղված հույսի առկայծումներով, ազգային ենթագիտակցության հուշարարությամբ:

Ժողովրդի կողմից նվիրագործված խորհուրդը իր ներգործությամբ ավելի մեծ է լինում, քան նրան տուն տվող պատմական իրադարձությունը: Այսպես, Վարդանանց պատերազմը, որպես բովանդակություն, որպես խորհուրդ, ավելի մեծ է, քան «Վարդանանց պատերազմ» հասկացողությունը:

Անշուշտ, Վարդանանց պատերազմը ուներ իր նյութական պատճառները:

Հայտնի՛ հայտ են մեր ժողովրդի պատմության փաստերը: Արշակ 2-րդի և ապա նրա որդու՝ Պապի, ըստ էության ճիշտ, բայց կիրառման ձևերի մեջ սխալ քաղաքականությունը ոչ միայն չստեղծեց կենտրոնական, ուժեղ իշխանություն, այլ հասցրեց Հայաստանի թուլացմանը, նրա բաժանմանը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև 387 թվականին: Բյուզանդական Հայաստանում շուտով վերանում է հայերի քաղաքական իշխանությունը: Պարսկական Հայաստանում մոտ կես դար հայերը շարունակում են պահել իրենց կիսաանկախ դրությունը: Հայաստանի թուլացումը գրգռել էր մեր երկու գիշատիչ հզոր հարևանների գազանային ախորժակները: Բայց տարօրինակ, երիցս սուրբ, առեղծվածային ժողովուրդ է հայ ժողովուրդը՝ օժտված հակազդելու հրաշագործ, անհման ուժով: Մեր պատմության մեծագույն իրադարձությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ Հայաստանը քաղաքականապես թուլացել, զինվորապես քայքայվել էր: 406 թվականին Մեսրոպ Մաշտոցը հնարում է հայկական տառերը: Ստեղծվում է մեր ինքնուրույն դպրությունը: 301 թվականին հայերը, պաշտոնապես ընդունելով քրիստոնեությունը, սահմանազատվել էին հեթանոս Պարսկաստանից, իսկ Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ՝ սահմանազատվեցին նաև կրոնակից Բյուզանդիայից և ընկան քաղաքական առանձնացման մեջ: Պարսկաստանի համար Հայաստանը հարուստ, պիտանի երկիր էր, կամուրջ՝ իր և Բյուզանդիայի միջև: Պարսիկները նկատեցին հայերի քաղաքական առանձնացումը և գործի անցան: Պարսկական արքունիքը մեծագույն շտապողականությամբ ձեռնարկեց հայերի պարսկացման գործին: Ի՞նչ արած, բոլոր դարերի բռնակալների խելքը ավելի երկար չէ, քան իրենց սուրը: Իրենց ուժերից վեր է, չեն կարող նկատել ոգու հակազդեցությունը: Հազկերտը գործեց ըստ նմանության յուրում, այսինքը՝ բռնակալական մեթոդներով: Առանձնացրեց, չեզոքացրեց հայերի ռազմական ուժը: Միմյանց դեմ գրգռեց հայ հայասարարներին, սահմանափակեց նրանց ժառանգական իրավունքները, հոգևորականության

ձեռքից խլեց դատարանները: Երկիրը դրեց մանր հարկի տակ. հարկից ազատ չմնացին նույնիսկ վանքերը, միանձնյա հոգևորականները, ուսաջ քաշեց, պարգևատրեց միայն սրիկաներին, պնակալեզներին: Հայաստանի տնտեսական քայքայումով Պարսկաստանը հույս ուներ գլուխ բերելու հայերի հավատուրացության գործը: Ահա պատմական իրադրությունը, ահա այն նախադրյալները, որոնք ավելի սպատրվակ, քան թե պատճառ ծառայեցին Վարդանանց պատերազմին: Վարդանանց պատերազմի պատճառները ավելի խորն էին. Վարդանանց պատերազմը անխուսափելի էր, պիտի տեղի ունենար: Վարդանանց պատերազմի մեջ նորը՝ պարսիկների հարձակումը չէր Հայաստանի վրա: Պարսիկները միշտ էլ հարձակվել էին Հայաստանի վրա: Վարդանանց պատերազմի մեջ նորը այս անգամ հայերի ցույց տված դիմադրության համաժողովրդական բնույթն էր: Ո՞րն էր այն նոր գործոնը, որ միասնական կամքի մեջ ձուլեց և՛ հոգևորականին, և՛ իշխանին, և՛ ռամիկին: Ահա հարցը, հարցերի հարցը: Վարդանանց պատերազմի մեջ մենք գործ ունենք նոր հայության հետ, որը որակապես տարբերվում էր ոչ միայն Տիգրան Մեծի ժամանակաշրջանի հայությունից, այլ նույնիսկ Տրդատ 3-րդի ժամանակաշրջանի քրիստոնյա հայությունից:

Ամեն անգամ չէ, որ պատմական ստուգությունը, դեպքերի լրիվ իմացումը օգնում են հասկանալու բուն պատճառը: Վարդանանց պատերազմի ամբողջ էությունը հանճարեղ կերպով հասկացված և արտահայտված է Եղիշեի «Վասն պատերազմին Վարդանանց» աշխատության մեջ: Ավելին՝ Վարդանանց պատերազմը այսօր մեզ համար չէր ունենա այն նշանակությունը, որ ունի, եթե չլիներ Եղիշեի գիրքը: Մենք այսօր տոնում ենք ոչ թե Վարդանանց պատերազմը, որպես դեպք և իրողություն, այլ այդ պատերազմին տրված համաժողովրդական նշանակությունը, որ այնքան հանճարեղ, հայեցի կերպով արտահայտված է Եղիշեի աշխատության մեջ: Այսօր տոնելով Սրբոց Վարդանանց տոնը, մենք տոնում ենք մեր ազգային ինքնությունը, անդրադարձված Եղիշեի հանճարեղ երկի մեջ: Ահա, թե ինչումն է կայանում արվեստի հրաշագործ էությունը, ահա թե ինչումն է կայանում արվեստագետ մատենագրի անհուն գերազանցությունը գիտնական—պատմաբանի վրա:

Ոչ մեկ կասկած, որ Վարդանանց պատերազմը տեղի է ունեցել 451 թվականին, մայիսի 26-ին, ճիշտ այնպես, ինչպես նկարագրել է Եղիշեն: Զուր են Եղիշեին 6-րդ դար տեղափոխելու բոլոր փորձերը: Եղիշեն 5-րդ դարու, նոր հայության զավակ է, Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ աշակերտը: Նա եղել է Վարդան սպարապետի զինվորներից և մասնակցել է պատերազմին: Եղիշեի ոճը չէ այն ոճերից, որոնք խաբել գիտեն: Եղիշեն ճշմարտախոս է, հայության ամենամաքուր բերանը: Սեղանչում են, մանացու կերպով մեղանչում են բոլոր նրանք, ովքեր Եղիշեին վեր են ածում քարոզչի, որը իբր թե կուսակցական նկատառումներով գրել է իր գիրքը: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Եղիշեն հայությունն իսկ է, որ իմաստավորել է իրեն՝ գրելով իր անմահ երկը՝ «Վասն պատերազմին Վարդանանց» դյուցազներգությունը:

Վարդանանց պատերազմը գնահատելիս, մեր պատմաբանները բաժանվում են երկու խմբի. կան, որ Վարդանանց պատերազմը համարում են կրոնական, կան որ՝ ազգային-ազատագրական: Երկու դեպքում էլ փոխվո՞ւմ է արդյոք գործի էությունը: Թեկուզ կրոնական՝ Վարդանանց պատերազմը կը՞որցնի՞ արդյոք իր ազգային նշանակությունը: Բնավ երբեք: Կրոնքը, եկեղեցին ոչ միայն հակադիր չէ ազգին, այլ նրա գոյության մեկ ուրույն ձևն է: Եղել է մի ժամանակ, երբ կրոնքը հանդիսացել է մարդու անձնականության արտահայտությունը: Բազմ դարերի ընթացքում, պատմության փորձությունների միջով, պատմության դպրոցում մարդը ստվորել է, զարգացել: Մարդու հետ զարգացել է նաև նրա կրոնական զգացումը, փոխել է իր բնույթը, դարձել է այն ամենահզոր ուժը, որին ստորադասվել են մարդու բոլոր մյուս զգացումները: Կրոնքը հանդիսացել է մարդու և նրան շրջապատող տեսանելի և անտեսանելի իրականության միջև գոյություն ունեցող հարաբերության ամենաբարձր արտահայտությունը, այն միակ ձևը, որով մարդը դրսևորել է իր ինքնությունը, իմաստավորել իր գոյությունը, տարազավորել բարձրագույնի մասին իր պատկերացումը: Կրոնական զգացումը նույնական է մարդու բարոյական զգացման՝ մարդու արժանապատվության զգացման հետ: Այս է պատճառը, որ պատմության ընթացքում բոլոր ժողովուրդները կրոնքը հիմք են ծառայեցրել իրենց ազգային սրբությունների համար: 5-րդ դարում հայ ժողովուրդը նույնացել էր քրիստոնեության հետ, քրիստոնեությունը դարձել էր նրա գոյության ձևը, խղճմտանքի ձայնը, նրա արժանապատվության անունը, որոշակը: Ահա թե ինչու Հազկերտի հավատուրացության հրավերին հայ ժողովուրդը հակադրեց իր միասնական «ոչ»-ը. «Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք, և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ

ամենայն գինչ և են դառն հարուածք: Վաղվաղակի արա գինչ և կամիս: Ի քէն տանջանք և ի մէնք յանձնառութիւնք, սուր քո՝ և պարանոցք մեր»:

Վարդանանց պատերազմում կռվելով քրիստոնեական կրոնի համար, հայ ժողովուրդը կռվում էր իր հայրերի մամռապատ գերեզմանների համար, իր հայրենի ծխանի կապույտ ծուխի համար, իր ծաղկավառ դաշտերի, անդնդախոր ձորերի համար, իր երկնահաս լեռների «սառցանիստ գեղեցկության» համար, իր բարակիրան աղջիկների հեզաճկուն պարի համար, իր մայրենի հրնչյունների անաղարտության համար, իր երկնասլաց կաթողիկեների անկանգնելի խոյանքի համար: Սրանով է բացատրվում պարսկական բռնության դեմ հայ ժողովրդի ցույց տված դիմադրության համաժողովրդական, հերոսական բնույթը: Ավարայրի ճակատամարտում հայ ժողովուրդը կռվել է՝ իր պատվի և արժանապատվության համար, կռվել է այն բոլորի համար, ինչ իրեն համար եղել է սուրբ և նվիրական: Հազկերտի կրոնափոխության հրավերը սպառնում էր վերջ տալ հայ ժողովրդի ինքնությունն գոյության: Հազկերտի կրոնափոխության հրավերը մի ձեռնոց էր՝ նետված մեսրոպյան ոգու դեմ: Հազկերտը պատերազմ հայտարարեց Մեսրոպի դեմ, թարգմանիչների դեմ: Իսկ հայ ժողովուրդը կռվեց Մեսրոպի համար: Իսկ ո՞վ էր Մեսրոպը:

Չի կարելի հասկանալ Մեսրոպին, առանց հասկանալու այն վճռական, կենսական նշանակությունը, որ ունեցավ քրիստոնեությունը մեր ժողովրդի կյանքում:

Մեր պատմաբաններից ոմանք հայերի կողմից քրիստոնեության ընդունումը բացատրում են ավատապետական հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությամբ. Պարսկաստանը նվազ ավատապետական չէր, քան Հայաստանը: Բայց Պարսկաստանը չընդունեց քրիստոնեությունը: Ուրեմն հայերի կողմից քրիստոնեության ընդունման պատճառը պետք է փնտրել այլ տեղ:

Մեր ոգին, ստեղծագործական հանճարը ինքնուրույն է, բայց ազգակից՝ հունականին, դասական հունականին: Պարսկաստանն իր մշտնջենական հարևանությամբ մեզ վրա ազդել է միայն իր կենցաղով, իր սովորություններով, մեզ փոխ է տվել մի շարք բառեր, որոնց այսօր ժառանգորդն անգամ չի հանդիսանում: Թեև կարճատև՝ հելլենիստական շրջանը եղել է այն քուրան, որի մեջ թրծվել է մեր ոգին:

Ահա այս ոգին էր, որ իր բնական աճի հեռանկարով պատրաստ էր ընդունելու և ընդունեց քրիստոնեությունը: Քրիստոնեությունը, համեմատած գրադաշտական կրոնին, անհունորեն ավելի բարձր էր, համահնչուն էր մեր էության, որ հաստատեցել, առնականացել, վսեմացել էր՝ անցնելով հելլենիստական դպրության բովից: Թագավորական հրամանագիր-օրենքներով ժողովուրդները ոչինչ չեն ընդունում, ոչինչ չեն անում: Նրանք ընդունում են միայն այն, ինչ համահնչուն է իրենց էության հետ, ինչ համապատասխանում է իրենց ներքին ակնկալության: Հայերի կողմից քրիստոնեության ընդունումը պետք է բացատրել ոչ թե ավատապետական հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությամբ, այլ մեր ոգու անով ու հասունությամբ: Մենք մեր ոգու սնով ու հասունությամբ ընդունեցինք քրիստոնեությունը: Իսկ ընդունելով քրիստոնեությունը, մենք մեզ վերագտանք մեր որակի ավելի բարձր ձևի մեջ: Ահա գիտակցված այդ նոր որակի արգասիքն էր Մեսրոպը: Ահա այդ նոր որակի թելադրանքով է, որ Մեսրոպը ստեղծեց գիր ու գրականություն, որ անդրադարձրեց մեր ոգին իր բյուրեղային մաքրությամբ: Այլ կերպ անկարելի է բացատրել հայոց 5-րդ դարը: Ոգեպես, մշակութապես ավելի ցածր աստիճանի վրա կանգնած Պարսկաստանը չէր կարող ներել քրիստոնյա Հայաստանին, որ կանգնած էր ավելի բարձր ոգեկան մակարդակի վրա: Եվ Պարսկաստանը գազանային կատաղությամբ հարձակվեց փոքրիկ Հայաստանի վրա: Ահա այստեղ պետք է փնտրել Վարդանանց պատերազմի բուն պատճառը: Մնացյալ պատճառները պատրվակ են միայն, ծխածածկույթ: Վարդանանց պատերազմի հիմնական պատճառը նյութի անհաշտությունն է ոգու հետ: Վարդանանց պատերազմը ոգու պատերազմ էր բիրտ նյութի դեմ: Ով մի անգամ փնտրանում է բարձրագույն ոգու հետ, էլ չի կարող ետ դառնալ, քանդվում են նահանջի բոլոր կամուրջները: Ահա թե ինչու Հայաստանը, ամեն կողմից թողլքված Հայաստանը, ինքն իր մեջ պառակտված Հայաստանը, մենակ ու սուրբ Հայաստանը սուր բարձրացրեց պարսկական հզոր տերության դեմ: Հայ ժողովուրդը իր պատմական ճակատագրով նման է ճախրող այն արծիվին, որ շանթահարվում է փոթորկի մեջ: Բայց հախրելու վարժված արծիվը չի կարող չճախրել: Հայ ժողովուրդը եղել է իր իսկ գերազանցության զոհը, չի հաշտվել կյանքի ստորացուցիչ պայմանների հետ, նահատակվել է՝ ֆիզիկականից իր գոյությունը դարձնելով ոգեկան: Հայ ժողովուրդը կառուցել է միայն ոգու ամրոցներ, որոնց դեմ անզոր է եղել

ժամանակը՝ իր հաջորդական հարվածներով: Սովորական աչքի համար Վարդանանց պատերազմը խելացնորություն էր: Այդպես կարծեց Վասակը և գլորվեց դավաճանության անդունդը: Վասակը կարճատես էր, չափազանց երկրային, անհաղորդ բարձրագույն իմաստության: Բայց Սահակ Պարթևի թոռը՝ Վարդան Մամիկոնյանը, որի վրա այդ տագնապալի օրերին կանգ էր առել հայ ժողովրդի ընտրությունը, ավելի հեռուն տեսավ, քան իր բոլոր ժամանակակիցները, զինվեց իր հարազատ ժողովրդի գերագանցության գիտակցությամբ, սուրը կրակին տվեց, գիտակցաբար դեպի մահ գնաց, մահվամբ զմահ կոխեց: «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն» պիտի դուցազներգեր հետո հրեղեն Եղիշեն: Այո, չգիտակցվածմանը մահ է, բայց գիտակցված մահը ազատ, անբռնադատ, մեծ ու լայնահուն կյանքի համար, անմահություն է: Երբ այսօրվա աշխարհի հզորներից շատերը թափառում էին անտառներում, հայ ժողովուրդը հասավ այդ գագաթնային իմաստության: Փա՞ռք ու պատիվ նրան:

* * *

451 թիվ. մայիսի 26-ը: Հայոց աշխարհի գարունն էր: Այս նույն արևն էր հրկիզել հայոց երկինքը, այս նույն ատողերն էին պայծառացել հայոց երկնքում: Գարուն էր, բայց դաշտերում կանգ էր առել հայ գյուղացու աշխատանքը: Առանց մաճկալի՝ արորի խոփը խրված էր մնացել հողի կրծքին: Առանց հովվի՝ նախիրն անտեր թափառում էր հանդերում: Լռել էր հայ շինականի ավանդական հորովելը: Նա թողել էր իր արտն ու այգին, գնացել Վարդանի բանակը: Թեթև ծուխ էր բարձրանում միայն երդիկներից: Հայ աղևոր մամիկը արտասվախառն հաց էր թխում և աղոթում: Նորահարսը աչքը ճամփին՝ մտորում էր. կանցնի՞ արդյոք արհավիրքը, նորից կկիսի՞ արդյոք հացը իր քաջամարտիկ ամուսնու հետ. և իր հարցին պատասխան չգտնելով՝ լուռ խաչակնքում էր:

Պարսկական գազանը մտել էր հայոց սուրբ հողը: Նրա ահից թռել, գնացել էին հայոց աշխարհի սպիտակ աղավնիները: Ծանր լռություն էր իջել Ավարայրի վրա: Գիշեր էր. գետեզրյա եղեգներին քսվելով՝ հոսում էր Տղմուտի տղմախառն ջուրը: Նրա մյուս ափին պարսկական բանակն էր՝ իր ճանրամարմին փղերով: Այս ափին՝ հավաքվել էր հայկական հանագունդը՝ իշխան, ռամիկ, քահանա, բոլորն էլ վառված հայրենյաց սիրով: Գիշեր էր. մերձակա սարերից հոլը բերում էր նոր ծլած խոտի խոնավ բուրմունքը: Լուսինը մերթ երևում էր, մերթ անհայտանում թխակուտակ ամպերի ետին: Միայն ծղրիդն էր, որ անվերջ շաղակրատում էր: Գիշեր էր: Բռունցքի պես իրար սեղմված՝ լուռ էին հայ մարտիկները և մտածում. ո՞ւմ էին թողել իրենց հայրենի կալվածները, իրենց արտն ու այգին. ո՞ւմ էին վստահել օրորոցում ննջած իրենց մանկանց խաղաղ քունը. ո՞վ պիտի պաշտպաներ հայ նորահարսի առագաստի պատիվը: Բռունցքի պես իրար սեղմված՝ լուռ էին հայ մարտիկները և մտածում: Հանկարծ խոր գիշերվա մեջ պատարագ մատուցվեց: Հեռու Օշականից, ծանր շիրմաքարը դեն գցելով, հովի թևերով հայ մարտիկներին այցի եկավ Մեսրոպը: Մարգարեները սկսեցին հայերեն խոսել. իր սիրո բարձունքից ներքև խոնարհվելով՝ Քրիստոսը ցույց տվեց իր վիրավոր կողերը: Հայ մարտիկները հաղորդվեցին. նոսրացավ կարծես գիշերը. գարունը իր ամբողջական թափով մտավ հայ մարտիկների հոգու մեջ. վերակենդանացան հայրենի բոլոր քաղցրությունները. հայրենի դաշտերում ծաղկած մի հսկայական նշենի իր սպիտակ երազով արբեցրեց հայ մարտիկներին: Վասն կյանքի: գեղեցկության հաղթանակի, վասն արդարության, ճշմարտության հաղթանակի. աճեց, լեռնացավ զայրույթը հայ մարտիկների կրծքի տակ: Նրանք դարձան անհամբեր: Բայց արդեն լուսանում էր: Վարդանյան մեգը սղոցելով չարագուշակ հնչեցին պատերազմական գալարափողերը: Ով էր, մեկը մի նետ արձակեց, մեկ ուրիշը պատասխանեց, այնքան անսպասելի՝ սկսվեց ճակատամարտը նետաձգությամբ:

«Վասն հայրենեաց, վասն Հիսուսի» որոտաց Վարդանի հրամանը: Հայ մարտիկները գրոհի անցան. երկուստեք սկսվեց նախճիրը: «Զարկին զա՛րկ առավել, մահին մա՛հ առավել» հնչում էր հայ ռազմական գուսանի անլռելի երգը: Վերացավ կյանքի ու մահվան սահմանագիծը: Հայ մարտիկները կռվում էին ինքնամոռաց հափշտակությամբ. մահ էին տալիս, մահ ընդունում: Գետը լցվեց դիակներով: Վարդանը, որ իր դիտանոցից ղեկավարում էր ճակատամարտը, էլ չհամբերեց. մի վերջին անգամ դիտեց ռազմադաշտը: Հայ ժողովուրդը մղում էր իր գոյության կռիվը: Վարդանը վերացավ, կտրվեց իր ժամանակից, ակնթարթի մեջ տեսավ հայոց բոլոր դարերը, հայոց ներկան ու ապագան: Իր ճակատագիրը, իր ողջ ժողովրդի ճակատագիրը կանչում էր նրան: Եվ նա գնաց: Մրրիկի պես դուրս եկավ, անցավ գետի մյուս ափը: Թռչում էր Մամիկոնյանը, արշալույսը գրոհում էր սյուռեին. մոլեգնում էր ժողովրդական հանագունդը: Խաչին

զուգահեռ՝ փայլատակում էր սուսերը: Վարդանը խոյացավ, նետի պես խրվեց թշնամի խմբավորումների մեջ, սկսեց նախճիրը: Պըտուտահողմի պես ճարակելով՝ առաջացավ, հասավ մինչև Մատյան գունդը, այն շվոթեցրեց. բայց ընկավ պաշարման օղակի մեջ. օղակը գնալով սեղմվեց. մի դավաճան նետ վերջ տվեց Վարդանի կյանքին: Ընկավ Վարդանը. նահատակվեց հայոց սուրբ սպարապետը: Հեռվից իր ալեոր գլուխը խոնարհեց Մասիսը: Վարդանի մահը սթափեցրեց հայ մարտիկներին. նրանք զգացին թշնամու թվական գերազանցությունը: Փոխեցին կըռվի ձևը: Հակագրոհներով նահանջեցին դեպի անտառները, դեպի երկրի անառիկ վայրերը: «Վասն հայրենյաց» լոզունգը երեսուն տարի շարունակեց պայքարը, երբեմն նահանջեց, նորից գրոհեց, մինչև որ ջարդեց պարսկական գազանի մռութը, այն դուրս շպրտեց երկրի սահմաններից. վերականգնեց մեր ժողովրդի արժանապատվությունը: Մամիկոնեից Տան նահապետի սկսած գործը իր հաղթական ավարտին հասցրեց նրա եղբոր կորյունը՝ Վահան Մամիկոնյանը: Նվարսակը հայ զենքի, հայ ոգու հաղթանակն էր:

Վարդանանց պատերազմը չէր կարող տեղի չունենալ: Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի պատմական աճի անխուսափելի հետևանքն էր: Վարդանանց պատերազմը մեսրոպյան ոգու ռազմական արտահայտությունն էր, այդ ոգու նվիրագործումը արյունով: «Կրոնական կամ ազգային-ազատագրական» որակումները քիչ են սպառելու համար Վարդանանց պատերազմի խորհուրդն ու իմաստը. Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի լինելու և չլինելու հարցի լուծումն էր: Վարդանանց պատերազմը այդ հարցը լուծեց ի նպաստ մեզ: Վարդանանց պատերազմը մեզ հնարավորություն տվեց գոյություն ունենալ համաձայն մեր ճակատագրին, մեր իսկ նմանությամբ, մեր ոգու անհեղլի կնիքով: Բավական չէ գոյություն ունենալ, պետք է գոյություն ունենալ սեփական անունով, սեփական արժանավորությամբ՝ անկախ, ինքնուրույն, միայն ու միայն քեզ նման, և ոչ ուրիշին: Ահա թե ինչու տեղի ունեցավ Վարդանանց պատերազմը, ահա թե ինչու հայ ժողովուրդը հավաքաբար դիմեց նահատակության՝ Եղիշեի բերանով հասնելու համար գերագույն իմաստության. «Մահ ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ անմահություն»: Այս իմաստությունը իր կշռով ավելի ծանր է, քան Արարատ լեռը, կամ այլ կերպ ասած՝ մեր հոգեկան աճի Արարատն է: Ահա այդ հոգեկան աճի հասած ժողովուրդն էր, որ իր վանքերով, իր սրբավայրերով, իր մագաղաթյա երկաթագիր սուրբ մատյաններով կռվեց պարսկական հզոր բանակների դեմ, կռվեց ենգ ու դրուժան Բյուզանդիայի դեմ, անցավ հրի ու սրի միջով և հաղթեց: Եղել ենք, կանք ու կլինենք: Ովքեր կասկածում են, թող նայեն իրենց շուրջը: Բեղուն է հայ ժողովրդի արգանդը, այն ձևավորել է Մեսրոպը, այն ակոսել է Եղիշեն: Քանի մեր ականջին կհնչեն Եղիշեի հրեղեն խոսքերը՝ մենք կլինենք, կստեղծագործենք մեր ոգու նմանությամբ, հանուր աշխարհին՝ «իմ անունը Արամ է» կաղաղակի Վիլյամ Սարոյանը, Երևանը կլինի մեր նոր Անին, մեր երկնակամարում կփայլատակեն խաչատրյաններն ու Համբարձումյանները, Բալրամյաններն ու Մարտիրոս Սարյանները:

***

Վասակին արդարացնելու համար՝ մեր պատմաբաններից ոմանք, հատկապես այունեցի պատմաբանները, Վարդանին մեղադրում են շտապողականության և քաղաքական կարճատեսության մեջ: Վարդանին մեղադրում են նաև ռազմական սխալների մեջ: Մեղադրել Վարդանին ռազմական սխալների մեջ—նշանակում է չհասկանալ Վարդանանց պատերազմի էությունը: Վարդանանց պատերազմը ռազմավարական, ստրատեգիական պատերազմ չէր. Վարդանանց պատերազմը ժողովրդական պատերազմ էր. Քրիստոնյա Հայաստանի վճարած արյան ամենամեծ տուրքը՝ իր հավիտենական փրկության համար: Կարելի՞ է արդյոք մեղադրել Քրիստոսին, որ խաչվեց: Չէ՞ որ Քրիստոսը աստվածորդի էր. իր մատի մեկ շարժումը բավական էր ոչնչացնելու համար իր բոլոր հակառակորդներին. բայց վսեմ աստվածորդին իր սիրո անհաս բարձունքից ներքև խոնարհվեց. մարդկանց ձեռքով բարձրացվեց խաչ՝ ավարտելու համար մեղապարտ մարդկությանը փրկելու իր աստվածային առաքելությունը: Վարդանի նահատակությունը նման է Քրիստոսի խաչելության: Սերը, գաղափարը հրաշագործ դառնալու համար պետք է նվիրագործվի արյունով: Եթե այսօր քրիստոնեական ուսմունքի հավիտենության գաղտնիքը խաչի մեջ է, ապա հայ ժողովրդի հավիտենության գաղտնիքը իր որդիների առատորեն հեղած արյան մեջ է: Զուր են Վասակին արդարացնելու բոլոր փորձերը: Վասակը դավաճան է, դավաճան էլ կմնա, աշխարհում ոչ մի ուժ նրան չի իջեցնի անարգության այն աստիճանից, որին գամել է նրան հայ ժողովրդի հավիտենական նզովքը: Դավաճան է նա, ով սուր է

թանձրացնում իր սեփական ժողովրդի վրա, ով այրիացնում է մայրերին, ով որբացնում է մանուկներին: Լալ է դժոխքը արդարությամբ, քան արքայությունը դավաճանությամբ: Թող հավիտենական կրակը կլանի մեզ, թող բոցեղեն լեզվակներով խորովի մեզ, միայն թե, ո՞վ եղբայրներ, «արիության վատություն չխառնենք, նեթանոսների բազմության առաջ թիկունք չդարձնենք»: Ահա Վարդանը, ահա հայ ժողովուրդը: Վարդանը հայ ժողովրդի ամենամեծ սրբությունն է, նրա խիղճն է ու պատիվը, նրա շուշանամարմին հոգու զրահավորյալ նահատակը:

***

Դար-դարի հետևից հոսել է ժամանակը: Այսօր ավելի քան 15 դար է անցել այն օրվանից, երբ տեղի ունեցավ Վարդանանց պատերազմը: Այսօր ոչ Վարդանը կա, և ոչ էլ նրա 1036 այն քաջ նիզակակիցները, որոնք իրենց արյամբ ոռոգեցին Ավարայրի դաշտը: Չկան նրանք, բայց կանք մենք, կա հայ ժողովուրդը, կա՛ մանավանդ, հավետ պայծառ գլգլում է մեր լեզուն, մեր հայրենավանդ, մեր քաղցրաբառ հայոց լեզուն: Էլ ինչո՞ւ վիճել, ինչո՞ւ հարցնել, թե Վարդանանց պատերազմը կրոնակա՞ն էր, թե՞ ազգային-ազատագրական. ինչո՞ւ Վարդանանց պատերազմի խորհուրդը փնտրել այնտեղ, որտեղ այն չկա: Վարդանանց պատերազմի խորհուրդը մեր ժողովրդի գոյության փաստի մեջն իսկ է: Վարդանը մենք ենք:



ՊԱՐԳԵՎ ԾԱՀԲԱԶՅԱՆ
(Մանր դասախոս)

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Քսաներորդ դարի սկզբի արևմտահայ գրականության անմոռանալի փառքերից մեկի՝ Միսաք Մեծարենցի գրական ժառանգությանն անդրադառնալիս՝ մեր մտածումն ակամա, բնական մի մղումով գնում ու կանգ է առնում հայ ժողովրդի հոգևոր ստեղծագործության ամենավավերական ու կատարյալ արտահայտություններից մեկի՝ Հայաստանյայց եկեղեցու վրա, որն իր հոյակապ իրագործումներով դարեր շարունակ հսկայական դեր ու նշանակություն է ունեցել մեր ժողովրդի կյանքի ու գործունեության բոլոր ասպարեզներում ընդհանրապես և ինքնատիպ հայ գրականության ստեղծման գործում մասնավորապես: Արդարև, Հայաստանյայց եկեղեցին, լինելով հայ ժողովրդի ազգային ամենաբնորոշ հատկանիշների, նրա հավաքական նկարագրի, նրա ամենանվիրական իղձերի և ապրումների կենդանի ու շքեղ հանդիսարանը՝ միշտ և ամեն տեղ, հայրենի երկրում, թե օտար հորիզոնների տակ, ներշնչման անսպառ աղբյուր է հանդիսացել մեր գուսանների, տաղասացների ու բանաստեղծների համար և դրանով իսկ իր խոր ու տևական ազդեցությունն է դրոշմել մեր ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ բանաստեղծության վրա: Ոչ մի ժողովրդի մոտ, ոչ մի ժամանակ կրոնական բանաստեղծությունն իր խոշոր ու արժեքավոր մասով այնպես չի ներծծված, չի ներթափանցված իր եկեղեցու խորհրդով ու ավանդություններով, ինչպես հայ բանաստեղծությունը. նմանապես ոչ մի այլ եկեղեցի, իր առանձնահատուկ փայլով ու թովչանքով, այնքան հարազատորեն չի ճառագայթել որևէ ժողովրդի ազգային բանաստեղծության մեջ, որքան հայ եկեղեցին: Եվ այս՝ նրա համար, որ ոչ մի եկեղեցի այնպես չի ձուլված, չի նույնացած իր ժողովրդի հետ, ինչպես Հայաստանյայց եկեղեցին՝ հայ ժողովրդի հետ: Բավական է աչքի առաջ ունենալ միայն վերջին հարյուրամյակի ընթացքում ապրած ու ստեղծագործած մեր լավագույն բանաստեղծներից շատերի գործերը, և դժվար չի լինի հաստատել այդ ճշմարտությունը: Մեր ազգային գրականության ամենապայծառ դեմքերից՝ Դուրյանի, Հովհաննիսյանի, Թումանյանի, Իսահակյանի, Սիամանթոյի, Մեծարենցի, Թեքեյանի և դեռ շատ ուրիշ մեծարժեք բանաստեղծների դասական ընտիր գործերից շատերը իրենց տոհմիկ գրավչության նպաստը բերում են մեր ժողովրդի ազնվագույն զգացումներն ու հույզերը իրենց մեջ բյուրեղացնող մեր շարականներից ու օրհնասացություններից:

Մեր գրականության այս նվիրական ուխտյալների մեջ Միսաք Մեծարենցը թերևս այն միակ բանաստեղծն է, որի ստեղծագործություններն ակնհայտ կերպով, ավելի քան որևէ այլ բանաստեղծի գործերը, իրենց վրա կրում են հայ եկեղեցու ազդեցությունը ոչ միայն իբրև նյութեղեն իրականություն, գիծ ու պատկեր, այլ մանավանդ իբրև ներքին զգացողություն, արյան ժառանգություն, ապրում, ոգի: Հիրավի, Հայաստանյայց եկեղեցին իր խորհրդով, իր նվիրագործված դարավոր ավանդություններով, իր ծեսերով ու արարողություններով, իր ոգեկան մթնոլորտով հզոր ներշնչարան է հանդիսացել այս զտարյուն գավառացի բանաստեղծի համար նրա ստեղծագործական կարճատև կյանքի

շրջանն է, ում, և այդ տեսանկյունից էլ նրա գրական ոչ ժառանգությունը արժանի է լրջմիտ ուշադրության։ Ներկա ուսումնասիրությամբ մեր նպատակը չէ անշուշտ նշել նրա բարձր ու ինքնատիպ արվեստի հիմնական գծերը։ Այդ ուղղությամբ թե անցյալում և թե մանավանդ մեր ժամանակներում արժեքավոր հսկայական աշխատանք է կատարել հայ քննադատական միտքը՝ հայ գրականությանը տալով առանձին հոդվածների, ուսումնասիրությունների և մենագրությունների մի ամբողջ շարք, և, հակառակ դրան, Մեծարենցի գրական վաստակի վերլուծությունը դեռևս չի սպառվել, որովհետև նրա ներքին հարուստ աշխարհի և բանաստեղծական ինքնատիպ արվեստի շրջանակներն այնքան լայն են, որ միշտ էլ պահանջ է զգացվելու նոր խոսքի։ Սույն աշխատությամբ մեր մտահոգությունն է սեղմ գծերի մեջ քննության առնել Մեծարենցի գրական ժառանգության առնչակցությունը հայ եկեղեցու հետ և այդ լույսի տակ էլ արժևորել նրա գործը։

Մեծարենցի ապրած ժամանակաշրջանն ու միջավայրը, նրա անհատական կյանքի պայմանները, անձնական ճակատագիրը և մի շարք այլ հանգամանքներ, նրա պատանեկության առաջին տարիներից իսկ ինքնեկ մի նախասիրություն, բնական մի հակում ու տրամադրություն են առաջացրել նրա մեջ դեպի հայրենի բնությունը, նրա կախարդական գեղեցկությունները, մի անզուսպ սեր ու անձկագին կարոտ են վառել նրա հոգում դեպի առանձնությունը, դեպի երազների աշխարհը։ Ծնված լինելով և իր մանկությունն ու սարսռուն պատանեկությունն անցկացնելով ազգային ավանդություններով ու հավատալիքներով հարուստ հայկական մի գյուղում և, բացի այդ, ի բնե լինելով խիստ տպավորվող երեխա, նա իր հոգու ամենանվիրական անկյուններում կանխահասորեն կուտակել է հայրենական բնանկարների, գյուղական կենցաղի հիասքանչ պատկերների մի ամբողջ աշխարհ։ Կենսագրական բավականին մանրամասն տվյալներ մեզ ասում են, որ Մեծարենցի ծննդավայրը՝ Բինկյանը, Արածանի գետի ափին, այգիների և ծառաստանների մեջտեղում, ժեռուտ մի խորշի մեջ ամփոփված, պարզ ու չարքաշ հողի աշխատավորներով բնակեցված մի գյուղ է եղել, և Մեծարենցին է վիճակվել նրա առաջին «մտքի գինովը» լինել և իր բանաստեղծությունների մեջ վերապրեցնել այդ չքնաղ գավառակը՝ «խանդաղատելի մանկականությամբ մը հիշակերտված»։ Եվ իսկապես, հակառակ նրան, որ կյանքի դառն պայմանները հարկադրել են նրան շատ վաղ հեռանալ իր ծննդավայրից և իր ստեղծագործական կյանքն անցկացնել բաղաքային կյանքի թոհուբոհի ու ժխորի մեջ, սակայն պատանեկան հուշերով և ապրումներով բորբոքված նրա երևակայության մեջ միշտ էլ կենդանի է մնացել իր հարազատ միջավայրի պատկերը, իր մանկության ոսկեշող պարտեզը, իր երազների աշխարհը։ Ահա թե ինչո՛ւ Մեծարենցն իր ամբողջ էությամբ ձուլված է բնության տարերքին և հաղորդակից է նրա խորհուրդներին ու արթեցություններին։ Ոչ մի հայ բանաստեղծ այնպես չի երգել բնության ծով շքեղությունը, նրա գույները ու ձայները, նրա խորհրդավորությունն ու իմաստությունը, ինչպես այս գավառացի երիտասարդը։ Բնության այս պաշտամունքի մեջ էլ արտահայտվում է Մեծարենցի միստիկականությունը, որը մռայլ չէ, այլ լի պայծառություններով ու ցոլցլանքներով։ Երբ ժամանակին բանաստեղծության անունով ճառող, բայց բանաստեղծությունը սրբապղծող պանդուրների մի երջանիկ քարավան անխնա լուտանքներ էր թափում նրա արվեստին, Մեծարենցը, ձերբազատված «տալտղկալի եսին ոչնչաբանություններեն», հավատարիմ իր ներքին ձայնին, ամեն ինչ՝, կյանքի բոլոր երևույթների, բնության ամեն մի շլոլի մեջ «գերագույն էակի» ներկայությունն էր ուզում տեսնել, ենթարկվել այդ ճակատագրական ուժին, կորցնել ինքն իրեն, ձուլվել, խառնվել տիեզերական զորությանը։ «Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերականության մը լարը պետք է ըլլա, բոլոր գույներուն համադրական թրթռումովը տրոփուն», սահմանում է նա ճշմարիտ բանաստեղծի կոչումը իր «Ինքնադատության փորձ մը» հայտնի հոդվածում։ Բնությունն այսպես իր շռայլ գեղեցկությունների մեջ սանձող, իր թաքուն ու քողարկված հուզումների մեջ հետապնդող Մեծարենցի նայվածքը սակայն չի գործածվել բևեռելու համար մեզ օտար ու խորթ հորիզոնների ընվաղկոտ գեղեցկությունները կամ հեռավոր երկրների տարաշխարհիկ հրապույրները, որովհետև նա ուներ պատրաստի պատկերների մի զմայլելի շարք իր մտքում ու աչքերի առաջ։ Այդ պատկերները գալիս էին իր գյուղից ու անդրագույն մի պատանության հորիզոններից։ Այս իմաստով էլ Մեծարենցը, որպես բանաստեղծ, ամենից առաջ պարտական է իր հողին, թերևս շատ ավելի, քան կարծում ենք մենք։ Այսպես ուրեմն, նա իր ամենահզոր ներշնչումները քաղել է արևոտ ժայռերի մեջ մրափող իր հեռավոր, իր տոհմաշունչ բնօրրանից, նրա բազում գեղեցկություններից, որոնք տարիների մշուշի միջից երկարաձգվել են նրա հիշողության մեջ ու երկարաձգվելով՝ խտացել ու վերածվել են դյութական մի տեսիլքի։ Եվ Մեծա-

ունեցն իր ստեղծագործական կյանքի այդ ընթացքում չի կարողացել ձերազատվել կախարդական այդ շրջանակից:

Այդ կախարդական շրջանակի կենտրոնում, անտարակույս, առավել ցայտուն գծերով, որպես հին օրերի մի քաղցր վերհուշ, ճառագայթել է գյուղական խոնարհ մի ժամատան ընտանի ու մտերիմ պատկերը, իր խորհրդավոր շրջափակով, իր հնավանդ զանգերի հրավիրակ ղողանջներով, ժամավորներով ու ժամասացներով, կիրակնօրյա պատարագով, իր սրբազան կամարներն ի վեր բարձրացող օրհնաձիր մեղեդիներով ու խնկի ծխերով, տոնական օրերին շրջակա ավաններից խումբ-խումբ ուխտի եկող գեղջուկ հավատացյալների ցնծագին ժխորով ու դեռ հազար ու մի սրբություններով, որոնք տնապես առինքնել են նրա հոգին և իրենց ուժեղ դրոշմը դրել նրա ստեղծագործության վրա: Այս հանգամանքով պետք է բացատրել առավելապես նրա հոգեհարազատությունը հայ եկեղեցու ու նրա սրբությունների հետ: Այդ հոգեհարազատությունը իր վառ արտահայտությունն է գտել ոչ միայն Մեծարենցի տաղարանում ընդգրկված առանձին քերթվածների զմայլելի մի շարքի մեջ, ինչպիսիք են՝ «Կիրակմուտք»-ը, «Աստվածամայր»-ը, «Խունկ և արցունք»-ը «Հոգեհանգիստ»-ը, «Արդի մարդուն Հայր մերը»-ը և այլն, այլև բազմաթիվ համեմատությունների, առանձին պատկերների ու փոխաբերությունների մեջ, որոնք ցրված են նրա գրեթե բոլոր բանաստեղծություններում:

Ահա նրա գողտրիկ մեկ քերթվածը՝ «Այգերգ»-ը, որով բանաստեղծը ուրվագիծ պատկերն է տալիս հայրենական իր գյուղի: Քերթվածի հենց առաջին տողը հինավուրց հայկական մի վանքի պատկերն է կանգնեցնում այդ ուրվանկարի կենտրոնում՝ ստեղծելով պահ ու շրջանակ.

«Սարերուն մեջ կկոծկոծի այգուն՝ կոչնակը վանքին»:

Կամ՝

«Վանքին քովի արահետեն կարավանները կանցնին»:

Մի ուրիշ ծանոթ քերթվածում, այս անգամ դաշտային աշխատանքի ու գեղջուկ շրվորի գովքը հյուսող, մենք հանդիպում ենք նույն հարազատ պատկերին՝ գունագեղ մանրամասների ներդաշնակ հարակցությամբ.

«Վանքին բակը կալոթեն հսկա ծառեր տարորեն,
Որոնց տամուկ շուքին մեջ Աստվածամարն է կայներ: («Զրտուք»):

Սա ընտանի տեսիլն է նրա մանկության՝ Բինկյանի Աստվածամոր եկեղեցին, որը գտնվելիս է եղել բանաստեղծի տան շատ մոտիկ, մեծ ծառերով շրջապատված: Ահա այս տեսիլն է, որ, ինչպես առավոտյան լույսը, բանաստեղծը տանում է միշտ իր հետ, հոգու մեջ սեղմած թանկագին լուսանկարի, սուրբ մասունքի պես: Նույն ծանոթ պատկերի միջամտությունը գրավում է մեզ Մեծարենցի արձակ գրվածքների մեջ ևս, ուր միշտ հայրենի գյուղի նույն զանգերն են ղողանջում «ոսկեծայր թակաղներով», վերջալույսի խաղաղ պահերին «գետեզրին մոտեն լսվող կոչնակին գանգունն է...որ խորհրդավոր կերպով կորրե զգացմունքները», գյուղի նույն ընտանի գետն է, որ իր ցասման օրերին վեր է բարձրանում «ջուրին ծոցը իջնող վանքին քարե սանդուխներեն» և միշտ նույն «սպիտակ, գմբեթարդ Աստվածամայրն է, որ կժպտի անուշ... բարի Աստվածամայրը, որ ստվերի խունկ մը, օրհնություն մը կթոթվե» («Զրին ծառը»): Եվ ա յսպես, բանաստեղծի անհանգիստ երևակայությունը ուր էլ որ թափառի, նրա միտքը ինչպիսի կայքերի վրա էլ սավառնի, ինչպիսի անանուն հուզումներ էլ ալեկոծեն նրա հոգին, նրա երազկոտ աչքերը ամեն թփի ու ծառի մեջ միշտ տեսնում են խաղաղ ու խոնարհ հայկական մի մատուռ, ամեն խորշի մեջ՝ սրբազան մի դաբիրա:

Հայ եկեղեցին գերագույն ներդաշնակությունների ու արվեստի աղբյուր է հանդիսացել Մեծարենցի համար: Նրա խորհուրդն ու ավանդությունները «սրբասաց» բանաստեղծի վրձինին տվել են գիծ, գույն, արև ու գեղեցկություն ու ճառագայթ, ոգի ու ոճ, նա ամբողջապես տիրապետված է եղել արարչագործ նրա լույսով, այն դարձրել է պաշտամունքի ու հնկումի խորան: Նրա ձայնով, ծափով ու ծնծղայով է հորինել իր ամենադաշնավոր տաղերը: Նրա «աստվածարյալ» հոգին ամեն որպես տարուբերվել է նրա զանգերի երկնաճեմ ղողանջներով, լույս ու հույս շատրվանող նրա դյութական կանթեղներով, թավշանման խնկով, խորանից ծուփ-ծուփ բարձրացող խնկանման ալեկոծումներով: Ահա այս միջավայրն է եղել նրա մանկության նորաքայլ հավատքի առաջին սեմը. նաև առաջին ավազանը նրա հոգու մկրտության, ուր նրա սրտի ականջն ի վեր կարկաչել են գրաբարի ոսկեղինիկ բառերը: «Ի՞նչ արբեցությամբ» է ըմպել նա նրա տաղերի ու շարականների ոսկեպաղպաջ նեկտարը: Մի անգամ բաժանվելուց հետո հայրենի եկեղեցու հարազատ միջավայրից, այնուհետև միշտ նրա սիրտն ու աչքերը որոնած, քաշած, կանչած են նրան, և նա հայ հոգու մագնիսական այդ դաշտից երբեք չի

կարողացել բաժանվել ու հեռանալ: Եվ ինչպան թանձրացել է նրա լույսերին ու հոյզերին, այնքան ավելի սրատապինդ վարվել է նրանց, ծանոթացել նրա երգերին ու վերաբերին, ճանաչել նրան իր իսկության ու արյունի մեջ ու սիրել է հայ հոգին: Ինչքան լսել է նրա մեղեդիները ու շարականները, այնքան ավելի նրանց խունկն ու հունչն ի վեր բարձրացել է դեպի կայքերն «աստվածաձայն»: Ամեն Զատկի ու Ծաղկազարդի, տոնական կիրակիներ են արշալույսվել նրա հոգու եթերում: Նրա մանկական դեռափթիթ շուրթերը թոթովել են հրաշարվեստ գանձերը հայ տաղարանի. «Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք...»:

Պատահա՞կան է արդյոք, որ Մեծարենցի բանաստեղծությունների մեջ հանգիստության եզր կազմելու կոչված բազմաթիվ պատկերներ, գեղարվեստական խոսքի նորօրինակ զուգահեռներ, լայն ու ընդարձակ փոխաբերություններ, որպես ատաղձ ունեն հայ եկեղեցու՝ դարերով նվիրականացած սրբությունների մի ամբողջ գոհարաշարք: Այդ սրբությունների նվիրական բեկորներն են ահա, որ զանազան առիթներով, տարբեր քերթվածների մեջ, ի հայտ են գալիս արվեստագետ բանաստեղծի երեք հզոր զգայարանների ճամփով՝ տեսողության, հոտառության և լսողության: Այսպես է, որ բանաստեղծը ծառերը աղոթող քահանաների նման կանգնեցնում է վանքի բակերում, նրա նայվածքի տակ անտառները աղոթող սրբեր են դառնում, նրա մտածումը անձնավորվում է «հե՛ք, նձդեհ քահանայի» կերպարով, որ «խաչ հանելով կընսե բառեր լուսեղեն» («Մեռելոց»), անձրևոտ գիշերը նույնպես (տարօրինա՞կ է) նրան թվում է մի «բարեբարի, գթած քահանա», որ բանաստեղծի ծարաված հոգու մեջ թոթվում է մի «սրբեցի տեղատարափ, զերթ մասունքի ջուր» և Լուսավորչի հիասքանչ տեսիլքի մեջ երևացած հրեշտակի նման հնչեցնում է իր բարբառը՝ որպես «ոսկի մուրճ» («Անձրև»), նրա ականջին սոսինների խարշափը «թախծոտ օրհներգ»-ի պես է հնչում, կապտորակ դաշտերը երգում են «լուսին ոսկի պատարագը», նրա սիրտը իբրև ընձա վարդի պես բացվում է «լուսոռոգ պատարագին սրբանվեր», վերջալույսի արևը մերթ «հրիկվան ոսկի հրեշտակն» է և մերթ «կարմիր, նախշուն մի հավկիթ», որ «կերթա իր Զատիկին», թռչունների դայլայլը նրան ծնծղաների ձայնն է հիշեցնում, կամ նրա հոգում հուշերը ծափ են զարնում «ծնծղաներու պես ցնծուն», հարեվան հեղեղատի ձայնը «լուսաշող ալեղու» է, գյուղի արահետները խնկի գույն ունեն, իսկ այգիները՝ խնկի բույր, առավոտյան սյուքը մյուռոնի հոտ ունի, բլրակները իրենց կանաչ նակատին «հրիրնած ծաղիկի նարտոս» են կապում, արևի հրեղեն գունդը մի բուրվառ է, կինը՝ «աստվածածնայն եղեմ», ինքնակը երբեմն գիշերային խավարը «մոմերի խորան» է դարձնում, երբեմն արևին է ըսպասում ցնծապատար՝ «ունկնդրելու զանգակն ահոր պատարագին», երբեմն առավոտը է ուզում լինել՝ վշտահար հոգիների սեղանի վրա «լուսաժպիտ մոմեր վառելու համար», կամ առավոտյան ձյան վրայից գյուղի փողոցներով եկեղեցի գնացող գեղջկուհու քայլերի կշռույթը բանաստեղծին հիշեցնում է «կոչնակին ձայնը ժամուն» և այլն, և այլն: Ու այսպես Մեծարենցի ենթագիտակցական ամբողջ աշխարհը լի է հայ եկեղեցուց, նրա խորհրդից ու ավանդություններից ծնունդ առած մտապատկերներով: Կյանքի ու բնության մեջ նրա նուրբ զգայարանների տակ ընկնող ամեն իր ու երևույթ, նրա հոգում ծնունդ առնող ամեն մի զգացում զարմանալիորեն զուգորդվում և ներդաշնակվում է այդ մտապատկերների հետ: Առավել հատկանշական է այս տեսակետից նրա բառապաշարը, որի ծանրակշիռ մեկ մասը բաղկացած է մեր եկեղեցական կյանքի, մեր կրոնական ծեսերի ու արարողությունների հետ անմիջականորեն կապված բառերից, ինչպիսիք են, օրինակ՝ **մոմ, աշտանակ, նարոտ, պատարագ, օրհներգ, աղոթք, հաղորդություն, ուխտավոր, խունկ, տաղ, մեղեդի, եղեմ, ծնծղա, շուշփա, մյուռոն, սրբանոթ, խաչ, զվարթուն, նափորտ, խնկաման, բուրվառ, նշխար, ջահ, խորան, արևագալ, լուսակալ, մեղրամոմ, շուրջառ, ստաշխ** և սրանց նման բազմաթիվ այլ բառեր ու նրանցով կազմված ածանցումներ ու բարդություններ, որոնք նրա բանաստեղծությունների մեջ հանդես են գալիս նաև որպես մակդիրներ: Պետք է նկատի ունենալ սակայն, որ նման բառերի հաճախակի կիրառությունը հեղինակի կողմից լոկ ինչ-որ նախասիրության արդյունք չէ, այլ բխում է ավելի խոր պատճառներից: Այդ բառերը նրա քերթվածների մեջ չեն գործածված որպես արտաքին պաճուճանք, դեկոր ու փայլ, այլ որպես ներքին զգացողություն:

Մեծարենցի ստեղծագործության մեջ առանձնապես ուշագրավ են մի շարք բանաստեղծություններ, որոնք, ինչպես արդեն նշել ենք, ուղղակիորեն կապված են հայ եկեղեցու, նրա խորհրդի ու ավանդությունների, մեր ժողովրդի կրոնական հավատալիքների հետ, և որոնք խորապես դրսևորում են բանաստեղծի հուզական աշխարհը, նրա հիմնական տրամադրությունները: Քերթվածների այդ շարքին է պատկանում, օրինակ, ժամանակակից հայ բանաստեղծության ամենաընտիր գոհարներից մեկը՝ «Կի-

յանկնարար»-ը, ուր հեղինակը հայ եկեղեցու խորհրդով հավաքակված, մարի ու հոգու գերագույն լայնության մեջ, ապրում ու իր հետ ապրեցնում է մեզ պաշտամունքի սրբագույն պահերից մեկը: Այդ քերթվածը մեզ տանում է հայկական պարզուկ մի տաճարի կիսաստվերից ներս՝ հաղորդակից դարձնելու մեր եկեղեցիներում կատարվող շաբաթ երեկոյան ժամերգության խորհրդին: Երկարաձգվող երազային երեկոն, որ հանդարտորեն նիրհում է մեր ժամերից ներս, հանկարծակի վիրավորվում է կամարներից իջնող լույսի մեծ գծերից: Պատերի վրայից հալած կարմիրը կարծես քայլում է հայտնի քայլերով.

«Հուշի՞կ փախչող իրիկվան ծիրանի
լույսն է զվարթ...»:

Երեկոյան արևը շուտով փախչելու է: Ու նրա պայծառությունը, հակառակ իր ծիրանի զվարթ գույներին, ինչ-որ տխուր մի բան ունի իր մեջ պահած:

«Մնկի թելեր՝ պըլլրված խունկի թավիշ մշուշին.
Կապույտ ծուգեր, ծիածա՞ն, ծփուն ձայներ, միսսի՞ք վարդ,
Լույսե արցունք մոմերու, որոնք հանդարտ կը մաշին»:

Եվ ապա՝

«Խունկի ծարավ իմ հոգիս կծծե պահն այս հանդարտ,
Ոսկեկրակ աչքերով բուրվառներն երբ կը ճոճին,
Պակուցում մը հոգեգրավ հոն կթողու զիս անթարթ,
Կզգամ համբույրն՝ իմ հոգիս պարուրող բիլ մարմաշին»:

Կամ՝

«...Խորհուրդին եմ ծնրադիր, բազուկներս խաչանիշ,
Ու կսպասես, որ ծագի հոգվույս պայծա՞ռ Կիրակին»:

Պետք է տեսած լինել խունկի այդ մշուշը, որ, սկզբում աղոտ, սակայն հանկարծ կրակ ու ոսկի է դառնում՝ թափանցվելով արևի սյունակից: Ու մեզ թվում է, որ ահա ուր որ է մեր առաջ բացվելու են ներքին կյանքի դռները, և մենք հաղորդակից ենք լինելու նրա հոգու վեհագույն խորհուրդներին, վերանալու ենք նրա հետ եկեղեցու նյութական կամարներից դեպի մեծ կամարումը տիեզերական աշխարհների ու թեելու ենք դեպի անընմբռնելի խորությունները, որոնք բացվում են մեր գլխավերևում:

Անտարակույս, բանաստեղծը իր այս ներշնչումը պարտական է պատանության տարիներից իր հիշողության մեջ երկարած ու երազով տարտամացած պատկերացումների: Եվ ամեն մեր աչքերի դիմաց, իր գյուղի եկեղեցու դասում, կանթեղների մեղրաձորում լույսի տակ գալիս և կանգնում է մի հեզ ու ամաչկոտ մանչուկ, որ դպիրների կողքին, մյուռոնի նման փայլուն դեմքով ու երազկոտ աչքերով, բուրվառներից դուրս ժայթքող խնկի քուլաներով հագեցած ոռնգերով, նիհար մի մոմ բռնած ձեռքին, վտիտ մարմինը սպիտակ շապիկի մեջ պատանքած՝ երգում է երազո՞ւն, շարականների շուշանային շքշունչը սրտում: Այս պատկերով միայն հնարավոր է բացատրել այդքան զուլալ մի ներշնչում: Բանաստեղծի հիշողության անավոր պրկումի, լարումի շնորհիվ է միայն, որ ընտանի ձևերն այսպես դուրս են գալիս իրենց անհայտ դամբարաններից ու իրենց մեռած գծերի լքումը հավաքում: Արվեստագետը հարություններ իրագործող Աստված է այստեղ: Երբ ուզում է հավատարիմ մնալ նրանց պատկերին, տարիների մշուշը գալիս աղոտացնում է շատ բան, և շատ նայելուց այլանդակված նրա աչքերը եղծելով գծագրության հստակ հենքը՝ տարվում են անիրական, կեղծ իրական, գրեթե թրթռուն ոգեղինացման: Այսպես է, որ բանաստեղծը թափանցում է իրերի արտաքին նկարագրից դեպի ներս, սուզվում հայ եկեղեցու սրբությունների՝ շարականների, ժամագրքերի, աշտանակների, բուրվառների ու մոմերի ներքին խորհրդի մեջ ու գտնում այն նոր ներդաշնակությունը, որ խուսափում էր նրանց մակերեսներից: Ահա թե ինչո՛ւ Հայաստանյայց եկեղեցին իր ամենալայն ու ամենախոր իմաստով, Մեծարենցի արվեստի գլխավոր հրապույրներից մեկն է կազմում:

Վերևում հիշատակված բանաստեղծությունների թվին է պատկանում նաև «Աստվածամայր» հրաշալի քերթվածը: Սա հատկանշական մի օրինակ է ազնվագույն ներշնչումի, կրքոտ երևակայության, ուր բանաստեղծը իր անձը, ցանկությունների ճամփով, հազար ձևի ու հազար նշխարի բաշխելուց հետո, ուզում է ելնել իր «ցավին սարակն ի վեր» ու ասել Աստուծո մորը.

«Եվ իղձերուս կապույտին վրա, վարդ ամպը դուն,
Վարդ ա՞մպն եղիր, մերթ լուսնկան պատմուճանող.
Դո՛ւն, աստվածյան գեղեցկության արփվո՞ր հարս,
Սրբության կո՞ւյսը ձյունաձիր ու հրավարս:
Գիշերին մեջ կիջնե դեռ ուղիսը լուսեղեն,
Կաթի՞լ մը կաթ՝ ծովացած քու սրբութենեն»:

Հայ եկեղեցու նվիրական կամարներից «աստվածյան ձայնին վայրէջքը» լսող և իր «աստվածարյալ» հոգու համար Աստվածամոր «ծովացած» սրբությունից «կաթիլ մը կաթ» աղերսող բանաստեղծը այստեղ մեզ հիշեցնում է ալոթասաց մեր մյուս բանաստեղծի՝ Նարեկացու՝ Աստվածամոր նվիրված հրաշալի տաղը: Երկուսի ներշնչումները էլ բխում են նույն հզոր աղբյուրից՝ նրանց հոգին դիեցնող Հայաստանյայց եկեղեցուց: Եվ արդեն Նարեկացու նկատմամբ Մեծարենցի՝ պաշտամունքի հասնող հիացումն ու անվերապահ մեծարանքը, նրա հոգեհարազատությունը գալիս են ոչ այնքան այդ «գրական հսկայի» բարձր արվեստից, ոճի և լեզվի անսպառ հարստությունից ու ճոխությունից, որքան այս երկու հեղինակների ստեղծագործությունների շփման կետերից, նրանց ստեղծագործությունների արենակցությունից:

Հայ եկեղեցու սրբավան ավանդությունների լուսավոր մթնոլորտով է ներթափանցված նույնպես Մեծարենցի «Խունկ և արցունք» բանաստեղծությունը: Ահա մի հատված այդ քերթվածից.

«Ծիթ մ'արցունքով կաթիլ մը խունկ,
Սրբանոթին մեջ կցանե
Մայրս որ կանցնի անտես դռնե,
Եվ երջանիկ՝ կդնե ունկ
Անդրաշխարհեն եկող ձայնին:
Աչքերուն, որ զինք կդիտեն
Կիրակմուտքի խունկին ատեն՝
Զեռքն անընդհատ կուտա խաչն հին»:

Այս քերթվածը, ինչպես ինքը՝ հեղինակն է ասում, հիմնված է ժողովրդական մի հավատալիքի վրա: Կիրակմուտքի խնկարկությունների ընթացքում լուսեղենները իրենց սիրելիների կայքերն էին գնում՝ ստանալու համար իրենց ընծայված խունկն ու արցունքը, կամ հուսավրեպ, գլխիկոր ետ դառնալու և նրանց հիշատակի ոգեկոչումով վերապրեցնելու սիրելի հոգիները:

Նույն շարքից ահա մի ուրիշ քերթված՝ «Հոգեհանգիստ» խորագրով, որ նույն հարազատ մթնոլորտի, նույն ապրումի դրոշմն է կրում:

«Կը թրվռա զանգակին ձայնը թռչուն.
Ոսկի նափորտ հագած շաբաթ իրիկվան
Տիրանվեր քաղաքին տակ դողդոջուն,
Ու ծուխին մեջ մթնշաղին երկնան:
. . . . . .
Նրբանցքին մեջ մայրս աղոթք մը կհնեն,
Կապրեցրնե սիրելիներն իր ամեն:
. . . . . .
Աներկրային խաղաղ ձայնը կլսե
Մեռածներու հուշքին՝ հոգիս իմ հանգիստ»:

Կամ «Զրտուք» բանաստեղծությունն հետևյալ տողը, որ հեռավոր դարերից եկած և քրիստոնեության ճամփով մեր եկեղեցու կողմից «Տյառնընդառաջ»-ի խորհրդի մեջ սրբագործված ու դրանով իսկ հայ ժողովրդի հոգում արմատավորված մի հին ավանդության բանաստեղծական արձագանքումը է:

«Խարույկները՝ ոսկեբաշ՝ ուրեք ուրեք
կվառին»:

Ինչպե՞ս չհիշել դեռ Մեծարենցի մի այլ գողտրիկ տաղը, որն ունի շատ անսովոր մի վերնագիր՝ «Սիրերգ»: Անսովոր, որովհետև այդ բանաստեղծությունը բառիս ընթացիկ իմաստով սիրո մի երգ չէ՝ հին ու ծանոթ ըզգացումների տուրք տվող, այլ բանաստեղծի երևակայության մեջ տեսլացած մի սուրբ հիշատակի ոգեկոչումը՝ առավոտյան կոչնակի ձայնի հետ եկեղեցի շտապող մանկահասակ մի աղջկա պատկերով: Այնպիսի՞ ջերմ աղապատանք, անսանձ կարոտ, հայրենի և կրոնական սրբությունների նկատմամբ հավատքի ու պաշտամունքի այնպիսի՞ անկեղծ մի շեշտ կա այնտեղ, որ մարդ վարանում է հատվածել քերթվածի շքեղ կառուցվածքի ներդաշնակ ամբողջականությունը:

«Զյունին վրայեն կերթաս, արև՞ ձյունածաղիկ,
Քայլիդ չափն է կոչնակին ձայնը ժամուն,
Շուրջդ է ծիածան, ո՞հ,առտըվան այս ժամուն,
Սիրտդ՝ ուխտադիր սրբության մը խաղաղիկ:
Զյունին վրայեն կերթաս, արև՞ ձյունածաղիկ,
Մնջելով ունկն ի վար աղոթքդ անծանոթ,
Ու շփելով շուրթիս սյուք մը մյուռոնհոտ.
Հիմա կերգեն, ո՞հ, «Զարթի՛ք, փա՞ռք իմ, զարթի՛ք...»:

Ահա նրա «Տո՞ւր ինձի, Տե՞ր» բանաստեղծությունը, որն ընթերցողի հոգու մեջ բաց է անում սրբագույն զգայությունների պայծառ մի տիեզերք: Իր բյուրեղյա պարզությամբ, մարդկային ամենահազնիվ բաղձանքների դրսևորումով՝ այս քերթվածը իրո՛ք կոչված է ժամանակակից մարդու Հայր մեր-ը լինելու: Աստծուց «անանձնական» ուրախություն աղերսող բանաստեղծի հոգու ամեն խորշե-

ոչ տիեզերական համակրությունը իր ոսկյա ընձյուղներն է նետում դեպի դուրս: Այնքան անկեղծ, այնքան սրտաբուխ զեղում կա այս բանաստեղծության մեջ, որ մարդ ակամա պատրանքն է ունենում շատ հին օրերի աղոթքի խո՞ւնկը լսելու:

«Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Զայն սրբասաց իմ հոգյակիս ընեմ խորան՝
Զայն իմ մտքիս ծիեմ՝ զերթ խունկ բազմաբուրյան»:

Կամ՝

«Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ու սեղանիս վրա դրված մեն մի նկան
Զույգ մը խինդեր գեթ ունենա թող խաչանիշ»:

Եվ վերջապես «Ըլլայի»-ների ոսկեշարը, ուր մարդկային վսեմ ցանկությունների շքեղ մի տողանցք կա: Այս շարքի ամեն մի քերթվածի մեջ բանաստեղծն ապրում ու շնչում է մի լայն, համայնապարփակ սիրով, մարդասիրական խորունկ բաղձանքներով ու զգացումներով: Այս մարդասիրությունը, համայնական սիրո այս խենթ պոռթկումը, բնության ամեն մի մասնիկի նկատմամբ պաշտամունքի այս խոր զգացումը, որ Մեծարենցի ստեղծագործության ամենաբնորոշ գիծն է կազմում և որը ցայտուն նորություն էր արևմտահայ գրականության մեջ, Հայաստանյայց եկեղեցու ու նրա հոգևոր ժառանգության՝ հեղինակի վրա ունեցած ազդեցության անժխտելի վկայությունն է հանդիսանում: Մեծարենցի ժամանակակիցներն ասում են, որ նա Ակնա բարբառով բազմաթիվ աղոթքներ և օրհնության տարազներ էր հավաքել, որոնք խնամքով պահում էր մոտը և հաճախ ընթերցում: Այդ օրհներգներն ու աղոթքները, որոնք միանգամայն ներդաշնակվում էին նրա ընդհանուր տրամադրություններին ու մտայնությանը, անկասկած իրենց առանձնահատուկ դրոշմն էին դրել նրա հոգու մեջ և ուժեղ ներշնչանքների առաջնորդել բանաստեղծի պատանի հետաքրքրությունը: «Ըլլայի»-ների ամբողջ շարքը մեկնում է ժողովրդական և կրոնա-ազգային այդ երգերի մոտիվներից:

Բերենք այդ շարքի ամենաընտիր կտորներից մեկի՝ «Իրիկունը» քերթվածի հետևյալ քառյակը, որի մեջ ընտանի արձագանքը կա տոհմաշունչ այդ զգայության: Համատարած խաղաղ երեկոն բանաստեղծի ներքին տեսողության ուժով թանձրանում, ձև ու մարմին է ստանում հնկայական մի ժամատան խորհրդավոր պատկերով.

«Սա իրիկո՜ւնն ըլլայի ես,
Լի զանգակին դողանչներովն երկնահեմ.
Խնկապատար, օծուն, ջահված ժամի պես
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես»:

Երեկոյան այս կոչնակի ամբարձումը դեպի երկինք ու նրա հետ զուգորդաբար՝ եկեղեցու զանգվածեղ ուրվանկարի օծուն ու շիջանուտ նշույլումը սրբազան մի խորհուրդ ունի իր մեջ: Բանաստեղծի նայվածքը, նրա ներքին աչքը չէ այն ոսպնյակը, որի մեջ առարկաների, տեսարանների գծագրությունն արտացոլվում է հորինվածքի մանրանկարով կամ բաղկացուցիչ տարրերի հավատարիմ շենքով, այլ մի զորավոր զգայարանք, որն ընդունակ է ընկալված պատկերի քոդարկված ճառագայթումն արձանագրելու:

Ի դեպ պետք է ասել, որ եթե կրոնական զգացումը, բառիս ավանդական իմաստով, տեղ չունի կամ շատ թույլ է արտահայտված Մեծարենցի բանաստեղծությունների մեջ, ապա դրա փոխարեն, սրբության զգացումը, բառիս ամենալայն իմաստով, առանցքն է կազմում նրա ողջ ստեղծագործությունների: Ոչինչ ավելի առինքնող է և վեհորեն հուզիչ, քան այդ «սրբագործումը» մարդու և բնության, ինչ որ ունեն նրանք իրենց մեջ անքայքայելի ու հավերժական, ոչինչ ավելի հզոր է, քան բանաստեղծի լայն ու ազատ թռիչքը դեպի կյանքն ու համայնական սերը և ոչինչ ավելի ներշնչող, քան նրա լուռ հաղորդակցությունը բնության մեծ ուժերի հետ: Այս տիեզերազգացողությունն ահա, միացած գեղագետ բանաստեղծի նրա մյուս արժանիքների հետ, յուրօրինակ մի փայլ ու գրավչություն է հաղորդում նրա բանաստեղծություններին: Բնության ամեն մի տեսարան, ամեն անկյուն ու խորշ, ծառ ու ծմակ բանաստեղծի համար անանուն մի սրբարան է, անհուն տիեզերքը մի սրբություն է, ապրող ու շնչող ամեն էակ նրա հոգում կաթեցնում է երկյուղած պաշտամունքի սրբազան մի սարսուռ: Ահա թե ինչու՝ առավոտյան «հինայի կարմրությունները հագած» հորիզոնի առջև խաչ հանելու և ծնրադրելու անդիմադրելի տենչով է բռնվում բանաստեղծը, կամ այնքան ուժգին ցանկանում է «պարզկա ցայգուն անուրջին մեջ լվալ» հոգին, «պատկերն ըլլալ սրբազնացած համայնին» և կամ ամբողջությամբ հանձնվել «ցնորաբեր» գիշերվա միստիկ կախարդանքին: Եվ նրա այս լքումը, անձնատվությունը բնության խորհրդի ու տիեզերական ներդաշնակության դիմաց բոլոր ուժեղ զգայությունների նման մեզ համակում է իր անկեղծության, խորության, քաղցրության համար:

Մեծարենցի այս նամուսալանցան տրամադրությունները ու բնութենապաշտ նկարները, ինչպես արդեն նշեցինք, ներքին խոր ընդհանրություններով կապված են մեր եկեղեցական տաղերի, արևագալի երգերի, մեր շարականների ու տոնական մեղեդիների հետ, որոնց մեջ այնքան վսեմ գեղեցկությամբ արտահայտված է գարնան, լույսի, արևի, բնության բոլոր տարրերի, հավանական սիրո ու խաղաղության մեծ խորհուրդը: Նույն ոգու անաղարտ արտահայտությունն են նաև Մեծարենցի բանաստեղծությունները, որոնք կարծեք Շնորհալու շարականների մեջ դրսևորված սուրբ զգայությունների քնքշանքը, Նարեկացու տաղերի հորդարուխ, արևային պայծառ գույների ներդաշնակ գեղեցկությունն են բերում մեզ: Այս իմաստով էլ Մեծարենցը որպես բանաստեղծ, հարազատ ծնունդն է Հայաստանյայց եկեղեցու, և նրա ստեղծագործությունները, մեծ չափով, նրան են պարտական մեզ այնքա՜ն առինքնող իրենց հայեցի բույրն ու քաղցրությունը: Ու մենք համոզված ենք, որ Մեծարենցի տաղերի ներշնչող ուժը երբե՛ք չի թուլանա մեր ժողովրդի մեջ, նա կմնա մեր նոր քնարերգության անմահ աղբյուրների կողքին այնքան ժամանակ, որ հայ եկեղեցին իր խորհրդով ու ավանդություններով, իր հոգևոր ժառանգությամբ, որպես հայ հոգու հարազատ պատկերը, շարունակի հառագայթել ու կայծկլտալ յուրաքանչյուր հայի սրտում:



Ս. ԱՆԹՈՆՅԱՆ
(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ[1]

«Թէպէտ և եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս և արժանի գրոյ յիշատակի»:

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ

Բնական է, որ ամեն մի ժողովուրդ ստեղծել է և շարունակում է ստեղծել հոգևոր արժեքներ, որոնք նրա հոգեկան կառուցվածքի, ստեղծագործ ոգու ու հավաքական իմացականության դրսևորումներն են: Նույնքան բնական է, որ ժողովրդի զավակները ուսումնասիրեն, արժեքավորեն և այլ ժողովուրդների ծանոթացնեն նախնյաց մշակույթին:

Մշակույթ բառն, անշուշտ, ընդգրկում է հոգևոր արժեքների այն ամբողջականությունը, որ ստեղծում է որևէ ժողովուրդ, այն է՝ ճարտարապետություն, մատենագրություն, բանաստեղծական արվեստ, նկարչություն, երաժշտություն, պարարվեստ ևն: Ներկա դասախոսության մեջ մենք կանգ կառնենք առաջին երեքի վրա, այն է՝ ճարտարապետություն, մատենագրություն և բանաստեղծական արվեստ, որոնք, մեր համոզմամբ, առավե՛լ ամբողջական կերպով կարող են գաղափար տալ մեր ժողովրդի մշակույթի պատմական ու համաշխարհային արժեքների մասին:

Բազմաթիվ են օտար մտածողներ, որոնք իրենց հիացմունքն են հայտնել հայ ժողովրդի մասին: Նրանցից շատերը հասցրել իրենց վառ հայրենասիրության իրենց կենցաղում պահել են հայկական սովորությունները, ընտանիքում պարտադրաբար խոսել հայոց լեզվով, որդեգրել հայազգի անուններ: Մենք կուզենայինք այստեղ մեջ բերել անգլիացի հանճարեղ բանաստեղծ Բայրոնի՝ մեր ժողովրդին տված գնահատականի խոսքերը. «Գուցե դժվար կլիներ որևէ այլ ազգի տարեգրությունները գտնել ավելի նվազ արատավորված ոճիրներով, քան հայոց, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թերությունները՝ ճնշման հետևանք: Սակայն ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը,—իսկ դա անցյալում դառն է եղել,—ինչպիսին էլ լինի նա ապագայի մեջ, նրանց երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքրական երկրներից մեկը»[2]: Ազատասիրության մեծ ասպետը անհունորեն սիրեց մեր ժողովրդին, Մխիթարյան հայրերի մոտ սովորեց հայոց լեզուն այն աստիճան, որ նույնիսկ բառարան ու հայերեն լեզվով քերականություն գրեց: Հանճարեղ բանաս-

[1] Արտալսարանական դասախոսություն՝ կարդացված հոգևոր հնմարանի ուսանողության համար:

[2] Byron's letters and Journals. 1924, էջ 125—127: Տե՛ս Ի. Դաշտենցի «Բայրոնը և հայերը» գրքույկը, Երևան, 1959:

տեղի կենսագիրներից մեկը՝ Էրիգ Մաքեյը, ճշտորեն նկատել է, որ Բայրոնը «սիրում ու հարգում էր այն բոլոր ազգերին, որոնց սիրելի էր անկախության ոգին: Այս էր գուցե հայերի նկատմամբ ունեցած իր հիացմունքի բանալին, որովհետև նա գտավ նրանց մեջ մի ազգ, որին բնությունն ու ազգության կորուստը չէր կարող աղավաղել կամ ընկճել, մի ազգ, որ հակառակ իր պարտության՝ անաղարտ է պահել իր ավանդությունների վեհությունը և իր հին համոզմունքների գեղեցկությունը»[3]:

Եվ իրոք, եթե համառոտակի բնութագրենք մեր ժողովրդի անցած պատմական ուղին, կտեսնենք, որ այն լի է ազատասիրական բռնկումներով և ամենամռայլ օրերին իսկ ստեղծված մտավոր ու հոգևոր մշակույթի գոհարներով: Նույնիսկ հայերեն գրերի բացակայության պայմաններում հայազգի որդիները օտար լեզվով էին ստեղծագործում, իսկ մեր պատմահայր Մ. Խորենացու, Ագաթանգեղոսի և Գրիգոր Մագիստրոսի ժլատորեն մեզ ավանդած ժողովրդական ստեղծագործության պատառիկները իրենց արվեստով համահնչուն են նույնիսկ մեր ժամանակի բանաստեղծական բարձր արվեստին.

«...Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ»

կամ՝ «...Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառատտն Նաւասարդի.
Զվազելն եղանց և զվարգելն եղջերուաց...»

Հայ ժողովրդի մշակույթի փառավոր էջը սկսվում է հատկապես 5-րդ դարում, երբ մեր նախնիները այն ժամանակվա քաղաքակիրթ ժողովուրդներին հավասար ստեղծում են իրենց սեփական գիրն ու գրականությունը: Հայտնի է, որ 4—5-րդ դարերում հայ ժողովուրդը երկրագնդի այս մասի 2 աշխարհակալ պետությունների կռվախնձորն էր: Հեռատես հոգիները կարողացան տեսնել, որ Արշակունիների կիսանկախ հարստությունը շուտով կփլուզվի, և հայ ժողովուրդը կմատնվի հավիտենական կործանման: Հարկավոր էր կարծես հրաշք գործել:

Իմաստուններն ասում են, որ մեծ մարդիկ ծնվում են հենց այն ժամանակ, երբ պատմությունը նրանց ոգեկոչում է, և ծնվում են, որպեսզի նոր լուսավոր մայրուղիներ բացեն իրենց ժողովրդի առաջ: Այդպես էր մեր պատմության 5-րդ դարը, երբ հանկարծակի մի այր՝ Մաշտոց անունով, իր սուրբատառ աջով գրեց հայերեն 36 տառերը: Դարեր անցան, կործանվեցին հայոց ամրոցները, ժողովուրդն անհետ կորցրեց իր քաջագործ հերոսների գերեզմանները, սակայն իր հիշողության մեջ պահեց միայն մեկ անուն, մեկ գերեզման՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը Օշականում: Իզուր չէ, որ հայ բանաստեղծները Մաշտոցին համարում են երեսունվեց անանուն ամրոցների հարուստագետ: Սակայն Մաշտոցի գյուտի նշանակությունը շատ ավելի մեծ է, քան համանման երևույթ մեկ ուրիշ ժողովրդի համար: Խնդիրն այն է, որ հանճարեղ լուսավորիչը հարևան երկու քրիստոնյա եղբայրական ժողովուրդների հանդեպ տածած հարգանքի ու սիրո շնորհիվ՝ նրանց համար ևս գրեր ստեղծեց: Նկատի ունենալով, որ այս խնդիրը ինչպես անցյալում, այնպես էլ այժմ վեճեր է հարուցում, նախ խոսքը տանք Մաշտոցի աշակերտ ու կենսագիր Կորյունին. «Դարձյալ՝ մեջտեղում մի ժամանակ անցնելուց հետո, Քրիստոսի սիրելին մտածեց հոգ տանել նաև բարբարոսական կողմի համար: Եվ սկսեց տիրոջից իրեն շնորհվածի համեմատ նշանագրեր հորինել վրացերեն լեզվի համար: Գրեց, դասավորեց ու օրինավոր կերպով հարդարեց և իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առավ, վեր կացավ գնաց, իջավ Վրաց կողմերը.... Եվ նա (Մեսրոպ Մաշտոցը—Ս. Ա.) իր արվեստն առաջարկելով՝ խրատեց, հորդորեց նրանց, և այն ժամանակ ամենքը հանձն առան նրա ուզածը կատարել»[4]:

«Այն ժամանակ եկավ, հանդիպեց նրան մի երեց մարդ, ազգով՝ աղվան, անունը՝ Բենիամին: Եվ նա (Մեսրոպ Մաշտոցը—Ս. Ա.) հարցրեց ու քննեց աղվաներեն լեզվի բարբարոս խոսքերը, ապա վերուստ պարգևված իր սովորական կորովամտությամբ նշանագրեր հորինեց և Քրիստոսի շնորհքի աջողությամբ՝ կշռադատեց, կարգավորեց, հաստատեց»[5]:

Այս ճշմարտությունն ընդունել են նաև օտար հայագետները: Գերմանացի խոշոր լեզվաբան ու հայագետ Հ. Մարկվարտը հատուկ ուսումնասիրություն է գրել Մեսրոպ Մաշտոցի և հայոց այբուբենի ծագման մասին, որտեղ, քննելով այն պայմանները, երբ գրեր ստեղծվեցին, Մաշտոցին ու Սահակ Պարթևին անհամեմատ բարձր է գնահա-

[3] Mackey, Lord Byron at the Armenian Convent, Venice, 1870. էջ 49:

[4] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 109—110, 114:

[5] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 109—110, 114:

տում, քան իր հայրենի գրերի գյուտարարներին: Ահա նրա խոսքը. «Երբ մենք քննում ենք այն պայմանները, որոնց մեջ Մաշտոցն ու Սահակն իրենց մտքի ուժով հայ ժողովրդին եկեղեցական ու ազգային ինքնագիտակցության զարթոնքի հասցրին, և այս ամենը համեմատում ենք այն դանայան պարգևի հետ, որը Ներսես Պիպինը, քաղաքական ու եկեղեցական իշխանության բոլոր միջոցներն իր ձեռքն ունենալով, ընծայեց գերմանական ժողովրդին, տեսնում ենք, որ Պիպինը և նրա զինակից Վինֆրիդը ողորմելի թզուկներ են երևում մտքի այդ երկու հսկաների (Սահակի ու Մեսրոպի—Ս. Ա.) հանդեպ: Մի ժողովուրդ, որը ծնել է այսպիսի մարդիկ և նրանց մեծարում է որպես իր դյուցազների, քանի դեռ հետևում է նրանց բրինակին՝ երբեք չի ոչնչանա»*:

Այնուհետև Մարկվարտը, քննելով Մաշտոցյան վրաց այբուբենի խնդիրը, գրում է. «Հենց այսպիսի մի հիմք է անկասկած դրսևորում վրացիների հնագույն եկեղեցական այբուբենը, խուցուրին, որի մեջ մենք տեսնում ենք Մաշտոցի գյուտը»:

Ամեն ինչ ասված է պարզ ու մեկին:

Այսպիսով, հայոց գրերի գյուտը օգնեց ոչ միայն հայ ժողովրդին, այլև ընդհանրապես նպաստեց Անդրկովկասի գրավոր մշակույթի զարգացմանը:

Հասկանալի է, որ գրերի գյուտից անմիջապես հետո ստեղծվեց հայատառ գրականություն: Դեռևս Մ. Մաշտոցը հայրենիք վերադառնալիս՝ ասորերենին ու հունարենին հմուտ իր աշակերտների միջոցով մագաղաթի վրա արձանագրած բերեց Աստվածաշնչի մի հատվածի թարգմանությունը: Նա իր ժողովրդի բախտը և գոյատևումը կապեց լույսի, բանականության, իմացականության հետ: Այս տեսակետից ինչքան ներդաշնակ է նրա թարգմանած առաջին հայերեն նախադասության միտքը իր առաքելության ոգուն. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ... ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ և ուղղել զիրաւունս»:

5-րդ դարի հենց միայն առաջին երեք տասնամյակում թարգմանվեցին ու գրվեցին տասնյակ գրքեր, որոնցից 41-ը մեզ է հասել. դրանց թվում են՝ Աստվածաշունչը, որ ֆրանսիացի բանասեր Լակրոզը «Թագուհի թարգմանութեանց» անվանեց, Ոսկեբերանի՝ Հովհաննու մեկնության Ա—ԺԳ ճառերը, Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը», ինչպես նաև հայ հեղինակներ Ագաթանգեղոսի ու Բուզանդի «Հայոց պատմությունը», Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը և Եզնիկ փիլիսոփայի «Եղծ աղանդոց» իմաստասիրական աշխատությունը:

Նշենք, որ մեր ուսումնասեր ու իմաստասեր նախնիների շնորհիվ հին աշխարհի մտքի գանձերը պահպանվեցին հայերեն թարգմանությամբ: Այսպես՝ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն» արժեքավոր երկի հունարեն օրինակը կորած է. և ահա 1787 թ. Պալատեցի Գևորգ Դպիրը Շամախիում գտավ 5-րդ դարում նրա հայերեն թարգմանված օրինակը: Բազմահմուտ գիտնական Հ. Սկրտիչ Ավգերյանի ջանքերով 1818 թ. «Քրոնիկոնը» Վենետիկում, Սուրբ Ղազար կղզում թարգմանվում է լատիներեն, իսկ շուտով այն թարգմանվում է եվրոպական գլխավոր լեզուներով՝ փառավորելով հայ մշակույթն ու հայ ժողովրդին:

Հին աշխարհի գրավոր մշակույթից միայն հայերեն թարգմանությամբ պահպանված գործերից են նաև Զենոն Ստոիկի «Յաղագս բնութեան» ուսումնասիրությունը, Թևոն Ալեքսանդրացու ճարտասանական երկը, Փիլոն Եբրայեցու փիլիսոփայական, մեկնողական երկասիրությունները ևն, ևն:

Պակաս արգասավոր չեղավ նաև 5-րդ դարի երկրորդ կեսը. այս շրջանում հանդես եկան հայ մատենագիրներ Ղ. Փարպեցին ու Մ. Խորենացին, ինչպես նաև Եղիշեն: Նշենք, որ առավելապես այս շրջանի հեղինակների գործերը եվրոպական բոլոր գլխավոր լեզուներով տասնյակ հրատարակություններ ունեն: Հասկանալի է, որ Արևելքի պատմությամբ զբաղվող բանասերի համար ժամանակի հայ պատմիչները անգնահատելի սկզբնաղբյուրներ են: Մյուս կողմից՝ այդ երկերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև մարդկային խոսքի բանաստեղծական ձևավորման և շատ այլ տեսակետներից:

5-րդ դարի հայ գրականության մեջ գեղարվեստական խոսքի իմաստով իր ժամանակից շատ բարձր է կանգնած Եղիշեն, որը, Մարկվարտի ճիշտ բնութագրմամբ, ավելի մեծ է, քան իր ժամանակի այլազգի հեղինակները: Սակայն հեղինակն ավելի գեղեցիկ է ձևակերպել, ուստի խոսքը տանք նրան. «Միջնադարյան ո՞ր ժողովուրդը կարողանա պարծենալ, թե երբևիցե կարողացել է իր սեփական լեզվով կամ թեկուզ միայն բանաստեղծ լատիներենով հրապարակ հանել Վարդանի և իր ընկերների դյուցազնամարտի այնպիսի մի նկարագրություն, ինչպիսին է Եղիշե վարդապետի նը-

* Jos. Marquart, Über den Ursprung des Armenischen Alphabets in Verbindung mit der Biographie des heil. Mastoc' 1911—1912 թթ.: Տե՛ս «Մեսրոպ Մաշտոցի», Երևան, 1962:

կարագրածը» (տե՛ս Մարկվարտի վերոհիշյալ աշխատությունը. «Մեսրոպ Մաշտոց» ժողովածու, էջ 127)։ Եվ իրոք, այնքան իսկ, երբ բանաստեղծական ներքին խոսք լսելու պահանջ ենք զգում, Եղիշեն լիովի կարող է գոհացում տալ մեզ։ Փորձենք արտասանել թեկուզ նրա «Տիկնայք փափկասունք» ոսկեբառ հատվածը. «Անարիւն հիպոանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, կենդանի են միայն զօդն ծծելով՝ զանմարմնոցն բերեն զնմանութիւն»։ Եղիշեի այս գործի շատ հատվածներ, անտարակույս, կարող են դրվել մարդկային խոսքի հանճարեղ վարպետների երկերի կողքին։

5-րդ դարի հայ գրականությունն իր լեզվական հարստությամբ ու կատարելությամբ և գեղարվեստական խոսքի վարպետությամբ մարդկային մտքի մի զարմանահրաշ արտահայտություն է։ Իրականում 5-րդ դարի հայ գրականությունը բանավոր ստեղծագործության հազարամյա ավանդույթ ունեցող քաղաքակիրթ մի ժողովրդի ստեղծագործ ոգու դրսևորումն է՝ անհատ հանճարների գրչի տակ հղկված, հարստացած, առնականացած։

Հետագա դարերում ևս հայ ժողովուրդն ստեղծեց մշակույթի շատ ստեղծագործություններ՝ Սեբեոս, Ղևոնդ Երեց, Թովմաս Արծրունի, Ասողիկ, Դրասխանակերտցի և ուրիշներ, որոնք նույնպես թարգմանված են եվրոպական լեզուներով։ Սակայն այս բոլորի մեջ առանձնակի ուշադրության արժանի է 7-րդ դարի մաթեմատիկոս Անանիա Ծիրակացին, որը հայոց լեզվով կարդաց թվերի աշխարհի և տիեզերքի խորախորհուրդ գաղտնիքները։ Ծիրակացին, անկասկած, մեծ նպաստ ունի երկրագնդի այս մասում թվաբանական գիտության զարգացման խնդրում։

Ահա և 10-րդ դարը, ինչպես ընդունված է ասել, հայոց վաղ վերածննդի դարաշրջանը։ Մեր առաջ կանգնած է հսկայակերպ Նարեկացին, որը օտարազգի բանաստեղծների իսկ գնահատությամբ տիտանականորեն մեծ է և մարդկայնորեն՝ նույնիսկ անըմբռնելի։ Սխալ արած չէինք լինի, եթե ասենք, որ հայազգի այս տիտանն իր ստեղծագործություններում շնչում է այն նույն օդը, ինչ որ մոտ երեք դար հետո ավելի համարձակ ու ընդհանուր ձևով պիտի արտահայտվեր եվրոպական Վերածննդի հսկաների մոտ։

Ռուս մեծատաղանդ բանաստեղծ ու բանասեր Վալերի Բրյուսովը գտնում է, որ Նարեկացին բանաստեղծական ձևը բարձր կատարելության հասցրեց՝ մշակելով նրա հնչեղությունը շատ ավելի առաջ, քան այն կծաղկեր պարսկական և արաբական քնարերգության մեջ։ Այս տեսակետից նա Նարեկացուն համարում է միջնադարյան «սրբազան» քնարերգությունն իրականացնող հեղինակ։ Սովորաբար ընդունված է ասել, որ, եթե Նարեկացին վրձնի վարպետ լիներ, նրա կտավները ոչնչով պակաս չէին լինի վերածննդյան իտալական նկարիչների կտավներից։ Եվ իրոք, մի՞թե Ռաֆայելի ու Դավինչիի «մադոննաները» շատ ավելի մեծ արվեստով են նկարված, քան այն երգել է Նարեկացին իր «Ծննդյան մեղեդի» տաղի մեջ.

«Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
Ծաւալանայր յառաւօտուն,
Երկու փայլակնաձև արեգական նման.
Շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս
...Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց կաթէր,
Լեզուին շարժուին քաղցր երգանայր տաւիղն—
...Վարսիցն երամից զարդ՝ երամից զարդ
Ոլորս են առեալ եռահիւսակն բոլորեալ այտիւք.
Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,
Ծղիքն ծիրանի մանուշակի հոլ»։

Մենք բախում ենք արդեն միջնադարյան հայ տաղերգության ոսկե դռները։ Վալերի Բրյուսովը միջնադարյան հայ քնարերգությունը համարել է հայ ժողովրդի բանաստեղծական արվեստի առավել ինքնուրույն և բարձրագույն ստեղծագործությունը։ Քննելով այն հարցը, թե արդյոք հայ բանաստեղծական արվեստը ի՞նչ չափով է ազդվել արևելյան բանաստեղծական արվեստից, նա նրբորեն դիտում է, որ դեռ Նարեկացու ստեղծագործության մեջ և նրանից էլ առաջ հայ բանաստեղծական միտքն օգտագործել է դրսևորման այնպիսի ձևեր, որոնք արևելյան բանաստեղծների մոտ շատ ավելի ուշ երևացին։ Ահա ինչու նա գտնում է, որ Առաջավոր Ասիայի ամբողջ մշակութային աշխարհը, այդ թվում և հայերը, միատեղ աշխատեցին ստեղծելու այն ոճը, որը բնորոշ դարձավ ինչպես արաբների ու պար-

---

«Աչքերը ծով ծավալվել են
Ծիծաղախիտ ծովի վրա առավոտյան՝
Երկու փայլակնաձև արեգակի նման,
Ինչպես շողն է իջնում լույս առավոտից։
...Բերանն երկթերթի, վարդն էր շրթներից կաթում,
Լեզուն նման էր քաղցրանվագ տավիղի։
...Գեղեցիկ վարսերը, գեղեցիկ վարսերը
Նուռնյաս բոլորել են այտերը։
Ծոցը լուսավայլ, կարմիր վարդով լցված,
Դաստակները՝ ծիրանի մանուշակի փնջեր»։

սիկների, այնպես էլ միջնադարյան հայ քնարերգության համար:

Մյուս կողմից՝ քննելով եվրոպական բանաստեղծական արվեստի հնարավոր ազդեցության խնդիրը, նա գրում է. «Միջնադարյան հայ քնարերգությունը գրեթե ոչ մի կախում չունի եվրոպական քնարերգությունից: Արդարև, ինչ կարող էր տալ քնարական ստեղծագործությանը 13—14-րդ դդ. արևմտաեվրոպական քնարերգությունը, որը դեռ նոր էր սաղմնավորվում բոլոր երկներում՝ ներառյալ նաև առաջավոր Իտալիան»[7]:

Եվ իրոք, ազդեցությունների խնդիրը բարդ է: Մի բան պարզ է. բարերար որևէ ազդեցություն չի կարող արվեստի ստեղծագործության պտուղներ տալ այնտեղ, ուր պարարտ հող ու հունդ չկա: Իրականում միջնադարյան հայ բանաստեղծությունը համաշխարհային պատմության մեջ հայ ժողովրդի ստեղծագործ ոգու մեկ դրսևորումն է, բարձր՝ իր բովանդակությամբ և գերազանց՝ իր արտահայտչական ձևերով: Այդ մեզ համար բոլորովին զարմանալի չէ, քանի որ մեր նախնիների, հատկապես Գողթն գավառի երգիչների ստեղծագործությունները, ինչպես կարելի է դատել մեզ հասած հատվածներից, իրական ստեղծագործ ոգու արտահայտություններ են: Ահա այդ ստեղծագործ ոգին է, որ դարերի ընթացքում պահպանվեց մեր ժողովրդի մեջ, ավանդվեց սերնդից սերունդ և նոր ժամանակներում, ինչպես գրում է Վ. Բրյուսովը, փայլատակեց ծիածանի բոլոր 7 երփներանգներով, շողաց բոլոր թանկագին քարերի փայլով:

Կարող է հարց առաջանալ. ի՞նչ իրական կապ կա մեր նախնյաց բանահյուսության և միջնադարյան հայ քնարերգության միջև: Կպատասխանենք. այդ կապը դարեր շարունակ պահպանվեց հոգևոր երգերի, մասնավորապես շարականների միջոցով, որոնք դարեր շարունակ վառ պահեցին հայ ժողովրդի բանաստեղծական ոգին ու երևակայությունը: Պատահական չէ, որ Վ. Բրյուսովը հայ եկեղեցական բանաստեղծությունը դիտում է իբրև մի տաճար, որ իր մեջ պահած ունի շատ իրական բանաստեղծներ, որոնց հիմները շնչում են նույն այն ոգևորությունը, ինչ որ հունականի և հռոմեականի լավագույն նմուշները, սակայն հայկականներն իրենց կիրառած գեղարվեստական միջոցների նրբազգացողությամբ մոտենում են արդեն նոր ժամանակների բանաստեղծություններին, ընդհուպ մինչև Վեղենի ներշնչումը:

Այժմ համառոտակի քննենք մեր միջնադարյան տաղերգուների ստեղծագործությունները: Արտաքինից թվում է, թե բոլորն էլ ոգևորության նույն աղբյուրն ունեն. երգում են սոխակ ու վարդ՝ այլաբանելով աշխարհիկ սեր: Իրականում մեր հեղինակներից ամեն մեկն ունի իր աշխարհը: Ահա Ֆրիկը, որը դեռևս 14-րդ դարում բողոքում է ճակատագրի, հասարակական անարդար կառուցվածքի դեմ: Ֆրիկն, անշուշտ, մեր պատմության այն ժամանակներում լայնորեն դրսևորված ժողովրդի արդար ըմբոստության արտահայտությունն է.

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին՝ հազար ձի և ջորի,
Մէկին՝ ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի....
Մէկին՝ հարամբն յաջողի
Մէկին՝ հալալն կորուսի....

Ահա Կոստանդին Երզնկացին, որի «Գարուն» ծավալուն բանաստեղծությունը Վ. Բրյուսովի գնահատությամբ լի է հեթանոսական շնչով: «Իր ուժով, լեզվական ու բանաստեղծական ավյունով,—գրում է Բրյուսովը,—այդ բանաստեղծությունը կարող է մաս կազմել այն դարաշրջանի Արևմտյան Եվրոպայի ցանկացածդ գրականության. նույնիսկ Եվրոպան ոչինչ չունի նրան հակադրելու»[8]: Հեղինակի կարծիքով Կոստանդին Երզնկացին Եվրոպայի Վերածնունդի մի արտահայտությունն է հեռավոր Հայաստան լեռնաշխարհում: Անվիճելի է, որ Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունը մեծապես ազդեց 14—17-րդ դդ. հայ բանաստեղծների վրա:

Նույն հեղինակի կարծիքով Հովհաննես Թլկուրանցու արվեստը իր մեջ թաքցրած ունի այնպիսի խորը զգացմունքներ, որոնք միայն 20-րդ դարում լայնորեն մատչելի դարձան բանաստեղծական արվեստին: Վստահորեն կարելի է ասել, որ Թլկուրանցին 2—3 դարով առաջ է ընկած իր ժամանակից: Վ. Բրյուսովը գտնում է, որ ո՛չ Պետերբուրգի սոնետներում, ո՛չ էլ Ռոնսարի սիրային երգերում չկան իրական զգացմունքի այնպիսի բացականչություններ, ինչ որ Թլկուրանցու մոտ, որը նրանցից մի ամբողջ հարյուրամյակ առաջ է ապրել:

Յանկարծակի մէկ մի տեսայ որ կու գոնդայր գոյն երեսէն.
Թալկոյ անկիսայ ի տեղեանէն. շալայր կարթէր լոյսն ի վրէն.

[7] Ս. Բրյուսով, Поэзия Армении, Москва, 1916, էջ 47: Վ. Բրյուսովից բերված մյուս բոլոր մեջբերումները սույն գրքից են:

[8] Վ. Բրյուսով, վերոհիշյալ աշխատությունը, էջ 56:

Աչքերն է ծով, ունքն է թուխ ամպ, մազն է դեղձան ոսկի թելէն.
Ձինքն ճօճար՝ զէտ զուռի ճեղ, հրով այրէր զերկիր ամէն:

Ահա և Քուչակը, որի ստեղծագործությունները հայ քնարերգության շողշողուն մարգարիտներն են: Միջնադարի բոլոր մյուս տաղերգուների մեջ իսկ նա առանձնանում է իր բանաստեղծական անմիջականությամբ և ժողովրդականությամբ: Արվեստակյալ ոչ մի քառյակ իսկ չի կարելի ցույց տալ նրա ամբողջ ստեղծագործության մեջ:

Ամեն մի ստեղծագործողի համար գերկատար երանելություն է ձուլվել ժողովրդին, նույնանալ նրա ստեղծագործության հետ: Քուչակն այդ փառքին հասավ՝ դարեր հետո առեղծված դառնալով գիտնականների համար իր անձնավորությամբ և ստեղծագործությամբ. այն աստիճան, որ նրան համարեցին ժողովրդական երգ ու բանի հավաքող: Մինչդեռ քառյակներն ուշադիր ուսումնասիրողը նրանցում կգտնի անհայտ հանճարի ստեղծագործության շունչը.

«Ես աչք՝ ու դու լուս, հոգի՛, առանց լուս՝ աչքն խաւարի,
Ես ձուկ՝ ու դու ջուր, հոգի՛, առանց ջուր՝ ձուկն մեռանի:
Երբ ձուկն ի ջրէն հանեն, ջուր մընն ալ ձգեն նա, ապրի.
Երբ գիս ի քէնէ զատեն, քանց մեռնիլ այլ ճար չի լինի»:

Եվ կամ՝

«Այս աստնվորիս վերայ, դու մատնի, ես ակն ի վերայ.
Դոր որ պաղ աղբիւր մի կայ, դու կանաչ, ես ցողն ի վերայ.
Խնձոր ես ծառի ճղին, ես կանանչ թփիկ ի վերայ.
Վախեմ թե աշունն գայ, զքեզ քաղեն, թուփս չորանայ»:

Հայ մեծատաղանդ բանաստեղծներ Արշակ Չոպանյանը, Քուչակին համեմատելով պարսից բանաստեղծներ Սաադու, Հաֆըզի և Օմար Խայամի հետ, իրավացիորեն գտնում է, որ վերջիններս արքունի բանաստեղծներ էին, մինչդեռ Քուչակը մոտ է հասարակ ժողովրդին. նա երգել է ոչ թե այս աշխարհի հզորների համար, այլ հասարակաց հավաքույթներում: Քուչակի միակ արքան, որին գլուխ է խոնարհել, եղել է նրա հավիտենական կուռքը՝ սերը: Ահա ինչու Ա. Չոպանյանը Ն. Քուչակին իրավացիորեն համեմատում է նոր ժամանակների մեծ բանաստեղծներ Հայնեի և Վերլենի հետ, քանի որ հայազգի բանաստեղծը դեռևս 16-րդ դարում տվել է իրական քնարերգության նմուշներ՝ այս մտքի ներկա հասկացությամբ. անհատական և ազատ բանաստեղծություն, որն իր առաջ դնում է միայն մեկ նպատակ՝ արտահայտել տվյալ պահին բանաստեղծին կպատած հուզաշխարհը:

Վ. Բրյուսովը, քննության առնելով Չոպանյանի այս մտածումները, բացականչում է՝ это справедливо—արդարացի է:

Միջնադարյան հայ բանաստեղծական արվեստի գլուխ-գործոց է Սայաթ-Նովան: Այսօր էլ մեզ համար հանելուկ է, թե ինչպես նա իր հանճարի ուժով աշուղական արվեստը բարձրացրեց անհասանելի բարձունքների՝ առաջինը ապացուցելով, թե ինչ հզոր ուժ կա թաքնված ժողովրդի բանաստեղծի ձայնի մեջ: Իր հանճարի ուժով նա ապացուցեց, որ Քուչակից հետո հայ բանաստեղծական ոգին ոչ միայն չի խամրել, այլև անհամեմատ կատարելագործվել է:

«Ցա՛ր, մըտիլ իս բաղչի մեչը, աչքայիր սեյրան իս անում.
Շուխկը արեգակի նման է՝ տեսնողին հեյրան իս անում.
....«Շուխկը աշխարքս բըռնիլ է՝ արեգակի դեմը փար իս.
Հոտով հիլ, միխակ, դարչին, վարթ, մանիշակ, սուսանբար իս,
Կարմրագուն՝ դաշտի ծաղիկ, հոտաց շուշան իս ինձ ամա»:

Սայաթ-Նովան համակ սեր է, աշխարհին կարոտ, աշխարհով լի: «Մեր վիթխարի Սայաթ-Նովան,—գրում է Հ. Թումանյանը,—մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարքն ու իրերը, զգում է, որ էրվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, վեհ ու վսեմ, որպես աշխարքի ու մարդու մեծ բարեկամ»:

Վ. Բրյուսովը, խոսելով Սայաթ-Նովայի մասին, նրան անվանում է «նրբերանգների բանաստեղծ», որը դեռ մեկ դար առաջ իր ստեղծագործություններում գործնականում կիրառել է ավելի ուշ Վերլենի կողմից ձևակերպված հետևյալ արտահայտությունը.

Pas la couleur, rien que la nuance!

«Ոչ թե գույն, այլ միայն նրբերանգ»:

Այնուհետև՝ Վ. Բրյուսովը Սայաթ-Նովային համարում է երկնքի պարգև, որն ուղարկվում է ոչ բոլորին և ոչ էլ՝ հաճախ: Մեր բանաստեղծը «Նախախնամության ընտրյալն է, որը փառաբանում է իր դարն ու իր հայրենիքը»:

Միջնադարյան հայ բանաստեղծությունը կարելի է նմանեցնել մի հոյակերտ տաճարի՝ մուտքին կանգնած է սիրամարական նուրբ-

կացին, իսկ ելքին՝ հանճարեղ Սայաթ-Նովան. համահանճար ստեղծագործողներ՝ իրենց բանաստեղծական անհատականությամբ:

Պատահական չէ, որ Վ. Բրյուսովը բացականչում է. «...Որպես բանաստեղծ, որպես արվեստագետ հայ բանաստեղծության մեջ ես տեսա ինձ համար նոր, մինչ այդ անծանոթ, գեղեցիկ մի նույնպիսի աշխարհ, որի մեջ փայլատակում ու շողշողում էին ամենահիրական գեղարվեստական ստեղծագործության բարձր դրսևորումները»: Բանաստեղծը ցավում է, հանդիմանում իրեն, թե ինչպես ավելի առաջ ինքն այդպես անտարբեր անցել է այդ աշխարհի մոտով:

Հայ ժողովրդի համար ստեղծված այդ աղետալի օրերին (1916 թ.) մեծ հոգու տեր բանաստեղծը գրում է. «...Հայերը առավել մեծ իրավունք ունեն ինչպես մեր, այնպես էլ աշխարհի ուշադրությանը արժանանալու. այն բարձր մշակույթը, որ հայ ժողովուրդը ստեղծել է իր ինքնուրույն գոյության երկար դարերի ընթացքում և այն բացառիկորեն հարուստ գրականությունը, որը Հայաստանի անգնահատելի լուման է մարդկության ընդհանուր գանձարանում»: Նա իրավացիորեն գտնում է, որ ամեն մի կրթված մարդու համար հայ բանաստեղծությանը ծանոթանալը պարտադիր է (ընդգծումը իրենն է), ինչպես նրա համար պարտադիր է ծանոթ լինել հույն ողբերգակներին, Դանթեի «Աստվածային կատակերգությանը», Շեքսպիրի դրամաներին, Վ. Հյուգոյի պոեմներին:

Եթե այսօր հարց տրվի, թե ի՞նչն է Հայաստանում առավել շատ հետաքրքրում օտարերկրյա զբոսաշրջիկներին, անվարան կարելի է պատասխանել՝ հայ ճարտարապետությունը: Հայտնի ամերիկացի արվեստագետ Ռոքուել Քենտը գրում է. «Երևանի Լենինի հրապարակը ճարտարապետական գլուխ-գործոց է համաշխարհային չափանիշով: Եթե հազար բծախնդիր մասնագետ այսօր կազմելու լինեն աշխարհի յոթ հրաշալի հրապարակների ցուցակը, ապա Երևանյանը կմտնի դրա մեջ»: Հեղինակն իրավացիորեն հրապարակի ճարտարապետական ձևավորման բարձրության գաղտնիքը գտնում է հայ ժողովրդի 3000-ամյա կառուցողական վարպետության ավանդույթների կիրառման մեջ: Հայաստան աշխարհը, հիրավի, բացօթյա մի մեծ թանգարանի է նման, 3000-ից ավելի հնության կոթողներ զարդարում են այդ երկիրը:

Դեռևս Թ. Թորամանյանը խոսելով այդ մասին ասում է. «Ես բավական չէի նույնիսկ նկարել Հայաստանի նոյի վրա գրված ամբողջ հին հուշարձանները հետազոտելու և անոնց ճարտարապետությունն ուսումնասիրելու»[9]:

Հայաստանում գրեթե չկա մի շրջան, աշխարհագրական մի անկյուն, ուր ճարտարապետական մեկ կամ մի քանի կոթողներ չլինեն:

Հայ ճարտարապետությունն, անտարակույս, հայ ստեղծագործ ոգու մի արտահայտությունն է՝ քարե բանաստեղծություն կամ ավելի շուտ՝ քարի վրա դրոշմված բանաստեղծություն: Այդ ոգին այնքան հարազատ է հայ ժողովրդին, որ նույնիսկ իր դժբախտ օրը լալիս հայ մարդը իրեն համեմատում է ավերված տան հետ.

«Սիրտս նման է էն փլած տներ,
Կոտրեր գերանքներ, խախտեր է սներ...»:

Անցյալի մեր մատենագիրներն անհուն սիրով ու երախտագիտությամբ են գովաբանում շինարար արքաներին ու իշխաններին: Բերենք թեկուզ մեր պատմահոր նկարագրած Երվանդակերտ քաղաքը, որը համեմատվում է մարդու դեմքի հետ և, ըստ երևույթին, միակը՝ համաշխարհային գրականության մեջ: «Ինձ քաղցր է պատմել նաև գեղեցիկ Երվանդակերտ դաստակերտի մասին, որ նույն Երվանդը շինեց գեղեցիկ և չքնաղ հորինվածքով: Որովհետև մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությամբ և պայծառ շինություններով՝ լուսավոր, ինչպես աչքի բիբը. իսկ բնակության շուրջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ՝ ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը նմանվում էր խիտ արտևանունքի գեղեցիկ գծին, որի հյուսիսային կամարաձև դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերի հետ: Իսկ հարավային կողմից՝ հարթ դաշտերը [հիշեցնում էին] ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով նման էր մի բերանի՝ իր երկու շրթունքներով: Եվ այս գեղեցիկ դիրքը կարծես անթարթ հայացքն ուղղել է թագավորանիստ բարձրավանդակի վրա»:

Թ. Թորամանյանը հայ ճարտարապետության մոտ 2000-ամյա հասակը (մ. թ. ա. 5-րդ դարից սկսած մինչև 15-րդ դարում նրա անկումը) շրջանաբաժանում է չորս վերածնունդների: Առաջին վերածնունդը երկարում է մինչև մեր թվականության 5-րդ դարը: Այս շրջանի կառույցներից ամենանշանավորներն են, բացի մեր պատմիչների վկայած կառույցներից, Տեկորի տաճարը,

[9] Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, Երևան, 1942, էջ 53: Հետագա բոլոր մեջբերումները արվում են Թորամանյանի այս գրքից:

Գառնիի հեթանոսական տաճարն ու սուրբ Էջմիածինը: Դժբախտաբար առաջին երկուսը ավերակ, իսկ երկրորդը՝ այսօր էլ ամեն այցելուի հիացմունք պատճառող:

Հայ ճարտարապետության «ոսկեդարը» 7-րդ դարն է, երբ Հայաստան աշխարհում ստեղծվեցին այնպիսի մեծագործ հուշարձաններ, որոնք հետագայում իսկ շատ բանով չկրկնվեցին: Այս շրջանի աքանչագործություններից են Մաստարայի եկեղեցին, Օձունը, Գայանեն, Հռիփսիմեն և հատկապես Զվարթնոցը: Հայտնի է, որ բյուզանդական կայսր Հուստինիանոսը ի բավարարումն իր փառասիրության կառուցել տվեց Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա տաճարը, որը աշխարհի հրաշալիքներից մեկն է համարվում: «Ս. Սոֆիայի կանգնումեն դար մը հետո Հայաստանի սրտին վրա կանգնվեր է Զվարթնոց եկեղեցի մը, որուն հանճարեղ կազմությունը դարձյալ կոչված է ընդմիշտ զարմացնելու արվեստագիտական աշխարհը»,—գրում է Թորամանյանը (անդ, էջ 73):

Մովսես Կաղանկատվացի պատմիչն ասում է, որ բյուզանդական Կոստանդիանոս կայսրը, որը նյութապես օգնել էր Զվարթնոցի կառուցմանը, եկեղեցու օծման հանդեսին ներկա լինելով, հիացած՝ Բյուզանդիա է հրավիրում հայ ճարտարապետներին, որպեսզի ի հեճուկս Հուստինիանոս կայսեր, կայսերական քաղաքում կառուցի Նոր Զվարթնոց, ըստ երևույթին, Սուրբ Սոֆիայից գերազանց մի հոյակերտ տաճար, մի բան, որ նրա վերահաս մահվան պատճառով չի իրականանում: Թե իր ժամանակի համար ինչպիսի սքանչագործություն էր Զվարթնոցը, այդ կարելի է իմանալ նույնիսկ մեր օրերի հետևյալ դեպքից. երբ Թ. Թորամանյանը իր տաղանդի երևակայության ուժով ճշտագույնս չափագրեց ու վերականգնեց Զվարթնոցի նախնական տեսքը, մասնագետները թերահավատ գտնվեցին՝ չհավատալով, որ այդքան հոյաշեն է եղել այդ եկեղեցին: Մինչդեռ հետագա հայտնագործումները հաստատեցին, որ Թորամանյանը միանգամայն ճիշտ էր: Զվարթնոցի գրեթե կրկնօրինակումներն են Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր և Բանայի եկեղեցին: Թորամանյանի կարծիքով «Հայ ճարտարապետության գոհարներից մեկը» ևս, Հովվի եկեղեցին, կառուցված է Զվարթնոցի նմանողությամբ, նրա «մանրանկարով»: Իրավացի է Թորամանյանը, երբ, համեմատելով հայ ճարտարապետությունը բյուզանդականի հետ, գրում է. «Հայաստանը, որ Բյուզանդիայի վարդապետչորս նեսանգներեն մեկն էր միայն.... եթե ոչ ծավալով կամ բանակով, այնուամենայնիվ ավելի բարձր կանգնեց իր որակով որոշ կետերի մեջ՝ հակառակ իր փոքրության և տնտեսական համեստ վիճակին» (անդ, էջ 48):

Հնում՝ ընդունված մի իմաստուն արտահայտություն կար. գիտությունը և արվեստները ծաղկում են խաղաղության պայմաններում, ուստի խաղաղությունը գիտության և արվեստների մայրն է: 10-րդ դարում վերստին ծաղկում է հայ ճարտարապետությունը: Այս անգամ արդեն Ծիրակը, Անին ու Վասպուրականն են զարդարվում բարձրարվեստ կոթողներով: Այս շրջանի հրաշակերտություններից են Տաթևը, Անիի մայր տաճարը և Աղթամարի քանդակակերտ հոյակապ եկեղեցին:

Այս արդեն հայ ճարտարապետության 3-րդ վերածնունդն է (10—11-րդ դդ.), սակայն նախորդների համեմատությամբ այն առավելությամբ, որ աշխարհիկ կառույցներ են կերտվում: Թորամանյանը վկայում է, որ մեր օրերում իսկ ջրի մեջ՝ 3—4 մետր խորությամբ, հետաքրքրասերները կարող են նկատել Գագիկ Արծրունի թագավորի կառուցած նավահանգստի պարիսպների մնացորդները: Վանա ծովում: Թուխմա Արծրունին մանրամասն և հիացական խոսքերով նկարագրելով այդ կառույցը, գրում է. «Զմասն ինչ ծովուն ի կղզին կոյս հատանելով՝ հրաշալիս իմն ներգործեաց, բազում նաւաց յօրինեալ խաղաղ և անքոյթ նաւահանգիստ, բարձրագոյն հրաշակերտեաց, քան զԱղեքսանդրին ի Մակեդոնն քաղաքի, և որպէս ինձ թուի՝ զանցոյց զարմանալեօք զՇամիրամեան փորուածոյ սենեկօքն և զամբարտակաւ գետոյն որ առ ստորոտով լերինն Վարագայ. զի նորայն գոնեա ի վերայ ցամաքի, իսկ սա ի մէջ խորոց ծովուս արուեստակեալ՝ հարստահարէ զամենայն միտս և զգործս իմաստնոցն առ ի քան զինքն եղելոց»[10]:

Այդ բոլոր կառուցումներին ականատես պատմիչը հետևյալ կերպ է նկարագրել Ոստանում Գագիկ Արծրունու կառուցել տված պալատը. «Ամրոցի գագաթը ծովահայաց է և հույժ վայելուչ: Երբ, հողմերից հուզված, ալեկոծվում է ծովը, նրա ծաղկաձև ալիքները գեղեցիկ, զմայլիչ են երևում, իսկ երբ որ քամուց ազատ է լինում, ամենքի աչքը գրավում է՝ դիտելու իր ծավալումը: Այդ պատճառով էլ արքան ձեռնարկեց նրա մեջ շինել պատկերակերպ ու պես-պես զարդերով հարդարված հրաշալի ապարանքներ, սենյակներ ու փողոցներ: Պարսպեց նաև ծովակողմը զորավոր վեմերով, նրանց հիմքերը դնելով անչափ խորության մեջ, իսկ պարսպ-

[10] Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 294:

ոչի վերևում, ծովի դիմաց, կառուցեց մի ճեմուղանիներ՝ ուժեղությամբ ու բազմապայծ հերկերով պատճենված, արեգակնանման հատակագծաձև՝ իր և իրեն արժանիների աչքի խաղտանքի և սրտի բերկրության համար: Իսկ դռները կառուցեց կամարաձև, օդարեր, զովացուցիչ, միաժամանակ նաև լուսաճաճանչ շողախաղաց, որոնց միջով արեգակը ծագելիս և մայր մտնելիս փայլատակելով ծովի վրա, իր շողերն էր գցում դահլիճի սիրտը, և պատկերաքանդակների ու բազմազան զարդարանքների գունախաղն ու երփնափոխությունը հիացնում էր տեսնողներին՝ պատմելու ամեն մի կարողությունից վեր»:

Ժամանակի պատմիչը մեզ ավանդել է նաև հանճարեղ ճարտարապետի անունը՝ Մանվել. «Ճարտարապետ ապուեստին էր Մանուէլն, ...այր լի իմաստութեամբ և զօրաւոր ի գործս իւր»: Ի դեպ, նշենք, որ Թոմինիայի՝ Արճեշի աշխարհաճոչակ եկեղեցին ըստ ավանդության կառուցել է Մանոլ անունով մի ճարտարապետ, որը, ըստ երևույթին, հեռավոր մի հուշ է հայազգի նույն Մանվել ճարտարապետի մասին: Ժամանակի պատմիչ Ստ. Ասողիկը վկայում է, որ սելջուկների արշավանքի հետևանքով Սենեքերիմ Արծրունի թագավորը 1021 թ. հոծ զանգվածով անցել է Վասիլ կայսեր հովանավորության տակ: Թ. Թորամանյանը հավանական է համարում, որ Վասիլ Բ կայսեր գաղթեցրած հայերի մեջ գտնվեին նաև Հայաստանի Արճեշ գավառի բնակիչներ: Մյուս կողմից՝ համաշխարհային ճարտարապետության մեծ տեսաբան Շուազին, նշելով ամբողջ Դանուբի հովտում հայ ճարտարապետության ազդեցության մասին, մասնավորապես կանգ է առնում ռումինական Արճեշի հայկական ոճի խառնուրդի հարցի վրա:

Հարկ է նշել նաև, որ, ինչպես վկայում է ժամանակի պատմիչ Ստ. Ասողիկը, 989 թ. Ս. Սոֆիայի գմբեթը վերանորոգողը հայազգի հանճար Տրդատ ճարտարապետն էր, նույն ինքը Անիի կաթողիկեի ճարտարապետը:

12—14-րդ դդ. նոր վերածնունդ է ապրում հայ ճարտարապետությունը. այս շրջանի ճարտարապետական կոթողներն առավելապես կանգուն են մնացել. դրանցից են Սանահինն ու Հաղպատը, Հառիճավանքը, Սաղմոսավանքը, Գոշավանքը, Հաղարծինը, Կեչառիսը, Մարմաշենը և այլն:

Հիմնականում այս շրջանում են ձեռագործվում համաշխարհային հոչակ ստացած հայոց խաչքարերը, որոնք միայն, մասնագետների գնահատությամբ, բավական՝ պիտի լինեին մի ամբողջ ժողովրդի ճարտարապետության համար:

13-րդ դարի գլուխ-գործոց է նաև Կիլիկիայի վիճակում ստեղծված կամ ինչպես ընդունված է ասել՝ Այրիվանքը: Աշխարհիկ կառույցներից հայտնի են Սանահինի կամուրջը, Սելիմի քարվանսարան ու հոչակավոր Ամբերդը:

Թորամանյանը, գնահատելով այս շրջանը, գրում է. «4-րդ վերածնությունից մեզ ժառանգություն մնում են ոչ միայն շինարարական կատարելություններ, այլև ոճերու այնպիսի նշանակալից ու հանդուգն ձևակերպումներ, որոնց համար մենք միշտ հպարտ պիտի լինենք» (անդ, էջ 54):

Հասկանալի է, որ ճարտարապետական կոթողներով այդքան հարուստ մի երկիր չի կարող վրիպել եվրոպացի մասնագետների ուշադրությունից: Մինչև 19-րդ դարը Հայաստան այցելած օտարերկրացիները՝ մասնագետ թե սիրող, ամենահակասական կարծիքներ են արտահայտել հայ ճարտարապետության մասին: Սակայն 19-րդ դարի կեսերին հայ ճարտարապետության մասին հատուկ հոդվածներ ու աշխատություններ են գրվում: Ֆրանսիացի ճարտարապետ Տերսիեն մի քանի ամիս Հայաստանում շրջելուց հետո ի լուր աշխարհի հայտարարեց, որ պայտաձև աղեղները (fer à cheval) հայ ճարտարապետության սեփականությունն են:

Էլ ավելի խորը վերլուծումներ մենք գտնում ենք համաշխարհային ճարտարապետության հմուտ մասնագետ Շուազիի մոտ. նրա կարծիքով հայ ճարտարապետությունը Փոքր Ասիայով, Սև ծովի ափերով՝ Դանուբի վրայով հասել է մինչև Ֆրանսիա՝ մեծապես օժանդակելով 11-րդ դարում վերածնվող ռոմանական ոճին:

Հենց վերջերս գերմանացի ճարտարապետ Պաուլ Ֆրանկը, ռոմանական ճարտարապետության վրա ազդեցությունների խնդիրը քննելիս խոսքը մասնավորեցնելով Պիզայի հուշարձանների խմբին (մկրտարանը, կաթողիկեն, աշտարակը և գերեզմանատունը), գրում է. «Եթե աչքի առաջ ունենանք 7—10-րդ դարերի հայկական ճարտարապետությունը, ապա պարզ կլինի, որ հետագա դարերում կառուցված եվրոպական այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Կանտուի Գալինոյի մկրտարանը՝ իր եռանկյունաձև խորշերով և երկրորդ հարկով և Բիելլայի մկրտարանը իր փոքր վերնահարկով, իրոք որ պետք է համարել հայկական արվեստից ոգեշնչված կամ ուղղակի սերված կառույցներ»[1]: Ճարտարապետությու-

[1] Տե՛ս «Սովետական արվեստ» հանդեսի 1967 թ. 2-րդ համարում Պաուլ Ֆրանկի հոդվածը:

նիլ քիչ բան նկատելով մարդն իսկ անմիջապես կարող է նկատել, որ Պիզայի մկրտարանը գրեթե Թորամանյանի վերականգնած ձևով մի Զվարթնոց է, կարծես, հայ ճարտարապետության մի կոթող:

Այնուհետև Շուազին, խոսելով հայ ճարտարապետության՝ Դանուբի հովտում թողած ազդեցության մասին, գրում է. «Դանուբի հովտի մեջ՝ Սերբիա, Ռումինիա, Մոլդավիա հայկական զարդաքանդակների հատկանիշն է, որ դրոշմված է մինչև այսօր.... Քուրթեա դ՝ Արճեշի, Թեկովիցի, Տրակոմիրայի եկեղեցիների վրա չկա մի զարդաքանդակ, որ Հայաստանին չպատկանի: Զարդաքանդակների ճարտարապետության տեսակետից Դանուբի հովիտը հայկական գաղթավայրի է նմանվում»:

Մեր մեծ վարպետ Մարտիրոս Սարյանն, անշուշտ, նման ստույգ փաստեր աչքի առաջ ունենալով է, որ ասում է. «Մարդու ստեղծարար հանճարի այս քարաստան երկրում փայլատակած ճառագայթներից տաքացել է նաև Եվրոպան»:

Հարկ է նշել նաև, որ հայազգի ճարտարապետները մեծ ավանդ են ներդրել իսլամական արվեստի մեջ: Մուսուլմանական արվեստի գիտակ Միժոնի կարծիքով Գոնիայի Ալայեդդինի հոչակավոր մզկիթը զարդարված է մեծ մասամբ հայկական զարդաքանդակներով, իսկ ներսը՝ հայկական ութանկյուն կաթուղիկեի գմբեթներով կառուցված[13]: Հեղինակի կարծիքով մզկիթի ճարտարապետը հավանաբար մի դավանափոխ հայ է եղել: Մյուս կողմից՝ Գոնիայի **Ինջե մինարալի մեդրեսե** կոչված շինության վրա (1251 թ.) արձանագրված է Գալուստ անունով մի դավանափոխ հայի անունը: Հայազգի ճարտարապետ Գալոյանը կառուցել է Սեբաստիայի մզկիթը, Թագավորը՝ Մալաթիայի մզկիթը ևն:

«Սելջուկյան շատ կառուցվածքների նույնիսկ հատակագծային ձևերում,—գրում է Ս. Մնացականյանը,—պարզ կերպով կարելի է տեսնել հայկական ճարտարապետության մեջ մշակված հորինվածքների ուղղակի ազդեցությունը, իսկ սելջուկյան դամբարանները ոչ այլ ինչ են, քան հայկական եկեղեցիների գմբեթների պայմ ընդօրինակումը»[14]:

Թուրք ճարտարապետության պատմության մեջ հայտնի է հայազգի Սինանը, որը Պոլսում կառուցել է մոտ 300 շենք, որոնցից 34-ը՝ պալատներ: Վերջապես, Պալյան գերդաստանը, որոնք մոտ 3 դար (17—20-րդ դարի սկիզբը) Օսմանյան կայսրության արքունի ճարտարապետներն էին: Նրա՛նք են զարդարել Պոլիսը իրենց ստեղծագործ երևակայությամբ, նրա՛նք կառուցեցին արքունական պալատները, որոնց մեջ և աշխարհահռչակ Տոլմապահչեն: Հայասեր այս գերդաստանի մի մեծ ներկայացուցչի՝ Սարգիս բեյ Պալյանի մասին դրվատանքով է խոսում նույնիսկ երգիծաբան Հ. Պարոնյանը: Հայտնի է, որ Սարգիս Պալյանը միաժամանակ «Արաքսի արտասուքը» հայտնի բանաստեղծության երաժշտության հեղինակն է: Բոսֆորի եվրոպական ափին՝ Գուրու-Շեշմե կղզյակի վրա այսօր էլ կանգուն է նրա կառուցած ձեռակերտը:

Իր հայրենիքում դարեր շարունակ ասպատակությունների ենթարկվող հայ ժողովուրդը աստիճանաբար գաղթում էր օտար երկրներ: Այսօր էլ ինչպես Բալկանյան երկրներում, այնպես էլ մեր մոլորակի շատ անկյուններում կարելի է ցույց տալ հայ հին ու նոր գաղթականությունների կառուցած ճարտարապետական կոթողներ:

Հայ ժողովրդի կառուցողական հանճարն իր ամենալայն դրսևորումները գտավ հատկապես Հայաստանի խորհրդայնացումից հետո, և Հայաստան աշխարհը ծածկվեց ճարտարապետական նորակառույց կոթողներով: Դրանցից առավելապես նշանավոր են մայրաքաղաքի Լենինի անվան հրապարակի ճարտարապետական կառույցները, Երևանի օպերային թատրոնի շենքը, Մատենադարանի շենքը, ինչպես նաև բազմաթիվ նորակառույցներ:

Շրջասելով մեր պատմահոր հայտնի խոսքերը, որ մեջ ենք բերել որպես բնաբան, ամենայն իրավամբ կարող ենք ասել, որ հայ ժողովուրդը, հակառակ իր պատմական դառն ճակատագրին, իր անցած բազմադարյան ուղու վրա թողել է այսօր էլ աշխարհին հիացմունք պատճառող մտավոր ու հոգեկան մշակույթի գոհարներ և ընդօրինակելու աստիճան ուսանելի ճարտարապետական հուշարձաններ:

---

[13] G. Migeon, Manuel d'art musulman, tome II. Տե՛ս Թ. Թորամանյանի «Հայկական ճարտարապետություն» աշխատությունը, էջ 180:

[14] Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 209:

ՀՈՎՀ. ՔՀՆ. ՄԱՐՈՒՔՅԱՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴՐՎԱԾՔԸ ԵՎ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Մանկավարժությունը միշտ էլ զբաղվել է երեխաների դաստիարակության գործով: Ցուրաքանչյուր դպրոց ունեցել է իր նպատակը և ըստ այնմ էլ հատուկ ծրագրով գիտելիքներ է հաղորդել աշակերտներին՝ տալով նրանց ընդհանուր և մասնագիտական կրթություն: Ինչպիսի ծրագրով կամ ինչպիսի թեքումով էլ. որ եղած լինեն դպրոցները, մանկավարժները ջանք չեն խնայել երեխային որպես մարդ դաստիարակելու, հոգեկան, մտավոր և մարմնական կարողությունների սահմաններում:

Հայ դպրոցի պատմության մեջ դաստիարակության հարցը ևս գրավել է հայ մանկավարժների ուշադրությունը՝ Մեսրոպ-Մաշտոցյան օրերից սկսած մինչև մեր օրերը:

Հոգևոր դպրոցների, ճեմարանների, ժառանգավորաց վարժարանների նպատակն է եղել եկեղեցու, հայ ժողովրդի համար պատրաստել զարգացած աշխարհիկ և հոգևոր մշակներ, որպեսզի նրանք իրենց թե՛ մտավոր և թե՛ հոգեկան բարեմասնություններով և կարողություններով օգտակար լինեն ժողովրդին:

Մեր այլ հոգևոր դպրոցների հետ այսօր էլ այդ դերը կատարում է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը, որը իր մեջ խտացնում է անցյալի մեր բոլոր դպրոցների նվաճումները և փորձերը:

Դաստիարակությունը լինում է ֆիզիկական, մտավոր և բարոյական:

Մեր նպատակը չէ այստեղ մեկ առ մեկ նշել վերոհիշյալ բաժինների կարևորությունը և դրանց դրվածքը հոգևոր ճեմարանում: Մենք կանգ կառնենք արտադասարանական մի քանի աշխատանքների վրա, որոնք նպաստում են ճեմարանականների մտավոր, բարոյական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի զարգացմանը և կնշենք նաև կրոնական առարկաների մասին:

Հոգևոր ճեմարանից ներս կատարված դաստիարակչական աշխատանքի մասին խոսելիս պետք է նկատի առնել, որ այստեղ ընդունվում են ո՛չ միայն տվյալ քաղաքում ապրող երեխաներ, այլ հեռավոր քաղաքներից ու գաղթաշխարհից եկած հայ պատանիներ, որոնց հոգիները և մտքերը հայաբույր այս կամարների տակ տարիների ընթացքում լույս, ջերմություն, հավատքի կայծ են ստանում, հետագայում լուսավորելու և ջերմացնելու համար իրենց շրջապատի մարդկանց հոգիներն ու սրտերը: Ամեն մի պատանի, որ գալիս է իր մատաղ տարիները անցկացնելու ճեմարանի հարկի տակ, օրըստօրէ աճում, զարգանում է՝ մի օր կոչվելու համար եկեղեցու և ժողովրդի ծառայության ծանր ու պատասխանատու աշխատանքներին: Սկզբնական օրերին հոգևոր

Հայոց լեզվի և գրականության քննություն (Բ. լսարան, 1967 հունիս)

ճեմարանի տեսչությունը մեծ դժվարությունների առաջ է գտնվում, երբ տարբեր վայրերից և երկրներից ընդունված սաները իրենց սովորություններով, գիտելիքներով և հոգեբանությամբ ու տարիքային առանձնահատկություններով տարբեր են և նույնիսկ միմյանց ժխտող: Տարիների աշխատանքը, սակայն, նրանց դարձնում է միասիրտ և միակրոն, տոգորված նույն պայծառ տեսիլքներով և աշխատանքային ոգևորվածությամբ:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի նպատակը հոգևորական պատրաստելն է: Ըստ այնմ էլ դպրոցական ծրագիրը կազմված է այնպես, որ սաները խորը գիտելիքներ ձեռք բերեն հայագիտական առարկաների մեջ, լինեն գիտակ մեր պատմությանը, գրականությանը, լեզվին և մշակույթին: Բացի հայագիտական առարկաներից, հոգևոր ճեմարանի ուսումնական ծրագրի մեջ մեծ տեղ է գրավում կրոնական առարկաների դասավանդությունը, որպեսզի սաները զինվեն նաև կրոնական կայուն գիտելիքներով և լուսավորվեն Ավետարանի լույսով:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում ուսման տևողությունը վեց տարի է: Ճեմարանը կազմված է դասարանական և լսարանական բաժիններից: Ըստ այնմ էլ հոգ. ճեմարանի տեսչությունը կրոնական առարկաների դասաբաշխումը կատարել է վեց տարիների վրա: Դասարանական երեք տարիների ընթացքում հոգ. ճեմարանի սաները յուրացնում են Հին կտակարանի, Նոր կտակարանի պատմության բովանդակությունը և նրանց ներաձությունը: Երեք տարվա ընթացքում նրանք ծանոթանում են Աստվածաշնչի, որպես Աստծու բացված գիտության աղբյուրի, բովանդակությանը, գրության թվականի, հեղինակի, լեզվի, բնագրի, նպատակի, արժեքի մասին: Բ և Գ դասարաններում հոգ. ճեմարանի սաները անցնում են քրիստոնեական և ծիսագիտություն, որտեղ նրանք ստանում են գիտելիքներ՝ հավատքի և նրա բովանդակության, եկեղեցու յոթ խորհուրդների և նրանց պատմության մասին: Ընդհանուր ծանոթություն և գիտելիքներ է տրվում հայ եկեղեցու ծեսերի կատարման մասին՝ ժամերգությունների խորհուրդների, տոների և զանազան հոգևոր բարեպաշտական արարողությունների մասին:

Դասարանական բաժնում դասավանդվում է նաև հայ եկեղեցու պատմություն և եկեղեցական երաժշտություն: Առաջին և երկրորդ դասարաններում ուսանողները անցնում են հայ եկեղեցու համառոտ պատմությունը, իսկ Գ դասարանում սկսվում է ամբողջական պատմության դասավանդումը:

Հոգ. ճեմարանի դասընթացքի լսարանային բաժնում ավելի շատ ժամեր են հատկացվում մեր սաներին կրոնական գիտելիքներով զինելու համար:

Այստեղ շարունակվող կրոնական առարկաները երկուսն են՝ եկեղեցական երաժշտություն, որը շարունակվում է մինչև Գ լսարան և հայ եկեղեցու պատմություն, որը շարունակվում է մինչև Բ լսարան՝ իր մեջ ընդգրկելով մինչև մեր օրերի հայ եկեղեցու պատմությունը: Իսկ կրոնական մյուս դասավանդվող առարկաները սկսվում են միայն լսարանական բաժնում: Այս առարկաները կարելի է բաժանել երկու կարևոր խմբերի. ա. ընդհանուր քրիստոնեական, կրոնական և եկեղեցական գիտելիքներ հաղորդող առարկաներ (Ավետարանի մեկնություն, Մեկնություն ս. Գրոց, ընդհանուր եկեղեցու պատմություն, Քարոզխոսություն): բ. Զուտ հայ եկեղեցու դավանանքի, պատմության, իրավունքի, տոմարի, մատենագրության շուրջ խմբը գիտելիքներ տվող առարկաներ (Աստվածաբանություն, Հայոց եկեղեցի, Հայ եկեղեցական իրավունք, Տոմարակալություն, Հայ եկեղեցու մատենագրություն):

Մեր սաները պարտավոր են հասկանալ ս. Գիրքը ըստ էության, և իրենց համար հստակ պետք է լինի ընդհանուր եկեղեցու անցած ուղին, մեր և քույր եկեղեցիների փոխհարաբերությունը: Նրանց հաղորդվող տեսական, մեկնողական, եկեղեցագիտական, մատենագրական, պատմական, կրոնական գիտելիքները նրանց դարձնում են հոգևոր ասպարեզում ընդգրկվելու համար պատրաստ անձնավորություններ: Մնում է նրանց՝ հետագայում ինքնաշխատությամբ և ընթերցանությամբ իրենց կրոնական գիտելիքները խորացնելու և ճոխացնելու աշխատանքը: Այստեղ ներկայացնում ենք հոգ. ճեմարանում ըստ դասարանների դասավանդվող կրոնական առարկաների պատկերը.

Ժամեր ըստ դասարանների

Առարկաներ	Ա. Դ.	Բ. Դ.	Գ. Դ.	Ա. Լսարան	Բ. Լ.	Գ. Բ.
Կրոն (Հին ուխտ)	3					
Կրոն (Նոր ուխտ)		3				
Ներածություն Հին կտակարանի		2				
Ներածություն Նոր կտակարանի			2			
Քրիստոնեական			2			
Ծիսագիտություն			2			
Հայ եկեղ. պատմություն	2	2	2	2	2	
Աստվածաբանություն				2	2	
Մեկնություն 4 Ավետարանայ				2	-	
Մեկնություն ս. Գրոց				-	2	2
Հայոց եկեղեցի				-	2	2
Հայ եկեղեցու իրավունք				-	-	2
Տոմարակալություն				-	-	2
Ընդ. եկեղեցու պատ.				2	2	-
Հայ եկեղ. մատենագրություն				2	2	2
Քարոզխոսություն				-	-	2
Եկեղեցական երաժշտություն	2	2	2	2	2	2
Ընդ. քանակը	7	9	10	12	14	14

Հոգ. ճեմարանի սաները իրենց մտավոր, բարոյական, գեղագիտական դաստիարակությունը ստանում են հիմնականում դասերի ընթացքում և ճեմարանի վանական մթնոլորտում: Յուրաքանչյուր դասախոս ո՛չ միայն գիտելիքներ է հաղորդում, այլև դաստիարակում է սաներին ապագա մեծ գործի համար:

Արտադասարանական ինչպիսի՞ աշխատանքներ են տարվում հոգ. ճեմարանի սաների առօրյան լցնելու և նրանց դաստիարակելու համար:

Դասերի ընթացքում, բացի կիրակի օրերը, ուսանողները առավոտները ժամերգությունից առաջ 15—20 րոպե զբաղվում են մարմնամարզությամբ՝ մարզանքի ուսուցչի գլխավորությամբ: Իսկ դասերից հետո, կեսօրին, երբ եղանակը նպաստավոր է սեղանի թենիսի, բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի խաղեր և մրցումներ են կազմակերպվում հոգևոր ճեմարանի կամ Էջմիածնի քաղաքային դաշտում: Այս բոլորը նպաստում են, որ մեր սաները լինեն նաև ֆիզիկապես առույգ, առողջ, առողջ միտք՝ առողջ մարմնի մեջ սկզբունքով:

Մեծ ուշադրություն է դարձվում արտադասարանական ընթերցանությանը: Յուրաքանչյուր առարկայի դասախոս տալիս է

ծրագրով նշված գրականությունը, որի ընթերցումը և մշակումը պարտադիր է և ստուգումը կատարվում է դասարանում: Բացի հանձնարարված գրականությունից ուսանողները հնարավորություն ունեն օգտվելու հոգևոր ճեմարանի գրադարանից, կարդալու օրաթերթերը, ամսագրեր հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով՝ հագուրդ տալով իրենց հետաքրքրություններին:

Հանախ նյութաբար Մայր Աթոռ եկած մանում քույր եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, որոնք ճեմարանի հարկի տակ հանդիպում են մեր սաներին՝ և ծանոթություններ տալիս քույր եկեղեցիների կյանքի շուրջ:

Հոգ. ճեմարանի տեսչությունը ուսանողների մտավոր զարգացման համար տանում է ծրագրված հատուկ աշխատանք: Երկու

Տեսուչ Տ. Ներսես Ծ. Վարդապետը, վերակացուներով և նոր ձեռնադրված սարկավագներով

Սփյուռքահայ մշակութային, եկեղեցական կյանքին ևս ծանոթանում են սաները արտադասարանական բանախոսություններով, հանդիպումներով: Ամեն մի հայ հոգևորական և մտավորական, որ այցի է գալիս ս. Էջմիածին, իր սրտի պարտքն է համարում լինել հոգ. ճեմարանի հարկի տակ և զեկուցումով, զրույցով հանդես գալ ուսանողների առաջ՝ նրանց ծանոթացնելով սփյուռքի հայության մշակութային և եկեղեցական կյանքին: Հաճախ տալիս են նույնիսկ գիտական, գրական, կրոնաշունչ բանախոսություններ, որոնք ընդլայնում են մեր սաների մտահորիզոնը:

շաբաթը մեկ անգամ կազմակերպվում են զեկուցումներ գրական, գիտական, մշակութային, կրոնական, առողջապահական նյութերի շուրջ: Բանախոսներ հրավիրվում են Երևանից: Բանախոսում են նաև հոգ. ճեմարանի դասախոսները: Իսկ կրոնաշունչ բովանդակությամբ բարոյագիտական նյութերի շուրջ զրույցներ են անցկացնում հոգ. ճեմարանի տեսուչը, վերակացուները, հատկապես Վեհափառ Հայրապետը:

Դասախոսություններից և զրույցներից բացի հոգևոր ճեմարանի տեսչությունը կազմակերպում է ուսանողների շարադրությունների, քարոզների ընթերցում և քննարկում:

Կազմակերպվում են նաև արտասանական երեկոներ և մրցույթներ, որտեղ ուսանողները իրենց ունակություններն են մշակում և զարգացնում:

Գեղագիտական հաշակը զարգացնելու համար տեսչությունը ուսանողներին տանում է նկարիչների ցուցահանդեսներին, Մատենադարան, պատմության ու գրականության թանգարանները: Ամեն շաբաթ գընում են կինո, թատրոն, օպերա և երաժշտական համերգների:

Այս ուղղությամբ կատարված աշխատանքներից մեկն է նաև երկարօրյա կամ օրական պտույտները Հայաստանի այլևայլ վայրերը, այցելություններ տաճարներին, վանքերին, հին հուշարձաններին, որոնք մեր ժողովրդի հավատքի ու տեսիլքի մի-մի վկաներն են: Հայաստան աշխարհի բաց թանգարանում հաճախ զբոսնում են մեր սաները: Այդ հիշարժան վայրերում ուսուցչի բացատրությամբ մի անգամ ևս վեր են հառնում անցյալի այն ուրախ և տխուր օրերի շարանը, որի ընթացքում մեր պապերը պայքարում էին հանուն հայրենիքի, հավատքի: Այդ մղձավանջային պայմաններում դարձյալ երկնում էր մեր ժողովուրդը՝ գրում, ծաղկում էր գրիչը, կառուցում ու քանդակում էր շինարարը՝ ավանդ թողնելով մեզ միշտ կառուցելու, ստեղծագործելու ոգին:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը այն դարբնոցն է եղել, որտեղ բազում դարեր մեր ժողովրդի մատաղ սերնդի ներկայացուցիչները Ավետարանի սնունդ են ստացել, նրանց հոգին լցվել է ժողովրդին սպասարկելու սուրբ տենչերով: Ս. Էջմիածնի խնկաբույր այս կամարների տակ, հայրենի սուրբ հողին արմատավորված ամեն մի սան հետագայում դառնալու է մի ծիլ ու ծաղիկ հայ եկեղեցու անդաստանում:

Ծաղկամշակություն

Հայրենի շնչով, Ամենայն Հայոց Հայրապետի հովանու տակ մեր սաները աճում են մի օր ծառայելու համար Աստուծո, հայրենիքի նվիրական ս. սեղանների առաջ:



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 17-ին՝ շաբաթ օրը, ժամը 12-ին, հոգևոր ճեմարանի հանդիսության սրահում տեղի ունեցավ 1966—1967 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը:

Հոգևոր կրթական այս նվիրական հաստատության ներքո հավաքվել էին մի անգամ ևս ուսանող ու դասախոս՝ իրենց պարտականությունը կատարած մարդկանց արդար հպարտությամբ և խաղաղ խղճով, փակելու համար ուսումնական հոգևոր ու բարոյական արդյունքներով, բարի աշխատանքներով անցկացրած մի տարի:

Որոշյալ պահին ժամանում է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի եպիսկոպոսներով, Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներով, հյուր մտավորականներով և պաշտոնական այլ անձնավորություններով:

Վեհափառ Հայրապետի մուտքը սրահ ողջունվում է հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողների և բոլոր ներկաների ծափահարություններով:

Հանդիսությունը սկսվում է Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով և հոգևոր ճեմարանի քայլերգով:

Այնուհետև հանդեսի բացումը կատարում է հոգևոր ճեմարանի վերակացու արժ. տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ամավերջի հանդիսությունը բաղկանում էր երկու մասից. գեղարվեստական բաժին և տեսչական տեղեկագրի ընթերցում ու մրցանակաբաշխություն:

Գեղարվեստական բաժնում ելույթ ունեցան ճեմարանի ուսանողները՝ իրենց երգերով, արտասանություններով, նվագով, այդ թվում՝ ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Խորեն Մելյանաջյանի ղեկավարությամբ, կատարեց Կոմիտասի «Քաղհան»-ը, «Գութանի երգ»-ը, Գ դասարանի ուսանող Ղազարոս Կյուրեղյանը արտասանեց Խրիմյան Հայրիկի «Ցանք»-ը, Ա լսարանի ուսանող Հովհ. Գրվրգյանը՝ Զավեն Սյուրմելյանի «Ասացված ծառ տնկելու առթիվ», Բ դասարանի ուսանող Խաչիկ Խաչատրյանը՝ Մարո Մարգարյանի «Երգ Երևանին», և Գրիգոր սրկ. Բունիաթյանը՝ Պարույր Սևակի «Այր մի Մաշտոց անուն», Ա լսարանի ուսանող Արարատ Գալստյանը դաշնամուրի վրա նվագեց Ա. Տիգրանյանի «Տուն արի»-ն, և Գ դասարանի ուսանող Վարդան Տյուլեկյանը՝ «Մալքապար» (վալս):

Հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության Բ լսարանից Սասուն սրկ. Վարդանյանը ընթերցեց, երախտագիտության զգացմունքներով գրված, հետևյալ շնորհակալական ուղերձը՝ Վեհափառ Հայրապետին ուղղյալ.

«Լռել են զանգերը, էլ չեն հնչում, էլ չեն կանչում մեզ դասի:

Ցանքսն ու հունձքը ավարտված է:

Եվ մե՛նք՝ ուսանողներս, վաստակած, և դո՛ւք՝ դասախոսներդ, վատնած, եկել ենք հիմա մեր չկիսվող բերքը կիսելու:

Հոգնություն կա մեր և Ձեր դեմքերին, շարժուձևերի մեջ, ժպիտների ծալքերում անգամ: Մեր ճստարանները էլ են հոգնել, գրքերը՝ նույնպես: Լսարաններում հոգնու-

Հոգևոր Ժեմարանի սեղանատունը

թյան փոշի է իջել: Սակայն դա մոռացումի, վատնումի հոգնությունը չէ, այլ տքնումի, հատնումի:

Այդպես իրիկնամուտին հոգնած հնձվորը կմտնի՝ իր հնձած արտը դիտելով: Այդպես դադրած ու հուսալից սերմնացանը կօրհնի իր հոգնությունը՝ հոտթի հասկերով ոսկեշող ծփանքով արբած: Այդպես, հենց նոր իր բուլնը հյուսած հայոց կանայ բարդուն հանգչող կոունկը, հովի շոյանքից խենթացած, հանկարծ երկինք կսլանա՝ սադափե փետուրները իբրև սաղմոսներ, օրհներգություններ շաղ տալով երկունքի սրբազան ցավերով բռնված դաշտերին, և ապա ընկեր կփնտրի՝ կյանքի անհատնում բերկրանքը կիսելու համար:

Դուք՝ հնձվոր ու սերմնացան: Մենք՝ արտ ու բարդի:

Դուք անխոնջ, բարի մշակներ տքնումի, վատնումի սովոր, ու մենք լոկ շիթը Ձեր լուսե հավատի: Մենք փոքրիկ մի այգի, ու Դո՛ւք ամեն շիվի ու շյուղի, բողբոջի ու ծաղկի համար դողացող այգեպան:

Գուցե արտում կոզյակնե՞ր են մնացել ու լեցուն հասկերի կողքին մրիկնե՞ր էլ կան: Եվ կամ գուցե այգում դալարուն շիվերի կողքին կան նաև չորացած ճյուղե՞ր:

Հնարավոր է:

Սակայն սիրով ապառաժն անգամ վարդաստան կդառնա, համբերությամբ և աշխատանքով անասյատը՝ այգեստան:

Հույսնությունն չէ դա, ոչ էլ նորությունն: Ամենքս գիտենք և հավատում ենք:

Բայց ամենից ավելի հավատում է այգեպանը, որ յուրաքանչյուր գալիք տարի այգուն, ծառ ու ծաղկին առատություն է բերում, լիություն բաշխում:

Մենք անմշակ հող ենք. եթե գարի ցանեք՝ գարի կբուսնի, ցորեն ցանեք՝ ցորեն: Սակայն հողն էլ պետք է հարմար լինի: Կավահողի մեջ գարի ցանվի թե ցորեն՝ մեկ է, ոչինչ չի բուսնի: Այդ ճշմարտությունն է:

Սերմնացանը Դուք եք, Վեհափառ Տե՛ր:

Եթե հունդը լիաբուռն շատ տաք (ի՞նչ փույթ, թե ոմանք էլ ապառաժների վրա կընկնեն)՝ հունձը վստահաբար առատ կլինի:

Արտի, այգու համար նույնպես խնդություն է, երբ այգեպանը գոհ է մնում և ոչ դատարկաձեռն:

Վեհափառ տե՛ր,

Մենք կաշխատենք, չենք խնայի ոչինչ, որ, Դո՛ւք և սիրելի դասախոսներ, գոհ մնաք: Թերևս միակ հնարավորը, որով մենք հատուցած կլինենք մեր երբեք չհատուցվելիք պարտքը: Եվ մեզանից յուրաքանչյուրը պետք է որ երջանիկ զգա իրեն և հպարտ, որ իրեն տվածի փոխարեն հատուցվի, եթե ոչ տրվածի, գոնե կարողացածի չափով...

Վեհափառ Հա՛յր

Ամավերջի այս հուզիչ պահին օրհնեցեք մեզ՝ Ձեր հոգևոր զավակներին, և ընդունեցեք մեր որդիական ամենախորին երախտագիտությունը այն բոլորի համար, ինչ տվեցիք մեզ այս տարի էլ որպես հավատոր, ոգի և պատգամ:

Թույլ տվեք, հանուն ուսանողության մատչեմ ի հանբույր Ձեր ս. Աջին»:

Հոգևոր Ճեմարանի նստարանը

Ա լսարանի ուսանող Հովհ. Գրվրգյանը մեներգեց Վարդավառի «Այսօր ցնծա» տաղը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը հանդես եկավ 1966—1967 ուսումնական տարեշրջանի ընդհանուր պատկերը ներկայացնող բովանդակալից և խնամյալ զեկուցագրով, որը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 8—19):

Զեկուցագրի ավարտին տեսուչ-վարդապետը մրցանակների ներկայացրեց անունները հետևյալ աշակերտների, որոնք իրենց ուսումնական առաջադիմությամբ հանդիսացել էին առաջավորներ՝ գրավելով առաջին և երկրորդ տեղերը իրենց դասարաններում.

Բ լսարան

Առաջին տեղ—Վրեժ սրկ. Ներսիսյան
Երկրորդ տեղ—Հովսեփ սրկ. Հակոբյան

Ա լսարան

Առաջին տեղ—Հովհաննես Գրվրգյան
Երկրորդ տեղ—Արարատ Գալստյան

Գ դասարան

Առաջին տեղ—Ղազարոս Կյուրեղյան
Երկրորդ տեղ—Վարդան Տյովլեկյան

Բ դասարան

Առաջին տեղ—Սամվել Եղիազարյան
Երկրորդ տեղ—Տիգրան Սահակյան

Ա դասարան

Առաջին տեղ—Հակոբ Խաչատրյան
Երկրորդ տեղ—Հակոբ Բյուրեղյան

Հոգևոր ճեմարանում ուսման մեջ առաջավորները նվեր ստացան Վեհափառ Հայրապետից՝ աջահամբույրով, ներկաների ջերմ ծափերի և շնորհավորանքների ներքո:

Արտադասարանական աշխատանքների համար մրցանակների արժանացան՝ Ա լսարանից Հովհ. Գրվրգյանը և Արարատ Գալստյանը՝ ծաղկամշակության մեջ: Արարատ Գալստյանը արժանացավ մի այլ մրցանակի ևս՝ եկեղեցասիրության մեջ:

Մրցանակաբաշխության ավարտին Վեհափառ Հայրապետը օրհնության հայրական խոսք ասաց հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսական կազմին՝ ճեմարանում կատարած բարեխիղճ և շինարար հոգևոր, դաստիարակչական, կրթական աշխատանքների համար, և ուսանողության՝ իրենց ջանասիրության, կարգապահության և եկեղեցասիրության համար:

Վեհափառ Հայրապետի արտից բխած պատգամն ու խրատականը ջերմորեն ընդունվեցին հոգևոր ճեմարանի տեսչի, դասախոսական կազմի և ուսանողության կողմից՝ որպես հայրապետական հրահանգ և պատվեր՝ հառաջիկա ուսումնական տարում չթուլացող եռանդով, նվիրումով և արդյունավորությամբ շարունակելու նվիրական այն գործը, որ հոգևոր ճեմարանինն է:

Հոգևոր ճեմարանի ամավերջի հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված տերունական աղոթքով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժամը 3-ին ճեմարանի սեղանատանը ուսանող և դասախոս հավաքվում են նույն սեղանի շուրջ, ուսումնական տարին փակելու համար նոր առաջադրանքներով, նոր հոգևորով և նոր ներշնչանքով, ամառային արձակուրդներից հետո:

Հոգևոր ճեմարանի խոհանոցը



ԲԱՐՍԵՂ ԹԱՔՃԻԱՆ
(Վերակացու Հոգ. Ճեմարանի)

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՀԱՂԲԱՏ ԵՎ ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆՔԵՐԸ

Հունիս 20-ն է՝ օրը երեքշաբթի:

Վերջացել է հոգևոր ճեմարանի ուսումնական տարին: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ ուխտագնացություն ենք կատարելու դեպի Հաղբատ և Սանահին:

Սովորական ժամից շուտ զարթնել ենք բոլորս ու պատրաստ՝ մեկնելու դեպի Լենինական, ուր հասնում ենք ժամը 9.30-ին և մտնում ս. Աստվածածին եկեղեցին:

Ճանապարհը շատ գեղեցիկ է, օդը հագեցած գարնանային փարթամ կանաչի և ծաղիկների թարմ բուրմունքով: Մեքենաները սուրում են ասֆալտապատ ճանապարհներով. բարձր է բոլորիս տրամադրությունը. մեքենայի մեջ թնդում են հոգևոր և աշխարհիկ երգերն ու մեղեդիները:

Անձրևային է եղանակը, երբ ուղղություն ենք վերցնում դեպի Կիրովական, երբեմնի Գուգարաց աշխարհի Տաշիրք գավառին մեջ, դալարագեղ բլուրների լանջին հրաշալի դիրքով, և որի վրա իշխում է Մայմեխ լեռնագագաթը:

Անձրևային է եղանակը տակավին, երբ Կիրովականից մեկնում ենք՝ կեսօրէ վերջը՝ ժամը 3.30-ին. ճանապարհը այժմ անցնում է ճոխ բուսականությամբ և թանձրախիտ անտառներով ծածկված լեռնաշխարհով. առաջանում ենք հուլտի մեջ հոսող ջուրի եզերքից կամ բարձրանում ենք դեպի վեր խոյացող պայծանանման լեռների լանջերից. մեր մեկնելուց կրկու ժամ հետո անցնում ենք ավելի քան 2000 մետր բարձրությամբ Պուշկինյան լեռնանցքը, հետո՝ դեպի Ալավերդի, ոլորապտույտ ճանապարհով իջնում ենք Զորագետի հովիտը:

Երեկոյան ժամը 6-ին հասնում ենք Ալավերդի, որտեղ պետք է գիշերենք:

Մտաբերում եմ, մանավանդ, Կիրովականից սկսած իմ ճանապարհորդությունը. ամբողջ ճամփու ընթացքին մեր աչքին պարզվել էր հայոց աշխարհի հեքիաթային, վայրի գեղեցկությունը, իր անդնդախոր մութ ձորերով և կիրճերով, և ամպերի մեջ մխրճված իր լեռնագագաթներով. այս է ուրեմն երկիրդրախտավայրը, իր կուսական գեղեցկությամբ, այն երկիրը, ուր ապրել են մեր պապերը և մեր նախահայրերը. այն երկիրը, որ թվում է, թե անծանոթ չէ ինձ, ու թվում է մանավանդ, թե միշտ այս երկրին մեջ ապրել եմ ես, քանի որ չեմ կարող հավատալ, թե հայրենիք վերադարձած եմ, կամ հրաշքով՝ մոգական գավազանի մեկ հպումով փոխադրված խորհրդավոր մի ուրիշ աշխարհ, ուրիշ երկրից. չեմ կարող հավատալ, թե գոյություն են ունեցել այն տխուր օրերը, որ դարեր ամբողջ ճնշել են ըստ մեր պատմության գրքերի հայրենիքի և ժողովուրդի վրա. վատ օրերի հիշողությունը մղձավանջային մի երազի տպավորություններն են անպայման:

Հունիսի 21-ը՝ չորեքշաբթի:

Առավոտյան ժամը 9.30-ին մեքենաներով մեկնում ենք Ալավերդուց դեպի Սանահին, անցնելով երկաթուղու կայարանի մոտ գտնվող համբավավոր կամուրջից, կառուցված ԺԳ դարում, Զաքարե և Իվանե սպասալարների քույր Նանա թագուհուց, ի հի-

շատակ իր ամուսնում՝ Լոռի-Տաշիրքի Կյուրիկյան Աբաս Բ թագավորի: Բարձրանում ենք սայրերի լանջերով և կես ժամ հետո արդեն հասնում ենք բարձունքի վրա ընդարձակ մի ծառատեղի մեջ գտնվող գյուղը՝ Սանահին, որտեղ գտնվում է պատմական վանքը:

Ուխտավորի երկյուղածությամբ մտնում ենք դարբասից ներս ու հափշտակությամբ և խռովքի տարօրինակ զգացումով մի րոպե կանգ առնում այս հազարամյա սրբավայրին առջև. չէ՞ որ գտնվում ենք հավատի ու գիտության օջախ այն վանքին մեջ, որ հանդիպակաց բարձունքի վրա գտնվող մյուս վանքի նման հիմնադրվել է Ժ դարում, Ռոմանոս Ա Լեկապենոս (919—944) հայազգի կայսեր ժամանակ, քաղկեդոնական վեճերի պատճառով բյուզանդական սահմաններից հալածական հայ հոգևորականների կողմից:

Այժմ գտնվում ենք վանքի ս. Աստվածածին հինավուրց մայր տաճարի կամարների տակ, ուր տեղի է ունենում սրբազան երգեցողություն՝ մասնակցությամբ բոլորիս. թվում է, թե լսում ենք նորից տաճարի զանգակների երբեմնի ղողանջը, որ հավատացյալներին հրավիրում է աղոթքի և խոկմունքի:

Կրոնական սրտառուչ այս արարողությունից հետո, առանձին խմբերով, այցելում ենք վանական մյուս կառույցները՝ դուրս գալով տաճարից, որ կառուցվել է 935—945 թվականներին:

Վանքը ներկայացնում է կառույցների հրաշալի մի ամբողջություն, հակառակ յուրաքանչյուրի ճարտարապետական առանձնահատկություններին:

Անմիջապես նկատում եմ, եկեղեցուց դուրս, արևելյան պատին ներքև, եռանկյունաձև միակտուր երկու գերեզմանաքարեր, որոնց արձանագրություններից և պատի վրա հուշարձանների պաշտպանության ցուցանակից իմանում եմ, որ նրանցից մին գերեզմանն է Բագրատունի Աշոտ Գ Ողորմածի որդի, Գուգարքի առաջին թագավոր Գուրգենի, իսկ մյուսը՝ Ողորմածի թոռ՝ Դավիթ Անհողինի, որ պատմության մեջ ծանոթ է նաև Աղվանից թագավոր անունով:

Ըստ պատմական տեղեկությունների, ժամանակին այս զույգ գերեզմանները գտնվել են մատուռի ձևով մի շենքի մեջ, որ 1836 թվականին քանդվել է Սանահինի վանահայր Հարությունեպիսկոպոսի կողմից, որպեսզի շենքի քարերով վերանորոգվի վանքի այլ հուշարձանները:

Եկեղեցու արևելյան կողմը գտնվում է նույնպես ս. Գրիգորի մատուռը, որ միաբ, բայց շատ ավելի մի հին կառույց է, հավանաբար Ը—Թ դարերից. իսկ արևմտյան կողմը՝ նախագավիթը, կամարակապ ընդարձակ մի սրահ, որ կառուցվել է 1211 թվականին, Զաքարե սպասալարի հազարապետ, իշխան Վաչե Վաչուտյանի կողմից. նախագավթի ձեղունը հանգչում է վեց սյուների վրա, իսկ հատակը ծածկվել է իշխանների և հոգևորականների տապանաքարերով. այսպես, դռան մոտ, մի մեծ պատվանդանի վրա, գտնվում է Գրիգոր իշխանի մահարձանը, կառուցված իր որդու՝ Դավիթ իշխանաց-իշխանի կողմից, իսկ արևելյան պատին ներքև՝ Սանահին գյուղի տեր Վասակ իշխանի և Մղարթ գյուղի տեր Սարգիս իշխանի քանդակազարդ խաչքարերը, և վերջապես արևմտյան որմին մեջ գեղաքանդակ երկու մեծ խաչքարեր՝ Քրդի Խորիշահի և Սմբատի որդի Համազասպյան Սարգսի:

Այնուհետև այցելում ենք վանքի ամենեն փառավոր հրաշալիքին՝ ներքուստ խաչաձև, չորս անկյուններին կրկնահարկ խորաններով, անսյուն և գմբեթավոր ս. Ամենափրկիչ եկեղեցուն՝ կառուցված 961—972 թվականներին, Աշոտ Գ-ի կին Խոսրովանուշ թագուհու կողմից, արձանագրությունն իր երկու որդիներին՝ Սմբատի և Գուրգենի, որոնց բարձրաքանդակ պատկերները կարելի է տեսնել եկեղեցու արևելյան ճակատին վրա, մի քիչ վերև, իրենց ձեռքին եկեղեցու մանրանկար կաղապարը. եկեղեցին նորոգված է 1752 թվականին, առաջնորդ Առաքել եպիսկոպոսի և Սողոմոն Արղությանի կողմից, վանքի հարավ-արևմուտքին, սպասալարների գերեզմանատան արևելյան կողմում գտնվող ս. Սարգիս եկեղեցու քարերով:

Ս. Ամենափրկիչ եկեղեցու առաջ գտնվում է ժամատունը: Չանգվածային չորս սյուների մի կամարագոտու վրա հաստատված գմբեթավոր երդիկով ընդարձակ մի սրահ, որ եկեղեցու հետ հաղորդակցվում է, իր արևելյան որմին մեջ բացված կամարակապ դռոռով, և որի շինության համար գործածվել են մեծդի քարեր. կառուցվել է 1185 թվականին վանահայր Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից, հրամանով Կյուրիկե թագավորի դստերին. այստեղ ևս տեսնում ենք մեծանուն եպիսկոպոսների և վանքի վանահայրերի տապանաքարերը:

Ս. Գրիգոր մատուռի և նախագավթի հյուսիսային կողմը, ս. Աստվածածին և ս. Ամենափրկիչ եկեղեցիների միջև գտնվում են վանքի ամենահետաքրքիր և ամենասիրուն կառույցներից մեկը՝ դպրանոցը (կամ Գրատուն-Մատենադարանը)՝ կառուցված 1063 թվականին, Դավիթ Անհողինի դուստր Հրանուշ թագուհու կողմից, և Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը:

Դպրանոցը քառակուսի հատակագծով և որմերին բազմաթիվ խորշերով, առանց պատուհանի կամարակապ մի շենք է, որի մուտքի կամարին և ճակատի մեծ քարին վրա արձանագրվել են նվիրատուների անունները. իսկ ճեմարանը՝ կամարակապ փոքր մի շինություն, որի առաստաղը հաստատվել է 16 որմնասյուների վրա նետված 8 կամարների վրա. հատակը ծածկվել է հոգևորականների տապանաքարերով, մեծ մասամբ առանց արձանագրության. միայն մեկի վրա կարդում եմ «Վարդան Սարկավագ»:

Մեր այցելությունը տևում է շուրջ երկու ժամ: Այնուհետև դուրս ենք գալիս եկեղեցական կառույցներից ու դիտում շուրջս. հոյակապ է վանքի համայնապատկերը. աչքերով փնտրում եմ Սևորդյաց «անմատչելի խոխոմ»-ների ձորը, որտեղ, այդ խոխոմներից մեկին մեջ, հավանաբար, երեք վարդապետներ և 12 սարկավագներ Լենկթիմուրի արշավանքների ժամանակ պահել են վանքի սրբությունները և վերադարձին նահատակվել՝ առանց հայտնելու սրբազան անոթների թաքստոցը. Սևորդյաց այս ձորը հավանաբար մին է այն երեք ձորերից, որոնք Սանահինը բաժանում են 8 կիլոմետր հեռու, բարձունքի վրա թառած Հաղբատի վանքից, տարբեր ուղղությամբ, ուրիշ բարձունքի վրա տեսնում եմ ս. Կարապետի եկեղեցին, իսկ ավելի բարձր դիրքի վրա՝ ս. Սարգիս մենաստանը:

Շուրջ տասը ժամ անցկացրինք Սանահինի հովանու տակ. այժմ ժամանակն է վերադառնալու. հուզումով հեռանում ենք վանքից, որը՝ մի մասնիկ մեր անցյալից, հետզհետե անհետանում է մեր աչքից:

Գիշերում ենք Ալավերդիում:

Հուլիսի 22՝ հինգշաբթի:

Առավոտյան ժամը 10-ին ուղղվում ենք դեպի Հաղբատ, որը գտնվում է Սանահինի հանդիպակաց լեռան գագաթին, կանաչապատ մի հարթության վրա:

Հաղբատի ճանապարհը, սակայն, ասֆալտապատ որոշ տարածությունից հետո ավելի դժվարագնաց է և նեղ դարձվածքներով՝ իր ոլորապտույտ ընթացքին մեջ, ավելի թեք. նախընտրում եմ մագլցել սարերն ի վեր, ոտքով, ավելի խորը և անմիջականորեն ըմբռնելու համար հայկական լեռնաշխարհի գեղեցիկ բնությունը:

Ու բարձրանում եմ դեպի վեր. հեռուն՝ Դեբեդի ձորը արդեն իսկ անհետացած է անուանապատ սարալանջերի միջև, իսկ գլխիս ուղղակի վերև, իբրև ամրակուռ անհաղթահարելի ալպիսյաց, արձանացած են Լոռվի անուանքերով ծածկված լեռները՝ խրված երկնքի կապույտին մեջ. ջանում եմ գուշակել իմ ճամփան, բայց խուսափում եմ առաջանալ արահետներով, որոնք ապահովաբար ավելի շուտ պետք են հասցնել ինձ դեպի բարձրադիր գյուղը և վանքը, որ չի երևվում. հետևաբար նախընտրում եմ հետևել մեքենաների սովորական, բայց ավելի երկար ճամփուն, որ հանախ եզերում է խոր անդունդը. հաղթահարում եմ իմ հոգնությունը և անցնում 8 կիլոմետր ճանապարհ, վայելելով Գուգարաց աշխարհի ծաղկավետ և կանաչապատ լեռների և անտառների մեջ կորսված ձորերի առասպելական խրհրդավոր գեղեցկությունը. վայրի բնության ծոցում, ճամփու չուրաքանչյուր դարձվածքին բազմերանգ մի նոր տեսարան է, որ բացվում է իմ աչքին, և հասկանալի է դառնում Մարտիրոս Սարյանի այնքան պարզ, բայց և այնքան հարազատ նկարչական արվեստը:

Ի վերջո, մեկ ժամ և 15 րոպե հետո հասնում եմ սիրուն և գեղատեսիլ գյուղի ճանապարհին և դիտում շրջապատը. նոր միայն տեսնում եմ հանդիպակաց բարձունքի վրա Սանահինը, իր կարմիր երդիկե տներով և վանքի վերասլաց գմբեթով, որ իմ աչքին այժմ երևում է ավելի վեհապանծ և ավելի առինքնող, կապույտի և կանաչի խորհրդավոր ֆոնի վրա. ութ կիլոմետր միայն հեռու է Հաղբատը Սանահինից, բաժանված երեք ձորերով. նայվածքիս առաջ տարբեր բարձունքների վրա կանգո՛ւն են Հաղբատն ու Սանահինը՝ կոթողային վկաները հայերժական հայ մշակույթին:

Այժմ Հաղբատումն ենք: Հիացմունքով և երկյուղածությամբ մտնում եմ հավատքի և մշակույթի, գիտության և ստեղծագործ հանճարի կոթող այս դարավոր մենաստանի դարբասից. եկեղեցական կառույցների նույն ամբողջությունը, խորհրդավոր նոր միջավայրով, խոսում է մեր զգացումներին, մանավանդ, որ ճիշտ այս րոպեին հանկարծ մթագնում է երկիրը, երկնքի ան-սև ամպերով. շուտով մշուշը պատում է հանդիպակաց բարձունքները, ու սկսում են փայլատակումները, ահեղադղդրդ որոտումներով. կրակի մի շրջանակի մեջ է կարծես երկինքը. սկսում է նաև հեղեղային անձրևը, որը շուտով վերածվում է կարկուտի:

Շտապում եմ ապաստան գտնել վանքի բակին մեջ, մյուս կառույցներից բոլորովին անջատ կանգնած զանգակատան մեջ, քառակուսի գեղակերտ վերասլաց մի շինություն է, որը կառուցվել է 1245 թվականին, Համազասպ Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից, և որի առաջ, բակին մեջ, գտնվում են մեծ վարդապետներ Դավիթ Քոբայրեցու

(ԺԳ դար), Հովհաննես սարկավագ Իմաստասերի (1129), Մխիթար Գոշի աշակերտ Թորոս վարդապետի (ԺԳ դար), Հովհաննես Պլուզ Ծործորեցի վարդապետի (ԺԴ դար) և ուրիշների դամբարանները։

Շարունակվող անձրևը արգելք չի լինում Հաղբատում ևս կատարելու մեր ուխտը պատշաճ երգերով և աղոթքով, որից հետո առանձին կամ անջատ խմբերով այցելում ենք վանքի մյուս կառույցները. մտնում ենք ս. Նշան եկեղեցին, որ ըստ պատմաբանների վկայության հիմնադրվել է 967 թվականին, Խոսրովանուշ թագուհու կողմից, նույնպես վասն փրկության և արևշատության իր երկու որդիներին՝ Սմբատի և Գուրգենի, որոնց բարձրաքանդակ պատկերը գտնվում է տաճարի արևելյան պատին վրա. տաճարի շինությունը ավարտել են 991 թվականին Սիմեոն Հայր և Տիրանուն երեց, համաձայն հյուսիսային պատի վրա, լուսամուտից վեր արձանագրության։

Տաճարը, արտաքուստ քառանկյուն, իսկ ներքուստ խաչաձև, ունի երկու դուռ հյուսիսային և արևմտյան կողմերին. հյուսիսային դռան առաջ կանգնած է Ամենափրկիչ խաչարձանը, հայ քանդակագործական արվեստի անգնահատելի կոթող, շինված Հովհաննես Արքի կողմից, 1278 թվականին, Ամիր սպասալարների տոհմից «Պարոն Սաթուն»-ի իշխանության օրով։

Մտնում եմ ս. Նշանի արևմտյան կողմը, եկեղեցու և դպրատան միջև գտնվող մեծ սրահը, գավիթը կամ ժամատունը. հոյակապ մի կառույց՝ շինված 1161 թվականին, Տաշրաց կամ Զորագետի թագավոր Կյուրիկեի դուստր Մարիամի և Ռուսուգանի կողմից՝ քառասուն տարիներ ետք, 1201 թվականին, սկզբնական շինությունը քանդել է տվել վանահայր Հովհաննես եպիսկոպոս Խաչենցին, կառուցելու համար ժամատունը իր ներկա ձևին մեջ. այժմ, 10 կիսասյուներ խաչաձևող կամարների վրա կանգնած իր գմբեթով, ժամատունը ներկայացնում է ընդարձակ մի սրահ, որի հատակը ծածկվել է տապանաքարերով։

Հյուսիսային կողմի տապանաքարերի վրա կարդում եմ անունները, ի միջի այլոց, Կյուրիկյան Աբաս թագավորին՝ իշխողին Մաճառերդի, Կյուրիկե թագավորին և կնոջ Թամարի, և աղջիկներին՝ Մարիամի, Ռուսուգանի և Բավրինայի, կենտրոնի տապանաքարերի վրա Քուրդ և Գրիգոր ամիրաների, Աթաբեկ Սաթունիի, Վասակի, Համզայի, Թայիկի, Կավթելի, Սատունի և Սևադայի, իսկ հարավային տապանաքարերի վրա՝ կրկին Աբաս և Կյուրիկե թագավորների։

Հետաքրքրական կառույցներ են նաև ժամատան հյուսիս-արևմտյան կողմը, կոլքկողքի, մեկ շարքի վրա, խորանարդաձև երեք փոքր դամբարաններ, որոնք իրենց վրա կրում են քանդակազարդ գեղեցիկ խաչքարեր. դամբարանների յուրաքանչյուրին մեջ գտնվում են պատուագամատույց սեղաններ, իսկ մուտքի առաջ՝ տապանաքարեր. ցուցանակներից ճշտում եմ, թե նրանք դամբարաններն են Քուրդ իշխանի եղբայր տեր Բասրեղի և որդի Սմբատի, կառուցված իր որդիների՝ Սմբատի և Վահանի կողմից, 1220 թվականին, Նաջմագին իշխանի՝ որդի Սմբատի և թոռ Ուքանի, կառուցված իր որդիներին՝ Սմբատի և Ուքանի կողմից 1211 թվականին, և Սյունյաց Պաճաճ իշխանի և իր կնոջ՝ Դուդանի՝ ազգեն Մամիկոնեից։

Ժամատան հարավային կողմը գտնվում է նաև ս. Գրիգոր մատուռը, կառուցված 1005—1025 թվականին և վերանորոգված վանահայր Հովհաննես եպիսկոպոս Խաչենեցի կողմից 1211 թվականին, իսկ հյուսիսային կողմը՝ ս. Աստվածածին մատուռը, կառուցված Խաչենեցի Հասան իշխանի կին Խաթունի կողմից, ԺԳ դարում, ի հիշատակ իր եղբայրներին. իր յուրահատուկ կառուցվածքով ուշադրություն գրավում է նույնպես Դպրատունը՝ կառուցված 1257 թվականին, վանահայր Համազասպ եպիսկոպոսի կողմից։

Անշուշտ կարելի չէ հանգամանորեն խոսել այս թռուցիկ ակնարկին մեջ Հաղբատի եկեղեցական և աշխարհիկ բոլոր կառույցների մասին. ճաշից հետո հեռադիտակով դիտում եմ հանդիպակաց լեռները ու ձորերը, փորձելով որոշել այդ ձորերի, պատմությունից ինձ հայտնի բնական և արհեստական այն քարանձավները «ի լանջս և ի ծերպս վիմաց», որոնք ապաստան ծառայած են դժվարին օրերին գավառի ազնվականներին, եկեղեցականներին և ժողովուրդին, մինչև 18-րդ դարի վերջը։ Փորձում եմ որոշել Կյուրիկյան թագավորների անվանի բերդերից՝ Կայան ամրոցի ավերակները, որ պետք է գտնվեն երկու կիլոմետր դեպի արևմուտք, Դեբեդ և Ժիվանքա գետերի միացման կետին, խոր ձորերով եզերված մի հրվանդանի վրա, ինչպես նաև Դրսի վանքի մնացորդները, Հաղբատի նո՛ւյնպես արևմուտքին, շինված 1233 թվականին Զաքարե սպասալարի քրոջ որդի Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից։

Ժամերը անցնում են անկատ, բայց բովանդակալից. ժամանակն է արդեն հրաժեշտ տալու Հաղբատին, և թեկուզ ժամը չորսն է, բայց լանի որ մի անգամ ևս կուտակվում են մութ ամպերը և կրկին լսվում

հեռավոր որոտումները, խոհեմություն ենք համարում իջնել ներքև՝ անձրևը չսկսած. այժմ հանգստանում ենք Դեբեդի ձորից մի քիչ բարձր մի դարատափի վրա՝ դիտելով ձորին մյուս կողմի սեպ ժայռերու և անտառածածկ բարձունքներու գեղեցկությունը հազիվ 800 մետր հեռավորությունից: Երկու ժամ ետք արդեն Ալավերդումն ենք: Ցավով մտածում եմ, թե հաջորդ օրը պետք է ճամփա ելլենք դեպի Մայր Աթոռ՝ Դիլիջան, Սևվան, Հրազդան, Լուսավան և Արովյան ճանապարհով. բաժանվելու այդ ցավալի մտքերումին հետ, սակայն, ունեմ մեր պատմության խորհուրդներից նոր կենդանություն և նոր ներշնչում ստացած լինելու հոգեկան խորունկ բավականության մի զգացումը:

Հուլիսի 23՝ ուրբաթ:

Առավոտյան ժամը 8.30-ին արդեն դուրս ենք գալիս Ալավերդուց, ու երկրորդ անգամ լինելով գնում ենք դեպի Կիրովական և ապա առաջանում ենք դեպի Դիլիջան. ժամը 12-ին, թեթև անձրևով, սկսում ենք բարձրանալ Դիլիջանի ծաղկավետ լեռները, ասֆալտապատ, լայն և ոլորապտույտ ճամփաներով. ի վերջո հասնում ենք սարի գագաթին, որտեղից համեմատաբար ավելի հարթ ճանապարհով ուղղվում ենք դեպի Սևանի լիճը. անցնում ենք, ծովի մակերևույթից ավելի քան 2000 մետր բարձրության վրա գտնվող Սեմյոնովկա գյուղի միջով. եղանակը ամպամած է և ավելի զով. Ծովագյուղից քիչ առաջ, կանաչապատ բարձունքի վրայից, տեսնում ենք լիճը, մթության մեջ թաղված, որ դեպի իր ջրերը իջնող լեռնաշղթաներով մեր աչքին ներկայանում է մի խորհրդավոր գեղեցկությամբ. ժամը 1.30-ին արդեն կանգ ենք առնում լճի ափին մի քիչ հանգստանալու և ճաշելու համար: Եվ շուտով շարժվում ենք դեպի Երևան՝ հաջորդաբար ուսքնելով Ճախկինում Վարաժնունյաց, հետո Պահլավունյաց սեփականություն Կոտայք գավառի գյուղերից և ավաններից ու հասնում ենք Մայր Աթոռ ս. Էջմիածին ժամը 5.30-ին՝ հոգեկան մեծ բավարարությամբ:

Դեպի Սանահին և Հաղբատ պատմական վանքերն ու սրբավայրերը և մեր հայրենիքի տեսարժան վայրերը կատարած մեր ուխտագնացությունները և այցելությունները նոր լիցք են տալիս և՛ դասախոսներին և՛ ուսանողության՝ նոր եռանդով վերսկսելու համար ամառային արձակուրդներից հետո մեր աշխատանքները հոգևոր ճեմարանի հարկին տակ, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հովանու ներքո:



ՎԱՐԱՄ ՓԱՐԱԴԱՆՅԱՆ
ԽՈՐԵՆ ՄԵՅԽԱՆԼՋՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հայ ժողովրդի երաժշտական մշակույթն ունի վաղեմի և հարուստ ավանդույթ, որը գալիս է դարերի խորքից: Եվ չնայած այն հանգամանքին, որ հայ ժողովուրդը դարեր շարունակ ենթակա է եղել բարբարոս ազգերի հալածանքներին ու նրանց դաժան, ճնշիչ քաղաքականությանը, այնուամենայնիվ կարողացել է պահպանել իր ազգային ինքնուրույն երաժշտական ժառանգությունը:

Նախքան գրերի գյուտը, եկեղեցական ժամերգության հիմքը սաղմոսերգությունն էր՝ հունական և ասորական լեզուներով: Բայց գրերի գյուտից հետո, երբ հիմք դրվեց հայ դպրության, ժամերգությունը սկսում են կատարել հայերեն և սաղմոսներին փոխարինում են շարականները: Ուրեմն, մեր երաժշտական պատմության վերաբերյալ ամենահին տվյալները գալիս են Ե-րդ դարից:

Հետագայում, հայոց վանքերում ծաղկում, մեծ թափ են ստանում մեր այժմյան եկեղեցական հարուստ երաժշտության տեսակները՝ շարականը, հոգևոր երգը, պատարագը, մեղեդին, տաղերը, գանձերը, ստեղիները: Որպես երաժշտական կենտրոններ՝ հայտնի են եղել Կամրջաձորի, Նարեկի, Կապուտաքարի, Հնձուց, Դպրեվանքի, Ստեփանոսի, ինչպես նաև Տաթևի և Հաղարծնի վանքերը:

Հայ մատենագիրները բազմաթիվ անուններ են թվում, որոնք հեղինակ են հանդիսացել մեր եկեղեցական երաժշտության: Առանձնից առաջ հիշվում են ս. Սահակ և ս. Մեսրոպ, որոնք հաստատվում են հայ դպրության հիմնադիրները՝ Մովսես Քերթող, Ստեփանոս Սյունեցի, Հոհան Մանդակունի, Կոմիտաս կաթողիկոս, Սահակ Զորափորեցի, Հոհան Օձնեցի, Պետրոս Գետադարձ, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Վկայասեր, Ներսես Շնորհալի, Խաչատուր Տարոնեցի, Հակոբ Կլայեցի և այլն:

Ինչպես բոլոր քրիստոնյա երկրներում, այնպես էլ մեզ մոտ հոգևոր եկեղեցական եղանակները աղավաղումներից փրկելու և կորստից ապահովելու հարցը հնուց է գալիս: Եկեղեցական եղանակները ձայնագրելու համար հորինվել են զանազան մեծության-ձևի պայմանակ՝սն նշաններ (խազեր), որոնք ունեցել են ձայնանիշների՝ նոտաների նշանակություն:

Խազերի սիստեմը ընտրելուց հետո ձայնագրել են (խազավորել) շարականները, մեղեդիները, տաղերը, գանձերը, ստեղիները:

Թե ե՞րբ են հորինել հայ երաժշտական խազերը, այդ մասին ստույգ տվյալներ չկան: Բայց կան ենթադրություններ, ըստ որոնց

---

[1] Ղազար Փարպեցին «Պատմություն հայոց» աշխատության մեջ խոսելով 5-րդ դարում գործող Մեսրոպ Մաշտոցի գործակից Սահակ Պարթևի մասին, գրում էր, որ նա անգնահատելի ծառայություն է մատուցել եկեղեցական երգերի ստեղծագործության, յուրացման, արմատավորման բնագավառում, այն և այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ դեռ իսպառ չէր վերացվել հունական ազդեցությունը:

իրրն թե խազերը բերել են Կիլիկիայից կամ արևելքից:

Ըստ Կիրակոս Գանձակեցու վկայության, Խաչատուր վրդ. Տարոնեցին խազերը բերել է Արևելյան Հայաստան և տարածել Սյունիքում, Արարատյան դաշտավայրում, Շիրակում և այլն («Ի կողմանս յարևելից»)[2]:

Ճշմարտությունը, սակայն, մնում է անթափանցելի: Այժմ ընդհանուր կարծիքն այն է, որ մեր երաժիշտ-հեղինակները հորինելով եկեղեցական եղանակները, միաժամանակ ստեղծել են և այդ երաժշտական խազերը:

Հայկական խազերի ուսումնասիրությամբ զբաղվել են և օտարազգի շատ երաժշտագետ տեսաբաններ: Այս առթիվ Կոմիտաս վարդապետը հետևյալն է ասում.

«Հայկական խազերով կարելի պիտի ըլլա ոչ միայն հայկական հին երաժշտությունը ուսումնասիրել, այլ և ուսումնասիրել ուրիշ ազգերու հին երաժշտությունները՝ ինչպես հունականը, որոնց մասին դժբախտաբար որևէ ուսումնասիրության աղբյուր գոյություն չունի այժմ, մինչ հայ ձեռագիրները ավելի ավանդապահ գտնված են գուրգուրանքով պահելու համար հայկական հին երաժշտության աղբյուրները, որոնցմե թերևս երաժշտագետները օգտվեին ժամանակակից ուրիշ երաժշտություններ պրպտելու համար»[3]:

XVIII դարի սկզբներին (1711-ին) եվրոպացի հայտնի գիտնական Շրեոտերը լույս տեսած «Գանձարան հայոց լեզվի» իր աշխատության մեջ խոսում է հայկական հին խազերի վերծանման նշանակության մասին: Բայց չի ասում, թե որտեղի՞ց են այդ խազերը բերվել Հայաստան:

Խազերի վերծանման ուղղությամբ ուսումնասիրություններ են կատարել նաև ականավոր գիտնականներ Պետերմանը, Ֆերդի, Ֆլայշեր, Օբրի, Վագներ, Բիբո և այլն: Երկար տարիներ շարունակ հայկական հին խազերի ուսումնասիրությամբ զբաղվել է նաև Կոմիտաս վարդապետը: Իսկ թե ինչ արդյունքի է հասել Կոմիտասը, հարկ ենք համարում բերել այստեղ «Տաճար» կիսամսյա հանդեսում լույս տեսած նրա նամակ-պատասխանի որոշ հատվածներ:

«Իրավ է, ես գտել եմ հայ խազերի բանալին և նույնիսկ կարդում եմ պարզ գրվածքները, բայց դեռ վերջնակետին չեմ հասել. զի յուրաքանչյուր խազի խորհրդավոր իմաստին թափանցելու համար, նույնիսկ ուսումնական ձեռագիրներ պրպտելով, երբեմն ամիսներ են ուզում: Իսկ ձեռքիս տակ եղած խազերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առայժմ: Մի կողմ թողնենք դեռ անանուն խազերը, որոնք խիստ շատ են:

Այսպիսի զուտ մասնագիտական խնդիրների մասին անհնարին է գրել մեր պարբերական մամուլի էջերում այս պատճառով՝ նախ պարբերական մամուլի էջերը շատ սուղ են, երկրորդ՝ զուտ գիտական, տարիներ շարունակվող ուսումնասիրություններով հասարակությանը զբաղեցնելն անհպատակ է, երրորդ՝ խոշոր ու մեծաքանակ ծախս է պահանջում, և չորրորդ՝ ուսումնասիրությանը վերջակետ չեմ դրել:

Մի այսպիսի ուսումնասիրություն կատարելության հասցնելու համար պետք է ներհուն լինել տիրապետելու նրա հիմնական ուսմունքներին ու գիտություններին՝ տաղաչափության, վանկաչափության, առոգանության, շեշտադրության, կետադրության, խազաչափության, խազագիտության, լեզվի (բառերի իսկական և հին առման), իմաստասիրության (երկրաչափության, թվաբանության, աստղաբաշխության և երաժշտության՝ առմամբ), խազերի ծագման, զարգացման, անկման և արդի պատմության— համեմատական խազաբանության և այլն, և ապա կարելի է գաղտնիքն երևան հանել: Թող հայ հասարակությունը ներող, մանավանդ համբերող լինի, մինչև որ հնարավոր չափով, կատարելապես վերջացնեմ իմ տասնվեցամյակից ավելի տևող տաժանագին ուսումնասիրություններս, հույս ունիմ, թե մոտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակության սեփականությունը պետք է դառնա»[4]:

Կոմիտասի ասածներից պարզվում է, որ նա ավելի քան տասն և վեց տարի ուսումնասիրություն կատարելով, այնուամենայնիվ խազերի վերաբերյալ կատարած իր աշխատանքները դեռ չի ավարտել և որ կարևորն է, ամբողջովին չի պարզել, թե ո՞ր գծագրական խազը, նշանը ի՞նչ նոտա է ներկայացնում և ինչպե՞ս պետք է երգել այն. ուրիշ խոսքով արտահայտած, խազերի բանալին լրիվ չափով դեռ չի պարզել և այդ ուղղությամբ աշխատանքները դեռ շարունակվում էին:

Ըստ պատմական տվյալների, հին խազերի գործածությունը ծաղկման շրջան է ապրել X դարից սկսած և տևել է մինչև XV դարի վերջը: XVI դարում նա կորցնում է իր նշանակությունը և դատապարտվում իսպառ

---

[2] Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն հայոց», երևան, 1961, էջ 212:

[3] Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, էջ 166:

[4] Կոմիտաս վրդ., Հոդվածներ և ուսումնասիրություններ, էջ 166—167:

մոռացության։ Իսկ XVII դարի սկզբից, արդեն ոչ ոք չէր կարողանում հասկանալ դրանց նշանակությունը։

Խազերը մոռացության դատապարտվելով, կասկած չկա որ աղավաղման և կորստյան պետք է դատապարտվեին նաև հոգևոր-եկեղեցական երգերը։

Երաժշտության տեսաբաններն միանգամայն հավանական են համարում աղավաղման այդ վտանգը։ Արևմտահայ ականավոր երաժիշտ (տիրացու) Բաբա Համբարձումը (Լիմոնջյան) խորապես զգալով այդ վտանգի առկայությունը, մտածում է ունենալ երաժշտական նոր ձայնանիշեր, թե շարականների երգեցողությունը դյուրացնելու և թե հոգևոր-եկեղեցական երգերն աղավաղումներից և կորստից փրկելու համար։

Նա նոտաների գծագրական ձևը հին խազերից վերցնելով և եվրոպական երաժշտությանը մոտեցնելով, հնարում է հայկակ. նոտագրությունը։

Իսկ ո՞վ էր Բաբա Համբարձումը։

Նա խարբերդցի էր։ Հայրը՝ Սարգիսը, քաղաքի հարստահարիչ հարկահանների ձեռքից ազատվելու համար, ընտանիքով տեղափոխվում է Կ. Պոլիս։ Այստեղ, 1768 թվականին ծնվում է Համբարձումը։ Հայրը նրան տալիս է դերձակության։ Այդ արհեստը յուրացնելուց հետո նա այդ արհեստով չի զբաղվում։ Լինելով ունակ երաժշտության մեջ, նա իրեն նվիրում է այդ արվեստին։ Քաջածանոթ էր արևելյան եղանակներին։ Հմուտ էր հունաց եկեղեցական խազերին և երաժշտությանը։ Ահա այդ Բաբա Համբարձումն է, որ հորինում է յոթ հիմնական ձայնանիշեր հետևյալ անուններով. փուշ, եկորճ, վերնախաչ, բեռնորճ, խոսրովային, ներքնախաղ և պարուկ։ Բայց պետք է ասել, որ անունները հայկական չեն, այլ արաբական։ Ինչո՞ւ։ Որովհետև Բաբա Համբարձումը ինքը իր փորձերն էլ կատարում էր տաճիկ-արաբական նվագարանի՝ թամբուրի վրա, ուր ամեն լար ուներ իր հատուկ արաբական անունը։

Սակայն, հետո նկատելով, որ ձայնանիշերի բազմավանկ անուններով արտահայտել երգը-եղանակը անհնարին է, Բաբա Համբարձումը կրճատում, վերցնում է միայն անվան առաջին վանկը.

Փո, է, վե, բե, խո, նե, պա։

Կարծիք կա, իբր թե նախքան Բաբա Համբարձումը կային այդ ձայնանիշերը և պահվում էին ոմն Տյուզյան Հովհաննես Չելեբիի մոտ, որտեղից Համբարձումի ձեռքն են անցնում, որը և մշակում, հրապարակ է հանում։

Այս մասին Կոմիտաս վարդապետը վկայում է.

«Այն կարծիքը, որ իբր թե նախքան Բաբա Համբարձումը եղել են այժմյան ձայնանիշերը, հավանական չէ. ժամանակակից ականատես անձինք այդ պատիվը վերագրում են իրավամբ Բաբա Համբարձումին։ Այդ ձայնանիշերով ձայնագրեցին ինչպես հոգևոր-եկեղեցական, այնպես էլ ժողովրդական, գուսանական և այլ ազգային երգեր»։

Շարականը ձայնագրելու առաջին փորձը կատարել է ինքը՝ Բաբա Համբարձումը և հասցրել մինչև ս. Զատկի օրհնությունը «Այսօր յարեաւը» 1899 թվականին։ Բայց նա շուտով մահանում է և սկսած գործը մնում է անավարտ։ Այդ դեռ բավական չէր, նրա ձայնագրած բոլոր նյութերը անհետանում են։

Երկրորդ փորձը արել է երաժիշտ Եղիա Տնտեսյանը և ավարտել 1870 թվականին։ Հետագայում եկեղեցական եղանակները աղավաղումներից փրկելու և անաղարտ պահելու համար Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ-րդը 1870 թվականին Պոլսից ս. Էջմիածին է հրավիրում երաժշտագետ Նիկողոս Թաշճյանին և պատվիրում իր ղեկավարությամբ ձայնագրել բոլոր շարականները, տաղերը, մեղեդիները, գանձերը, ստեղծիները։

Ձայնագրման աշխատանքներին մասնակցում էին նաև Մակար Եկմալյանը, դպիր Պողոս վարդապետ Ճեպիճյան Զինկելերցին և հմուտ երգիչներ։ Մասնակցում էր նաև ինքը՝ երաժշտագետ կաթողիկոսը։

Այդ տարիներին ձայնագրվեցին շարականը, տաղերը, մեղեդիները, գանձերը, ստեղծիները և վերջապես պատարագի արարողությունը։

«Ձայնքաղ շարական»-ը առանձին հատորով հրատարակվեց Էջմիածնում, 1875 թվականին։ Դրան հաջորդեց նաև եկեղեցական հոգևոր երաժշտության մյուս հատվածների տպագրությունը։ Հաջողվեց մոռացությունից ու կորստից փրկել երաժշտական բազում գանձերը։

Միջանկյալ ասենք, որ այդ եղանակների մի խոշոր մասը կազմում է այսպես ասած Պոլսո կամ արևմտահայ հատվածը։ Հետագայում ձայնագրվեց նաև Էջմիածնի երգահատվածը՝ Կոմիտաս վարդապետի անմիջական մասնակցությամբ։

Սակայն պետք է ասել, որ հայ հոգևոր-եկեղեցական երգերը ամեն տեղ միատեսակ չեն երգվել։ Դա բացատրվում է նրանով, որ հայ ժողովուրդը օտարերկրյա բարբարոս ազգերի արշավանքների հետևանքով գաղ-

թի ենթարկվելով, ցաք ու ցրիվ է եղել երկրի զանազան մասերում: Ամեն մի վայրում կառուցել է իր եկեղեցին ու դպրոցը: Նա միաժամանակ ստեղծել է իր տեղական երգեցողությունը (կամ ինի տարբերակը): Օրինակ, այդ վայրերի թվին են պատկանում Պոլիսը, Երուսաղեմը, Վենետիկը, Վիեննան, Բոմբեյը, Մադրասը, Կալկաթան, Թեոդոսիան, Կամենսկ-Պոդոլսկը, Լվովը, Նոր Նախիջեվանը և այլ քաղաքներ: Նույն ճակատագրին են ենթարկվել նաև հայ ժողովրդական երգերը, պարեղանակները:

Անիից գաղթած հայերը բնակություն հաստատելով Ղրիմում, Թեոդոսիայում, Սուրբ խաչ. հին Ղրիմ, Սիմֆերոպոլ, Ղարասու-Բազար և այլն, տարել են իրենց հետ Անվո երգերը և երկար ժամանակ պահպանել են ինչպես ծիսական-ժողովրդական, այնպես էլ հոգևոր-եկեղեցական երգերը: Այդ երգերը ժամանակին չեն ձայնագրվել և դրա համար էլ աղավաղվել են, նույնիսկ մոռացվել:

Այժմ, շնորհիվ մեր ազգագրական գիտարշավների, գրի են առնվում այդ նյութերը: Սակայն բավականին փոփոխված վիճակում:

Բայց հպարտությամբ կարող ենք ասել, որ մինչև մեր օրերը պահպանված միակ աղբյուրը, մեր հայկական երաժշտությունն է, մեզ շատերին անծանոթ հին խազերն են և մեր այժմյան Լիմոնջյան ձայնագրությունը: Մեր հայկական միջնակարգ դպրոցներում՝ Շուշվա, Երևանի թեմական, ինչպես նաև Ներսիսյան դպրոցում և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում երաժշտության առարկան ոչ միայն եվրոպական ձայնանիշներով էին անցնում, այլ նաև հայկական: Հայկական երաժշտություն էին ավանդում նաև արևմտահայ շատ դպրոցներում: Այդ դասատուների թվին են պատկանում՝ Նիկողայոս Թաշճյանը, Գաբրիել Երանյանը, Մակար Եկմալյանը, Քրիստափոր Կարա-Մուրզան, Գևորգ Չորեքչյանը, Կոմիտասը, Արշակ Բրուտյանը, Պողոս Կարապետյանը, Սահակ Ամատունին, Եղիշե Բաղդասարյանը և ուրիշներ: Հատկապես մեծ է և նշանակալից Մակար Եկմալյանի կատարած աշխատանքները: Բայց, դժբախտաբար, հայկական այդ ձայնագրության կյանքը երկար չտևեց: Այն նույնպես դուրս է մնում գործածությունից, իսկ մեր օրերում բոլորովին մոռացության է տրված և նրանով ոչ ոք չի զբաղվում: Դա մասամբ բացատրվում է այն բանով, որ ներկայումս հարաճուն կերպով զարգանում է բազմաձայն երաժշտությունը, որն արտահայտելու համար «հայկական» կոչված այդ ձայնագրությունը (Բաբա Համբարձումի) շատ անհարմարություններ ունի:

Մինչդեռ բոլոր ազգերի մոտ, ինչպես նաև մեզ մոտ XIX դարի վերջերին բոլոր դպրոցներում սկսեց կիրառվել եվրոպական երաժշտության սիստեմը: Ուրեմն, զարմանալի չէ, որ հայկական ձայնագրությունը տեղի տվեց եվրոպական նոտաներին: Բայց Կոմիտասը, ուր էլ լիներ, իր լսած ժողովրդական երգերը ձայնագրում էր հայկական ձայնանիշերով և երբ վերադառնում էր տուն, վերածում եվրոպական նոտաների:

Նա գտնում է, որ ավելի դյուրին է երգերը ձայնագրել հայկական ձայնանիշերով:

Պատահել է, գյուղամիջով անցնելիս, մի բակից լսել է երգ և պետք է ձայնագրեր: Սակայն թուղթ չունի իր մոտ, կամ ավելի շուտ մոռացել է իր ծոցատետրը վերցնել, այդպիսի դեպքերում, առանց ժամանակ կորցնելու, երգը ձայնագրում էր տաշեղի՝ տախտակի կամ թիթեղի թերթիկի վրա:

Նորին Ս. Օծություն կաթողիկոս հայոց Տ. Տ. Վազգեն Ա-ն, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայկական ձայնագրությունը դուրս է մնում գործածությունից և որ մեր օրերում արդեն մոռացության է տրված, միտք է հղանում հոգևոր ճեմարանում դասավանդել տալ հայկական ձայնագրություն: Ներկայումս հոգևոր ճեմարանում արդեն անցնում են հայկական ձայնագրություն, յուրաքանչյուր դասարանում հատկացնելով շաբաթական մեկական ժամ: Աշակերտները հետաքրքրվում են այդ առարկայով և ջանում են յուրացնել: Կան աշակերտներ, որ այդեղ ազատ կերպով կարողանում են կարդալ և երգել:

Հայկական ձայնագրության և եվրոպական նոտագրության միջև մի առանձին խոշոր տարբերություն չկան: Հայկական նոտագրությունը տարվում է առանց հնգային գծերի: Բացի այդ, գամմայում (հիմնական) կես տոն ձայները ընկած են մի-ֆա և սի-դո ձայնամիջոցներում: Հայկականում ընկած է առաջին քառյակում այնպես, ինչպես եվրոպական երաժշտության մեջ, իսկ երկրորդ քառյակում ընկած է նե-պա (որ համապատասխանում է եվրոպական երաժշտության լյա-սի նոտաներին:

Տարբեր են և դիեզ-բիմոլ գործածելու բովանդակության մեջ: Այսպես, հայկականում գործ են ածում միայն մի նշան (մի փոքրիկ գիծ, որ թեք կերպով դրվում է նոտայի գլխին և կոչվում է կիսաձայնանիշ և նայած, թե ինչպես է գործադրված, ըստ այնմ էլ նա ունենում է իր նշանակությունը, որ կոչվում է կիսվեր (դիեզ), կիսվար (բիմոլ): Օրինակ, գրված է «փո»—«է» (կիսաձայնա-

ցիր վրան) և «վէ». այս դեպքում կիսաձայնանիշը «է» նոտան կարդացվում է «է» կիսվեր, իսկ եթե գրված է այսպես «վու»— «է» (կիսաձայնանիշով) և «բէ» այս օրինակում «է» նոտային հաջորդող «վէ» նոտան բացակայում է, չկա: Այդպիսի դեպքում կիսաձայնանիշով նոտան՝ «է»-ն, կարդացվում է բացակայող նոտայի անունով «վէ» կիսվար և այլն:

Ինչ վերաբերում է ներքին կանոններին, նրանք համապատասխանում են իրար. տարբերությունը միայն արտաքին պատկերի մեջ է: Այսինքն, նոտաների և տևողության չափերի արտահայտության մեջ: Օրինակ, նոտայի մոտ (եվրոպական) եթե դնում ենք կետ (.), այդ կետը ավելացնում է տրվյալ նոտայի բախման կեսը: Իսկ հայկականում կետը մի քառորդ բախում է, ուրեմն նոտայի մոտ դնելով, նա ավելացնում է տվյալ նոտայի բախման վրա ևս մի քառորդ բախում և այլն:

Թանգարանի երաժշտական բաժնում կան հայկական ձայնանիշերով ձայնագրված բազմաթիվ երաժշտական գործեր: Դրանց վերծանումը (փոխադրումը) եվրոպական նոտաների և ուսումնասիրությունը վառ լույս կսփռի մեր երաժշտական մշակույթի պատմության դեռևս չհետազոտված կողմերի վրա:

Այսպես, օրինակ, հայկական երգերի և երաժշտական նյութերի ֆոնդում կան.

1. 210 էջանոց մի տետրակ, որտեղ ձայնագրված են հայկական ձայնանիշերով 1874 թվականին, Պոլսում արևմտահայ երաժշտագետ Նիկողայոս Թաշճյանի կողմից:

2. Հովհաննես Տեր-Գրիգորյանի ձայնագրած «Մեղրեցվոյ» երգերի 430 էջանոց ուտվար տետրը. 1887 թվականին ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսանելու ժամանակ ձայնագրել է մի շարք երգեր՝ հայկական ձայնանիշերով, հայ գրողների չափածո ոտանավորների հիման վրա:

3. «Ճաշակք Յարութեանց կիւրակէից, մաղթանք կայսերական տօնի և շարականք հոգեհանգստեան»: Տետրը բաղկացած է 20 թերթից և տպագրված է 1888 թվականին: Հեղինակը անհայտ է:

4. Հետաքրքրություն է ներկայացնում «Շարականք կիւրակէից և Ս. Զատկի» վերնագրով 88 էջանոց տետրը, որը խմորատիպ է, հեղինակը դարձյալ անհայտ է:

Կարծում ենք, որ մեր թանգարանում գտնվող վերոհիշյալ բոլոր նյութերը պետք է փոխադրել եվրոպական նոտաների, պահպանելով դրանք մեր երաժշտության, մեր նոր սերնդի համար:

Մայր Աթոռում արդեն ձեռնամուխ են եղել շարականների վերծանման մեծ գործին: Արդեն փոխադրված է եվրոպական նոտաների՝ տպագրական 380 էջ. աշխատանքները շարունակվում են:

Մենք գտնում ենք, որ մեր հին երաժշտության գանձերը անպայման պետք է փրկել մոռացումից և աղավաղումներից և դրանք վերածել եվրոպական նոտաների, միանգամ ընդմիշտ համոզվելով, որ այդ երաժշտությունը հսկայական նշանակություն ունի հայ ժողովրդի անցյալ հոգևոր կյանքի պատկերման համար:

Հսկայական է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի կատարած դերը նոր երաժիշտների պատրաստման, երաժշտական գիտելիքների տարածման, կատարողական վարպետության, խմբերգային արվեստի ավանդույթների ամրապնդման բնագավառներում: Այստեղ լուրջ հիմքերի վրա է դրվել երաժշտական առարկաների դասավանդումը, առաջին հերթին հայկական նոտագրության ուսումնասիրությունը և խմբական երգեցողությունը: Հայ երաժշտության շատ ականավոր գործիչներ, այդ թվում՝ Մակար Եկմալյանը, Գրիգոր Միրզոյանը (Սյունի), Ա. Բրուդյանը, Սպիրիդոն Մելիքյանը և շատ ուրիշներ, իրենց սկզբնական երաժշտական կրթությունը ստացել են Գևորգյան ճեմարանում: Հայտնի է նաև, որ Կոմիտաս վարդապետի երաժշտական կրթության բավական հիմնավոր շրջանը ճեմարանում անցած տարիներն են եղել, երբ նա աշակերտն է եղել Սահակ վրդ. Ամատունու:

Այսօր Էջմիածնի հոգևոր ճեմարանը երաժշտական բնագավառում ևս արժանավոր ժառանգն է հանդիսանում մեր երաժշտական մշակույթի և արվեստի:

Էջմիածնի հոգևոր ճեմարանը բարձրագույն ուսումնական հաստատություն է՝ բաղկացած երեք դասարանական և երեք լսարանական բաժիններից: Այստեղ ուսանողները մյուս հանրակրթական առարկաների կողքին սովորում են նաև երաժշտություն (եվրոպական և եկեղեցական): Երաժշտական առարկաների դասավանդումը դրված է հաստատուն հիմքերի վրա, որովհետև, ինչպես Լամբրոնացին է ասում՝ «Ազդումն երաժշտական եղանակին... ընդոստուցեալ զարթուցանէ զմիտս ամենեցուն առ ի տենչումն շնորհին. քանզի չիք ինչ որ զկամս մեր յեղաշրջէ յուրախութիւն կամ ի տրտմութիւն որպէս զերգոցն ձայն, յորժամ որպէս պարտն է լինիցի. վասն այսորիկ եւ եկեղեցական աւանդութիւն ընկալաւ զայն յարտաքնոցն» (Լամբրոնացի, Ի մեկնութիւն պատարագի):

Երաժշտությունը այն առարկան է, որը արթնացնում է միտքը, ազնվացնում մարդու հոգին: Երգը անբաժան է մարդուց թե՛ ուրախության և թե՛ տխրության պահերին:

Ճեմարանի երաժշտական կյանքը պիտի ասել, որ բավականին աշխույժ է. ուսանողները մասնակցում են ճեմարանի բոլոր հանդեսներին, որտեղ կատարվում են եկեղեցական, հայրենասիրական, ինչպես նաև հայկական ժողովրդական երգեր և խմբերգեր: Նրանք մասնակցում են նաև առավոտյան և երեկոյան ժամերգություններին, իսկ կիրակիները՝ սուրբ պատարագին՝ գործում մասնակցություն բերելով երգեցողությանը:

Ճեմարանի ներսում գործում է ուսանողներից բաղկացած արական բազմաձայն երգչախումբը, որի փորձերը տեղի են ունենում դասերից հետո՝ երեկոյան ժամերին: Երգչախմբի փորձերը անց են կացվում բավականին հետաքրքիր, ուրախ և աշխույժ տրամադրությամբ, ուսանողների միտքը և հոգեկանը թարմացնելու համար:

Ուսանողների գեղարվեստական ճաշակը և երաժշտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով հաճախ նրանք ներկա են լինում սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական երգչախմբի և նման դասական համերգների՝ հոգևոր ճեմարանի տեսչության գլխավորությամբ:

Ուսանողներից մի քանիսը մեծ ջանասիրությամբ զբաղվում են երաժշտական ուսումնասիրությամբ՝ խորացնելով իրենց գիտելիքները այդ բնագավառում: Այսպիսի ուսանողների նկատմամբ հոգևոր ճեմարանի տեսչությունը, ինչպես նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետը, հնարավորություններ և միջոցներ չեն խնայում ինչպես անցյալում, այնպես էլ այժմ:

Տեսչությունը հատուկ երաժիշտ-ուսուցիչների խնամքին և դաստիարակության է հանձնել երաժշտության մեջ մասնավոր հակում ունեցող ուսանողների երաժշտական կրթությունը:

Վեհափառ Հայրապետը և սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչությունն ու դասախոսական կազմը ջանքեր և եռանդ չեն խնայում, որպեսզի հոգևոր ճեմարանն ավարտած ուսանողները, որոնք կոչվել են հովիվները դառնալու Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցվո, լինեն զարգացած, հոգով մաքուր և ազնիվ հոգևորականներ, հայ ժողովրդի դարավոր երաժշտական գանձերի և մշակույթի քաջ գիտակ, բանիմաց հովիվներ:

Ուսանողները դաստիարակվում են ա՛յս ոգով, ա՛յս գիտակցությամբ, և նրանցից յուրաքանչյուրը զգում է սեփական ժողովրդին ծառայելու ազնիվ և քաղցր պարտականությունը:

ՀԱՏՎԱԾ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Աղթամար քաղաքի պայծառագույն և պանծալի եկեղեցու մասին, որի պատրաստության համար շինանյութերը և քարերը բերվեցին հեռու երկրներից, և որի կառուցման դեպքն ու տեղը մենք հավաստի կհայտնենք։

Հոյակապ, հռչակավոր և հրաշալի Աղթամար քաղաքի շինության ժամանակաշրջանում մեր փրկիչ Հիսուս Քրիստոսն իր օծյալ Գագիկի բազուկները բարձրացրեց՝ սանձահարելու համար Իսմայելի գազանաբարո ազգին, որին հաստատուն խորհուրդներով և պատերազմական ուժեղ զորությամբ իր ձեռքով կապեց, կարծես երասանակով նրանց կզակները ճմլելով թուլացրեց սկսած Մարաստանից և Պարսկաստանից, մինչև ամբողջ Ատրպատականը և մինչև Խուժաստանը։

Ում ուզում էր՝ ոչնչացնում էր, ում չէր ուզում՝ ազատ էր թողնում, շատերին իրար դեմ էր հանում և նրանցից հազարների, տասնյակ հազարների իմաստության սրով կոտորում էր։ Իսկ ուրիշներին, հանդիպելով պատերազմի [դաշտում], սրի բերանն էր տալիս և անխնա կոտորում՝ երբեմն անձամբ և երբեմն էլ՝ զորքի միջոցով։

Եվ արքան, այս բաները անելով, պատերազմով դիմեց Ասորեստանի վրա և բազմաթիվ գավառներ, իրենց ամրոցներով հանդերձ, իր կողմը գրավելով, խլեց։ Եվ Կոտոմ կոչվող մի գյուղում, Ասորեստանի սահմաններին մոտ, տեսնելով Աղձնյաց իշխանական տանը պատկանող մի ամրոց, որը Զուարեկ անունով մի տոհմի սեփականությունն էր, ամբողջովին, հիմնովին ջնջեց, վերացրեց այդ տոհմը և ամրոցը հիմնահատակ քանդելով՝ նրա քարերը վերցրեց բերեց ծովի ալիքների վրայով և սուրբ եկեղեցու համար շինանյութ դարձնելով՝ պիղծ մեհյանի ձև ունեցող կառույցի տեղ կանգնեցրեց փառքի տաճար։ Հենց այստեղ էր կատարվում մարգարեի կողմից ասվածը, [թե] «ով որ անարժանից պատվականն է հանում, պիտի լինի ինչպես իմ բերանը», ուր միշտ սուրբ Հոգին՝ մարդկանց առաջնորդելով դեպի անստվեր լույսը։

Եվ որովհետև արվեստի [այս] գործի ճարտարապետն էր Մանվելը, իմաստությամբ լի և իր գործում հմուտ մի մարդ, որին վերևում հիշատակեցինք, հրաշակերտում է եկեղեցին զարմանահրաշ արվեստով և, ինչպես ավելի առաջ ցույց տվեցինք, մի կրոնավորի օգնությամբ քարերի վրա ճշգրիտ ճանաչողությամբ՝ պատկերում է Աբրահամից սկսած մինչև Դավիթն ու մինչև մեր տեր Հիսուս Քրիստոսը, մարգարեների և առաքյալների դասերը՝ յուրաքանչյուրը հորինված զարմանալի հանդիսավորությամբ ու տեսքով։ Եկեղեցական նկարների շարքում ստեղծագործորեն, առանձին-առանձին պատկերում է շատ երեներ, թռչունների նրամներ, միաժամանակ և գազանների խմբեր՝ խոզեր և առյուծներ, ցուլեր և արջեր՝ միմյանց դեմ նկարված՝ այդ կենդանիների կռիվը հիշեցնող ձևով, մի բանի, որը շատ ցանկալի էր իմաստուններին։ Եկեղեցու [կառույցի] դրսից՝ ամբողջ շրջագծով հետևակողմի պատերով բերեց մի գոտի՝ պան-

ծոյի մանրամասն նկարագրութեամբ նորինեց, բանալուկեր խաչագարդեր սրբոց՝ ոսկեզարդներով, գազաններով և սաղաններով հանդերձ, որոնց կերպարանքները, այլևայլ տարբերություններով, յուրաքանչյուրն իր խմբի կերպարանքն ունի:

Իսկ սրբություններից վերև, չորս կողմերից, ճշգրտությամբ քանդակեց չորս ավետարանիչների պատկերները, որոնք արժանավորապես սուրբ եկեղեցու ուրախության պատկեր են և վեր են, քան բոլոր սրբերը:

Քանդակված է նաև Փրկչի պատկերը, որը մեզ համար մարմին առավ և որպես մարդ երևաց, և [սա] արևմտյան խորանի կամարին է: Նույնանման ճշգրտությամբ Փրկչի դիմաց քանդակված է նաև Գագիկ արքայի փառազարդ պատկերը, որը մեծապանծ հավատքով իր բազուկների վրա է պանում եկեղեցին, որպես մի ոսկի սափոր՝ մանանայով լի, կամ որպես մի ոսկի տուփ՝ անուշահոտությամբ լի, կանգնած է Տիրոջ առաջ՝ քանդակված այնպես, [որ] կարծես թողություն է խնդրում իր մեղքերի համար:

Թեպետև այս խոսքերը պատմությունից են, սակայն թագավորը երբեք չի խնայել խնդրողներին պարգևներ տալ՝ հանդերձյալ կյանքում հատուցում ստանալու հույսով:

Այնուհետև՝ խորանի հարավային կողմից, եկեղեցու դռան վրա պատրաստված է մի բարձր տեղ, որ կամարաձև աստիճաններով իջնում է դեպի ցած, որպեսզի թագավորի համար մարդկանցից հեռու աղոթելու մեկուսի տեղ լինի, ուր ինքնամփոփ, առանց որևէ բանով զբաղեցնելու, Աստծուն աղոթի:

Իսկ սրբությունից սրբության ներսի կողմից նորինում է մի հրաշալիք՝ գույնզգույն ներկերով, արծաթապատ դռներով և լի ոսկեհուռ զարդերով, ոսկեպատ պատկերներով, թանկագին քարերով, մարգարտահյուս զարդերով, տեսակ-տեսակ երևելի և պայծառ սպասներով, որ[ով] հրաշալի կերպով մեզ ցույց տվեց երկրորդ Երուսաղեմը, միաժամանակ և Վերին Սիոնի դուռը:

Հենց այստեղ են իրականանում մարգարեական [այն] երգերը, թե՝ «ուրա՛խ եղիր, ծարավի՛ անապատ» և նորից՝ թե «թող ցնծա երկիրը, և թող ուրախ լինեն բազում կղզիներ»: Իսկապես որ սա [Աղթամարը] երբեմնի մի ծարավի անապատ էր, իսկ այժմ Մեծն Աստուծո քաղաքը, որը երկու մշտաբուխ աղբյուրներից՝ սուրբ ավազանից և Աստծու Որդու անապական արյունից, գետի պես հոսելով, ջուր է տալիս հոգով ծարավածներին:

Իսկ սրա օծման հանդեսը եպիսկոպոսների և իշխանների դասերով շքեղացնելով, ուրախության մեծ տոն է կատարում՝ սերնդիցսերունդ պարծանքով հիշատակվելու (արժանի):

Ահա ասացինք այն, ինչ սուրբ եկեղեցու մասին էր:

ԹՈՎՄԱՅԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ

Պատմութիւն Տանն Արծրունեաց,
1887 թ., էջ 297, գլուխ Ը:
Թարգմ.՝ Հովսեփ սարկ. Հակոբյան
(Բ. լսարան)



ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ «ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ»-Ը

7-րդ դարը մեր ժողովրդի պատմության մեջ քաղաքական տեսակետից թեև շատ աննպաստ, սակայն մտավոր-մշակութային իմաստով ներկայացնում է շատ հետաքրքրական և հարուստ մի շրջան:

Դարի սկզբից պարսկա-բյուզանդական արշավանքները առավոր ավերածություններ են գործում Հայկական ողջ բարձրավանդակում: Երկիրը հետզհետե կորցնում է իր ներքին անկախությունը: Տնտեսությունը նույնպես նահանջ է ապրում: Բայց այս անկումը չի խանգարում, որ ժողովրդի մեջ տեղի ունենան մտավոր խմորումներ: Մտքի շարժումները գտնում են ասպարեզ դարձյալ կրոնական հողի վրա: Այս դարում հայ ժողովրդի ստեղծագործական ընդունակությունները իրենց փայլուն արտահայտությունն են ստանում եկեղեցական արվեստի և մշակույթի տարբեր բնագավառներում: Երևան են գալիս աչքի ընկնող մատենագիրներ, խոշոր ճարտարապետներ, քերթող-երաժիշտներ, փիլիսոփաներ:

7-րդ դարը վանական շինարարության և հոգևոր բանաստեղծության ծաղկման շրջան է: Հակառակ երկրի քաղաքական, տնտեսական աննպաստ վիճակին, հայ ժողովուրդը հանդես է բերում զարմանալի կենսունակություն. ուժ է գտնում իր մեջ ոչ միայն պահպանելու անցյալի փառավոր մշակութային, կրոնական կենտրոնները, այլև կարողանում է ստեղծել նորերը:

Դարի սկզբից Կոմիտաս կաթողիկոսն է (615—628), որ բաց է անում նյութական շինարարական նոր շրջանը, կառուցելով Հռիփսիմեի տաճարը 618 թվին, որը հայ ճարտարապետության գլուխ-գործոցներից մեկն է իր դասական գեղեցկությամբ, արտահայտված պարզ և ուղիղ գծերով, զերծ աչք շլացնող զարդարանքներից: Այս շրջանում, 631 թվին կառուցվեց նաև Գայանեն: Նույն դարում 652 թվին կառուցվեց նաև մեր եկեղեցական շինությունների թագն ու պսակը հանդիսացող Զվարթնոց տաճարը, Ներսես Գ (641—661) կաթողիկոսի ջանքերով: Այս տաճարը իր գեղարվեստական անկրկնելի հնարանքներով ու ճարտարապետական ուրույն մտահղացմամբ աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը կարելի է համարել: Հայ ճարտարապետական ոճն այդ ժամանակ է, որ ամբողջացնում է իր ձևերը և հասնում մի աստիճանի, որը գոյություն չուներ մինչ այդ: Եթե 5-րդ դարը հայ գրականության ոսկեդարն է, ապա 7-րդ դարը կարելի է կոչել հայ ճարտարապետության ոսկեդարը:

7—11-րդ դարերում հայ գրականության մեջ կրոնա-դավանաբանական գրականությանը զուգահեռ, կարևոր տեղ է գրավում նաև կրոնական բանաստեղծությունը՝ շարականներ, տաղեր, որոնք գրված են կրոնական խոր ներշնչումով և ունեն գեղարվեստական բարձր արժեք: Եկեղեցական բանաստեղծությունը ամենից առաջ օրհներգություն է, որը ծնվել և զարգացել է ընդհանուր եկեղեցու մեջ՝ քրիստոնեական աստվածապաշտությանը հանդիսավորություն տալու համար:

Ըստ հրեական սովորության, առաջին քրիստոնյաները Աստծուն փառաբանում էին սաղմոսներ երգելով, որը սակայն կրոնական նոր եռանդի առաջացման հետևանքով բավարարություն չէր տալիս այլ-

նս, և այդ պատճառով էլ 2-րդ դարից սկսած հորինվում են երգերի նոր տեսակներ:

Այս երգերը իրենց նյութն առնում են Աստվածաշնչից, մանավանդ սաղմոսներից: Նրանց վրա այնքան ուժեղ է Աստվածաշնչի ազդեցությունը, որ երբեմն դրանք հարություններ են լինում, այսինքն՝ հորինվում են նույնինքն Աստվածաշնչի բառերով և պատկերներով:

Հայ գրականության մեջ հոգևոր երգերի սկիզբը հասնում է մինչև 5-րդ դարը. «Նախ սուրբն Իսահակ և սուրբն Մեսրոպ ասացին զութն եղանակաւոր ձայնս և զերկու ձայն ստեղիս. Ապա սուրբն Իսահակ զՂազարոն և զկարգն Աւագ շաբաթոն, և սուրբն Մեսրոպ զկարգն ապաշխարութեան»: 5-րդ դարում, երբ տեղի է ունենում հայ գրերի գյուտը, հայ եկեղեցում ծիսակատարություններն օտար լեզվի փոխարեն սկսվում են հայերենով կատարվել: Աստվածաշունչը, սաղմոսները և օրհներգությունները հայերենի են թարգմանվում, և հիմք է դրվում գրական մի քանի տեսակների: Եվ քանի որ հոգևոր երգը այդ շրջանում արդեն ծանոթ էր ընդհանուր եկեղեցուն, շատ հավանական է, որ հայ թարգմանիչները թարգմանեին ընդհանուր եկեղեցու մեջ ընդունված երգերը և ինքնուրույն կամ նմանողական նոր երգեր հորինեին: Մեր հոգևոր բանաստեղծության առաջին հեղինակներ են՝ սուրբ Մեսրոպը, ս. Սահակը, Ստեփանոս Սյունեցին, Հովհան Օձնեցին, Մովսես Քերթողը... Հայ հին գրականության սկզբնավորման հետ սկիզբ է առել նաև մեր հոգևոր երգը: Սակայն այս դարում մեծ օրհնություններ չեն գրվել կամ գրվել են, բայց մեզ չեն հասել: Սակայն 6-րդ դարի վերջերին մեր եկեղեցական քնարերգությունը պիտի բավական զարգացած և զորեղացած լիներ, քանի որ 7-րդ դարի առաջին քառորդում Կոմիտաս կաթողիկոսը գրում է իր «Անձինք Նուիրեալք»-ը, որի գեղարվեստական բավականին բարձր մակարդակը նկատի ունենալով՝ պետք է ենթադրել, որ մինչ այդ հոգևոր երգը լուրջ զարգացում ունեցել է, որի նվաճումներից օգտվելով միայն հնարավոր պետք է լիներ «Անձինք Նուիրեալք»-ի նման մի երգ ստեղծել: Հայ եկեղեցին հնագույն շարականներ ունեցել է անշուշտ, որոնք մինչև այսօր երգվում են, սակայն նրանց հեղինակների ով լինելը անհայտ է: Կոմիտասի «Անձինք Նուիրեալք»-ը առաջինն է, որ պատմական ստուգությամբ իր հեղինակի անունն է կրում: Թեև ժամանակի լավագույն պատմիչ Սեբեոսը այդ մասին չի հաղորդում բայց ս. Հռիփսիմեի տաճարի մասին նրա գրածից կարելի է ենթադրել, որ նրա միջոցն ծանոթ է եղել Կոմիտասի քերթվածը: Սեբեոսը Հռիփսիմեի մասին օգտագործում է հետևյալ մակդիրները, որոնք կան նաև «Անձինք Նուիրեալք»-ի մեջ: Օրինակ՝ «պատուական մարգարիտ, ի գիրկս սրբութեան, նուիրեալք սիրոյն Քրիստոսի, ծովածին»: Եվ վերջապես, երբ պատմիչը գրում է «խանդակաթ» էր սէր քոյ. երանելին Կոմիտաս»: Նա սրանով չի՞ ակնարկում արդյոք Կոմիտասի բանաստեղծական ոգևորությանը Հռիփսիմեով: Պետք է ենթադրել, որ մենք ունեցել ենք մի շարք ժողովրդական երգեր, որոնք երգվել են Հռիփսիմեի տոնի առթիվ, և որոնցից օգտվելով Կոմիտասը գրել է իր այդ շարականը:

Նոր հոգևոր երգերի մուտքը ժամերգության մեջ ազատ է եղել, որը և նպաստել է հոգևոր երգերի զարգացմանը: Ստեղծվել են «կանոններ» կամ հայերեն «կարգ» կոչված երգերը:

Շարականների արվեստի հատկությունները կապված են նրանց ծագման ու զարգացման պատմության հետ: Հոգևոր երգերը ստեղծվել և հարմարեցվել են եկեղեցու կարիքներին՝ ժողովրդի մեջ երգի միջոցով քրիստոնեական ուսմունքը տարածելու համար: Այդ երգերը կա՛մ օրհներգություններ էին, կա՛մ ապաշխարության երգեր, որոնք ունեին խրատական-փառաբանական կամ աղաչական բնույթ: Այդ բանաստեղծությունները թեև հորինված են զգացմունքի բարձր ջերմությամբ և իրենց մեջ բովանդակում են վսեմ գաղափարներ, բայց կառուցվածքով պարզունակ են և քնարերգության բարձր թռիչքներ չպետք է որոնել դրանց մեջ, որովհետև ամենից առաջ դրանք ստեղծվել են ոչ թե կարդացվելու, այլ երգվելու համար: Երաանակը և երգը լրացնելով միմյանց՝ կազմում են մի ամբողջականություն, որից ստեղծագործությունն ավելի է շահում գեղարվեստական տեսակետից: Շարականների արվեստի մեջ ամենից առաջ աչքի է ընկնում ձևի միակերպությունը, որը բխում է նյութի միատեսակությունից: Այդ երգերը բովանդակում են կարճ, ամփոփ պատմվածքներ՝ Ավետարանից կամ սրբերի կյանքից, որոնց մեջ իշխող գաղափարը քրիստոնեական դավանանքն է: Հետևաբար միատեսակ նյութը և մինչև այն գաղափարները բնականորեն միատեսակ ձևով էլ պիտի արտահայտվեին:

Այդ շարականներում օգտագործված պատկերները, դարձվածքները ու արտահայտության եղանակները, ընդհանրապես, Ավետարանից են առնված: Հոգևոր երգերի մեջ կարելի է նույնիսկ որոնել մեր հին հավատալիքների հեռավոր արձագանքները, ո-

բոնք գալիս են հեթանոսական շրջանի ժողովրդական երգերից...

7—8-րդ դարերում, ինչպես տեսանք, ճարտարապետությունը իր վերելքն ապրեց: Կառուցվեցին այնպիսի տաճարներ, որոնք մեր անցյալի ճարտարապետական ողջ նվաճումներն օգտագործելով՝ այն մի նոր աստիճանի բարձրացրին: Պարզություն, վեհություն, ձևերի զուսպ համաչափություն, ներդաշնակ, թեթև ռիթմ՝ ահա 7—8-րդ դարերի ճարտարապետության ընդհանուր բնութագիրը: Ավելացնենք այս ամենին նաև մեր հոգևոր երգերը: Հոգևոր երգերը մի կողմից, ճարտարապետությունը մյուս կողմից, լրացնելով միմյանց, ձգտել են ընդգրկել ժամանակաշրջանը իր բովանդակ բազմազանությամբ:

7—8-րդ դարերը իսկապես իրենց արտացոլումը գտել են մեր ճարտարապետության և հոգևոր երգերի մեջ: Հոգևոր պարզ, անպաճույճ երգերը նույնպիսի թեթև, ազդու, ապշելու չափ պարզ և հենց այդ պարզությամբ էլ անկրկնելի, գեղեցկորեն ներդաշնակվում են կամ լրացնում քարաշեն երգերի (Հռիփսիմե—Զվարթնոց) այն կոթողները, որոնք իսկապես եզակի հուշարձաններ են մարդու ձեռքով կերտված ոգեշեն արժեքների մեջ:

Մեր ճարտարապետները, վարպետները, տաղասացներն ու շարականագիրները կարծես զգացել են տիեզերքի և մարդու ոգու ներդաշնակումը և իրենց համատեղ, համառ ջանքերով հասել են այն քչերին մատչելի բարձունքին, որին «կատարելիություն» անունն է տալիս մարդկությունը:

Եղել են նաև այնպիսի բացառիկ անձինք, որոնք իրենց բնատուր, շնորհաշատ քանքարով կարողացել են այս երկու տարրերը (ճարտարապետություն, երաժշտություն) գեղեցիկ ներդաշնակումով հաշտեցնել, որով դժվար իսկ է որոշել, թե որտեղ է վերջանում ճարտարապետությունը, և որտեղի՞ց սկսում երգը, երաժշտությունը: Այսպիսի փոխհարաբերության մեջ են Հռիփսիմեի տաճարն ու «Անձինք Նուիրեալք» շարականը, որոնք հանճարեղ մի մարդու անձով ի մի բերվեցին: Նույն մարդու ձեռքով, մտահղացմամբ կերտվեց Հռիփսիմեն իբրև քարեղեն մըրմունջ և միևնույն ձեռքով էլ գրվեց «Անձինք Նուիրեալք» շարականը՝ նույն այդ քարեղեն կամարների տակ երգվելու համար:

Այդ հանճարեղ անձը Կոմիտաս կաթողիկոսն է, որը մեր եկեղեցական պատմության մեջ ծանոթ է որպես շինարար, քերթող և բարեկարգիչ մի անձնավորություն: Մինչ նրա կաթողիկոսությունը, Կոմիտասի կյանքի և գործունեության մասին շատ քիչ բան գիտենք: Հավանաբար սովորել է Դվինի հայրապետանոցում՝ աշակերտելով Թեոդորոս Քրթենավորին, և եղել է Հայաստանի մի շարք գավառների առաջնորդ և ապա վանահայր ս. Հռիփսիմե տաճարի և հետո՝ կաթողիկոս: Ծննդավայրն է Արագածոտն գավառի Աղձք գյուղը: Կոմիտաս կաթողիկոսի վանական շինարարությունների մեջ հատուկ տեղ է գրավում սուրբ Հռիփսիմե տաճարի շինությունը:

618 թ. Կոմիտաս կաթողիկոսը ավարտում է սուրբ Հռիփսիմեի կառուցումը «հրաշալի և վայելուչ և նազելի և պայծառ շինուածով»: Տաճարի կառուցման ժամանակ երևան է գալիս տապանի մեջ ս. Հռիփսիմեի մասունքը (լուսաւոր և չքնաղագիտ արքունական մարգարիտ.... կուսական մարմին սրբոյ տիկնոջն Հռիփսիմեի» ս. Գրիգորի և ս. Սահակի կնիքներով դրոշմված: Կոմիտաս կաթողիկոսը չի համարձակվում բաց անել տապան-դագաղը, այլ՝ ինքն էլ կնքելով՝ հրամայում է ամփոփել նրանց սուրբ մարմինները:

Տաճարի շինությունից հետո, Կոմիտասը կատարում է նորակառույց եկեղեցու նավակատիքը և այդ առիթով գրում է կույսերի հիշատակին նվիրված «Անձինք Նուիրեալք» սքանչելի, «գեղեցկուհիս», չքնաղ շարականը, որը համարվում է բոլոր շարականների թագն ու պսակը: «Անձինք Նուիրեալք» շարականը իր ոճի գեղեցկությամբ, կրոնա-բարոյական արժեքով կարող է մրցել նույն կույսերի հիշատակը հավերժացնող հայրապետի բարեպաշտ մտքի հղացումը հանդիսացող հայ ճարտարապետական արվեստի գոհարներից մեկի՝ ս. Հռիփսիմեի տաճարի հոյակապ կառույցի հետ:

Մեր հոգևոր երգերի մեջ այս գործը ընտիրներից մեկն է թե՛ իր իմաստով և թե՛ իր ձևի գեղեցկությամբ: Ներդաշնակ չափ, վճիտ պարզություն և ճոխ համեմատություններ:

...Դիոկղետիանոս կայսրը հալածանքներ է սկսում քրիստոնեության դեմ (303—311): Ըստ ավանդության 3-րդ դարից սկսած Հռոմում գոյություն ուներ Հոգեաց վանքը, որտեղ ապրում էին 37 կույսեր: Կույսերի դեկավարն էր Գայանեն, իսկ Հռիփսիմեն՝ նրանց միջից ամենագեղեցիկը: Երբ սկսվեցին հալածանքները, նրանք թողեցին վանքը և եկան Վաղարշապատ, որտեղ թագավորում էր Տրդատ Գ-ը:

Տրդատը հեթանոս էր և հալածում էր քրիստոնեությունը: Նրա լսելիք կույսերի բարությունը մասին, նրանց ասյան կանչեց՝ հարցաքննելու: Տրդատին ներկայացավ Հռիփսիմեն, որը, անվախ և համար-

ձակ, ջատագովեց Տրդատի առաջ քրիստոնեությունը և հերքեց կռապաշտությունը: Տրդատը հանիշտակվեց Հռիփսիմեի գեղեցկությամբ և առաջարկեց նրան թագուհի դառնալ: Հռիփսիմեն մերժեց, և Տրդատը կատաղած ու վիրավորված իր կրոնական զգացմունքների մեջ՝ նրան և ընկերներին չարաչար մահով սպանել տվեց: Ահա այս դեպքն է, որ Կոմիտաս կաթողիկոսը վերցնելով Ագաթանգեղոսից, նյութ դարձրեց իր քերթվածքի համար:

Հեղինակը գեղեցիկ գույներով է նկարագրում ռազմադաշտը: Ահա դեմ առ դեմ են կանգնել երկու բանակներ. մի կողմից կույսերը՝ հավատով ու առաքինությամբ զինված, իրենց հավատը որպես վահան բռնած, մյուս կողմից՝ կրքերով տարված մանր ու չնչին մարդիկ, որոնք փորձում են բռնությամբ հափշտակել այդ անգին մարգարիտները: Սկսվում է մարտը: Հեղինակը գեղեցիկ պատկերներով է նկարագրում այն. նույնիսկ հրեշտակները հիանում են նրանց գեղեցկության ու քաջության վրա, աղոթում նրանց հաղթանակի համար.

«Է զարմացումն և ի վեր քան զհրաշս
Խորհրդոց և բանից հրեշտակաց և մարդկան»:

Ավարտվում է մարտը, և կույսերը ֆիզիկապես պարտվում են: Հաղթանակում է բիրտ ուժը: Նահատակվում են կույսերը, բայց բարձր են պահում իրենց հավատն ու պատիվը: Նրանց արյան բոցից ծնվում է քրիստոնյա Հայաստանը:

Սուրբ կույսերի՝ քրիստոնեական հավատի մեջ հանդես բերած արիությունը և նրանց անձնուրաց մարտիրոսացումը ոչ միայն ամրապնդեցին հայ ժողովրդի մեջ քրիստոնեական կրոնը, այլև հավատով գոտեպնդեցին հայ կնոջը բարոյական այն մեծ ուժով, որի շնորհիվ կյանքը իմաստավորվում, առաքինությունը գիտակցվում է իբրև ճշմարիտ իրականություն, որի համար իրոք արժե կույսերի նման անգամ ամենաթանկ կյանքից հրաժարվել:

Կոմիտասի «Անձինք Նուիրեալք»-ը գողտրիկ, քնարական մի ստեղծագործություն է՝ գրված անկեղծ զգացմունքով: Այն խավար ժամանակներում, երբ օտար լծի տակ հեծում էր հայոց աշխարհը, երբ մարդը զուրկ ամեն ապահով վիճակից՝ սպանվելու, կողոպտվելու, ստորացվելու, գերվելու մշտական սպառնալիքի տակ էր, նման մի մթնոլորտում առավել հասկանալի է դառնում Կոմիտասի ունեցած երազանքը արդար, ազնիվ կյանքի նկատմամբ:

Կոմիտասը հավատում է բարու հաղթանակին, չարի պարտությանը, ինչքան էլ հզոր լինի վերջինը:

«Իմեալք մաշեցան յուսացեալք ի մեծութիւն» և «թուլացան կորովիք հաստատիզ աղեղանց»:

Ահա նման մտածումներից է ծնվում երկրնքին, երկնայինին փարվելու ձգտումը: Այդ չէ՞ պատճառը արդյոք, որ հեղինակը այնպես կրքոտ կերպով գովերգում է երկնային կյանքը, այն հակադրելով երկրի, ժամանակի ցուրտ ու տխուր օրերին:

«Զերմեռանդն աղօթիք և սիրովն առ Աստուած
Հայցեցին ըզհնարս փրկութեան»:

Այս աշխարհը չար է ու տխուր: Մարդիկ խարխափում են խավարի հեղձուցիչ մթնոլորտում: Աշխարհը պետք ունի փրկության: Աշխարհը պետք ունի լույսի, ջերմության: Բայց թերևս ամենից շատ աշխարհը, մարդիկ պետք ունեն անձնազոհ հոգիների, որոնք հանուն ճշմարտության, խղճի ազատության, առաքինության, բարոյականության պատրաստ են սեփական արյունը թափել. պատրաստ են զրկվելով, զարկվելով, կենդանի օրինակ դառնալ հավատացյալներին.

Բոլոր ժամանակներում տիրակալները միշտ էլ պատահականորեն բախտի տիրացած, փառքերից, պատիվներից հղփացած՝ ո՛չ թե ճշմարտության են հետամուտ լինում, ո՛չ թե լույս են տենչում, այլ սեփական շահի, փառամոլության, ընչաքաղցության մոլուցքով տարված՝ պատրաստ են եղել լույսն էլ խեղդելու: Ինչ փույթ, թե ուրիշների համար ծանր կլինի ապրել առանց լույսի: Ճշմարտության, լույսի առջև, որքան էլ խավարը թանձր լինի, տեղի կտա, կպարտվի:

«Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք.
Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր»:

Ճշմարտություն, լույս ու արդարություն որոնող մարդու ճիչն է զգացվում այս բանաստեղծության մեջ:

Ժամանակի ոգին բավական ցայտուն գույներով տրվել է այս ստեղծագործության մեջ: Այլ կերպ էլ չէր կարող լինել: Որքան էլ այս ստեղծագործությունը կրոնաշունչ է ու երկնայինը փառաբանող, որքան էլ ձգտում է ոչ աշխարհայինի մեջ գտնել կամ հաստատել ճշմարտությունը, այնուամենայնիվ, այդ ձգտումներով թեկուզ, հակադրվել է ժամանակի տխուր ու հոռի բարքերին, բողոքել վատի, չարի դեմ, երազել այն աշխարհը, ուր սիրո, գեղեցիկի, հավատի ու հավատարմության, լույսի ու հույսի համար կռվող մարդիկ ոչնչակեզ չեն դառնում տգետ ամբոխի կամ անգութ բռնակալների կողմից...

Կոմիտասի այս ստեղծագործությունը իսկապես բանաստեղծական հրաշալի մի կոթող է՝ լի պատկերավոր արտահայտություններով, զգացմունքի անկեղծությամբ, անպաճույճ գեղեցկությամբ: Բանաստեղծության մեջ թեև կան մասեր, որոնք ճառային բնույթ են կրում. ինչպես, օրինակ՝

«Հռիփսիմէ մեծ խորհուրդ և անուն ցանկալի
Ընտրեալ ի յերկրի և դասեալ ընդ հրեշտակս
Եղէր օրինակ սրբութեան կուսանաց.
Վարդապետութիւն առանց արդարոց»:

Սակայն ժամանակի աչքերով նայելու դեպքում կտեսնենք, որ այդ անխուսափելի է և չպետք է գեղարվեստական թերություն համարել:

Աստված անտարբեր չէ մարդկային գործերի նկատմամբ: Նա հոգատար հոր նման քայլ առ քայլ հետևում է մարդկանց. նրանց լավի համար ուրախանում և վատի համար տխրում է:

«Էնն Աստուած ամենազօր զօրութեամբն
Խոնարհեալ տեսանէր ըզհանդէս կուսանացն»:

Ամենաբարձրյալն անգամ ըստ հեղինակի, խոնարհվում է լավ գործի, լավ արարքի համար:

«Բուրվառք ոսկեղէնք», «ողջակէզք բանաւորք», «որոջք անարատք», «աստուածատուր կուսանք», «շինուածք երկնաւորք», «ուրձանք լուսեղէն»՝ ահա այսպիսի համեմատություններով և շքեղ մակդիրներով է հեղինակը պատվում կույսերին: Բանաստեղծը կիրառել է նաև այլ բնորոշ մակդիրներ. ինչպիսիք են՝ «Հաստաձիք աղեղ», «ծովածուփ կենցաղ», «անշեջ լապտեր» և այլն: Պատկերավոր համեմատություններից բացի օգտագործվել են նաև գեղեցիկ փոխաբերություններ, որոնք առավել դիպուկ, նպատակալաց են դարձնում հեղինակի խոսքը. «սոքա են քարինք սուրբ հիմնեցեալք ի յերկրի», «շինուածք երկնաւորք ի յերկրի հաստատեալք»,

Հեղինակը կարողացել է հմտությամբ լցնել այդ մեծ ծավալը, անելով սակավաթիվ կրկնություններ միևնույն մտքի, որոնք սակայն շատ զգալի չեն: Իսկ ինչ վերաբերում է քերթվածի լեզվին ու կառուցվածքին, պետք է ասել, որ քերթվածը փայլում է իր պարզությամբ, գրված է հնչեղ, դասական, մաքուր գրաբարով: Բանաստեղծը ուշադրություն է դարձել ոչ միայն բովանդակությանը, այլև ձևին, որոնք փոխադարձաբար լրացրել են միմյանց՝ ավելի կուռ ու ամբողջական դարձնելով բառերից կերտված այդ հոյակապ կոթողը: Գրված է անկեղծ զգացմունքով, լի մտքի համարձակ գյուտերով և քնարական բուռն զեղումներով:

Քերթվածը աչքի է ընկնում նաև իր տաղաչափությամբ: Այն բաղկացած է 36 քառատողերից, որոնք հաջորդում են միմյանց այբուբենական կարգով: Հեղինակը օգտագործել է տարբեր չափեր, սակայն տիրապետողը տասներկու վանկանի քառանդամ ոտանավորն է «3+3+3+3) որով քերթվածը ստանում է սահուն և թեթև երաժշտականություն և քնարական քնքշություն:

«Անձինք Նուիրեալք»-ը մեր հոգևոր բանաստեղծության անկրկնելի գանձերից մեկն է, որը դարեր շարունակ հուզել, ջերմացրել է տասնյակ սերունդների սրտերը՝ ոգևորելով նրանց հավատքի, անձնազոհության, նվիրումի ոգով, հանուն հայ օջախի սրբության, կանացի առաքինության և բարձր բարոյականության:

«Ծնան կուսանք ազգս բազում
Եդին զանձինս գրաւականս բազմաց
Եւ եղեն փրկանք անծանոթ աշխարհին»:

ՎՐԵԺ ՍՐԿ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
(Բ. լսարան)

ՀԱՎԵՐԺԻ ԾԱՄՓՈՎ

Ծեր էր ու անկար:

Պետք ուներ օգնության:

Նաև պատրաստ էր օգնելու:

Մի կին էր, որ ապրել էր մեկ դարից մի քիչ ավելի:

Որդիներ էր ծնել: Ցքնումով պահել ու սնել, որոնք թռչունի ձագերի նման, երբ թև էին առել, թռել գնացել էին: Նոր բարդի էին գտել: Նոր բույն հյուսել: Եվ մոռացել էին իրենց մորը, որ իրենց ձագերն էլ նրանց մոռանան:

Մայրը հին, անհայտ մատուռի նման խարխլվել էր ու մոռացվել:

Դարձել էր գոսացած, կիսակենդան մի կոճղ, որ արմատներ ունի թեև հողի մեջ, բայց ճյուղեր չունի:

Ամեն առավոտ և երեկո, ժամերգությունը սկսելուց մի կես ժամ առաջ, ծուռտիկ ձեռնափայտին հենված, երերուն ու անհաստատ քայլերով գալիս էր եկեղեցի:

Կարճոտն էր ու փոքրամարմին՝ գաճաճ եղևնու նման:

Հագուստը՝ հնամաշ, հնաբույր:

Եկեղեցու գավթում, մուտքի մոտ, ծալապատիկ նստում էր մաշված, տեղ-տեղ պատառոտված կարպետին՝ գլուխը վեր, ձիգ ու զգաստ, ինքնասույզ, մտասևեռ:

Աչքերը չէին տեսնում: Հետզհետե մաշվող, սպառվող մոմի նման տարիները խլել էին նրա աչքերի լույսը՝ թողնելով միայն մոխիր ու մշուշ:

Ականջներում բոլոր ձայներն ու շշուկները աղմուկ էին դառնում, անհետանում:

Նա երբե՛ք ձեռք չէր մեկնում ողորմության խնդրելու:

Երբե՛ք չէր ասում ընդունված կարգով.

— Ողորմացեք թլշառիս:

Ոչ ոքի գութը չէր փորձում կեղծ կամ անկեղծ աղերսներով շարժել:

Ընդհակառակը:

Աշխատում էր կարծես ցույց տալ, թե ինքը այնքան էլ վատ վիճակի մեջ չէ:

Նստում էր լուռ, ուղիղ ու անշարժ:

Իբրև բողո՛ք:

Պահա՛նջ որպես:

Զգվում էր տեղում և անլույս, պղտորված աչքերով անթարթ նայում էր անորոշ մի տեղ:

Նրա անարյուն, չորացած շուրթերին միշտ անվերծանելի հնչյուններ էին թրթռում:

Աղոթո՞ւմ էր արդյոք:

Մարդկա՞նց օրհնում:

Թ՞ե—

Անիծում էր իր անուրախ կյանքը և մեկ էլ՝ երջանիկներին:

Այդ համար, ամուր սեղմված շուրթերից, բարի խորշոմադեմք պառավից դժվար թե անեծք դուրս գար:

Անեծքը անզորի զենքն է:

Մինչդեռ նրա անզորության մեջ մեծ զորեղություն կար:

Դարս-դարս կնճիռները դեմքին, կարծես երկաթագիր մագաղաթների տողեր լինեին՝ պարզ ու դյուրընթեռնելի:

Ծերմակած, նոսրացած մազերից մի քանի ցաք ու ցրիվ թելեր սովորաբար միշտ դուրս պրծած էին լինում գլխաշորի տակից ու հովից մեղմորեն—կարկտահարված արտի հատ ու կենտ հասկերի նման—թրթռում նրա անշարժ, քարացած դեմքին:

Չլիներ այդ աննշան շարժումը՝ կկարծվեր թե պղնձագույն ժայռեղեն ապառաժից հանճարեղ արվեստագետի ձեռքով թեթևորեն ուրվագծված արձան է:

Մեռած էր այդ կինը մարմնապես:

Բայց ոգին արթուն էր, կենդանի:

Խարխլված, տկարացած մարմինը շնորհիվ առողջ ու կենսունակ ոգու՝ կարողանում էր ներգործել. հարգանք, անգամ ակնածանք կորզել: Կարողանում էր իր չասված խոսքը, որ պիտի ճչար մի օր—լռելյայն ասել:

Կոթողացած տրտունջ էր:

Ու

Լռության անարկու ճիչ:

Հատ ու կենտ տարեց հավատացյալներ, մեծ մասամբ կաղ, կյանքից զրկվածներ—նրան տալիս էին երբեմն կոպեկներ:

Նա չէր փոխում դիրքը:

Ձեռք չէր երկարում:

Գոգը ընտվող կոպեկների չիկոցը արձագանք չէր գտնում նրա հոգում:

Շրջապատի ընկատմամբ անհողդողդ էր:

Սակայն—

Ոչ անտարբեր:

Ամեն օր, առանց թերացման, գալիս էր եկեղեցի:

Գալիս էր աղոթելու:

Ապրելու:

Բայց քանի որ եկեղեցին անմարդ էր լինում ու իր նման լքված—ապրելը նրա համար դառնում էր անչափ դժվար:

Արտաքնապես լքված եկեղեցին, որ համեստ ու անշուք մի շինություն էր—խորհուրդ ուներ իր մեջ: Հանճարի դրոշմ: Եվ ուներ ոգի հավերժող: Զորեղ, չմեռնող խորհուրդ՝ անթեղված կրակի նման այրելու, արթնանալու պատրաստ:

Իմաստության բորբոս կար խորանների մեջ գաղափար—լույսի պես պայծառ ու լույսի նման անորսալի: Կար հաշիշի պես թմրեցնող խնկաբույր ծուխ. հնօրյա, առինքնող, արբշիռ բուրմունք: Եվ կային կանթեղներ անհամար: Ջահեր կայծկլտացող: Ճրագներ՝ անկրակ: Մոմեր անմար, թախծոտ—ինչպես մատաղացու ոչխարի աչքեր, որոնց հավերժատիպ, դեղնակոտ ցոլքերի ներքո մարդիկ առեղծվածներ են ասացել: Հրաշքներ հորինել: Տեսիլքներ կերտել: Երկնել երազներ—մեր խաչված, չարչարված Աստծուն անմահության խորհուրդը մեկնելով—որ խաչվելով անմահանա Աստվածը և որ ստեղծելով, անգամ հատվելով, թալվելով հարատևենք և՛ մենք...

Եկեղեցին և կինը մարմնապես մեռնում էին—մայրամուտ թեքվող արևի, սպառվող ճրագի, այրվող, վերջացող խունկի նման:

Բայց պահպանել էին անտես, զորավոր ոգին, որ անշոշափելի էր թեև բոցի նման և հենց նույն բոցի պես էլ այրող, զգալի:

Այդ կինը և եկեղեցին գալիս էին վաղընջական դարերից իրենց երկար, փոշոտ ու փշոտ ճամփին կորցրել էին շատ բան—բաշխել առատորեն, որ կյանքում լույս լինի, իսկ լքված սրտերում՝ հույսի նշույլներ: Որ կյանքի շատ դառնությունների հետ քիչ էլ քաղցրություն լինի: Որ վշտոտ հառաչանքներին ժպիտների բեկորներ շաղախված լինեն: Որ խեղդիչ տխրության տեղատարափի հեղեղներից հետո, քիչ էլ ծիծաղի թարմաշունչ ցող իջնի: Որ բքաբեր, ձյունոտ փոթորիկներից հետո նաև իմնդության արփալույս լինի: Որ անդադար, հոգնատանջ, տառապալից աշխատանքներից հետո հանգստություն լինի: Արյունահեղ, ավերիչ ու անվերջ պատերազմներից շնչահատ մարդը քիչ էլ խաղաղություն ճաշակի: Եվ վերջապես, որ կյանքը կյանք լինի և ոչ թե չարչարանք:

Եվ հիմա նրանք սոսկ իրենց ոգիների փոխանարձ ներդաշնակումով, լրացնելով մեկը մյուսին, ձուլվելով միմյանց երբեմն խարիսափելով, երբեմն սրընթաց—շարունակում էին իրենց հավերժի ճամփան...

Չէ որ հանախ գոսացած կոճղերից անգամ դալարագեղ ծառեր են բուսնում...

ՍԱՄՈՒԷԼ ՍԱՐԿ. ՎԱՐԴԱՆՅԱՆ,

(Բ լսարան)

ՏԱՏՍ

Ա՜խ, այնպե՜ս կուզեմ ինձ ծեծես նորից,
Նորից ես վախչեմ, հեռանամ տնից
Ու հարևանի թոնրատանն անքուն՝
Կատուների հետ սրթսրթամ թաքուն։
Իսկ դու փնտրես, որոնես դու ինձ,
Կանչես՝ որտե՞ղ ես, որտե՞ղ ես, իմ գիժ.
Ու կատուները անգետ, ակնապիշ
Նորից մլավեն... իմանաս նորից,
Ինձ բռնես... ու ա՜խ, լացես անիտով։
Ա՜խ, այնպե՜ս կուզեմ, թեկուզ ծեծվելով,
Քեզ տանջել նորից... մանկանալ նորից։

Ու ես մանուկ, մեր գյուղի հին կալերից վազելով,
Կանչում էի, որ կանգնեն, կանչում էի հուսաձայն։
Վազում էի, որ հասնեմ կռունկների երամին,
Ոսկեփրփուր ամպերին, փետուրներին լուսաթև,
Կանչում էի, որ կանգնեն կռունկները անմարմին,
Ինձ էլ տանեն ամպերով լույս հեռուներ ու եթեր։
Վազում էի. բայց իզուր... իմ դեմ հազար ու մի լեռ,
Իմ դեմ վիհեր խորընկա, իմ դեմ սարեր ու սահման։
Վա՜խ, ինչ դառը քրքջացին կռունկները ու թռան...

Ա՜խ, ինչ անուշ կլոկլոցացին կռունկները ու թռան,
Ոսկեփրփուր ամպերով հեզահասիկ նազելով.

ՊԱՊՍ

Մի օր առու է փորել ձրագին,
Այգի է գցել, քարերը ջոկել,
Սարերից անգամ հող է շալակել
Ու չի խոնարհվել իր չարչարանքին։

Ու երբ աշունն իր մառանն է բացել,
Հպարտությունն եմ տեսել ճակատին.
Ու ոսկի, ոսկի՜ աշնանամուտին,
Ինձ արարիչ է պապս թվացել։

ՍԱՄՎԵԼ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
(Բ դասարանի ուսանող)

Ի ՔԷՆ ՀԱՅՑԵՄՔ

Մշակումը և նեղությունակումը՝
ԽՈՐԵՆ ՄԵՑԱՐԵՆՑԱՆԻ

ՉԱՓԱՎՈՐ-ԴԱՆԴԱՂ

Ի քէն հայ - ցի - մըք բա - զում ո - ղորմ - ի

Ի քէն հայ - ցեմք բա - զում ո - ղորմ - ի

Ի քէն հայ - ցեմք Ի

ձե - ռըն սրբ-բոց հոց ա - ռա - քե - լոց խը - նայ -

ձե - ռըն սրբ-բոց հոց ա - ռա - քե - լոց խը - նայ -

ձե - ռըն սրբ-բոց հոց ա - ռա - քե - լոց խը - նայ -

սրբ - բոց հոց ա - ռա - քե - լոց խը - նայ -

- եա Տէր Ի յան - ձի - նըս

- եա Տէր Ի յան - ձի - նըս

- եա Տէր Ի յան - ձի - նըս

- եա Տէր Ի յան - ձի - նըս

մեր Զուրս ըն-տրե - ցեր յա - ռաջ զի - տու-թեամբ զար - ժա - նա - ցի -

մեր Զուրս ըն-տրե- - ցեր յա - ռաջ զի - տու-թեամբ զար - ժա - նա - ցի -

մեր Զուրս ընտ - ռե - ցեր զար - ժա - նա ցի -

մեր

p

- լոցս ան - ձի - նքս տր - պա - ւոր - եալ ի ցո - ա զոն - զի ամոր -

- լոցս ան - ձի - նքս տր - պա - ւոր - եալ ի ցո - ա զոն - զի ամոր -

: - լոցս ան - ձի - նքս տր - պա - ւոր - եալ ի ցո - ա զոն - զի ամոր -

տր - պա - ւոր - եալ ի ցո - ա զոն - զի ամոր -

cresc.

- հաց հոգ ո - ռով վաճ - եալ հեր - հե - գին

- հաց հոգ ո - ռով վաճ - եալ հեր - հե - գին

- հաց հոգ ո - ռով վաճ - եալ հեր - հե - գին

- հաց հոգ հեր-հե-


f
զա-պրա-տամբ զքեզ - նա - մին բա - ռե - խո - սու - թեամբ
զա-պրա-տամբ զքեզ - նա - մին բա - ռե - խո - սու - թեամբ
զա-պրա-տամբ զքեզ - նա - մին բա - ռե - խո - սու - թեամբ
- ցին զքեզ - նա - մին բա - ռե - խո - սու - թեամբ
mp
սա - ցա խր - նայ - նա Տէր
սա - ցա - սա - ցա խր - նայ - նա Տէր
սա - ցա խր - նայ - նա Տէր
սա - ցա խր - նայ - նա Տէր
rit.
ի յան - ձի - նքս մեր։
ի յան - ձի - նքս մեր։
ի յան - ձի - նքս մեր։
ի յան - ձի - նքս մեր։

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Գիտությունների Ակադեմիայի նիստը Լենինականում.—Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի նախագահությունը հաճախ գիտական մեղվիներ է հրավիրում հանրապետության տարբեր քաղաքներում և շրջաններում, նպատակ ունենալով սերտացնել կապերը ակադեմիայի և տեղի մտավորականության հետ:

Վերջերս հերթական գիտական ճստաշրջան հրավիրված էր Լենինականում: Ծուրջ 20 ակադեմիկոսներ մեկնել էին Լենինական՝ անվանի գիտնական Վ. Համբարձումյանի գլխավորությամբ: Նստաշրջանը քննության առավ սեյսմոլոգիայի և գեոֆիզիկայի բնագավառում կատարվող ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև Լենինականում գիտական աշխատանքների զարգացման հարցերը:

Հայ Ձեռագիր բառարանների ուսումնասիրություն.—Մեր ձեռագրերի թվում կան նաև բազմաթիվ ձեռագիր բառարաններ, որոնք մինչև հիմա ինչպես հարկն է չեն ուսումնասիրված:

Մաշտոցի անվան մատենադարանի գիտական աշխատող Հայկ Ամալյանի աշխատությունը, որը կոչվում է «միջնադարյան Հայաստանի բառարանագիտական հուշարձանները» գալիս է լրացնելու այդ բացը: Հեղինակը մանրամասն վերլուծում է հայ բառարանագիտության պատմությունը և նրա առաջացման պայմանները: Հերքելով այն թյուր կարծիքը, որ հայերը իր բառարանագիտությամբ զբաղվել են սկսած 17-րդ դարից, հեղինակը հաստատում է, որ Հայաստանում բառարանագիտությունը սկսվել է վաղ միջնադարից, դեռևս հունական դպրոցի շրջանից:

Հեղինակը ուսումնասիրության նյութ է դարձրել 6—15-րդ դարերի 20-ից ավելի գրչագիր բառարաններ, իրենց մի քանի տասնյակ ընդօրինակումներով: Գրչագիր բառարանները հաճեմատելով տպագիրների հետ, Ամալյանը կատարել է բազմաթիվ բառերի իմաստների ճշտումներ և արձանագրել մի քանի հարյուր նոր բառեր, որոնք չեն նշվում մինչև այժմ եղած տպագիր բառարաններում:

Հայագիտական շրջաններում գտնում են, որ Հ. Ամալյանի այս աշխատությունը հիմք է դնում հայագիտության մի նոր բնագավառի՝ բառարանագիտության գրչագիր շրջանի պատմության:

Եղիշե Չարենցի հիշատակին.—Մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, Հայաստանի Մինիստրների սովետը հատուկ որոշում է ընդունել նրա հիշատակը հավերժացնելու համար:

Երևանում կանգնեցվելու է բանաստեղծի արձանը, որի նախագիծը կազմելու համար Երևանի Քաղաքային սովետը հայտարարել է մրցանակաբաշխություն: Երևանի Արվեստի և Գրականության Թանգարանը կոչվելու է Չարենցի անունով: Մեծ բանաստեղծի անունն է կրելու Լենինականի հրապարակներից մեկը: Երևանի Հայկական Մանկավարժական ինստիտուտում սահմանվելու է Չարենցի անվան մեկ թոշակ: Զարևնցի նախկին բնակարանը դարձվելու է թանգարան:

Ճարտարապետ Կարո Հալաբյանի ծննդյան 70-ամյակը.—Մոսկվայի և Երևանի Ճարտարապետների Միությունները նշեցին հայազգի ականավոր ճարտարապետ Կարո Հալաբյանի ծննդյան 70-ամյակը:

Կ. Հալաբյանը սովորել և ավարտել էր Թբիլիսիի Ներսիսյան դպրոցը: Ճարտարապետական բարձրագույն կրթություն նա ստացել էր Մոսկվայում: Նա մեկն էր սովետական այն ճարտարապետներից, որոնք այնքան մեծ և եռանդուն աշխատանք թափեցին Սովետական Միության քաղաքների, արդյունաբերական կենտրոնների և առողջարանների նախագծման ու վերակառուցման գործում:

Կարո Հալաբյանը մեծ տաղանդի և լայն չափանիշների ճարտարապետ էր: Հայրենական մեծ պատերազմից հետո նա հրավիրվեց որպես Ստալինգրադի (Ներկայիս Վոլգոգրադ) գլխավոր ճարտարապետ: Ցուցաբերելով իր մեծ կարողությունները, Կարո Հալաբյանը նախագծեց ու բոլորովին վերակառուցեց

պատերազմի հանձնարարությամբ հիմնվիր ավարված բանակը, որն այսօր իրենից ներկայացնում է ճարտարապետական մի հիանալի կոթող, Վոլգայի ափին:

Սովետական Միության մամուլը լայնորեն նշեց Ն. Հալաբյանի ծննդյան 70-ամյակը: Մոսկվայում և Երևանում տեղի ունեցան հանդիսավոր երեկոներ: Մոսկվայում տեղի ունեցած հանդեսին մասնակցում էին Սովետական Միության այլ հանրապետություններից, այդ թվում Հայաստանից ժամանած բազմաթիվ հայտնի ճարտարապետներ՝ Միք. Մազմանյանը, Վարազդատ Հարությունյանը, որոնք իրենց ելույթներում բարձր գնահատական տվեցին Ն. Հալաբյանի գործունեությանը:

Նկարիչ Զարեհ Մութաֆյանի ցուցահանդեսը.— Երևանում, Նկարիչների տանը բացվեց ֆրանսահայ ճանաչված նկարիչ Զարեհ Մութաֆյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը կազմակերպել էին Հայաստանի նկարիչների Միությունը և Սփյուռքահայության հետ Մշակութային Կապի Կոմիտեն:

Ցուցադրված էր շուրջ 90 կտավ: Ցուցահանդեսն անցավ մեծ հաջողությամբ: Ցուցահանդեսից հետո Զ. Մութաֆյանը իր աշխատությունների մի մասը նվիրեց Հայաստանի պետական պատկերասրահին:

Նար-Դոսի երկերը վրացերեն լեզվով:—Վրաստանի Պետական Հրատարակչությունը վրացերեն լեզվով լույս է ընծայել Նար-Դոսի երկերի մի հատորյակը, որի մեջ զետեղված են հեղինակի «Անանա Սարոյան», «Սպանված աղավնի», «Նեղ օրերից մեկը» և այլ երկեր, ինչպես և «մեր թաղը» շարքից մի շարք պատմվածքներ:

Գիրքն ունի ընդարձակ առաջաբան, ուր մանրամասն վերլուծված են Նար-Դոսի ստեղծագործությունները:

Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում:—Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները պատրաստվում են նոր ուսումնական տարվան:

Այս տարի 12 բարձրագույն ուսումնական հաստատությունները կնդունեն 8625 ուսանող, շուրջ 150 տարբեր մասնագիտությունների գծով: Այսպիսով ուսանողների ընդհանուր թիվը կհասնի 50.000-ի:

Երևանի Պետական համալսարանում և Պոլիտեխնիկական ինստիտուտում և այլ բուհ-երում կբացվեն նոր մասնագիտական բաժիններ: Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտի լեզվական բաժանմունքը կվերածվի առանձին ինստիտուտի: Առանձին ինստիտուտ է դառնալու նաև Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը:

Պետական համալսարանի և մի շարք ինստիտուտների համար կառուցվում են ուսումնական նոր շենքեր:

Հայաստանի հեռուստատեսության կայանի ընդարձակումը.— Հեռուստատեսությունը Հայաստանում ունի ընդամենը 10 տարվա պատմություն: Հեռուստատեսային կայանների հզորությունը ներկայիս եռապատկվել է: Կապույտ պաստառով տրվող հաղորդումները դիտում են Արարատյան դաշտի և Հանրապետության հյուսիսային մասի շրջանները, ինչպես նաև Լենինական, Կիրովական, Դիլիջան, Ստեփանավան, Ալավերդի քաղաքները: Մինչև տարվա վերջը հեռուստատեսային հաղորդումները կդիտեն նաև Սևանի ավազանի և հյուսիս-արևելյան շրջանները:

Հայկական հեռուստատեսային կայանը կապված է Մոսկվայի հետ Թբիլիսիի, Սոչիի և Սիմֆերոպոլի վրայով: Եկող տարի կսկսվի Երևան-Եղեգնաձոր-Սիսիան-Գորիս-Ղափան գծի կառուցումը, որով Երևանի հաղորդումները կդիտեն Զանգեզուրի շրջանները: Բացի այդ նոր կառուցվելիք գիծը Սիսիանում կմիանա Նուշի-Նախիջևան գծին, որով հնարավոր կլինի հեռուստատեսային կապ հաստատել Երևանի և Բաքվի միջև:

Ապարանի ջրամբարը շահագործման հանձնվեց.— Վերջերս ավարտվեց Ապարանի ջրամբարի կառուցումը և տեղի ունեցավ հանդիսավոր բացումը:

Ջրամբարի կառուցումը տևեց շուրջ 4 տարի: Այն կառուցված է Քասախ գետի վրա, ունի 7,5 քմ. կիլոմետր մակերես և տարեկան կարող է կուտակել 90 միլիոն խորանարդ մետր ջուր, որը կարող է ոռոգել 7500 հեկտար անջրդի հողեր:

Ջրամբարի կառուցման համար հսկայական աշխատանք է կատարվել: Գետի առաջը փակող 52 մետրանոց հողապատնեշ ստեղծելու համար բերված և լցված է 650,000 խորանարդ մետր հող: Ապարանի ջրամբարից ամեն տարի շուրջ 37 միլիոն խորանարդ մետր ջուր տրվելու է Արզնի-Ծաղիրաձոր ջրանցքին, որը սնվում է Սևանից Հրազդանի միջոցով: Որպես հնարավոր կլինի տարեկան նույն քանակությամբ ջուր խնայել Սևանից:

Արփա-Սևան փապուղու կառուցումը.—Արփա-Սևան փապուղու շինարարները կարևոր հաջողություն ձեռք բերին: Ավարտվեցին № 2 և № 3 հորանների փորման բոլոր աշխատանքները: Հորանոներից առաջինը ունի 952 մետր խորություն, իսկ երկրորդը՝ 661 մետր:

Այսպիսով 48 կիլոմետր երկարություն ունեցող փապուղու բոլոր 11 խորշերը պատրաստ են գործելու, այսինքն փապուղու փորումը հնարավոր կլինի կատարել 11 տարբեր կետերից: Շինարարության ընթացքում մինչև օգոստոսի 1-ը փորված փապուղու ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 9500 մետր:

Հայկական ազգային ճաշարան.—Երևանում, Լենինի հրապարակից ոչ հեռու բացվելու է Հայկական ազգային կերակուրների մասնավոր ճաշարան-սրճարան: Ճաշարան-սրճարանը գեղեցիկ ձևավորում կունենա հին հայկական ոճով: Պատերը, առաստաղը, հատակը, սեղանները, նստարանները, պնակները, գավաթները ամեն ինչ հիշեցնելու է հայկական նահապետական կացարաններն ու նրանցում գործածվող սպասներն ու կարասիները:

Մատուցողները ևս կրելու են հայկական ազգային տարազ: Կերակուրներն ու խմիչքները բացառապես

հայկական են լինելու։ Նոր ճաշարան-սրճարանը կոչվելու է «Վահագն»։

Նոր բնակելի թաղամաս Նորքի սարալանջին.— Նախապատրաստական աշխատանքներ են տարվում Նորքի սարալանջին մի նոր խոշոր բնակելի թաղամաս կառուցելու, որը կոչվելու է Նորք—2։ Սա ոչ մի կապ չունի այն բնակելի զանգվածի հետ, որը կառուցվում է Ավան գյուղի և հին Նորքի միջև ընկած սարալանջին։

Նորք—2 կկառուցապատվի 5—9 հարկանի շենքերով։ Այն կսկսվի հին Նորքից և կվերջանա Սարի թաղով։ Այն կունենա 50.000 բնակիչ։ Ներկայիս «Երևանանախագիծ» ինստիտուտում պատրաստվում են նոր թաղամասի գծագրերը։

Ն. Ռեգինա Ղազարյանի ցուցահանդեսը.— Վերջերս Երևանում Հայաստանի նկարիչների տանը բացվեց Ռեգինա Ղազարյանի անհատական ցուցահանդեսը։ Ներկայացված 50 աշխատանքներից 25 նվիրված էին Չարենցյան թեմային որտեղ նկարիչը բացահայտել է մեծ բանաստեղծի կերպարը և տվել մի շարք ստեղծագործությունների վերլուծությունը։ Ցուցահանդեսը ինչպես Երևանում այնպես էլ Հայաստանի մյուս քաղաքներում գտավ ջերմ ընդունելություն արվեստասեր հասարակության կողմից։

Ջրմուղ Մարտունու շրջանում.— Մարտունու շրջանի (Սևանի ավազան) մի շարք գյուղեր (Երանոս, Լիճք, Վերին Կետաշեն և այլն) իրենց միջոցներով և պետության օժանդակությամբ վերջերս կառուցեցին ջրմուղ, որի երկարությունն է 24 կիլոմետր։ Ջրմուղը սկիզբ է առնում Վարդենիսի լեռների աղբյուրներից և լիցքի բավարարում 10 գյուղերի պահանջները։ Մինչ այդ, հիշյալ գյուղերի բնակիչները օգտվում էին ջրմուրների ու գետակների ջրերից։

Սպիտակը արդյունաբերության նոր կենտրոն.— Հայաստանի արդյունաբերական կենտրոնների թիվը ավելանում է ևս մեկով—դա Սպիտակ կոչվող (նախկին Համամլու) քաղաքատիպ փոքրիկ ավանն է, որը գտնվում է ոչ հեռու Կիրովականից։

Հայաստանի միակ խոշոր շաքարի գործարանի կողքին գործում են մի քանի այլ ձեռնարկություններ, որոնցից նշանավորն է տրիկոտաժի բավական մեծ ֆաբրիկան։ Առաջին տարին է ինչ արտադրանք է տալիս մարդատար վերելակների գործարանը։ Այդ վերելակներն ուղարկվում են ինչպես Երևան, այնպես էլ Թբիլիսի, Խարկով, Բաքու և այլ քաղաքներ։

Այժմ սպիտակում կառուցվում է խոշոր ալրաղաց, որը երկրորդն է Հայաստանում, Երևանի սորաղացից հետո։

Նախապատրաստական աշխատանքներ են տարվում կառուցելու կաշին փոխարինող նյութերի խոշոր գործարան, ինչպես նաև ավտոմատ փոխակերպիչների (ռեդուկտորների) գործարան։